Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

450

271

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ

ԹՂԴԷ

ՎԷՊ

(Արտատպած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ
1890

Дозволено цензурою, Тифлисъ. 30 Декабря 1889 г.

Типогр. М. Д. Ротиніанца, на Гол. просп. соб. д. № 41.

2004

ՄԵԾԱՐԳԻ ԲԺՇԿԱՊԵՏ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՍՊԱՐԵԱՆՑԻՆ

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆԱՑ,

ԱՆԿԵՂԾ ՀԱԽԱՅՏԵԱՑ,

ՍՐՏԱԶԳԱԾ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՆՈՒԷՐ

6666Չ-ան

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՀ-Арм.ССР
им. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

(4191-78)

Չ71-2014

Փ 270

ԲՂԴԷ

Ա.

ԲՕՇԻ ՏՂԱՅ

Կարբեցի է կոլոտ (չորճահատ) Բղդէն։ Նա այժմ կամ ծերացած, ոտք ու ձեռքից ընկած, մի գիւղի կամ քաղաքի խուլ անկիւնում կեանքի հետ կռիւ է տալիս, հոգէառի անունից օրն ի բուն սարսափի մէջ է, կամ թէ սև հողի միջին որդ ու ժժմունքների կերակուր չէ եղել, եօթը պատան է մաշել, մարդկանց ու Աստուծոյ յիշողութիւնից իսպառ մոռացուել՝ չիքերի կարգն է անցել։

Մեր պատմութիւնը սկիզբն է առնում Բղդէի պատանեկական թարմ ու գ է ն ճ տարիներից։

Այդ այն անցած, մոռահան եղած ժամանակներն էին, երբ հազար տեղից գուրչ ու փալասով կարկատած խուրջինն ուսը ձգած՝ ամէն մի հական մէջ հինգ չորուկ շահու (եօթը չոթէչ) մանրավաճառի ապրանք դրած՝ գիւղական երեխայի ձեռքով կերտուած խաղագնդակի նման գլգլ-գլոր գալով գիւղերն էր ընկնում ու չարչութիւն անում։

Նորա բազմատեսակ ու բարդ չէին Բզզէի ապրանքի քանակն ու տեսակները. մի երկու թօփ ասեղ, մի քանի քորոց, մատնոց, կոճակներ, կերակրեղէնի համեմունք՝ գիրա, սև պղպեղ, մետաքսի թել, մի քանի գազ աժանագին ժապաւէն ու երիզ՝ գեղջուկ պառաւների տնարարութեան անհրաժեշտ պիտոյքներ, ծամոն, ծծմբապատրոյգ, աբեթ, հրահան, շանթաքար և այլ այսպիսի տնտեսութեան համար կարեւոր իրեղէններն էին նորա հարստութիւնն և յոյս ու ապաւէնը:

Երկու, երեք տարի Բզզէն ինքն էր միայնակ թէ ապրանք առնում, թէ ծախում, թէ գրաստի պաշտօն կատարում. վերջը բաղդը խաղաց նորա հետ, կատակ չ՚արեց, սրտանց սիրեց ու մի համեստ, ծանրաբարոյ, մտամիտ, գլուխը միշտ կախ, սակաւախօս ընկեր էլ շնորհեց, խուրջինը Բզզէի ուսից վերցրեց, Բզզէի բեռը թեթեւացրեց, Բզզէին օգնութիւն ուղարկեց:

Մի մարդի հետ որ բաղդը հաշտուի, ամեն կողմից բարութիւններն սկզբումը անձրեւից գոյացած սարալանջերով վազող քչքչան վտակների նման կը տեղան, վերջը վտակները գոչգոչան գետերի կը փոխուին ու մարդի տուն ու տեղը, քունջ ու պուճախը, ծոցն ու գրպանը կը լցնեն:

Ի հարկէ, բաղդաւոր էր Բզզէն, որ մի երեկոյ գիւղերից վերադառնալիս՝ Կարբի գիւղի մօտերքը գնչուների (բօշայ, ցիգան) կարաւանը նրան հանդիպեց և մի շատ յաջող փոխարինութիւն առաջարկեց:

Բօշայի սև իշուկը հիւանդացել էր, ճանապարհի մէջ տեղն երկար ու ձիգ չորս ոտքը չարդախ էր արել, տիրոջ սիրտն իւր գնչի պէս սեւացրել. ոչ ծեծ ու մահակի, ոչ քացու ու հայհոյանքի էր անկաջ գնում, ոչ բարկութիւն ու աղաչանք էր բանի տեղ հաշւում և ոչ տեղիցը շարժուել էր ուզում:

Մոլորուել էին գնչուները. ամակտար, աշխատաւոր իշուկ էր, սպանել, կաշին քերթել՝ ձեռքները չէր զօրում, թողալ, հեռանալ՝ ափսոս էին գալիս:

Որտեղից որտեղ՝ Արագածի իրիգնապահի գիժ քամին պտտեց, մեր Բզզէին գնչուների կարաւանին դէմ բերեց:

--Ի՞նչ տամ, բօշա՛, յանկարծ դուրս թռաւ Բզզէի բերանից:

—Ի՞նչ կը տաս, ջանի՛կս:

—Երկու սիլլա ([illegible]), մի քացի. խեղճ անասունը, որտեղ որ է, շունչը կը փչի, գիշերս քաղցած գայլերի ու բուրդը թափած աղուէսների փորերը կը կշտացնի, լաւն էն չի՞ խուրջնումս գտնուած ծիրանի չիրը վերցնէք, կեանք ու արեւը ձեզ բաշխող, բազմաչարչար հայվանին ինձ թողնէք, շալակեմ, տանեմ մեր գոմումը վէր քցեմ, կը սատկի՝ կաշին ինձ համար տրեխ կ՚անեմ, կը հագնեմ, ձեզ կ՚օրհնեմ. կ՚ապրի՝ կժերը միջքին կը դնեմ, գիւղումը ջուր չ՚եղած ժամանակը կ՚երթամ ձորիցը ջուր կը բերեմ, ինքս էլ կը խմեմ, ուրիշի սիրտն էլ կը հովացնեմ, ձեզ էլ վարձք կը լինի, ինձ էլ:

Գողն ի՞նչ կ՚ուզի՝ մութը գիշեր. չիրը խաւարի մէջ դատարկուեց, գնչուների բոբիկ երեխաների սիր-տըն ուրախացաւ, Բզզէն էլ գրատի տէր դարձաւ։

Էշն էլ խելք ու իմաստութիւն է ունեցել. հէնց որ Բզզէի մօր գողնոցն առջեւը փռուեց, գարու հոտը քթովը դիպաւ, դիրքը փոխեց, իրան ուղղեց, գա-րին կրտմրտալ սկսեց, քիչ քիչ տեղիցը կանգնեց, գարին բոլորը մաքրագարդեց, Բզզէի հետ եղբայրա-նալն աւելի ձեռնտու համարեց, քան թէ գնչուների չարաճճի մանուկների տուած Յուդայի տանջանքը։

—Մէկ չը լինինք, երկու լինինք, իմ սիրելի բ օ շ ի տ ղ ա՛ յ. այս անունը տուեց իշուկին Բզզէն ու խուրջինը նորա պարտականութիւնը շինեց։

—Չօ՛շ հա չօ՛շ, չո՛ւ հա չո՛ւ անելով այնու-հետեւ՝ սիրտն ուրախ, քէֆը քոք, դանակը չաղ, դէմքը զուարթ՝ առաջ էր անում Բզզէն բօշի տղին ու ինքը նորա քամակից, գերեմաստի ծառից կտրած մահակը ձեռքին, լուսածէգին դուրս էր գալիս Կար-բուց, մինչեւ իրիկուն թափառում էր Կարբու շրջա-կայ գիւղերումը, արեւմտցին մտմտալով, փթփթա-լով, Բեօրօղլուի խաղերից իրան լսելի ձայնով դուն-դունալով, երգելով, գտնում էր Կարբի՝ աչքը ճամ-փին սպասող իւր պառաւ Սալբի մօրն ուրախացնում, նորա եփած ձաւարի փուխը (աբգանոշ) խփշտում, փորը կշտացնում, իւր մարմնին էլ հանգիստ տալի, բօշի տղի ոտներին էլ։

Կատաղի էին այն ժամանակուայ շները. օտա-

րական պանդուխտը մեծ դժուարութիւնով էր կարո-ղանում անցկենալ արեւելեան ազգերին յատուկ գիւ-ղական նեղ փողոցներով, փոքր էր մնում, գազան-ները ծուիկ ծուիկ անէին. ձիաւորին ձիուց էին ներ-քեւ քարշում, եթէ գիւղացիներից օգնութիւնն ուշ էր հասնում. իսկ կօլտա Բզզէի հետ բոլոր սարսա-փելի գամբռները հաշտ էին։

Հաւատարիմ անպահները, ճաշուայ շոքին, բակի դրան շէմքի առաջին մի կողքի ձգուած, երբ Բզզէի խուպոտ, հազագային ձայնն առնում էին, բրդոտ, կեռիկ պոչերն երեք անգամ գետնովն էին տալիս, ողջունելու նման մի շարժում էին անում ու նորից անձնատուր լինում բոլէական հանգստու-թեան։ Պառաւուկ սատի օրօրի նման անուշ էր հըն-չում կատաղի օտարատեացների ականջին կօլտա Բզզէի սովորական հետեւեալ մեղեդին.

—Խանում-բաջինե՛ր, թել առէ՛ք, ասեղ առէ՛ք, ձուլթ ու ծամոն առէ՛ք, քիշմիշ ու նօխուտ առէ՛ք, ձեր պատռուածները կարկատեցէ՛ք, ձեր ակռաների (ատամ) ջաղացքը բանեցրէ՛ք, ձեր կտուցը քաղցրա-րէ՛ք, ձեր ճժուկ-պժուկի (մանուկներ) պզզոցն ու վնգոցը կտրեցէ՛ք։ Աղայ աղջիկնե՛ր, օտարի ապրանք-նե՛ր, աչքի սուրմա (դեղ) առէ՛ք, գեղադրիք առէ՛ք, հիլ ու մեխակով բերաններդ անուշացրէ՛ք, ջուր արէ՛ք գլխներդ ու ծոցներդ քսեցէ՛ք, ջահել կորիձների սիրտը գողացէ՛ք, վիզը փաթաթուեցէ՛ք, գլխներուն ցաց-թիկունքներուն բեռ դարձէ՛ք։ Տօ՛, սատանի ձագե՛ր,

անկիւնում ճժե՛ր, դուք իմ անբաժան պոչուկնե՛ր, ինձնէ հեռացէ՛ք, ձեր մամերու ([illegible]), ձեր ադէներու ([illegible]) գլուխը տարէ՛ք, քաղցր քիշմիշիս տոպրակը պարպեցէ՛ք ([illegible]), ծամոնիս լիքը պարկը դատարկեցէ՛ք. տօ՛ դևի լակոտնե՛ր, աներես սրթխնե՛ր, ի՞նչ էք չորս կողմս շարուել, ճամփաս արգելում, քելէ՛ք (գնացէք), չի՛ր, փշատ, բամբակ, ալուր, բրինձ գողացէ՛ք, բերէք խուրջինս տկլեցէ՛ք, ծամոն ծամեցէ՛ք:

—Դէ՛ լաւ, դու մեզ հայհոյում ես հա՞, կոլոտ Բզզէ՛, ուրեմն կերթանք, էլ քամակիցդ չենք ընկնիլ, սպառնում էին մանուկներն ու հեռու քաշւում:

—Տօ՛ ձեզ ղուրբա՛ն, ձեր մօրը ղուրբա՛ն, լեզուխս ի՞նչ կաշէք, սրտիս աշեցէ՛ք, աչքս հանէք՝ ձէն չեմ տալ, ըմէն ձեզ փէշքա՛շ, եկէ՛ք, կերէ՛ք, փչացրէ՛ք՝ թաք ինձնէ մի՛ հեռանաք. խեղճն սիրտն տանում էր նա մանուկների և մի բուռը չամիչ հանում, նրանց բաժանում:

Բզզէի ամենից սրտինատու յաճախորդները գիւղերի փոքրիկ չարերն էին, քան թէ խանում-բաջիները. բայց երեխաներից աւելի նա սիրում էր քունջ ու պուճախից իրան ձեռքով անող, մօտ կանչող գնորդներին: Սիրուն նորահարսներն էին վերջիններս ու արբունքի մտած, իրանց ճանաչած աղջիկները, որոնց անունը լուսաւորեալ աշխարհքումը «օրիորդ» բառով է կնքուած:

Բօշի տղի բնազդումն աւելի էր զարգացած,

քան թէ Բզզէի ուշք ու միտքը. հէնց որ տան մեծը, տան տղամարդը, սկեսուրը, սկեսրայրը, ամուսինը, տագրը, եղբայրը մի տանից հեռանում էին, բօշի տղան այդ տան առջևից անցնելիս, ոտքը ծանրացնում էր: Բզզէի աչքն էլ իւր հարազատ եղբօր— բօշի տղայի ոտքերին էր, ձեռաց նա էլ փայտն էր սևին տալիս, կանգ առնում փողոցումն ու ձեղեղին գլում:

Ահա՛ դուրս էր սողում հացատան անկիւնից մարաղ մտած կատուի նման քօղը մինչև կուրծքը ցած թողած, երեսը ծածկած նորահարսը. նա ձախ ձեռքով բարձրացնում էր կարմիր մետաքսեայ քօղը և աջով նշանացի ներս էր կանչում կոլոտ Բզզէին դէպի ամենամութ խորշը:

Մի անագեայ ասեղաման, մի սև ոսկրեայ գեղալլի ([illegible]), աչքեր թխացնող փոքր ինչ փոշի՝ նորատի ամուսիններին գրաւելու ճիշդ միջոց, մի քանի միխակի հատիկներ, մի երկու շարք գոյնզգոյն գիւրազին ուլունքներ,—ահա՛ ապրանք էին սիրաբորբոք նորահարսի առևտրի առարկաները: Մի մեծ ամանով ալիւր, մի երկու տասնեակ ձու, մի քանի բուռը բրինձ, ձաւար, ձէթ, իւղ և տանը գտնուած ամենատեսակ բարիք, ինչ կուզէ թող լինի, քարից փափուկ լինի, ուրախութեամբ ստանում էր Բզզէն իւր ծախածներին գին և սև խշուկի շալակը ծանրացնում:

Զգոյշ էին սիրուն հարսները, նրանք շատ հե-

ռատես են, հում գործ չեն բռնիլ. նրանք քաջ գիտէին, որ վայը կը գար իրանց արևին, ակնսօր բուան մէջ կը մնային իրանց ծամերից քաղած մազերը, եթէ իրանց առուտուրը յայտնուէր, կամ մէկը նրանց տեսնէր Բզզէի հետ ձեռք ու ոտքով, իշարաթով (նշանոցի) խօսելիս: Հնարքն առաջուց մտածուած էր, զգուշութիւնները ձեռք էին առնուած. ահա բակի դուռը ծերպ արած (կէօռքօց) այնքան, որ աչքի մինը հազիւ տեղաւորուէր, հսկում է հարսի սրտակիցը՝ տան մէջ նորա հետ միակ խօսակից ընկերը՝ նորա քաղցրալեզու տալը՝ նորա ամուսնի մարդու տանելու քոյրը՝ տանու օրիորդը:

Մի հազոց, մի թեթև ծափ աղջկայ կողմից բաւական էր գեղեցկուհի շողակն քնքուշիկին յական թօթափել իւր վարագուրի տակը հալածուելու համար:

Միջանկեալ ասենք, որ վաղ ժամանակը ո՛ր տան անկիւններից մէկում տեսնէիր վարագոյր կախուած՝ իսկոյն կը հասկանայիր, որ այս տարի այն տեղ մի պսակ է կատարուել, տան կեցողների թուումը մի չխօսկան անգամ է աւելացել, տան ջահել ադամարդի կողքը տաքացնող է եկել: Մինչև տարին չը բոլորուէր, ոչ վարագոյրն անկիւնից կը վերացուէր, ոչ հարսի երեսից քօղը. մի օտար ոտնաձայն առնելուն պէս, իբր կրակին էրուելիս լինէր, հարսը պարտական էր ձեռքից թողնել, վարագուրի տակը խցկուել:

Կօլոտ Բզզէն վարժ էր իւր արհեստի մէջ. օրիորդի նշանները նրան էլ զգաստացնում էին, յառաջ էր գալիս նա բակի մէջ տեղն ու իւր նշանաւոր երգը շարունակում:

Շատ լաւ գիտէր Բզզէն, որ ինքն ուրիշ չարչիների վերայ մեծ առաւելութիւն է ստացել իւր ման եկած գիւղերումը. այդ մի գաղտնիք էր, թէ ընչո՞ւ ամենքը վստահ էն կօլոտի հաւատարմութեան վերայ. ոսկին որ սինով (թեփէ) դրած լինի, Բզզէն վրէն խէթ աչք չի ծռիլ.—ահա՛ այս կարծիքն էին կազմել գիւղացիք Բզզէի մասին:

Բայց թէ այդպէ՞ս էր արդեօք, ոչինչ բանի ձեռնամուխ չէ՞ր լինում նա տանն Ադամորդի չեղած միջոցը, խուրջնի մէջ կամ գրպանը չէ՞ր մըտնում տնային որ և է գործիք,—այդ Բզզէին ու սատանային էր միայն յայտնի, Աստուած այդպիսի տեղերումը գործ ու հաշիւ չ՚ունի:

Այսքանը միայն պարզ է, որ ամիսը մի անգամ կօլոտ չարչի Բզզէն երկու լիքը մաղէ թեռեր (պարկ) միմեանց կարած, իւր սիրելի բօշի ողին բարձած, մի փայտեայ խթան ձեռքին բռնելով՝ Արարանու եգնակարաւանի հետ ճանապարհորդակից եղած՝ անցնում էր Աշտարակու կամրջովը դէպի Երևան:

—Ջա՛ն, ջա՛ն, նորա շուրջը ոստոստալով՝ ճամփու էին դնում Բզզէին գիւղական մանուկները մինչև կամուրջը, Բզզէն իւր գողացած մանրունքը տանում է Երևան ծախի, ապրանք բերի, երկու-երեք

օրից յետոյ լիութիւնը կ'ընկնի, բերաններս կը քաղցրանայ:

Այս չարչարութեան երրո՞րդ, թէ չորրորդ տարին էր:

Բ.

ԿԱՐԲԻ ԱՒԱՆԸ

Պատմութեան մէջ շատ վաղ ժամանակներից է յայտնի Կարբի աւանը. Նորա հռչակի համար, արդարեւ, մեծ յիշատակութիւններ չը կան, բայց ի հնուց անտի Արագածոտն գաւառի արեւելա-հարաւային կէսը Կարբու անունն է կրել, Կարբու գաւառ է կոչուել: Արագած մեծանիստ ու ծաղկաւէտ սարի հարաւոտ գաւակ Քասախ գետը, թողած իւր հայ աշխարհքի համար պարծանք, քրիստոնէութեան օրօրան Էջմիածինը՝ ահեղազօր Տրդատի սիրելի մայրաքաղաք Վաղարշապատը, որի դաշտերը ոռոգելով, որի հողը լիզելով գնում, ողջունում է հայ աշխարհի Մայր-Արաքսին և նորա ծոցումը հանգստանում, այդ Քասախն էլ, ասում ենք, շատ երկար ժամանակներ Կարբու գետ է կոչուել, Կարբու անունովն է ճանաչուել: Այսքանը բաւական չէ, մինչև այսօր մի երգի վերջաւորութիւն—Թափշուրմայ կայ, որ Կարբուն վաճառաշահ քաղաքի փառքն է ընծայում: Եթէ երգը մոռացուել է, որից շատ պատմական մանրամասնութիւններ կարող էինք հետեւցնել, բայց Թափշուրմի տողը շատ բան է պարզաբանում:

Ահա՛ թէ ի՛նչ է պտըտում երբեմն առած ժողովրդի բերանում.

«Դուքան-բազարն է Կարբին»:

Իսկ դուքան-բազարներ միայն հին ժամանակը մեծամեծ քաղաքներում են տեղի ունեցել:

Քանի մի տարի առաջ, մեր աչքով տեսած բանն է, քարակոյտների ու ողբալի աւերակների խառն ի խուռն և անկանոն դիզուածքներ էին Կարբու մեծ մասը. տեղ տեղ միայն տխուր տպաւորութիւն էին անում մարդու վերայ աւերակների մէջ ցցուած անշուք բնակարանները, որոնք կէս դարից դէսը կառուել, վերաշինուել և իրանց տակ տեղ են տուել Հին-Բայազիդից գաղթած մեծաթիւ գաղթականութեան մի փոքրաթիւ հատուածին. և ի՛նչ շէնք ու շինութիւններ. հին փառաւորութեան հետքը չէ նշմարւում ոչ հիմա, ոչ մօտիկ անցեալումը. անճաշակ ու աղքատիկ միայարկ խրճիթներ են բուսել կամարակապ և քարակերտ պալատների տեղ:

Հին հոյակապ քաղաքից շէն և անմխաս էր մնացել միմիայն հինաւուրց սաղաձեւ ճարտարապետութեամբ կառուցած ամրապինդ սուրբ տաճարը, դրանք են Կարբու մայր եկեղեցին և իւր նշանաւոր զանգակատունը՝ մի քանի կանգուն տեղ իրարից անջատուած. նրանք մշտամնուն ականատես և կենդանի վկայ են եղել այսօրուան փլատակների նախկին փառազարդութիւններին:

Դարեր եկել, սահել էին, կործանիչ բնակալ

ձեռքեր խարբալել, հիմն ի վեր էին տապալել Կարբին, նորա ամէն մի քարը տասն անգամ շրջշրջել էին, թէ ի՛նչ է, իրանց ագահ ընչաքաղցութիւնով կարողանան մի պահեստի տեղ, մի ծածկած դանձ գտնել. բայց աներեւոյթ մատն ամէնքի վերայ սարսափ ու զարզանդ է ազդել և թոյլ չի տուել անսուրբ ձեռքերին դիպչել, մօտ գալ իւր նուիրական տանը:

Հարկաւ, մի սուգ անող, մի լալկան պէտք էր այս լուռ գամբարանի վերայ և հէնց այդ ողբերգուն մնացել էր Աստուծոյ սուրբ տաճարը—Կարբու եկեղեցին: Սև սև քարերի ծերպերից բուսած կանաչներն են տառապեալ և վշտակոծ այրու գզգզած մազերը, պատերի և առաստաղի վերայ մնացած խոնաւութեան հետքերն են նորա չորացած արտասունքը, տեղ տեղ բնութեան հարուածներից մաշուած և դուրս թափուած քարերի խոռոչներն են նորա վէրքերը:

Լռել են Կարբու սաղմոսերգութիւնները, այլ ևս չի հնչել ժամ հրաւիրող կոչնակի ձայնը և միայն գլխակեր բուն փոխարինել է կոչնակ զարկող ժամկոչին:

Այսօր էլ չեն քերուել Կարբու եկեղեցու Կ ի զ ի—Մ ա տ ո ւ ռ անունով զանգակատան գլխից գիշակեր թռչունների ապականութեանց հետքերը:

Կարբու գիւղը ներկայումս խիստ մեծ չէ. բայց, ինչպէս երևում է, նա շատ լայնանիստ տեղ է բռնել. բուն Կարբուց մի ժամաչափ հեռու մի աւերակ կայ,

որ Հին Կարբի անունն է կրում. այդքանով էլ որ չը բաւականանք, շատ անգամ ամայի և խոպան տեղը վարելիս Կարբու շրջակայքում՝ գութանի խոփը բանդ է ընկնում մի հին պատի, մի կիսաքանդ շէնքի, որից երևում է, որ իւր ժամանակին նա մեծ տարածութիւն է ունեցել:

Բայց զարմանք բան է, թէ այդ նշանաւոր քաղաքն իւր բազմամարդութիւնով ի՞նչպէս է կառավարուել առանց ջրի: Անուշահամ Քասախ գետը, որքան և Կարբու անունով է կոչուել, բայց կարբեցուն միշտ սակաւամատչելի է մնացել. անդնդափոր ձորը, որի միջով գծի նման գոռում-գոչում անելով՝ վազում է Քասախը, իւր վիթխարի ժայռերով և դժուարագնաց մուտքով այսօր էլ անհիւրասէր է դէպի Կարբին:

Մի գետակ կայ միայն, այդ Դալի-չայ անուն կրող Արագածի զաւակներից մինն է, որ ոռոգում է Կարբին և իւր շրջապատող Արագածի լանջի վերայ ընկած գիւղերը. իսկ այդ գետակը շատ անբաւականացուցիչ է Կարբու և մի քանի ուրիշ գիւղերի համար:

Այսպէս թէ այնպէս՝ Կարբին մի պանծալի դիրք է ունեցել և իւր գրուած ու տարագրուած ժողովուրդը վաճառականութեան ու ճարպիկութեան մեծ ընդունակութիւն է ցոյց տուել:

Միայն «դուքան-բազարն է Կարբի» խօսքերը չեն, որ կարբեցու առեւտրականութեան յաջողակու-

Гос. Библиотека

թեան ապացոյց են. տեղական բնիկները կարբեցուն կոչել են և կոչում են սատանախաբ կարբեցիք։ Այս խօսքերին իբրև հիմունք մի կարճ առակ ևս մնացած է, որով որոշւում է կարբեցու սեպհական ձիրքը։

Ահա՛ այն առակը։—Մի անգամ, որպէս թէ, մեծ վիճաբանութիւն է ծագել կարբեցու և սատանայի մէջ. արևի ծագումն է եղել նրանց հակաճառութեան շարժառիթը. Նրանցից ամեն մէկը պարծեցել է իւր հեռատեսութեամբը. պայքար են մտել, դաշն են կապել, մեծ վճարք են դրել, թէ ո՞վ իրանցից շուտ կը տեսնի արևի ծագումը։

Արշալուսից էլի կանուխ՝ երկուսն էլ կանգնել են որոշեալ տեղում. դէպի արևելք է սևեռել իւր աչքերը սատանան և սրտատրոփ սպասել է երկրի լուսատուն տեսնելու և դաշը շահելու։ Դէպի Աւագ-Մասիսի երկնածայր և ալեզարդ կատարն է նայել ճարպիկ կարբեցին։

—Յաղթութի՛ւն, ծափ զարկելով ձայն է տուել կարբեցին և ցուցամատով պինդ խթել է իւր հակառակորդի կողքը։

—Ի՞նչ է։

—Զօռն ու ցաւը պինչդ է, կոյր ես ու Աստծու երեսից ընկած. ի՞նչ ես դունչդ արևելք ցցած մնացել՝ գարու հոտին քիթը վեր քաշած իշի պէս, աչքդ արևմուտք դարձրո՛ւ, ահա՛ պսպղում են Մասիս-պապի արծաթափայլ մազերը, չե՞ս տեսնում,

ձիւնի ոսկեշաղ հատիկներն անգին ալմաստի պէս աչք են ծակում, հիմի աչքերիդ եղած լոյսն էլ կը կտրեն։

—Իրաւ, որ աչքով էլ, մտքով էլ կոյր եմ եղել, որ աշխարհքի ստեղծագործութիւնից մինչև էս օր հարիւրաւոր փորձանք եմ հասցրել այս աշխարհին ու ոչ մի օր չեմ նկատել, թէ Մասիսն է իւր վիթխարի հասակովն արևին առաջին բարև տուողը, խոստովանում է անկտրումը։

Ուղիղ էր սատանայի խօսքը. հայ աշխարհի համայն լեռների կատարների վերայ է մայր-Մասիսի—սրբազան Արարատայ հսկայական հովանի աչքը. Մասիսի գագաթի արևելահայեաց կէսն է ծէգաբացին դիմաւորում լուսաւորների թագաւորին, իսկ երեկոյեան, ժանգառքից յառաջ, նորա արևմտեան երեսն է առնում աշխարհիս արտաքին մակերևոյթը խաւարի մէջ թողնող հեռացողի վերջին հրաժեշտը։

Ահա՛ այդ ճարպիկ ժողովրդի, այդ առևտրականութեան ընդունակ մթնոլորտի զաւակն էր կոլոտ չարչի Բղդէն։

Գ.

ԲՈՒՆ ՈՐՏԵՂԱՑԻ Է

Կարբեցի էր, ասում ենք, կոլոտ Բղդէն, Կարբու հող ու ջրի սնուցած, մեծացրած, չարչութեան պատուին արժանացած այդ գունդ ու կծիկը, այդ փչատի ծառի ծռտիկ-մռտիկ բունը։

Եւ արդարև, մարդ մոլորւում է Աստծու քնած ժամանակն ստեղծուած այս մարդանման զանգուածքին մի ուրիշ առարկայի հետ համեմատութիւն անել կամենալիս. խան ասես՝ խան չէ, Ադամորդի ասես՝ Ադամորդի չէ. մարդ լինէր, մարդանման ուղղակի իւր ճանապարհը բռնած յառաջ կերթար, կամ յետ կը գար. չորքոտանի՞ է, այն էլ՝ հազիւ թէ, մենք տեսել ենք, որ չորքոտանիքը մի բնորոշ մանգալու ձև ունին. իսկ մեր տնաքանդը գոնէ երկոտանու և չորքոտանու մէջ տեղը մի ուրիշ շարժուն էակ ներկայացնէր:

Ամենից յաջող համեմատութիւնը հնարել են կոլոտ Բղդէի մօտ եկած գիւղերի երեխայքը:

—Է՛յ, հրէ կոլոտ Բղդէն իւր բօշի տղին յառաջն արած՝ Մողնու Թառովը ներքև է գալիս, հէնց իմանաս՝ արջի երկու տարեկան քոթոթ լինի:

—Արջի քոթոթն էն չէ՞ր, որ հերու Թարվիզի լօթիքը բերին մեր կալումը խաղացրին, նա խօ՛ դուզ մանգալ ունէր:

—Դէ՛, ասա՛ նաւ ուղտ է էլի, դօշը դուրս պրծած, ոտ փոխելուս էլ ընգլնգում, տմբտմբում է:

—Ընչի՞ էք ձեր հոգուն մեղք անում, ուղտը, զորթ է, գնալուս տմբտմբում է, բայց ճամփէն ուղիղ է գնում. Բղդէն էդ շնորհքն ունի՞, մի լաւ մտիկ տուէ՛ք, — մի ոտն աջ է գցում՝ մինը ձախ, օձի պէս կոլոլ-կոլոլ է անում, կուտապ-կուտապ է գալիս:

—Թէ ըտէնց է, օձ ասենք ու պրծնենք:

—Օձն ափսոս չի՞, բարա՛կ, շարմա՛ղ:

—Բաս ընչի՞ նմանացնենք:

—Ես գտայ, ուրախութիւնով յառաջ վազեց մինն այն կողմիցը. ծառի փտած քոթուկը (կոճղ) որ ճղում ես, փախտ փախտ միջիցը միահաւասար կարճ ու հաստ որդեր են գլորւելով ներքև ընկնում, ոչ գլուխն է երևում, ոչ պոչը, շարժուելուս գլուխը աջ է գնում, պոչը ձախ, իսկակ ծառի որդ է, որ կայ:

—Ծառի ո՛րդ է, ծառի ո՛րդ է Բղդէն, Թըռչկոտացին, կայտռեցին միասին ծափ տալով մանուկները:

—Ծառի ո՛րդ կոլոտ Բղդէ, ծառի ո՛րդ կոլոտ Բղդէ, պար բռնեցին ու շրջապատեցին նրան:

Այդ համեմատութիւնն ընդհանուր հաւանութիւն գտաւ. Բղդէի կոլոտ անունին մի ուրիշն էլ աւելացաւ:

Զար մանուկների խօսքին կշիռ չը դնելով, մենք ճանաչենք նրան ընդ միշտ կոլոտ Բղդէ և ասենք, որ կարբեցի էր:

Բայց ցաւն այն է, որ մեր կտրական վճռովը խիստ մեղանչած կը լինենք. հեշտ չէ որոշակի անուն տալ նորա հայրենի տեղին:

Ա՛յ, թէ ի՛նչպէս:

Ամենքիս յայտնի է, որ դարուս առաջին քառորդին մի մեծ գաղթականութիւն տեղի ունեցաւ հայ աշխարհումը:—Կարապետ սրբազանը պոկեց Օսմանցու բաժին Հայաստանից մի ահագին բազմու-

թիւն և բնակեցրեց ռուսի ձեռքը նոր անցկացած հայ երկրում:

Դրանցից ղարսեցիք Գիւմրի եկան, արզրումցիք՝ Ախալցխայ և Ախալքալաք, բասենցիք՝ Աբարան. իսկ Հին-բայազիդցիք երեք կտոր եղան: Նրանցից մի մեծ հատուած իրան համար կենդրոն ընտրեց Սևանայ լճի չորս կողմը: Նրանք՝ իրանց հին հայրենիքի անունը ի բ ր և մխիթարանք և սրտներին հովութիւն բերած՝ հիմնեցին համեղ, անմահական իշխանաձկների հայրենիքումն իրանց նոր քաղաքը և Նոր-Բայազէդ կնքեցին: Մի քանի տուն էլ հարուստներից յարմար զատեցին Ղարսից Գիւմրի փոխուած հաջի աղաների հետ հարևանութիւն անել, ուղղակի քշեցին եկան Գիւմրի. իսկ մի փոքրիկ կտոր էլ ընդհատուեցին իրանց հայրենակիցներից և Կարբի հին քաղաքատեղումը բնակուեցին:

Եւ ահա՛ այս Կարբի գիւղում, Բայազիդից գաղթելու առաջին տարին, ամեն ծննդաբերներից շուտ, Կարբի տուն գալու ոտնամուտը շնորհաւորեց Պօղոս աղայենց հովուի կին այրի Սալբին և շնորհեց Կարբուն մի անդրանիկ արու զաւակ՝ մեր պատմութեան հերոս կոլոտ Բղդէին:

Ո՞ր տեղացի է ուրեմն մեր պատուական բարեկամը. կարբեցի ասելով՝ Բայազիդին կը վիրաւորենք, բայազիդցի կոչելով՝ Կարբուն սրտամնայ կ'անենք:

Թո՛ղ կոլոտ Բղդէի երկու հայրենակիցներն, ինչպէս կամենան, իրար հետ հաշտուեն, մենք աչքերս բաց ենք արել և ոչ միայն Բղդէին իրան, այլ Կարբու բոլոր ներկայ բնակիչների համար կարբեցի անունն ենք լսել. այդ հայրենիքն էլ նրան կը սեպհականենք:

Եւ մեղանչած էլ չենք լինիլ:

Երկու հայրենիքը՝ Կարբին և Հին-Բայազէդը, իրաւ է, երեք օրուան ճանապարհ միմեանցից հեռու են. մինը Մասիսի հարաւային երեսումը՝ Օսմանցու ձեռքին է մնացած, միւսը Արագածի թմբին ռուսի սեպհականութիւն է դարձած՝ բայց մի որակութեան մէջ, կարծես, միանում են. Թէ Բայազիդումը ծնած ու մեծացած և էս օր էլ այնտեղ մնացած հայը և թէ Կարբու էս օրուայ պտուղները, կարծես, մի խնձոր լինին՝ միջից կիսած, մի հօրն ու մօր դատած ու բերած զաւակներ: 50, 60 տարի է անցկացել, գնալ-գալ, բարեկամութիւն, ազգականութիւն մոռացուել են, երկու-երեք սերունդ են մին մնի յաջորդել, բայց երկու ժողովրդի դէմքերի երկարաւուն գծագրութիւնը, բարբառը, (որ կարնեցու և ալաշկերտցու բարբառից կազմակերպուած մի խառնուրդ է աւելի դէպի Ալաշկերտցին հակուած հնչումով), ներքին տնային սովորութիւնները, (թող Նոր-Բայազէդը ճարակող վերջերումս նորամուտ կեղծ քաղաքակրթութիւնը և տնաւեր շռայլութիւնը) և որ գլխաւորն է, բնածին ընդունակութիւնները մի և նոյն հօր զաւակն են համարում նրանց: Թէ բայազիդցին և թէ կարբեցին երկուսն էլ ճարպիկ են,

երկուսն էլ խելօք են, երկուսն էլ ամէն բանի մէջ կտրուկ են—Ջրաղացի բուգը ձգես՝ դուրս կը գան, քարիցը իւղ կը հանեն։

Եւ ի՞նչ է այստեղ ապացուցւում։

Ա՛յ ի՞նչ։—Մենք տեսանք, որ հին կարբեցիք «դուքան-բազար» են ունեցել, վաճառական ժողովուրդ են եղել, «սատանախաբ» անուն են տարել—ուրեմն խելքով օժտուած են եղել. իսկ նոր կարբեցիք նոյն ընդունակութիւնները և նոյն բնաւորութիւնն ունին. կճուճը գլորուել, խուփը գտել է. արժանաւոր հօրն արժանաւոր որդիք են վիճակուել։

Շատ չէին Կարբու նոր բնակիչները. 50, 60 տուն ընդհատուեցին ամբողջից և Կարբու աւերակները շէնացրին։

Վարչութիւնը չը միջամտեց նրանց տեղաբնակութեան բաժանման մէջ։

Իրանց միջի պատուելիները, որոնք աղայական իրաւունք և նահապետական արտօնութիւն էին վայելում, այստեղ էլ նոյն մենաշնորհութիւնն ունեցան, խելք խելքի տուին, չափեցին, ձևեցին, աւերակները հետախուզեցին, լաւ տեղերն իրանց վերապահեցին, մնացածը հասարակ ժողովրդի վերայ բաժին բաժին արին։

Ծալբին երիտասարդ այրի էր, նորա ամուսին, մի աչքանի Գապէն Պօղոս աղայենց հին տան ա մ ա լ ա ն ե ր ի ց ն էր, աչքը բացել էր և Պօղոս աղայենց շնչաւոր

կենդանիների թւումն իւր գլուխն էլ տեսել էր։

Եւ որովհետև ա մ ա լ ա ն մի տեսակ սեպհականութեան պէս բան է իւր տիրոջ համար, թէև ոչինչ քաղաքական կամ մասնաւոր պայմաններով կապուած չէ, այլ նահապետական աւանդականութեան վերայ է միայն հիմնուած, այդ պատճառաւ աղայի պարտականութիւնն է իւր ստորին անդամի, իւր հացակեր ծառայի—իւր ամալայի ամենատեսակ հոգսերը քաշելու։

—Տօ աղա՛յ, Գապէ՛, էդ ի՞նչ ա։

—Գլխուդ խուրբա՛ն, գառն ա, ասաց և թաղիքեայ կ ո ւ լ ա բ կոչուած հովուական վերարկուի տակից մի կայտառ, ձիւնանման, սպիտակ, ճակատը ծաղիկ, սիրուն գառնուկ հանեց Գապէն, գլուխ տուեց իւր տիրոջը ու տան մէջ բաց թողեց։

Յունվարի վեցն էր այդ օրը. Պօղոս աղան իւր ընտանիքի հետ Ջրօրհնեաց հանդիսին եկեղեցումը ներկայ լինելուց յետոյ՝ իւր գերդաստանի արական սեռի հետ նստած՝ ուրախ տրամադրութեամբ ճաշ էր վայելում։

Երեխայքը ճաշը թողած՝ վեր թռան և գառանը փաթաթուեցին։

—Տօ աղա՛յ, Գապէ՛, դու էդ գառ էս ձմեռւան կիսին յո՞ւստ ես բերում ես, հարցրեց քաղցր դէմքով Պօղոս աղան։

—Գապէն քո ոտքի տակի խողն է, քո սալից (է շնորհս փա), աղա՛յ, բալաք (խոյթաճըղէա) մաքին

(էգ ուլիկ) աշնան դէմ ծանրեր էր, երկու ամիս կայ, որ ծնաւ. ես լէ պահեցինք, աչք ունեցանք վրէն, ջոջացրինք ու բերինք քեզ փէշքէշ, ասաց Գապէն և կրկին գլուխը տաճկական ձևով ծռելով աջ ձեռքը նախ գետնին տուեց, ապա բերանին մօտեցրեց ու գլխի վերայ դրեց։ Այս նշանակում է՝ ես կռանում և իմ գլխի տիրոջ ոտքը համբուրում եմ։

—Տօղա՛, դու որ մեզի ուրախացրիր էս աղիզ օրը, ես էլ քեզի կ՚ուրախացնեմ. քո բեխեր, հա՛, հա՛, սևացեր են, ջոջցեր ես, օրերդ հասուկ են, էս բարեկենդանքին քեզ կը կարգենք (պսակել), մեր մեհտար (չէտողոն) Բդէի խորոտիկ Սալբի աղջկան կ՚առնեմ քեզի։

Գապէի քէֆը քոք եղաւ. Պօղոս աղան ասածը կատարեց և յետի բարեկենդաններին մի շաբաթուայ մէջ նշանեց ու պսակեց նրան։

Աղայի աւանդապահ ամուսինը՝ Ալմաստ խաթունը՝ շատ դիմադրեց, պնդեց պահպանել տեղական սովորութիւնը. նախ նշանել, մի երկու տարի նշանած պահել, վերջը պսակել. բայց Պօղոս աղան իւր խօսքին տէր կացաւ և նախնական սովորութիւնն առաջին անգամը քանդեց։

—Աշխարհը մեզ կը բամբասի, քիթը ցցեց խաթունը։

—Ո՛չ ոք բան չի՛ ասիլ, ապացուցեց աղէն. եթէ մենք ուրիշ տեղից աղջիկ ուզէինք, բաշլուղ,

սուդ հախի[1]) տայինք, ամեն ոք իրաւունք ունէր տրտնջալու, կամ մեր վերայ խօսելու. բայց մենք մեր մի ամալայի աղջիկը միւս ամալայի տղին ենք ուզել, տղէն էլ մերն է, աղջիկն էլ, երկուսին ուտեցնող, հագցնողն էլ մենք ենք, երկուսն էլ մեր տան անդամներն են, մի օր պէտք է այդ պսակը կատարէինք, և քանի շուտ՝ այնքան լաւ։ Ուրիշ բան էր, եթէ մեր ամալայի աղջիկը տայինք ուրիշ աղայենց ամալայի տղային, կամ նրանցը մենք ուզէինք, այն ժամանակ նշանածներին երկար միջոց կը պահէինք, բաշլուղ էլ կը չինէինք, սուդ հախի էլ կը տայինք։

Պօղոս աղան իրաւունք ունէր. երկուսն էլ իրանց ամալաներն էին։ Այդպիսի ամալաներ խոր գիւղերում մելիքների, առաջաւորների և ռէսների դրանը այսօր էլ կան և սրտի մօտ ու անտրտունջ ծառայում են։

Նրանց պահանջը շատ չէ. մի կտոր ցամաք հաց, մերկութիւնը կիսով չափ ծածկելու հնոտիներ աղայի կողմից, և ահա՛ նրանք կեանք չեն խնայում տիրոջ ուղուրին։

---

[1]) Բաշլուղ և սուդ հախ. առաջինը նշանակում է գլխագին, երկրորդը՝ կաթի գին. սոքա ահագին վճարքներ էին, որ հին ժամանակը փեսացուն տալիս էր իւր աներոջը։ Սուդ հախին գոքանչին յատուկ ընծայ էր։ Այժմ էլ շատ նահապետական տեղերում դեռ չի վերջացել այս սովորութիւնը։

Ամենից ժիր մշակը, ամենից հաւատարիմ և սրտացաւ անդամը աղայի տան համար՝ ամալան է։ Թո՛ղ ուրիշը տասնապատիկ առաւել փափկութիւններ և վարձատրութիւններ խոստանայ, ընչով կ'ուզէ, թող հրապուրի, ամալան իւր աղայի տան ցամաք հացը բոլորից կը գերադասի, նա իւր «աղայի չոր հացին կոյր չի մուխկ տալ»։

Բայց եթէ ամալան գրաւուի բանսարկուների խոստումներից, կամ ինքնաբերաբար մտածի թողնել իսպառ իւր տիրոջ շեմքը, ոչ ոք նրան դէմ չի կենալ, նա ազատ է իւր ընտրած ճանապարհը գնալու։

Ամալան իրաւունք ունի մինչև անգամ առանձին տուն ու տեղ դառնալ, իւր սեպհական վար ու ցանքն, իւր տնտեսութիւնն ունենալ և միաժամանակ իւր աղայի տանից ոտքը չը կտրել։

Եւ ահա՛ Գապէն Պօղոս աղայենց ամալայ Գրապէն՝ սիրուն կնոջ մարդ եղաւ, ընտանեկան քաղցրութեան ճաշակն առաւ։

Անբաղդ մա՛րդ, ճակատագիրն այլապէս էր անօրինել. Ռուս-Թուրքական առաջին պատերազմը նորա կենաց թելը կտրեց, գաղթականութեանը զոհ գնաց Գապէն, Նրասխի անցքումը քրդի կեռակոտուց սրին մատաղ եղաւ արթուն և անձնազոհ հովիւը՝ երկու քուրդ սպանելուց յետոյ։

Պատմութիւնը կարճ է. քրդերը չէին թողնում հօտն այս կողմն անցկացնել, ոչխարի յառաջը կտրեցին չորս ձիաւորով. Գապէն իւր կոմբալագլուխ դա-

գանակով (հովուական ցպով) երկուսին մի-մի հարուածով ձիուցը գահավէժ կործանեց, երրորդի սրից ինքն արիաբար ընկաւ։

—Մեղք է նաչար Սալբին, ասաց մի օր Պօղոս աղան Ալմաստ խաթունին, հերիք է՝ ինչքան որ խեղճը չարչարուեց մեր դրանը, մեր տան քամակի աւերակներից երկուսը ծածկենք, իրան տանք, մի աշխատաւէր, տնարար այրի տղամարդ ճարենք, ամուսնացնենք, թո՛ղ գնան իրանց արևի ձայնն ածեն. այս երեխան էլ կը մեծանայ, իրանք էլ նոր երեխայք կ'ունենան, իրանց մի կտոր հացը կ'ունենան։

—Չեմ կարծում, որ մարդու գնայ։

—Ընչո՞ւ համար, Սալբին գրաւիչ է, աչքերը սև, թշերը կարմիր, հասակը բարձր, անձն առողջ, մէջքը հաստ, ոսկրը պինդ, գործի կպչելուս էլ՝ կարծես հում հում է ուզում բանն ուտել, ընչի՞ պէտք է մեր դրանն օրը սև անի, կեանքը փչացնի։

—Ես միայն իմ մեռնելու օրը չեմ կարող իմանալ, պարծեցաւ նոյն երեկոյին Ալմաստ խաթունը Պօղոս աղայի մօտ. եօթը ժամ գայլի աւետարան կարդացի Սալբու գլխին, իրան սպանում է, այսուհետև, ասում է, իմ մարդն, իմ ուրախութիւնն, իմ մխիթարանքն էս մի մատը երեխէն է։ Եթէ իմ աղէն իւր քաղցր աչքովն ինձ էդ լաւութիւնը կանենայ, երկու ծածկի տէր անի, մինչև մահս քանի կամ, օրական մի հաց կ'ուտեմ, մինն իմ աղայի բարեկամութեան համար մատաղ կը տամ։

— Թող իւր ասածը լինի։

Եւ Պօղոս աղայի հրամանաւ կարճ միջոցից Սալբին իւր սեպհական յարկի տակն էր տաժանելի աշխատանքներից հանգիստ առնում։

Դ.

ԳԴՄԵԱՅ ՍՐՈՒԱԿԻ ՀԱՄԲՈՅՐՆԵՐԸ

Երկիրը փոխուեց, օդ ու ջուրը փոխուեց, մարդիկը նոր, սովորութիւնները նոր, աշխարհի տեղագրական պայմանները նոր։ Ջանազան Պօղոս ու Պետրոս աղաներն իրանց օրերը լցրին, հայր Աբրահամու նահապետական գոգումը հանգստացան, սեպհական աշխատանքը, գոյութեան խնդիրը աստիճանաբար յառաջ եկաւ և շատերի թւումը Սալբու և իւր խմորակեր փոքրիկի համար պահանջ դարձաւ։

Գնացին Կարբի գաղթած աղաների հարստութիւնները. փոքրիկ գիւղը, կարճ միջոցում, չէր կարող մրցել նահանգական քաղաքի հետ. Երևան թողած՝ ո՞վ կը գնար Կարբի առուտուր անելու. իրանք աղաներն էլ, որ սկզբումը մեծ յօժարութեամբ, առանց երկար ու խոր մտածելու, կենդրոնից բաժանուել և Կարբին էին ընտրել, փոքր առ փոքր այդ աղաները կամ աղքատացան և կամ երկրի պայմանների հետ լաւ ծանօթացան ու քաշուեցին ոմն այստեղ և ոմն այնտեղ, մի քանիսը գաղթեցին Գիւմրի, որ արդէն նոր մկրտուել էր և հին Թուրքական

անունի տեղ Ալէքսանդրօպօլ շքեղապանծ անունին էր տիրացել, մի մասն էլ Երևան գնացին, խանութների ու կայանքի տիրացան։

Կարբումը մնացին չքաւոր և բանւոր դասակարգը և միջակներից մի քանիսը։ Առաջիններին վիճակուեց երկրագործութիւնը, միջակները փորձ փորձեցին Հին Կարբու շուկայատեղի մի կարգ աւերակները շէնացնել, խանութ նստել և առևտրով պարապել։

Ոչ մինը և ոչ միւսը նպատակներին չը հասան. հողը սակաւ էր Կարբումը, վարուցանքսի տեղ չը կար, տարեկան ուտելիքին չէր բաւականանում ցանածները. ժողովուրդն ստիպուեցաւ օրավարձ մշակութիւնով պարապել, մի քանիսն էլ խուրջինի մէջ չ ա ր չ ո ւ խ ո ւ ր դ ա վ ա թ (փէրէզաշէն մօռը տղբօն։) դրած՝ գիւղերն ընկան, ոտքերի կաշին մաշելով թափառել սկսան. իսկ միջակ դասը խանութի դրամագլուխը խժռեցին, օրն եկած վաստակով ապրել չը կարողացան, սրանք էլ տորին գեղջուկի կարգն անցան։

Թէ կարբեցւոց և թէ շրջակայ գիւղականաց օրավարձ մշակութեան գլխաւոր կենդրոնը այգեշատ Աշտարակ գիւղն է։

Ձմեռն անցկացաւ. գարնան անուշաբոյր հոտը փչեց թէ չէ, Աշտարակի ճանապարհը կենդանութիւն կը ստանայ. կարբեցի, Յովհաննու-վանքցի, աբարանցի, մօտակայ պարսիկ գիւղացիք չոր հացը

գօտիներում, միջքներին կապած՝ լցւում են Աշտարակ՝ օրավարձ բանւորութիւն անելու, գլուխ և ընտանիք պահելու։

Տղամարդի, կինարմատի, մեծի, փոքրի, ամէն չափահասակի համար գործ կայ իմ սիրելի Աշտարակումը. ծով է, հօ գիւղ չի։ Եւ այդ ծովի մէջ արձակ լողում են ալիքների կոհակների պէս, նեղ փողոցներումը ծփում են օրն ի բուն աշխատանքի և հացի կարօտ խուռն բազմութիւնը։ Ո ւ ռ ո ւ ց կոչուած փոքրիկ հրապարակը (Աստուած հրապարակ համարի՛) գլխաւոր ժողովատեղին է օրավարձ մշակների. իրարանցում, ճիչ, աղաղակ ականջ են ծակում՝ մարտը սկսելուց մինչև խոր աշունքը Ուռուցումը առաւօտները շատ վաղ։ Չի տեւում կէս ժամ, արեգակի գլուխը փայլելուն պէս՝ Ուռուցումը մի մշակ չես գտնում, բոլորը վարձուել են, բոլորը քաշուել են այգիները։

Հին ժամանակը հում նիւթ էր մշակի վարձատրութիւնը, Աշտարակի մեղրածորան պտուղները, քաղցրախում գինին և գրգռիչ օղին էին աշխատանքի գինը. այսօր այնպէս չէ, այսօր ամէն ծառայութիւն փողով է վճարւում։

Միայն փոքրահասակ երեխայքն ու պառաւկանայքն են, որ տեղական բերքի հետ են փոխարինում իրանց աշխատանքը։ Այսօր արքատ պէտք է ժողովուի, վաղը ծիրան պէտք է հաւաքուի, տներումը բուրդը՝ այգիներումը քար պէտք է մաք-

րուի ու զզուի. այդ բաները պառաւների ու մանուկների գործն է. կ՚անեն, կ՚աշխատեն, կ՚ուտեն և Աստուծու տուած եկամտից շաբաթուայ վերջը, կամ ամէն երեկոյ, իրանց վարձը կ՚առնեն լիուլի ու կերթան։

Միայն հեռաւոր աբարանցին է, որ շաբաթով մնալու պայմանաւ է տեսնում իր պատրաստութիւնը։ Վա՛յ այն պատրաստութեանը. ինքն է՝ իր քրքրուած չուխէն ու անթարին, իր քօլոզն ու իր տրեխները ու մէկ էլ մի ձեռաց դագանակ. ոչ շալակին պաշար կայ, ոչ գրպանումը կոպէկ, քաղցած փորով գալիս է, կուշտ վերադառնում. իսկ մերձակայ գիւղացիք առաւօտը գալիս են, երեկոյին վերադառնում։

Տարուան խստասիրտ եղանակը՝ դառնաշունչ ձմեռն իր բոլոր անողոք սաստկութեամբը նոյնպէս չի կարողանում յաղթել Աշտարակի սիրահար այցելուներին։ Ձիւնը գազուկէս նստում է, բուք ու բորեալը աջ ու ձախ վզզալով ճանապարհների հաղորդակցութիւններն ընդհատում են, Աբարանը անդրովկիանեան անմատչելի աշխարհ է դառնում, իսկ Աշտարակի ճանապարհն երբէք չի կտրւում։ Կենսատու հեղուկը—ոսկրներ տաքացնող գինի—արաղը մագնիսի պէս իրանց են քաշում իրանց երկրպագուներին։

Ցեղը կը քրքրի մի որոշեալ թիւ Յովհաննավանքցու, կարբեցու, մանաւանդ մուղնեցու մարմինը,

եթէ շաբթի գոնէ երկու օրը մի գաւ ձեռքին՝ Աշտարակ չ՚իջնի:

Առանց յարգելի պատճառի չը շէշտեցի մողնեցոնց վերայ, որոնք Աշտարակի ամենամօտ դրացիներն են, և այդ հանգամանքը իրանց թշուառութեան գլխաւոր պատճառներից մէկն է. ամառ և ձմեռ մողնեցին ծոյլ, անգործ, անբան և աղքատ է, նորա հողերն ուրիշներն են վարում, որովհետև սուրբ Գէորգի ուխտատեղին տաք մատաղով է կշտացնում մողնեցու փորը, Աշտարակն իւր մարսեցուցիչ խմիչքներովն է լրացնում նրանց հաճոյքը. գի՞ժ է ուրեմն մողնեցին՝ երկիր վարի, քրտնի, չարչարուի և տընտեսութեամբ պարապի: Անծանօթ աչքն էլ դժուարութիւն չի կրիլ զանազանելու բնիկ աշտարակցիներից գիւղի նեղ նեղ փողոցներում մի տանից միւս տուն մուտ ու ել անող օտարականին:

Սրանք ահա՛ վերոյիշեալ Բաքոսի պաշտօնեաներն են, որ ձմեռուայ հետ համբերութեամբ կռւտալով, մի տեսակ քցել են իրանց Աշտարակ և ծանօթների տներն են այցելում:

Տալիս են նոքա սովորական բարևը հիւրասէր տան տիրոջը և քուրսու ներքին կողմումը առանց համեցէքի չոքում, ձեռքները կոխում գիւղացու այդ միակ տաքութիւն պահող փալասներով ծածկած թախտի տակը:

—Օ՛ֆֆ...

—Ի՞նչ կայ, սանահէր Բարսե՛ղ:

—Խիստ ցուրտ է, դողմանի եմ դիպել:

Մեր հիւրն իւր խօսքը հաստատում է մարմինը սրթսրթացնելով և ատամներն իրար բաղխելով:

—Կը մրսես, ի հարկէ, քարերն էլ սառուց են կտրուել, իսկ քո միտդ հարիւր տեղից բաց երևում է. հէ՛ր օրհնած, վրայիդ արխալղահինը տասը տարի է, հետդ անբաժան եղբայր է. կնոջդ աչքերը հէնց իմանաս ձիւնը տարել է, աղբանոցումը լէքը փալաս-փուլուս է, թող հաւաքեն, կարկատեն, մէջքները հօ չի՞ կտրիլ, բան ու գործերի անո՞ւնն ինչ է, քարգահի տակ են նստա՞ծ, թէ խնոցի են հարում:

—Է՛հ... կնքաւոր Աղօ՛, մինն ասում ես, միւսը թողում. երեխայքս քաղցած ճաշին են քնում, տանը բրդուճ չը կայ, ո՞վ սիրտ ունի իւր գլխի ճարը քաշելու: Տանը որ հացի կտոր լինէր, գլխիս ի՞նչ թաս էին կոխել էս ցուրտ ու բուք վախտը, էս պարզկայ օրը տանից դուրս գալու. եկել եմ քեզանից մի քանի շահի խնդրեմ, ալիւրի տամ, շաղախենք, երեխեքանց բերանը քցենք:

Շատ է լսել աշտարակցին իւր սանահէր մողնեցի Բարսեղի խօսքերը. նա ընչացքի տակին ժըպտում և հրամայում է կնոջը, հարսին, աղջկանը գինու դըմեայ սրուակը կարասիցը լցնել ու սանահէր Բարսեղի մրսած անձը տաքացնել:

Մոռացուեցին այնուհետև ընտանիք, կարիք, մերկութիւն. մեր սանահէրը մի շարք մեծ պատից

երկար օրհնութիւնով սրուակի կոթը բերանին մօտեցրեց, մինչև յատակը քամեց և մաքրասէր կատուի նման շրթունքները լպստելով, արխալղի քղանցով էլ ընչացքը սրբեց:

—Անո՛շ:

—Կեանքդ խօ՛շ, Աստուած օջախդ շէն ու շէն պահի՛, հէրդ դրախտի մէջ հայր Աբրահամի գոգումը ծլվլայ. հիմի գնամ տեսնեմ՝ ի՞նչ եմ անում, ասում է մեր Բարսեղը, տեղիցը վեր կենում, մնաս բարևը տալիս կնքաւորի տանը:

—Մի կտոր կակուղ հաց ու սոխ բե՛ր, խանում բաջի՛, խնդրում է Բարսեղը մի երկրորդ տան գդումը ցամաքեցնելուց յետոյ, այսօր բերանս նշխարք չի մտել, ինքս էլ շատ ուշացայ, օրը մթնեց, ոտներիս ոյժը մի քիչ տեղը բերեմ ու դպա տուն ձգուեմ:

—Այս գաւն էլ լցրեցէ՛ք, առաջարկում է Բարսեղը մի ուրիշ տան, նոյնպէս գդումի հետ համբուրուելուց յետոյ, եղբայրս սաստիկ մրսել է, հիւանդ է, քիթը բանես՝ հոգին կը փչի, էսօր առաջին անգամն աչքը բացեց և գինի ուզեց. փոխարէնը գարունը մի օր կը գանք կը բանենք, մի բանւոր ինձ վրայ ունենաս:

Գաւը լցուեց և տիրոջ հետ ճանապարհ ընկաւ դէպի վեր:

Երևում է, ցրտի սաստիկ ոյժն է բորբոքիչ հեղուկի զօրութիւնը պակասեցրել, ապա թէ ոչ, այսօր հինգ վեց լիքը գդում Բարսղի բերանին է կպել, դա-

տարկ յետ տրուել. գինի է, հօ ջուր չէ՛: Անծանօթը ոչինչ չի նշմարիլ Բարսեղների քայլերից. սովոր աչքը միայն քամակից կը դիտէ, կը ժպտայ:

—Հիմքդ հաստա՛տ մնայ, Աշտարա՛կ, միմեանց ցոյց տալով ասում են գնացողի ետևից. տե՛ս ինչպէս մուկը Բարսեղին ասլան է կտրացրել, կաքաւի տներով է Մողնու թումբը (Բարձրա—անւակո—Ըի—նը) սորոր տալով՝ դէպի վեր քշում:

Բարսեղներն իրանց պայմանին հաստատ են. նրանք փորի գերի են, վաղ գարնանից մինչև ուշ աշունք նրանք ձմեռուան գաւերի վճարքն են յետ տալիս, մի կոպէկ նրանց գրպանը փող չի մտնում. շատ էլ արխութեամբ գործում են, երբէք էլ իրանց ընտանիքի մասին մտածել չ'ունին, երեխայքը տանը քաղցած ու տկլոր կոտորուին, միայն թէ գինու գդումը նրանց հետ յաճախ համբուրուի:

Ե.

ՏԱՍԸ ԿՈՊԷԿ, ԿԱՄ ԵՐԵՔ ԱՐԾԱԹ ԿՈՊԷԿԱՆՈՑ

Երեկոյ է. աշնան բարեխառն և մեղմ երեկոներից մէկն է:

Աշտարակից դէպի Աբարան տանող գարիգուսը լիքն է հարիւրաւոր հետևակ կին ու մարդ, մեծ ու փոքր ճանապարհորդներով, բոլորի երեսը դէպի Մողնի և Թիկունքը դէպի Աշտարակ է:

Հեռացողները շատ ուրախ են. զուարճախօսու-

թիւն, կատակ, օրուան թարմ անցքեր բարձր բարձր պատմւում, լսւում, ընդհատւում և շարունակւում են։

Ուղւորների ամէն մէկի ձեռքին, ուսին, մէջքին մի ծանրութիւն կայ, ոչ մինը դատարկ ձեռքով չի վերադառնում. մի քաղլակ, մի կապոց, մի տիկճոր, մի գաւ, մի դալար խաղողի մատը՝ քանի մի ողկոյզ յակնթանման խոշոր ու դեղին խաղողներ վրէն շարժուելիս, վերջապէս մի ծառի չորուկ մէկի կամ միւսի բեռն է համարւում. իսկ ամէնքի գօտուց ցցած՝ թիկնամիջին երևում է մի մի կեռակոտուց, լայնաբերան հօտոց-դանակ։

—Տօ՛ շուտ շուտ քէլէ՛ք, տղէնե՛ր, արևն էլ գնաց իւր մօր ծոցը մտաւ, անուշ քուն եղաւ, մենք դեռ ճամփին ենք, ասում է մինը։

—Տօ՛ եաման, ձե՛զ ղուրբան, մէջքս կը նմանի կոտրած մանգաղ, էնքան եմ աշխատել. տիրամեռ խաղողի ճթեր, կասես, մարդու աչքից կը փախնեն, թփերի տակ կը պլլուին։

—Ջանը ելնի՛ տիրոջ, հօրս մա՞լն է, ընչի՞ եմ ընձի չարչարմանք եմ տալում եմ, ես իմ ջանին զօռ չեմ բերում եմ, աչքիս առած քաղում եմ, սաբաթի մէջ եմ թալում եմ (չփէլ), մնացող թօ՛ մնայ, էգուց մէկլօր մեր ճժեր թօ՛ երթան պտուղ ճնեն բերեն։

—Տօ՛, ծուռ ճժե՛ր, դուք ի՞նչ կէնէիք, հարցնում է մի երրորդը երեխաներից մէկին, միւսին։

—Հոգիս բերանս հասաւ տիրամեռու խչմար (ռէչոռ-կ) ժողվրտելով. առած հախս էս փշուր խաղողն ա, տրտնջում է մանուկը։

—Տղա՛յ, Բղդէ՛, դո՞ւ դոր կը բանէր, դարձաւ երեխաներից մինը դէպի մի երկու րոպէ յառաջ իւր հետ հաւասար քայլող մանուկին։

—Եա՛, սատանա՞յ էր, դև՞էր, հալածակուեց, գետինն անցաւ, զարմացմամբ սկսեց աչքերը մանուկների մէջ մանածել և որոնել խօսողը, երբ Բղդէ կոչուածին ոչ մի տեղ չը տեսաւ։

—Տօ՛, ի՞նչ եղաւ, մկա (հիմա) չէ՞ր բերան ծռուկ Բղդէն քաշ կը գար խըտ մեզի, կը նմանէր քեարվանից յետ մնացած ուղտու քեօշակ։

—Տօ՛, ո՞ր մէկին կը խարցուս, տօ՛։

—Տօ՛, Պօղոս աղենց Սալբու տղայ Բղդէն չէ՞ր հէնց հիմի մեր քամակից գի գար ու չի երևար։

—Ահա՛ Բղդէն, ցոյց տուեց մի ուրիշը բոլոր ճանապարհորդներից շատ յառաջ։

Եւ արդարև, Սալբու տղայ Բղդէն այժմ տասը, տասն և հինգ տարեկան մանուկ էր և կարողանում էր մօրը պէտք գալ։

Այսօր էլ Աշտարակու քաղուորների հետ էր և տուն էր վերադառնում։

Շատ անհանգիստ էր Բղդէն այս երեկոյ. նա Աշտարակից դուրս գալուց ամէնքից յառաջ էր գնում և բոլոր քաղուորներից հեռու էր մանգալիս, երբեմն երբեմն կանգնում էր նա և յանկարծ որոտղի հը-

բացանից ազատուած նապաստակի նման մին աջ խլշկոտում, մին ձախ, հենց իմանաս, ինքն իւր ստուերից վախենում էր։

Մի մին էլ ոտը քարշ էր ձգում և բռունցք արած՝ ձախ ձեռքը արխալղի պատռուած գրպանից դուրս հանում, բութ և ցուցամատները քիչ յետ բաց անում, բռնումը ամուր սեղմած առարկային խորազննին աչքով մտիկ էր տալիս ու էլ յետ ձեռքըն աւելի պինդ հուպ տալիս ու գրպանը կոխում։

Կարծես թէ վախենում էր Բզզէն, թէ բռի մէջ բանտարկուած իրը թև կ՚առնի, կը թռչի, աղի պէս կը հալչի, կ՚ոչնչանայ, կամ ուրիշների հետաքրքրութեան առարկան կը դառնայ, կը խլուի իւր ճանգիցը։

Նոր չէր, որ անյայտ ցեցը բնակալել էր Բզզէի բռան մէջ։

Վաղ առաւօտից, երբ նա վարձուեց մի աշտարակցու խաղողը պահող նեցուկները ժողովելու, նորա ձախ ձեռքը յետ չը բացուեց։

Մի կողմից նեցուկներն էր ժողովում աջ ձեռքով, միւս կողմից յաճախակի ձախ ձեռքից աչքը չէր հեռացնում։

Եւ ի՛նչպէս քաջացել, կորճացել էր այսօր մեր անտաշ մանուկը, ինչ եռանդով գործում էր։ Բացի իւր գործից՝ նա մնացած խաղողներըն էր պտուղ անում և այգու տիրոջ կթոցը լցնում։

Այգետէրը քանիցս նկատեց նրան, ասաց Բըզ-

զէին, որ իւր արած պտուղը—իւր գտած ողկոյզներն իւր կողովի մէջ դնէ, իրան համար պահի, հասկացրեց, որ այգին քաղելուց յետոյ ամեն աղքատ իրաւունք ունի մտնել, քաղւորի աչքից փախած, տերևների տակին մնացած ճութերը քաղել, իւր համար տանել, բայց Բզզէն անխօս, գլուխը բացասաբար թափահարում էր և գտած, պտուղ արած խաղողները տիրոջ խաղողին էր խառնում։

—Դու հօ քո վարձն ստացել ես, ասաց երեկոյին այգետէրը Բզզէին. բայց որովհետև այսօր, երեխայ տեղովդ, դու հինգ մշակի գործ ես կատարել, ա՛ւր քո կողովդ խաղող լցնեմ, ա՛ռ, գնա՛։

—Աստուած քո մինը հազար անի՛, ես ոչինչ չեմ ուզում, մերժեց Բզզէն և խոր գլուխ տալով կամենում էր հեռանալ։

Շատ խօսեց, շատ համոզեց այգետէրը, բայց Բզզէն ևս աւելի խոնարհ երկրպագութիւններ էր անում։

Նա արդէն բաւականին հեռացել էր։

—Բզզէ՛, Բզզէ՛, ձայն տուեց յանկարծ այգետէրը, մի րոպէ յետ արի՛, բան եմ ասում։

—Ահա՛ այս երկու շահանոցը (էրէք ջողէն) քեզ, իսկ իմ առաւօտեան տուած մի շահին ինձ տո՛ւր։ Խղճմտանքս ինձ հանգիստ չի տալ. ողջ օրը դու մի չուրուկ շահով (Պէշաշէս ջողէն) բանել ես, օխտը մարդի աշխատանք ես արել, նրանց ամեն մինը իրանց վարձը լիուլի ստացան, իսկ դու մի ճուլթ խաղող

գոնէ չը վերցրէր և որքան նկատեցի, չի էլ կերար։

Այ հրաշք. մարդը հանեց իւր պայուսից մեծ մի պղնձադրամ. տասը կոպէկ էր գրած նորա վերայ, և այժմեան երեք կոպէկի արժէքն ունէր։

Բզզէն ամբողջ մարմնով սկսեց դողդողալ, նա վրայ պրծաւ, բարերար ձեռքն երեք անգամ համբուրեց, յետ բաց արեց բոլոր օրուան սեղմուած ձախ ձեռքը, յետ տուեց մէջը պահած կոպէկուկիսանոց պղնձեայ դրամը և փոխարէնը կրկնակի մեծն ստանալով՝ առաւել պինդ սեղմեց ու հազար շնորհակալութիւններով հեռացաւ։

Ահա՛ հէնց այս պղնձեայ դրամն էր Բզզէի խաղաղութիւնը վրդովող անքուն սատանան, այդ ամենաթանկագին գանձն էր նա խնամով փայփայում, նորա հզօր զօրութիւնն էր իւր ոտքերի ոյժը կրկնապատկող և եռապատկողը։

Քաղուորները կէս ճանապարհը չէին դեռ կորել, որ Բզզէն մտաւ Կարբի։

Զ.

Ք Ի Ս Ա Դ Ի Բ Ի [1])

Սալբու բազմազիմի պահանջներին խուլ գըտնուեց սիրական զաւակը. նա, ըստ սովորականին, ոչ

[1]) Քիսադիբի նշանակում է քսակի յատակ։ Ամեն ոք իւր փողի քսակի մէջ պահում է անպատճառ որ և է

վուկկի քերեզմանին մօտեցաւ, ոչ ամեն գիշերուան նման ուրախ ու զուարթ պատմութիւններ արեց, ոչ իւր բերած խաղողի ճութը քնքշաբար մօր բերանին մօտեցրեց, մօր բերանը ջրակալացրեց։ Այս բանից և ոչ մինը չ՚արեց Բզզէն. ընդհակառակն՝ թեթև գլխացաւը պատճառ բերած՝ շորերով վայր ընկաւ մօր շինած անկողնի վերայ և աչքերը փակեց։

Մայրական գորովալից խնդաղատանքն այնուհետև ի՞նչ կը հանգստացնէր Սալբուն. խեղճ կինը մոլորուեց, պաշարուեց, այս ու այն կողմը դիպաւ, էլ տանը հին ու նոր չը թողեց, փալաս ու հացի մեզար չը մնաց, բերեց գլխին ծածկեց։

Ձիթի ճրագի աղօտ լոյսը վաղուց իւր պաշտօնը կատարել էր, ձէթը այրուել, վերջացել էր, պատրուգի գառը մխի հոտը տանովը մին էր եղել, մթութիւնը տիրել էր, բայց այդ ամենն արգելք չէին կարող լինել որդեսէր մօրը՝ իւր զաւակի կողքը կորել, ձեռը ծնօտին դնել և հազարաւոր բարի ու չար մտածմունքների մէջ ընկղմուիլ։

Անտեղի չէին Սալբու կասկածանքները. Բզզէն տաքութեան մէջ կրակ է կտրուել, բերանից արտա-

հին դրամ, կամ մի աննշան պղնձադրամ, որի բարեբաստ զօրութիւնը, իբր թէ, փորձած է։ Փաքբիկ փողը քսակի հիմնադրամն է. նա երբէք չի ծախսուիլ. նորա կորչիլը աղքատութեան և անանկութեան աղէտաւոր նշան է։

ճնշուած գոլորշին մօր երեսն է այրում, ճնշուածութեան հեկեկանքը նետի նման ներս է սլանում մօր այրուող սրտի խորքը։

—Սօթն անուան տէր սուրբ Կարապե՛տ, իմ ձեռքս եմ թալեր եմ քո փէշ, Մողնու զինաւոր սուրբ Գէո՛րգ, մուրատատու Յուշու սուրբ Սարգի՛ս, իմ Բզզէիս կռանը կենաք։

Խեղճ կինը Կարբու շրջակայքի պաշտպան սրբերի հետ մտքումը ժողովեց իրանց երկրումը թողած բոլոր Թուխ-մանուկներին, Ուրբաթ-գրերին, Կարմիր ու Սև աւետարաններին. մէկին խունկ ու մոմ, միւսին սև հաւի մատաղ, երրորդին կիրակմտցի լոյս էր ուխտում ու իւր Բզզէին առողջութիւն խնդրում։

Նա մի քանի անգամ դուռը բաց արեց, երկինքին նայեց, աստղերի նշանները դիտեց։

—Ի՞նչ անեմ, գնամ Նանի-Յարթենենց դուռը թակեմ, երկար պառաւին զարթեցնեմ, ոտքերն ընկնեմ, աղաչեմ, բերեմ Բզզէիս աղօթել տամ, մտածեց նա։

Յուսահատութիւնը ողորմելուն յետ է կասեցնում. ժամանակը շատ ուշ էր, Կարբու ոտքը խաղաղուել էր. ամէնքը գործից ու աշխատանքից յոգնած խոր քնի մէջ մրափում էին. մեր մշակը ցորեկը մինչև իրիկուն անընդհատ վաստակելուց յետոյ՝ հաւերի հետ է քուն մտնում, հաւերի հետ է զարթնում։

Մարդ, կին, մեծ ու փոքր անուշ խռմփացնում էին. տեղ տեղ գուցէ այս ու այն տանը փոքրիկ

անհանգիստ մանուկները օրօրոցից մօր քունը կտրում էին, ճիչ ու ծուղոցով մայրերի ականջներն էին ծակում, զարթացնում էին, թաւիշի պէս փափլիկ ստինքի քաղցր աղբրականը ամուր փակցնում իրանց շարմաղիկ շրթունքները և մշմշալով ներս տանում անուշահամ կաթը. բայց դրանով երեխայքն իրանց նորատի մայրերին երբէք արգելք չէին լինում հէնց օրօրանի լծանը թեկնելու և մի հանգ քնելու. ընդհակառակն՝ սիրուն զաւակի պռօշների միատեսակ շարժումը մի ախորժական զգացմունք էր պատճառում խանդակաթ մօրը և գգուշութեան հետ մի զգաստ քուն էլ բերում էր, երջանիկ երազների եթերական սահմաններումն էր պտտեցնում նրանց երևակայութիւնը։

Գիշերը շատ խաղաղ էր, ձայն ու ձուն չը կար, աւերակների միջից միայն պարբերաբար լսւում էր մելամաղձոտ բուի տխուր վոյն ու վայը։

—Է՛հ, ես ի՞նչպէս անհանգիստ անեմ Նանի-Յարթենենց պառաւին, փնթփնթաց իւր մէջ Սալբին, լաւն այն է՝ իմ գիտեցած չար աչքի, չար նիաթի աղօթքով բաւականանամ՝ մինչև լուսոյ շառաւիղն ամէն հայ քրիստոնէի հետ իմ տան երդկոցն էլ ներս կը մտնի։

Առաւ Սալբին մի ասեղ, նստեց Բզզէի գլխավերևը, ասղի ծայրով շարունակ խթխթեց տղայի գլխին ծածկած բրդեայ հաստ մեզարը և երեք անգամ մրմնջաց հետևեալ աղօթքը.

Ալթանիա՛, Ազարիա՛,
Հրէս եկաւ Հռիփսիմէն
Օխտը ղալթար (շարք) ջորով,
Օխտը պոչ քուռակով.
Չար աչքը՝ չար փուշը,
Չար փուշը՝ չար աչքը։

Աղօթում էր, յօրանջում էր, յօրանջում էր, աղօթում էր և հետն էլ ընդհատելով՝ բարձր ձայնով կրկնում էր. պատռի՛ն ու թափուի՛ն իմ Բզզէիս աչք զարնողի ջուխտ աչքի պտուղները։

—Աղէ՛, կանչեց աղօթքից յետոյ հիւանդը։

—Ջանէ՛, աղէն հէյրա՛ն արևուդ։

—Էդ ի՞նչ ես անում ես։

—Քեզ աղօթում եմ, հոգի ջա՛ն։

—Ո՞ւմնից ես սովորել։

—Ժամկոչ Յոհնէից։

—Ժամկոչն ո՞ւմնից է սովորել։

—Գրքէնց Տօղոյ հարսից։

—Էդ ի՞նչպէս բան է։

—Նիաթի (չար աչքի) աղօթքը տղամարդը պէտք է կնարմատից սովորի, կինը մարդից, թէ չէ զօրութիւն չի ունենալ։

—Սիրտս նեղանում է, բաց արա՛ գլուխս, ասաց վերջապէս Բզզէն. դուրս գնա՛, տե՛ս, գիշերուայ ի՞նչ ժամանակն է։

—Դեռ շատ գիշեր կայ, դեռ կէսգիշերը նոր է անցել։

—Լուս-աստղը դեռ չի՞ դուրս եկել։

—Դեռ Տամփուր-կշեռքը երկու չուանաչափ է հեռու Բազումքից, դեռ Լուս-աստղի ընկեր 12 հուրհուրատող աստղերը նոր են գլխները հանում, որ Լուս-աստղը դուրս գալուս՝ ամեն կողմից բարև տան նրան։

—Ո՜, ի՞նչքա՛ն գիշեր կայ դեռ, երբ պիտի Լուս-աստղը դուրողայ։

Բզզէին, ինչպէս և ամեն մի գիւղական մանուկին, քաջ յայտնի էր համաստեղութեան գաղտնիքը, ամեն մի երկնից լուսաւոր իրանց նշանակութիւնն ունի ժողովրդի աչքում։

Գիւղացին դեռ թոթովախօս երեխայութեան մէջն է իւր մօրից, տատից, պապից, ամառ ժամանակը կալերումը և կտուրներումը, բաց երկնքի տակ, քնած ժամանակ դաս առնում աստեղագիտութեան ուսումը։

Հազար էլ որ պառաւները սրտնեղեն, բարկանան, երեսները միւս կողմը դարձնեն, խռռացնեն, խումփացնեն, փնչացնեն, ֆնչացնեն, զուր է, չեն կարող ազատուել հետաքրքիր փոքրիկ սատանաների հարցասիրութիւնից։

—Դու քո հնարքը գործ դի՛ր, մենք մերը, մտածում են քաղցրիկ թոռները և պապի կողքերը խտտղեցնում, մօրուքը համբուրում, կրծքին բարձրանում, պարանոցովը փարում, խնդրում, աղաչում, դմբուլիկ թշիկները ծերի պռօշների վերայ դնում,

պաչել տալիս, երկու պաչ էլ պատմելուց վերջը խոստում անում, պապի բարեհաճութիւնն առնում, պատմութիւնն սկսել տալիս և ուշի ուշով աստղերը լսում, մաքներումը տպաւորում:

—Պապի ջա՛ն, էն ի՞նչ աստղ է, որ քեռոնց կալի գլխին կանգնած է ու բոլորից պայծառն է, հարցնում է պապի ծոցին քնող Թոռը:

—Էն Քարւան-ղռանն է:

—Սաքի թէ ի՞նչ:

—Էն՝ որ քարւանը դաշտումն է եղած լինում, ամպը պատած գիշեր է լինում, յանկարծ երկինքը պարզում է, քարւան-բաշին (կարաւանապետ) կարծում է, թէ Լուս-աստղն է, քարւանն շտապացնում է, վեր է կացնում ու ճանապարհ ընկնում:

—Յետո՞յ:

—Յետոյ՝ շատ ահ ու զարհուրելի տեղով պէտք է անցկենային, գնում են, գնում, լոյսը չի բացւում. մէկ էլ մի խոր ձորի մէջ գողերը դրանց յառաջը կտրում են ու բոլորին բրդում, վեր ածում: Աստղը սխալացրեց, քարւանը կոտորել տւեց, անունը մնաց Ք ա ր ւ ա ն-ղ ռ ա ն:

—Իսկ է՞ն ինչ աստղ է, որի պոչը, հէնց իմանաս, տատիս ջահրի (ճախարակ) իլիկը լինի:

—Էն Ղոյրուղն է: Ամա՛ն, դառնո՛ւկս, զգուշացնում է ուսուցիչ պապը. էլ այսուհետև չը լողանաս, Ղոյրուղն իւր պոչովը քեզ էնպէս կը շամփրի, որ պոչը միջքիցդ կը մտնի, փորիցդ դուրս կը գայ. նա գիժ աստղ է, լողացողի թշնամի է:

—Հապա մինչև հիմի ո՞ւր էր, չէր երևում:

—Ղոյրուղը խաղողի ժամանակն է դուրս գալիս. մինչև նա դուրս չը գայ, խաղողը չի հասնիլ: Քե՛զ եմ ասում, հոգի՛ս, էլ չը լողանաս:

—Շատ լա՛ւ, շատ լա՛ւ: Էնպէս չի՞, Յակօ՛, էլ չենք լողանալ. պապն ասում է՝ Ղոյրուղը որ դուրս եկաւ, էլ չեն լողանալ: Դառնում է պապի թոռներից մինը իւր հասակակից եղբօրը, կամ անբաժան մի յարկի տակ ապրող հօրեղբօր որդուն և ականջումը փսփսում:

Վերջինս տատի ծոցիցն էր եկել դաս լսելու:

—Թող պապին արխէինը քցենք, պատմել տանք, յետոյ մենք մեր բանը գիտենք, փսփսում է նա ընկերի ականջին:

—Դէ՛հ, որ պապն ասում է մի՛ լողանաք, մենք էլ չենք լողանալ, մեռնիլ հօ՛ չե՞նք, եկող տարի ամառը կը գայ, նոր կը լողանանք. լաւ չեմ ասո՞ւմ, պապի՛:

—Շատ լա՛ւ, շատ լա՛ւ. դէ որ էդպէս խելօք տղայք էք, եկէ՛ք մի պաչեմ:

—Դէ որ էդպէս է, ասա՛ տեսնենք էն ի՞նչ խորդ ու փորթ տեղ է երկնքումը, հէնց իմանաս՝ մեր վերի արտի քարքարուտ ճանապարհը լինի, մանր ու մեծ աստղեր անկարգ, անկանոն շաղ են անցած:

—Էն մեր ուլերն են կրծոտել:

—Ո՞րտեղից բարձրացան:

—Մի ձմեռ շատ ձիւն էր եկել, խոտ չը կար, որ ոչխարն արածի, մեր ուլերը ձիւնի վրայով բարձրացան, կրծոտեցին։

—Հապա դու երէկ ասում էիր՝ դարմանագողի ճանապարհն է՞, մէջ ընկաւ միւսը։

—Որ գիտէք, էլ ընչի՞ էք հոգիս հանում, թողէ՛ք քնեմ, ասեց պապը և ուզում էր երեսը միւս կողմը շրջել. բայց ճարպիկ դեւիկներից մէկը խոյն լոք տուեց, անցաւ պապի կրծքի վրայից, միւս կողմին պառկեց և իւր շողոմարար հաճոյախօսութիւնները շարունակեց։

—Պապի ջա՛ն, պապի՛, հէնց է՛ս մէկը, կե՛նտ էս մէկը պատմի՛, էլ գլուխդ չենք տանիլ (ցաւցնել)։

—Հա՛, դարմանագողի-ճամփէն է, ճարահատեալ սկսեց պապը. մի գիշեր բլբլան Բէլը գնացել էր մեր Հայկ պապի մարագիցը մի թօռ լիքը դարման գողացել, շալակն առել ու փախչում։ Ջանս քեզ մատա՛ղ, Հայկ պապի՛, շներին քիս էր տուել քամակիցը. ինքն էլ մի բարձր կոնդի գլխի կանգնել էր ու մտիկ տալիս։ Բէլը դարմանը շաղ տալով փախչում էր։ Մեր խելօք պապը հէնց որ տեսաւ, թէ շները չը կարացին հասնել, գող Բէլը դիմացի սարի քամակն է ուզում անցկենալ ու ազատուել, էն սհաթը գազ ու կիսանոց, կռանս պէս հաստ նետը դէմ քցեց աղեղի լարին, աչքեց ու լարը ձգեց։ Նետը սը՛լ...լ...լ... գնաց, էդ գող ու աւազակին ծակեց ու վզզալով անցկացաւ հինգ օրէն ճամփայ հեռու վեր ընկաւ։

—Յետոյ ի՞նչ է անում Բէլը։

—Ինչ պտի անէր, դարմանի թօռը մէջքիցը գլորուեց, պատռուեց, մնացողն էլ էնտեղ շաղանցաւ, երկնքի երեսը բռնեց։

—Ինքը՞։

—Ինքն էլ գլխի վերայ կունդիկ կունդլի՛կ անելով (Լաալադլար), սարի ծերից գլորուեց ձորը։

—Հապա տատն ասում էր՝ իծանը որ կրծեցին, երկինքը պատըռտուեց, ջուրը թափուեց, ոչխարի սուրուն խեղդուե՛ց։

—Դէ՛, նա էլ էր ուղիղ ասում։

—Բաս ի՞նչպէս ջրի առաջն առան։

—Աստուած կեանք տայ փալան կարող (համէտագործ) Նոյ պապին։

—Ի՞նչ արեց։

—Փալանը դէն ձգեց, մախաթն առաւ, Մասիսի գլուխը բարձրացաւ ու երկնքի ճղուածը պինդ կարեց. ա՛յ, տեսնո՞ւմ էք, էն մանր աստղերը մախաթի ծակած տեղերն են։

Ահա այս մանկական դպրոցի աշակերտ էր, ուրիշների թւումը, և մեր հիւանդ Բզզէն. նա ցանկանում էր իմանալ գիշերուայ ճիշդ ժամանակը. բնական է, որ աստղերի շարժումներից պէտք է հարցնէր։

—Աղէ՛, կանչեց միւս անգամ Բզզէն։

—Ջանէ՛, ի՞նչ կ՚ուզես։

—Ի՞նչ ծանր գիշեր է։

—Մեռնի՛մ արևիդ, Բզզէ ջա՛ն, ընչի՞ ես, գէշ-գէշ բաներ ես մտմտում ես։

—Չէ՞ դու մի օր ասում էիր, գիշերը որ ծանր լինի, գիւղումը մէկն ու մէկը մեռած կը լինի, ժամումը մեռել կը լինի։

—Տօ՛, քեզ մեռնի՛մ, Բզզէ ջա՛ն, դու հիւանդ ես, դորա համար է գիշերը ծանր թւում քեզ. որդուն հանգստացնում էր սրտատոչոր մայրը և աչքերը անթարու քղանցքներովը սրբում։

Մի շաբաթ Բզզէն հիւանդ մնաց, աղօթող, գրբաց, ջինդար, ամէնքն իրանց շնորհքը ցոյց տուին. մի սրբերի դռները բոլորն գնալն էլ չը մոռացուեց. մի սառը քրտինք եկաւ վերան և նա խապառ ողջացաւ։

Սալբու սրտին ցաւ և գիւղում աւելիք ու խորին դատողութեան առարկայ դարձաւ մի հանգամանք։

Ամէն այցելու պարզ տեսնում էր, որ Բզզէի ձախ ձեռքը պինդ փակուել է, մի բռունցք է գոյացել և չի բացւում. հէնց որ մէկն ուզում էր հիւանդի ձախ ձեռքին դիպչել, նա այնպէս ծուում էր, որ ամենքի ականջն էլ խլացնում էր։

Ամէն գլխից մի խորհուրդ դուրս եկաւ. շատ խորհեցին, հնարք չը գտան ձեռքը բանալու, չէին համարձակւում դիպչելու, ուզում էին, որ ձեռքը հրաշքով ինքն իրան բացուի։ Երբ ճար չեղաւ, միաբերան վճռեցին, որ խաչից է, խաչը միայն կարող է փրկել։

—Սուրբ Յովհաննիսի աղբիւրն է, վճռեց նետ դնող, մաղ պտտեցնող կարճիկ Տուտուն։

Սալբին ուխտեց, որ տղան լաւանալուն պէս, նրան տանի սուրբ Յովհաննիսի աղբրում *լողացնի*։

Սալբու աղօթքն ընդունելի եղաւ։ Բզզէն բոլորովին առողջ է։ Նա մօտ կանչեց մօրը։

—Մարէ՛։

—Ջանէ։

—Մենք խեղճ մարդիկ ենք, էնպէս չէ՞։

—Ի հարկէ։

—Պօղոս աղայենց ամալան ենք։

—Հա՛, բայց հիմա ոչ Պօղոս աղայ կայ, ոչ Մարկոս։ Կարբում մնացել են դառը քրտինքով հաց աշխատողներ։

—Ո՛չ, ես ուզում եմ ամալէք ունենալ։

—Ի՞նչ ես ասում, Բզզէ ջա՛ն։

—Այո՛, մա՛յր, լուրջ դէմքով շեշտեց Բզզէն և ձախ ձեռքը յետ բացարեց ու ահագին սառը չուրուկ կոպէկանոցը մօրը ցոյց տուեց։

—Սա՛, սա՛ կը լինի իմ հարստութեան սկիզբը, սա կը լինի իմ *քիսադիբին* մինչև շունչս բերանումս է։

Բզզէն մի առ մի պատմեց մօրը կեանքի մէջ առաջին անգամ փող աշխատելու հետաքրքիր պատմութիւնը։

—Բայց այդ երկու շահով դու ի՞նչ գործ պիտի սկսես, տարակուսական հարց տուեց մայրը։

—Այդ իմ գիտնալու բանն է։

—Աստուած սրտինդ կատարի՛։

—Ուրեմն մի փալասի կտոր տո՛ւր։

Բղդէն խնամքով կապեց հին կարկատանի մէջ իւր թանկագին գանձը և դուրս գնաց։

Է.

ՋՀՈՒՏ ԱՂԱՋԱՆԸ

Կարբու արեւմտեան կողմը, եկեղեցուց դէպի Հարաւ, երկու կարգ հին ասիական ձևով շինուեցին Բայազիդից գաղթածների խանութները։

Փոքրիկ դռներով նեղ և մութ խորշեր էին դոքա. ոչ մի լուսամուտ չէր ձգում դէպի ինքն պայծառ արեգակի ճառագայթները, լոյսը ներս էր մտնում շարունակ բաց դռներից։

Մի քանի թօփ խամ չիթ, նոյնչափ ալաջայ կոչուած կանաչ ու կարմիր շերտաւոր կերպաս, տասնաչափ կտոր շիլայ անուն կրող կարմիր ներկած կտաւ, քսան—երեսուն գազ գոյնզգոյն մետաքսեայ երիզ (ղայթան) խանութների մեծագոյն մասի առևտրականութեան պարագայքն էին։

Առաւօտեան ժամից յետոյ՝ մինչև երեկոյեան աւետաբեր կոչնակի հատուածական թխկթխկոցը՝ ծնկան վերայ չոքած էին խստակրօն ճգնաւորի անշուք խցիկների մէջ Կարբու նոր խօջաները։

Ուրիշ բանի նմանութիւն չենք կարող տալ խանութի պատուանունով վերաձայնուած խոնաւ և ցած հիւղերին։

Լայնարձակ և լուսաւոր շէնքերի մեծ պահանջ էլ չը կար. մի փոքրիկ եռակարգ կամ քառակարգ ղափազայ (դուքան) բաւական էր կրել իւր վերայ սակաւաթիւ յաճախորդների մերկութիւնը ծածկող դիւրամաշելի կտաւեղէնները։

Խանութպանները Բայազիդում հռչակաւոր վաճառականի՝ փայլը վայելող Կարբի գաղթած խօջաներն էին։

Արդէն համոզուել էին սրանք, որ Կարբու ներկայ պայմանները չեն ներում իրանց նախկին վաճառաշահութեան փառքին բարձրացնելու իրանց նոր հայրենիքը, բայց ճար չ'ունէին, ընկել էին, պիտի հաշտուէին նոր դրութեան հետ. իրանց կեանքի երկու երրորդ մասը վաճառականութեամբ էին անցկացրել, այժմ, օր ծերութեան, ուրիշ գործ սկսել չէին կարող, պարապ մնալն էլ մահ էր իրանց։

Այդ պատճառաւ խօսքը մէկ արին, այդ ծակերը շինեցին՝ միայն ժամանակն սպանելու, մէկ մէկի երեսը տեսնելու և կորցրած փառաւոր անցեալի քաղցր յիշողութիւններով շնչելու համար։

Բոլորովին տարբերւում էր թէ մեծութեամբ, թէ նպատակով և թէ միջի ապրանքով խանութների վերջին ծայրումը գտնուած մի հատիկ լայն ու բարձր կրպակը։

Մանրավաճառի շտեմարան էր այդ, քան թէ,

ինչպէս ասում էին, խանութ։ Ընդարձակ սենեակի մի կողմը մեծ մեծ պարկերի մէջ զետեղուած էին մանրունք ծախողի բազմատեսակ ապրանքները, որոնք միայն առաւօտադէմ անհանգիստ էին լինում. ուրիշ ժամանակներ ձեռք չէր դիպչում նրանց։

Խանութի առաջի կողմը, սակայն, մանր տոպրակների մէջ շարուած էին գետնի վրայ վերոյիշեալ ապրանքների տեսակները։

Մի միջին տարիներով մարդ, օրն ի բուն չոքած ծնկան վրայ, գոհացնում էր իւր փոքրաքանակ յաճախորդներին։

Ջհուտ Աղաջան էր նորա անունը։

Ինքը թէև ջերմեռանդ հայ-քրիստոնեայ էր, համեստ, առաքինի և աղօթասէր, բայց դէպքերի բերմունքը վերակնքել էր նրան Յակովբ Նահապետի հարազատների աւազանի մէջ։

Ջհուտ անունը սեպհականութիւն էր ստացել Աղաջանն իւր նախկին պաշտօնից։

Նա մի ժամանակ բազազի ապրանքը մի կապոցի մէջ պինդ ամրացրած՝ ուսին ձգած՝ կիսագազը ձեռքին, թափառում էր գիւղերումը և գիւղացւոց հագուստն էր հայթհայթում։ Այդ գործը շատ հին ժամանակներից Պարսկաստանից եկած հրէաների սեպհականութիւնն էր։

Աղաջանը միակ հայն էր իւր պաշտօնով հրէաներին նմանող և երբէք չէր նեղանում, երբ ամենքն իրան ջհուտ էին ձայն տալիս։

—Ջհուտ Աղաջա՛ն, ջհուտ Աղաջա՛ն։

—Ջհուտ Աղաջա՛ն, լաւ չիլայ ունի՞ս։

—Ջհուտ Աղաջա՛ն, մի քանի գազ խամ չիթ տո՛ւր։

—Ջհուտ Աղաջա՛ն, մեր տանը քեզ կանչում են։

Աղաջանն ամենայն սիրով բոլորի կամքն էլ կատարում էր։

Աղաջանն իւր քաղցր բնաւորութեամբը բոլոր գիւղերի աչքն էր մտել. նա մի գեղեցկադէմ, բոլորակ երեսով, սև և բարձր ընչացքներով մարդ էր, զուարճախօս էր, քաղցրաբարոյ էր, բարեհամբոյր էր և արդարամիտ էր։

Մանուկներն ամենքից աւելի սիրելի էին նրան։

—Ջհուտ Աղաջա՛ն, ջհուտ Աղաջա՛ն, ձայն էին տալիս քամակից և վազում, նորա դիրկն ընկնում գիւղական երեխայքը։

—Ի՞նչ էք ասում էք, ի՞նչ էք ճվճվում էք, ջանէ՛ ջա՛ն։

—Էգուց ո՞ր գեղը պիտի գնաս։

—Տօ չէ՞ գիտէք՝ էգուց ի՞նչ օր է։

—Գիտենք, բայց խնդրում ենք դու ասես։

Եւ նա քաղցր ժպիտը երեսին սկսում էր.

Երկուշաբթի, հինգշաբթի Աշտարակ,
Գինով կը թրչեմ չոր բողազիս ծակ.
Զորեքշաբթի, ուրբաթ կ'երթամ Փարբի,
Իրիկուն քաղցած կը դառնամ Կարբի.

Երեքշաբթի օրը քամբախ [1] Հանավանք՝
Ջաւարով վուլկ, չոր հացի փշրանք.
Շաբաթ օրն Եղվարդ զօռ կը տամ ցորնին,
Մատաղադող մողնեցի՛ք, ձե՛րն է կիրակին։

—Մեղք չի՞, որ կիրակի օրն առուտուր ես անում, խօսեցնում էին Աղաջանին մանուկները։

—Տօ՛, ձեզի ղուրբա՛ն, մողնեցին ի՞նչ ունի, որ ի՞նչ առուտուր անի, անբան մարդու տանը հաց, հացին չոր ե՞րբ էք տեսել. թէ որ սուրբ Գէորգի վանքը Մողնումը չը լինի, նրանք քաղցած կը կոտորուեն. ամէն տուն տարէնը մի երկու թօփ խամ չիթ կ՚առնի, կը բնդեն, վիզները կը գցեն, որ աշնան Մողնու ուխտին տեղը մատաղի գողացած մորթի տան. կիրակի օրն ես գնում եմ Մողնի նորա համար, որ ուխտաւորն էդ օրը սուրբ Գէորգի դռնից անպակաս է, մողնեցու տանից մսի հոտ է գալիս, լի օրը գնամ՝ չօռ ու ցա՞ւ ուտեմ։

Բաւական տարի էր անցել Կարբին շէն անելու օրից և բոլոր ժամանակը Աղաջանն իւր սիրելի թափառական բազազութեամբն էր պարապում։

Սկզբումն Խարաչէլի գաւառները շատ խէթ աչքով էին նայում Աղաջանի վերայ, բամբասում էին, նորա ապրանքը փտած ու անպէտք էին քարոզում, բայց Աղաջանը, կարծես, խուլ էր դէպի այս տհաճութիւնները, գլուխը կախ՝ իւր ճանապարհն էր գնում։

[1] Աւերակ։

Լսում էր մինչև անգամ, որ հայր Աբրահամու թոռներն Աղաջանի դէմ դաւ լարելու հնարքներ ևս մտածում էին։ Գտնուել է անգամ իրանց միջից մի յանդուգն, որ քաջարտութիւն է ունեցել յայտնելու, որ ինքը սուրը կը վերցնի, մի քարի տակ դարան կը մտնի և երեկոյին Կարբի վերադառնալուս՝ Աղաջանի փորը կը կոխի։

Խիստ ոգևորուել են երիտասարդ կորիճի համազգայինքը, մոռացել են մի քանի րոպէ իրանց բնական զգուշութիւնը և համայնական հանգանակութեամբ կարգադրել են սուր գնել՝ ազատելով անձնազոհ քաջին հանգանակութեան վճարքից։

—Այդ ամէնը շա՛տ լաւ, աւելացրել է երիտասարդ վրէժխնդիրը, բայց ձեզանից թող մի երկուսը գան ինձ հետ թաղ կենան. լոյսն ու մութը բաժանուելուց յետոյ ես վախենում եմ մէն-մենակ ամայի դաշտ դուրս գալու։

—Ե՛ս էլ եմ վախում, ե՛ս էլ, ձայներ է բարձրանում ամէն կողմից։

—Լռեցէ՛ք, սուս կացէ՛ք, մէջ է եկել մի խոհականը, որ խորհրդականների հետ սկզբից անհամաձայն է եղել։ Է՛հ, սիրելի՛ք, ճառել է նա, դուք էք բորբոքուում, աւելորդ էք տաքանում. ոչ դուք մի կոպէկ սրի փող կը տաք և ոչ սա իւր երիտասարդութեան ցնորքները կարող է իրագործել. կռուելու, ծեծելու, սպանելու ընդունակութիւնը Եհովան վաղուց մեր բնաւորութիւնից հանել է, Կուսի գա-

ւակի անէծքը մեզ պէտք է ճնշի մինչև ճշմարիտ Մեսիայի գալուստը, մինչև այն օրը մեր գլխին պէտք է ծանրանայ տեղից շուտ զարթնողի հաստ մուրճը. ինձ լսեցէ՛ք, մինչև այսօր մեր հայրերն ու պապերն ի՛նչ ճանապարհով գնացել են, դուք էլ նրանց հետքից մի՛ խոտորուէք, ձեր առուտուրը ճանաչեցէ՛ք, փող գանձելու հոգսումը կացէ՛ք։

—Հապա Աղաջանը մեր շահերին վնասում է, մեր յաճախորդները խլել է։

—Երբէք չը մտածէք, որ վաճառականութեան մէջ հայը հրէային յաղթէ, դուք ձեր գործը ճանաչեցէ՛ք և խոհեմ եղէ՛ք. Աղաջանն ինքն իրան յետ կը քաշուի ասպարիզից։

Անկարծիք, խելօք խորհրդատուն մարգարէի սերնդից է եղել. շատ չը քաշեց, Աղաջանի ոտքը գիւղերից կտրուեց։

Մի օր էլ լսուեց, որ ջհուտ Աղաջանն իւր ջհուտութիւնին բարև մնայ է ասել, թողել է կտաւավաճառութիւնը, ծածկել է Կարբու խանութների ամենավերջին մեծ աւերակը, գնել է բաւականաչափ մանրավաճառի ապրանք և նստել է մէջը։

Ո՛վ ասես, չը զարմացաւ, ո՛ւմ լեզուն նորա դէմ չը բացուեց. Կարբու ո՛ր խօջան չը գնաց, չը կանգնեց Աղաջանի նոր խանութի առաջին և գլուխը չը շարժեց։ Ի՞նչ քամի է մտել այս մարդի քիթը, գժուել է, տարիներով չի կարող ծախել բերած ապրանքի կէսը, բոլորը կը փտի, կը փչանայ, կը կորչի

և այլն և այլն. խօսք չը մնաց, որ չ՚ասէին, հարցմունք չը մնաց, որ Աղաջանի գլխին չը թափէին։

—Ոտքերիս ոյժը հատաւ, հանգստանալ եմ ուզում, պատասխանում էր ժպտալով ամենքին Աղաջանը։

Կարճ միջոցից՝ ամենքն իրանց սխալ ենթադրութիւնները ճանաչեցին, միաձայն վճռեցին, որ Աղաջանն իւր անելիքը լաւ է հասկացել ու կշռել։

Աղաջանի շտեմարանի ապրանքը շուտ շուտ վերջանում և նոյն արագութեամբ նորոգւում էր. ամիս չ՚անցնէր, որ Աղաջանի ոտքն Երևան չը հանդիպէր. ամեն գնալուն բեռներով նոր ապրանք էր տուն ածում։

Իսկ ի՞նչ մարդիկ էին նորա յաճախորդները։

Կարբու միջնակարգ ժողովրդի որդիքն էին նոքա։

Այս այն դասակարգն էր, որ մսխել, վերջացրել էր Բայազիդից բերած աննշան հարստութիւնը, որոնք Բայազէդ եղած ժամանակ մանրավաճառի առևտրով էն ապրուստ արել և այսօր ոչ այն կարողութիւնն ու յարմարութիւնը կայ, որ իրանց նախկին սովոր գործը շարունակեն և ոչ Կարբու հանդն ու դաշտը օրինաւոր ապրելու և կարգին երկրագործութիւն անելու միջոցն է նրանց ընձեռնում։

Հարկաւոր էր կամ օրավարձ մշակութեան ընտելանալ, ինչպէս որ շուտ սկսեցին Կարբու ստորին ժողովուրդը և կամ կեանքի ուրիշ եղանակ ընտրելու հոգսը քաշել։

Ազաջանը նախատեսեց և յաջողեց։

Նա նախ ապրանքը տուն բերեց, Կարբումը շտեմարանեց և ապա կանչեց ձեռքից գործ եկող, պարապմունք որոնող երիտասարդներին, բարի խորհրդի հետ ապառիկ ապրանք հաւատաց, մի մի խուրջին իւրաքանչիւրի ուսիցը կախեց և չարչի անունը տալով՝ ցրուեց ամենքին Կարբու շրջակայ գիւղերը, ծայրը մինչև Արարան հասցնելով։

— Տարէ՛ք, ծախեցէ՛ք, փոխարէնը փող, բուրդ, ցորեն, իւղ, գարի, պանիր, չորացրած ծառապտուղ, մի խօսքով՝ ինչ որ արժան կը համարէք, առացէ՛ք, բերէ՛ք իմ հին պարտքը վճարեցէ՛ք, նոր ապրանք տարէ՛ք, ասաց Ազաջանը. կարող էք փողի փոխարէն ձեռք բերած ապրանքով ինձ վճարել, համաձայնեց նա։

Այդպիսով առաջին անգամ Ազաջանը ստեղծեց Կարբեցի չարչիներին, որոնք մի ժամանակ մրջիւնների նման ցրուած էին Կարբու շրջակայ գիւղերում, իսկ այսօր հետզհետէ չքանում են. նրանց տեղը գիւղերը խանութներով լցւում է։

Ազաջանը սխալուած չէր. տանը հանգիստ նստած՝ ընդարձակեց իւր առուտուրի ճիւղերը։

Զգալի նեղութիւնը որ կրում էր, այդ, ինչպէս ասացինք, ամիսը մի անգամ բարձած բեռներով Երևան գնալ և կրկին բարձած բեռներով դառնալն էր. գնում էր չարչիների հաւաքած բարիքով, գալիս էր չարչիներին մատակարարելիք մանրավաճառի ապրանքով։

Ազաջանի խանութն էր ամենքից առաջ բացւում Կարբումը. դեռ առաւօտեան կոչնակը չէր ծեծուած, որ մինը մաղթանքներ մրմնջալով՝ Կարբու նեղ շուկայովն անցնում էր. այդ Ազաջանն էր մութէ-մութ բարի լոյս տալիս իւր խանութի դռանն արդէն սպասող չարչիներին։

Հէնց այդ յարգելի պատճառաւ տէրտէրն իրաւունք էր տուել Ազաջանին կիւրակի օրերը միայն ժամ գալ։

Քանի գնաց, Ազաջանի նշանակութիւնը բարձրացաւ Կարբու և մօտիկ գիւղերի մէջ։

Իւր բնատուր բարութեամբը նա մտածեց անճարների ու կարօտեալների կարիքին ևս հասնել դժուար րոպէներումը. արքունի հարկը ժողովելիս, հացի սակաւութեան դէպքերում, նա ինքն իւր կողմից էր առաջարկում կարևոր նպաստը։

Այս օգնութիւնն անում էր նրանց, որոնք կարող էին ընչո՛վ և իցէ, ե՛րբ և իցէ վերադարձնել իւր տուածն աննշան տոկոսով։

Բնական էր, որ ջհուտ Ազաջանի անունը ամենի բերանից օրհնութեամբ էր լսւում. ժողովրդի մէջ սառն արհամարհանքով հնչւող «ջհուտ» խօսքը Ազաջանի անուան վերայ մի տեսակ քաղցր և համակրական ներդաշնակութիւնով էր արտասանւում։

Մի առաւօտ չարչիներին ճանապարհ դնելուց յետոյ՝ մինչ ծունկը գետնիցը կտրեց Ազաջանը, կամենում էր խանութը փակել, տուն գնալ, իւր առա-

մոքսի պահանջը լցնել, ինչպէս ինքն ասում էր՝ մի քիչ նհար անել (նախաճաշել) և յետ դառնալ, խանութը ներս ընկաւ յանկարծ մի բոկոտն ու անվըստահ պատանի և ուղղակի չոքեց, Աղաջանի ոտքը համբուրեց։

—Եա՛, դու ծո՞ւռ ես, տղա՛յ, էդ ի՞նչ ես անում ես։

—Քո ղուռն եմ ընկեր եմ, ամի՛ (հօրեղբայր), գլուխը կորացրած՝ աղեխարշ դէմքով մրմնջաց պատանին։

—Տղա՛, ի՞նչ կ՚ուզես։

—Ինձ չրաղ արա՛, մի կտոր հացի տէր շինի՛ր։

—Տղա՛յ, Բզզէ՛, դու դեռ երեկուան ճիժն ես, ես քեզի հետ ի՛նչ անեմ, ուսերը վեր քաշեց բարեսիրտ ջհուտ Աղաջանը, ընչի՞ այսօր չես գնացել Աշտարակ խաղողաքաղ, մի քանի ճութ խաղող կը բերէիր, մօրդ հետ կ՚ուտէիք, մե՞ղք կը լինէր։

—Խաղողով փոր չի կշտանալ, ցամաք հացի գին է պէտք, էդ մի կտոր հացը քո ձեռքովն ինձ տուր, իմ տէրս և բարերարս դարձի՛ր, գլուխը վեր բարձրացրեց և հաստատապէս ասաց Սալբու տղան։

—Տղա՛յ, Բզզէ՛, խորամուխ նայուածքով հարցրեց Աղաջանը, դու քանի՞ տարեկան ես։

—Աղէս (Տայրս) ասում է, որ Կարբումն ինձանից յառաջ ոչ մի բայազիդցի երեխայ չի աշխարհ եկել։

—Տեսա՞ր, 15 տարիդ նոր է լրացել, ես քեզ ի՞նչ կարող եմ անել։

—Ոչի՛նչ և ամեն բան։

—Ի՞նչ։

—Աշխարհը քո հացն է ուտում, գեղերը մտն եկող բոլոր չարչիներին դու ես ապրանք հաւատում, քո արդար վաստակովն են նրանք առուտուր անում, քո ի՛նչդ կը պակասի, որ շատերից մինն էլ ես լինիմ։

—Տղա՛յ, բերանիցդ ծծած կաթիդ հոտը դեռ գալիս է, դու ի՞նչ չարչութիւն անող ես։

—Ոտքդ պագնեմ, տարիներիս մի՛ նայիր, ահա՛ այս թող քեզ մօտ գրաւական մնայ, ասաց Բզզէն և դրեց Աղաջանի առաջը մի փոքրիկ ձեռնաչափ կապոց։

—Ի՞նչ է այդ, հարցրեց Աղաջանը։

—Բա՛ց և տե՛ս։

Աղաջանը վեր առաւ կապոցը, ձեռքի մէջ շուռեշուռ տուեց, շօշափեց, ուսերքը վեր քաշեց, գլխով, աչքով տարակուսական շարժումներ արեց և մեկնեց դէպի Բզզէն։

—Ինքդ բաց արա՛, ասաց նա։

—Ո՛չ, քո օրհնած ձեռքը թող կպչի իմ արդար վաստակին, բացասական շարժում արեց Բզզէն։

Աղաջանը շրթունքներն ուռեցրեց և ստիպուեց կապը քակել։

Մի ուրիշ նոյնպիսի փալաս գտաւ նա կապած։

Յետ արեց և՛ երկրորդը, և՛ երրորդը և՛ չորրորդը։

Շարունակ միմեանց հետևում էին նոր կապեր։

—Տղա՛յ, էս մասո՞ւնք է, որբի գերեզմանից ա-

ուած օրհնութեան հո՞ղ է, ի՞նչ է, որ հազար փալաթում կապել ես։

—Ծառա՛յ եմ սրբերին, պատասխանեց Բզզէն, մասունքն և օրհնութիւնը սուրբ բաներ են, պատիւ ենք տալիս, մի քանի կալերի մէջ ենք պահում, բայց մարդիս հալալ քրտինքն էլ իւր համար գին ու արժէք ունի։

Վերջապէս Աղաջանը քակեց վերջին կապը։

Նա շշկլեց, շփոթուեց և փաթեթների միջից դուրս եկած առարկան ձեռքից ցած գլորեց իւր նստած թաղիքի վերայ։

—Եամա՛ն, Աղաջան ամի՛, գլխի՛դ մատաղ, խընայի՛ր, իմ դառը քրտինքն է, այդպէս արհամարհանքով գետին մի՛ ձգիր, ասաց պաղատագին Բզզէն և չափշտակեց, քան թէ վերցրեց գետնից նուիրականութիւնը և մեկնեց դէպի Աղաջանը։

—Տղա՛յ, էս ի՞նչ երկու շահանոց է։

—Քեզ ասում եմ, որ իմ առաջին աշխատանքն է՝ հալալ ապրանքն է, իմ հարստութեան մայէն (խմորն) է, չափահաս և հասկացող մարդու ծանրութեամբ պատասխանեց Բզզէն և մի առ մի պատմեց երկու շահանոցի ձեռք բերելու դէպքը։—Այս երկուչուրուկ շահին ինձ երեխայութիւնից կատարեալ տղամարդ շինեց, շարունակեց Բզզէն, ինձ հիւանդացրեց, գերեզմանի դուռը տարաւ, բայց էլի յետ բերեց. հիւանդ ժամանակս իմ ցաւերս մոռացած, սորա վերայ էի մտածում, սորա յուսովն էի ապրում.

սրանով ես հասկացայ, որ փողը քաղցր բան է և ահա՛ բերել եմ քեզ մօտ, աւանդ եմ դնում մօտդ, պահի՛ր այս իմ համար ամենաթանկագին իրը և փոխարէնը ապառիկ ապրանք հաւատա՛, տանեմ գիւղերումը ծախեմ, բերեմ, քո փողը տամ, աւելցուկը սորա վերայ դարսեմ։ Աղաչում եմ, երբ կամքդ կը տայ, Աղաջան ամի՛, ապրանք բա՛ց թող ինձ. մօտդ պահի՛ր իմ երկու շահանոցը, լա՛ւ պահիր, քո ձեռքովդ կապտի՛ր կրկին իւր փալասների մէջ և թող քո փողերիդ կողքին ընկած մնայ. մի՛ կորցնիր, ձեռքից մի՛ թողնիր, դա իմ քիսադիբին է լինելու։

Բզզէի խօսքերը շատ վստահ էին, մի հաստատակամութիւն, մի գերբնական զօրութիւն, մի անընկճելի կամք պարզ նկատւում էին նորա մէջ, նորա ներսումը, կարծես, բորբոքում էր մի հնոց, որի ծխնելոյզը նորա կայծեր արտացոլող աչքերն էին։

—Դու հաց կ՚ուտես, զաւա՛կս, քեզանից մարդ դուրս կը գայ, ասաց և գրկեց Աղաջանը Բզզէին. ահա՛ դու, ահա՛ իմ խանութը, տա՛ր ինչքան կամենաս, ո՛ւր կամենաս, դուռս քեզ համար միշտ բաց է, քեզ արգելք չը կայ. իսկ այս քո երկու շահանոցը կրկին դի՛ր քսակիդ մէջ, թող քո քիսադիբին քո ծոցումը մնայ։

—Ո՛չ, գլուխը շարժեց Բզզէն, մինչև որ իմ երկու շահանոցը ձագեր չը հանի, ես քեզանից տանողը չեմ. սա մեղուների փեթակի մայրն է, սա

խողի մէրուն է, տարին մի քանի անգամ ձագ պի-տի տայ, շատանայ, ապա թէ նոր ես քո արկղից հա-նեմ, իւր համար առանձին փեթակ շինեմ:

— Ուրեմն թող այս գնենք առանձին քսակի մէջ, թող իւր առանձին բունն ունենայ. ահա ա՛ռ այս քսա՛կը. կապի՛ր քո ձեռքով սորա բերանը, որ կրկին ինքդ բաց անես:

Այդ օրից կարբեցի չարչիների թուում գիւղե-րը թափառող մի մանուկ չարչի էլ աւելացաւ:

Դա Բզզէն էր, որ դասաւորեց խուրջինի մէջ կա-րեւոր ապրանքը, համբուրեց ջհուտ Աղաջանի ձեռ-քը և ճանապարհ ընկաւ:

Բ.

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆՔ Է

Ո՛վ ասես, որ առաջին անգամը փողը բռնած չը ծիծաղեց, երբ լոյս ընկաւ գիւղերումը ճղճղոտ-ուած, պատառոտուած բոկոտն մանուկ չարչին. ո՛ր ծակ բերանը նորա վերայ չը խօսեց, ո՛ւմ ձեռքն ա-սես, որ խեղճ Բզզէի գլխին չը բարձրացաւ. նա ամեն-քի խօսակցութեան նիւթը դարձաւ: Բարկութիւն, հայհոյանք, ծաղր ու կատականք, հեգնութիւններ, արհամարհանք մեծ ու պստիկից, արուից ու իգից նորա գլխին էին թափւում:

Տղամարդիկը ծիծաղում, անց էին կենում, պառաւները հինգ մատը յետ բաց արած՝ չանչում

էին, հարսներն ու աղջիկները քիթ էին բարձրաց-նում, իսկ երեխայքն օյին չէր մնում, որ գլխին չը խաղային—հող էին ածում գլխին, խուրջինն էին ձգձգում, շներն էին գրգռում ու ինչ տեսակ նեղու-թիւն ասես, տալիս էին:

Մի տեղ լալիս էր Բզզէն, միւս տեղ գլուխը քաշ՝ չը լսելու դնում, անց կենում, իրանից փոքր ե-րեխաներին ձեռքի փայտովը հալածում, մեծերին մի բուռը չամիչ տալիս, աղջիկներին ասեղ ու քո-րոցներ բաշխում, հարսներին ծածուկ դեղաղրիք ու ասղամաններ ցոյց տալիս, պառաւներին մեծ ծա-մելու մաստակ առաջարկում և իւր գործն յառաջ տանում:

Այնուհետեւ ոչ ոք Բզզէից չէր խրտնում, ոչ ոք նրան չէր վիրաւորում, ընդհակառակը՝ շատերը հետա-քրքրութեամբ լսում էին նորա նոր շարադրած գովա-սանական մեղեդին, երբ նա ձեռքով խուրջինը ցոյց տալով նորա միջի ամեն մի ապրանքի համար մի մի հրապուրիչ խօսք էր շռայլում:

Բացուեց հետզհետէ Բզզէի բաղդի դուռը, նրանից ձեռնտու չարչի չէր լինիլ, քաղցրալեզու, էժան ծախող, ապառիկ հաւատացող և անվնաս:

Սիրելի եղաւ մանաւանդ ազափ աղջիկներին ու չըխօսքան նոր հարսներին. մի մասն երեխին ո՛վ մար-դատեղ կը դնի, ո՞ր մայր ու սկեսուրը կը բարկանան, ե-թէ յարգւոր հարսներին ու ամօթխած աղջիկներին տեսնեն օտարական մանուկի հետ քնթկալը ցած

թողած, խօսալուս ու ծիծաղելուս. ամօթ կը լինէր, եթէ նրանք մեծ մարդկանց հետ այդ կերպ վարուելիս լինէին. ի՞նչ անենք, թէ օտարական են, ղարիբ են. տղամարդը տղամարդ է, տղամարդին պատիւ է հարկաւոր. մուրացկան գզգզուած աղքատի հետ էլ հարս ու աղջկէքն խրատունք չ'ունին խօսելու։

Դրանից աւել նպաստաւոր դէ՞պք. աւել չի պէտք, որ նորա առևտուրը կարճ միջոցում յաջող ընթացք ստացաւ, նորա գնորդները հետզհետէ աւելացան։ Շատ չը քաշեց, Բզզէն գիւղերի համար սովորական դարձաւ, ամեն բակի ազատ այցելուն համարուեց. շները մինչև անգամ հետը բարեկամացան, երբ որ նորա տուած կակուղ բօքօն հացի ճաշակն առան։ Էլ ի՛նչ աւել կ'ուզէ, որ Բզզէի ապրանքը ուրիշ չարչիների ծախածներից գերադանց հաւանուեցաւ։

Ամենքի ջուրը դատաւ Բզզէն, ամեն պայմաններ հեշտացրեց, միայն մի կողմից շատ դժուար դրութեան մէջ էր և երկար միջոց պարտական էր դիմանալ:

Կարբու միւս չարչիների աչքի փուշը լինելը շատ բնական էր. նրանց դէմ մի վտանգաւոր ախոյեան էր յառաջ եկել և այդ շատ ցաւ էր չարչիների համար, այդ նրանց մտածութեան գլխաւոր հոգսերից մէկն եղաւ։

Ահա՛ վերադառնում են նրանք ամենքը մի

գիւղից, երեկոյեան դէմ, և սովորական ողջունից յետոյ սրտի ցաւերը միմեանց պարզ յայտնում.

—Այսօր առուտուրդ ի՞նչպէս էր։

—Կար էլի՛. իսկ քո՞նը։

—Էլ մի՛ հարցնիլ, ամեն խէր ու բարաքաթը կտրուել է։

—Հանդիպե՞ց քեզ լամուկը։

—Ո՞ւր է, ձեռք ընկնո՞ւմ է, որ մարդ զարկի, շան նման սատկացնի։

—Ինձանից էլ միշտ փախս տուած է ման գալիս։

—Գիւղերումը մէկ-մէկ աչքի է ընկնում, բայց գիւղամիջին ի՛նչ կարող ես անել։ Մի օր Կարօն Աշտարակումը մի շամառ (ապտակ) էր հասցրել, գեղցիք հաւաքուել էին, խեղճ Կարօյին էնքան թակել էին, որ գնացած ճանապարհը մոռացել էր։

—Դա մեր հացը կը կտրի։

—Չարչին էլ չարչի լինի, ո՛ւմ ցաւ կը թուի.— գետնի երեսին չի երևում. Պօղոս աղայենց դրան երեկուան շների լափի գուռը ([illegible]) լպստողն է, էսօր մեր ոտքի տակ սառուց է դնում։

—Ո՛ր տունը մտնում ես, մի գլուխ լսում ես, թէ կօլոտ Բզզէից առանք էժան, լաւ ու նխշիա։

—Ջհուտ Աղաջանն է մեղաւոր, ո՛ւմ ասես, ապրանք է բաց թողնում։

—Գնանք խնդրենք, որ էլ չը տայ։

—Մարդ իւր հացին քացով կը տա՞յ. նորա ապրանքը ծախուի՝ մնողն ով կ'ուզէ, թող լինի։

—Յետոյ Բզզէն փող տալի՞ս է։

—Հապա Աղաջանին հարցրո՛ւ. դուք շաբաթ օրերն էլ չէք կարողանում ձեր շաբաթական հաշիւը վերջացնել, ասում էր ինձ ջհուտ Աղաջանը, Սալբուտղէն ամէն իրիկուն բոլոր աշխատած փողը բերում, ինձ է տալիս։

—Որ էդպէս է, բոլոր չարչիներս խօսքը մէկ անենք, որս հանենք, քիթ ու մուռթը տրորենք։

—Դու ես ասում՝ թէ գիւղերումը չի կարելի, ճանապարհին էլ ձեռք չի ընկնում, չօլերումն է գնում—գալիս։

—Օրական մէկը՝ մեզանից հերթով թող բուսուն պահի (պուսուն տուտել), լուսը չը բացուած՝ ճանապարհը կտրի, հէնց որ Կարբուց դուրս եկաւ, բռնի մի լաւ ծեծի և անցկենայ իւր գործին գնայ։

Վերջին հնարքն էլ չը յուսահատեցրեց Բզզէին. շաբաթ չէր անցնում, որ մէկ կամ միւս չարչու ապտակների համը չը տեսնի.—գոռում էր, լալիս էր ու կրկին ուժեղ հակառակորդի հեռանալուց յետոյ՝ վեր կենում, աչքերը սրբում և ճանապարհ ընկնելով ասում։

—Դադած եզը լաւ կալ կ՚անի, էնքան է՝ դուք ինձ կենդանի թողէք, օրական տասն անգամ ծեծեցէ՛ք, օր կը գայ, որ փոխարէնը մէկ-մէկ կը ստանաք, կը սպանենք՝ կը տեսնենք—համբերութիւնը կեանք է։

Թ.

ՄԱՏԱՄԲՍ ԿՆՔԵՑԻ

Գիւղ չը մնաց Կարբու շրջակայքումը, ուր Բզզէն պարտապաններ չ՚ունենայ, տուն չը մնաց, որ մի տեսակ նորա հետ չը կապուի. նա այժմ մարդամէջ է մտել, մարդի կարգն է անցել և իրաւունքները մեծացրել է։

Ո՛վ ասես՝ նրան բարև չի տալիս, նորա հետ հարց ու բարով չի անում, նրան չի ընդունում, ո՛ւմ անունը չը կայ նորա ծոցագրպանումն ու ձեռաց տոմարի մէջ։

Առաջինումը մանուր մուրհակներ էին մի-մի կտոր թղթերի վերայ գրած, երկրորդումն առձեռն ապառիկների ցանկն էր՝ փչողութիւնից չը թռչելու համար։

Գիր ու գրիչ անծանօթ էին Բզզէին և նա կարիք էլ չէր զգում։ Թէպէտ գրաճանաչներ մատով էին համարւում այն ժամանակը, բայց այդ եղածներն ամէնքը պատրաստ և պարտական էին նորա երքով (վստահօրէն) առաջարկած խնդիրը կատարել։

—Ի՞նչ անենք, ախպէ՛ր, կարո՞ղ ենք չէ ասել, աշխարհքն էն օրին է հասել, որ մի կտոր գունդ ու կծիկ, անճոռնի, երկոտանի անասունին մեր գլխի տէրն ենք շինել, մենք մեր ձեռովը ազատ սորուկ ենք գրուել, արդարանում էր ուրիշների և իրա սնգահական ես-ի առաջին գիւղական գրագէտը, երբ

ստիպուած էր լինում կարեւոր գործը թողուլ և ժամու ու տարաժամու Բզզէի խօսքը լսել, նորա ապառիկը գրել:

Զուր էլ նեղանում էին. շատ ժամանակ կորցնելու ոչինչ չը կար, մի անուն միայն պէտք է նշանակէին և ապառիկի գումարը: Ձեռաց ոտքի վերայ գրում և իրանց գործին էին գնում:

Մեծ ցաւ էլ չէր Բզզէի համար, եթէ գիւղերումը գրչի տէր էլ չը գտնուէր. ո՛ր տէրտէրը նորա սիրտը կը կոտրի, ո՛վ չի հաստատել Բզզէի մօր ձեռքով պատրաստուած, ախորժ փռշտացնող, անուշաբոյր քթախոտը: Բացի եզան փամփուշտի մէջ ծախելու համար ունեցածը՝ Բզզէն միշտ գրպանումը պարկը լիքը պատրաստ ծխախոտ ունէր. ծեր իշխանների, պառաւ մեծ նանիների և ամէն մի քթախոտի սիրահարի հանդիպելուս՝ առաջին գործը պարկի կապը յետ բաց անելն և քաղաքավարութեամբ ու ժպտալով մօտ տանելն էր լինում: Անիծածը շատ ժամանակ չը քաշողների ախորժակն էլ գրգռում էր. էնպէս շնորհքով էր յառաջ բերում, թաւագայ անում պարկը, որ չէ ասել չէիր կարողանում, մի պտղունց վերցնում էիր, մինչև քթիդ վերին ծայրը ներս քաշում ու երկու զոյգ մի կենտ փռշտում:

—Առողջութի՛ւն, ձեռաց վրայ էր բերում Բզզէն ու իւր սիրելի բօշի տղայ եղբօրը ձեռքով յառաջ վարում: Էսօր մէկ, էգուց երկու և Բզզէն լաւ գիտէր, որ երրորդ օրը գրպանումդ մի քթախոտի պարկ

պէտք է բուն դնի և ուրիշ պարտքերիդ վերայ թութունի փող էլ աւելանայ:

Քթախոտի պարտք չէր նշանակւում Բզզէի ձեռաց տոմարի մէջ միմիայն տէրտէրների վերայ: Հէնց այդ էր պատճառը, որ Բզզէն ոչ մի նաւակատիկի, ոչ մի մեռելոցքի գերեզմանատուն չէր գնում. մի կոպէկ իւր հօր հոգուն յիշէքի կամ գերեզմանօրհնէքի չէր տուած, և կարիք էլ չը կար, որովհետև ամէն անգամ տէրտէրի քթախոտի պարկը լցնելուս՝ նա իւր ականջովը լսում էր տէրհօր օրհնութիւնը:

—Աստուած ծնողիդ հոգին լուսաւորեսցէ՛:

—Մօրս էլ օրհնի, տէր-հա՛յր, յաւելացնում էր Բզզէն, մայրս իւր ձեռքովն է պատրաստում Մշու թամբաքուից էս անուշահոտ բուռնութին:

—Աստուած մօրդ կեների ոյժը ոչ պակասացնի՛, ասում էին տէրտէրները, բայց երբեմն էլ աւելացնում էին.

—Ուղիղն ասա՛, եղբայր Բաղդասա՛ր, էս անգամի բուռնութու երկու բաժինը, հէնց իմանաս, ծեծած ածուխ լինի, թամբաքուի հոտը շատ քիչ է:

—Ոչ մէկ է, տէրտէ՛ր, հոտը դա՛յ՝ բաւական է, քսակներիս վեաս կը լինէր Մշից թամբաքու բերել տալ. փա՛ռք Աստուծոյ, ձորը լիքն է ուռի ծառերով, անփող, անփարայ ինչքան սիրտդ կ'ուզի, էրի, ածուխ շինի՛ր, փոշի արա՛, մի երկու թութունի տերև էլ հետը տրորի՛, երկու հատիկ մխակ հէլ, կոլոլ տաքացեղ, և ահա՛ բուռնութին պատրաստ է,

էնքան քաշեցէ՛ք՝ քթերդ մրմռան. ես քաշող չեմ, որ դարդ անեմ:

—Ա՛յ տղայ, ասած է՝ «շիտակ խօսքը հանաքով կ՚ասեն», չը լինի՞ թէ ուղիղ այդպէս է:

—Կէսն է հանաք, կատակի էր տալիս Բզզէն և տէրտէրի պարկը լցնում ու իւր էշը քշում, գիտենալով անշուշտ, որ շատ չի տևիլ՝ մէկի հետ կրկին դէպի տէրտէրը կը վերադառնայ:

Բզզէի հաշիւն ուղիղ էր: Օր չը լինէր, որ մէկ կամ միւս պարտապանի մուրհակը չը նորոգել տար, կամ նոր մուրհակ չ՚աւելացնէր իւր ծոցաթղթերի մէջ:

Մի որոշ սահման էր նշանակել նա իւր ձեռաց ապառիկները մուրհակի փոխելու համար:

Խօսք չը կայ, սկզբումը կոպէկներ էին լինում այդ պարտքերը, որոնք աստիճանաբար աբասու, հազար դեանի (30 կոպէկի) և ապա մանէթի ու թումանի էին փոխուում: Մի հազար դեանը երբ 5000 դեանի (1 ր. 50 կոպ.) հասաւ, նա կը ջնջուի ձեռնատումարից և մուրհակի կը փոխուի. վեց ամիսը մի անգամ էլ մուրհակի տոկոսը գլուխ կը դառնայ:

Բզզէի առաւելութիւնը միւս չարչիների վերայ այս էր, որ ուրիշների նման երբէք ինքը չէր ձանձրացնիլ պարտապաններին վճարելու, կամ մուրհակը նորոգելու. ի՛նչ մի աներևոյթ ոյժ կար նորա մէջը, որ ամէն մարդու ստիպում էր դէպի պարտաճանաչութիւն:

Շատ են խօսեցել այդ մասին խելացի մարդիկը և այդ մեծ զօրութիւնը գտել են Բզզէի աչքերի, նորա հայեացքի մէջ:

Մի քանի տեսակ նայուածք ունէր Բզզէն. այլ էր նոր մուշտարու հայեացքը, ուրիշ էր ջահել աղջիկներինը և նորահարսներինը. սրանց երկուսինի միջի եղած զանազանութիւնը շատ չէր, մի տեսակ քնքշութիւն նկատելի էր աչքերի, դէմքի, շրթունքների և շարժմունքների մէջ. ձայնն էլ, կարծես, կորցնում էր իւր բնական խռպոտութիւնը և մի քաղցրանուագ առաձգականութիւն էր ստանում: Պառաւ կանանց հետ առուտուր անելու ժամանակ՝ աչքերի բիբերը շուտ շուտ էին պտոյտներ անում, մի կիսահեգնական արտայայտութիւն էին զգալ տալիս խօսակիցներին, բայց ոչ այն չափով, որ սրտնեղելու իրաւունք ունենան. գիւղերում նշանակութիւն և իրաւունք ունեցողների հետ խօսելու ժամանակ՝ նորա աչքերն իրանք իրանց կորանում էին և խորին հպատակութիւն ու ակնածութիւն էին արտափայլում. պարտապաններին մուրհակ տալու, կամ նորոգելու յիշողութիւն անելիս՝ բիբերը մի քանի վայրկեան դադար էին առնում շարժողութիւնից և հէնց իմանաս, թէ դուրս էին թողում իրանցից ասեղներից էլ բարակ սուր սուր նետերի տրցակներ (կոտղեք) և շաղ էին տալիս պարտապանի սրտի խորշերումը:

Այդ ժամանակ, ինչքան որ խստասիրտ, կամ

իւր հաշիւների մէջ անճշտութիւն սիրող պարտապան լինում էր, ինքն էր շտապում բարև տալ Բզզէին, կանգնացնել և յիշեցնել նրան իւր պարտքը:

—Բզզէ ջա՛ն, ի՛նչ անենք, որ երկ՝ օրից փողից ժամանակն է ու ձեռքս պակաս է, մօտ է գալիս ձեռքը բօշի ալի վզին դնում փողոցի մէջ տեղը որ և է մի պարտապան, գիցուք, փարբեցի Մաղաքը:

—Քո ցաւը տանի՛, Մաղաք ջա՛ն, ունեցած ժամանակդ տո՛ւր, ո՞վ է քեզանից էս օր փող ուզողը, տաս էլ՝ ի՛նչ պէտք է անեմ, քեզանից լաւ մարդի եմ տալո՞ւ:

Ի դէպ՝ մեր Բզզէն այժմ քաղաքակրթուել է, նա աշխատում է, որքան կարելի է, փախս տալ իւր մայրենի բարբառից, չը գիտենք՝ ամօթ է համարո՞ւմ, թէ Արարատեան բարբառի ճաշակին է ընտելացել նորա լսողութեան գործարանը:

—Ուրեմն թուղթը նորենք, մինչև աշունքը կալ ու կուտը կը ժողվենք, բաղամասիլը (տյֆեղտուղ) տուն կ՚ածենք, հոգիս կ՚ազատեմ, առաջարկում է ինքը Մաղաքը:

—Ինչպէս քո բարի կամքդ կը հաճի:

—Թէ էդպէս է, էգուց սանադը (մուրհակ) չը մոռանաս, հետդ վերցնես:

—Մէկ էլ ընչի՞ եմ էգուց քեզ նեղութիւն տալիս, Մաղաք ախպէ՛ր, եթէ կը՚կամենաս, թուղթը մօտս է, մէկի հետ հաշիւ ունէի, կապոցը վերցրի, ծոցս դրի, թէ չէ ո՞ւմ միտն է գալիս, տարիներով

տան քնջնումը թղթերի միջին ընկած մնում է, երեսին էլ չեմ մոտիկ տալիս. մի օր էլ մէրս, չիմանալով, աղբի հետ սրբել էր ու տարել աղբանոցը քցել. մէկ էլ մէրս յետ է մոտիկ տալիս, տեսնում, որ շներն աղբը խառնշտորում են հացի փշրունք գտնելու համար ու մի շուն դնչով մի կապոցի պէս բան է քանդքնդտում. բարկանում է, բերնից խլում, տեսնում թղթեր, վերցնում է տուն բերում, էլ յետ քնջնումը վեր քցում:

—Ախպէ՛ր, լաւ մարդ ես, որ պարտքիդ թղթերն անտէր անտիրական շպրտում ես, զարմանում է Մաղաքը. իմը որ լինէր՝ օխտը փակի տակ կը պահէի:

—Քո ա՛րևը, տարիներով միտքս էլ չեն գալիս, Մաղաք ջա՛ն, թէկուզ կորչին, էսքա՛ն էլ դարդ չեմ անիլ. նա հոգածութեան չափը ցոյց տուեց իւր եղունգի ածելորդ մասը. ընչի՛ց եմ վախում, ես հարամկեր մարդկանց հետ հաշիւ չ՚ունիմ, իմս աղպէր-տղէքանց հետ է, որ բոլորովին չը տան էլ, իրանց մօր կաթի պէս հալալ. ախպէրութիւնովն եմ երդում ուտում, Մաղաք ջա՛ն, որ էս օր էլ չէի սանադները վերցնիլ, թէ որ քեզ պէս մի ազիզ բարեկամ երեկ ինքը զոռ արած չը լինէր՝ թէ մուրհակս բե՛ր, հաշիւը վերջացնենք:

—Բաս էդ լաւ էլաւ, հէնց էս օր գրենք, վերջանայ կորչի:

—Քո քէֆն է:

—Ո՞ւմ դրիլ տանք:

—Հրէ՛, ա՛յ, տէրտէրն իշխանների հետ պատի տակին նստած՝ գրից են տալիս. Աստուած իրան փառաց պահի, չի էլ թողալ բերան բանանք, դու էշը քշի դպա ժամի բակը, ես աչքով կ՚անեմ տէրտէրին, մեզանից շուտ կը գայ։

—Լաւ գրի՛, աչքի՛դ մեռնեմ, սխալ չը գաս, շահը ուղիղ հաշիւ արա՛, հոգու պարտք է,—ուտի որդին, վճարի հոգին, սրտի անկեղծ համոզմունքով աղաչում է Մաղաքը։

—Գլուխն ի՞նչքան է, մէջքը եկեղեցու պատին տուած՝ նստում է քարի վերայ տէրտէրը, մինչ կոլոտ Բղդէն չօ՛շշ... անելով՝ դէմ է ձգում սև իշուկի վզին մահակը, ձեռքը ծոցը տանում, հանում իւր գրպանից կապոյտ կտաւի քսակը, զգուշութեամբ յետ է բացանում երիզը և մի ուրիշ կապոց հանում միջից, արձակում հանգոյցը և մի ծալք ծալծլոտած և աղտոտած թղթեր դուրս հանում ու մէկ մէկ իշի համետի վերայ յետ դարսում, մինչև որ վերջապէս գտնում է Մաղաքի մուրհակը։

—Լաւ խղան (յիշողութիւն) ունիս, ախպէր Բղդէ՛, որ անկարդալ տեղովդ կարողանում ես սանադներն իրարից ջոկոտել, զարմանում է Մաղաքը։

—Դժուարն աչքդ մի անգամ վարժացնելն է, պատասխանեց Բղդէն, մէկ էլ որ հէնց այբ-բէնը չը պիտի իմանանք, որ գրի սևն ու սպիտակը զանազանենք, ես էլ իմ գրերն ունեմ. ա՛յ, մտիկ տո՛ւր, սրանք են իմ գրերը։

Արդարև, ամէն մի մուրհակի արտաքին ծալքի վերայ չինական նշանագրերի նման որոշ որոշ խազխզուածքներ կային գծած. նոցանից իւրաքանչիւրը մի պարտապանի անունն էր։ Բղդէի իւր սեպհական մտքի ծնունդն էին նոքա։

Իւր բազմակողմանի ընդունակութեանց հետ՝ մի սուր յիշողութիւն ևս չի զլացել Բղդէին բնութիւնը. նա գիտէ ամէն մի մուրհակի բովանդակութիւնը, գումարի, տոկոսի, կրկնատոկոսի հաշիւը և ամսահամարը. նա ամսով յառաջ հաշուած և պատրաստած ունի առաջիկայ ժամանակամիջոցի դրամագլխի որքանութիւնը և նա այդ անում է, հաստատ գիտենալով, որ իւր պարտապանն այժմ վճարելու չէ իւր պարտքը։

Ահա Բղդէն գտաւ Մաղաքի մուրհակը—փալասից յետ տուած լեղակի գունով կապտացած մի փոքրիկ թղթի կտորը և տուեց տէրտէրին։

—Օրհնա՛ծ Մաղաք, դէ՛ ասա, թէ գլուխը որքա՞ն է, մէկ էլ աչք ցաւացնենք, կարդա՞նք. ծերացել եմ, աչքերս լաւ չեն տեսնում։

—Գլխի մասին էլ մի՛ հարցնիլ, աչքիդ մատա՛ղ, սրտի ամենամութ անկիւնից մի հառաչ է արձակում խեղճ Մաղաքը, թէ գլուխն ես ուզում իմանալ, մի պոպոքը (ընկոյզ) մեծացել՝ ձմերուկ է դառել. մեր տնեցիք ասեղ-մասեղ էին առել, էլ չէին մտածել, թէ մի բուռն ալիւր, մի ամանով չիր ու փշատ տան, վերջացնեն. մնացել էր նիսիա (ապառիկ). իմ

արխալղի համար էլ ղայթան (եըեղ) ու կոճակներ էին հարկաւոր, էն էլ վրէն աւելացրինք, դարնան Թագաւորական խարջից (հաքի) մի մանէթ պակաս էր, օխտը դուռն ընկայ՝ տուող չէլաւ, եասաուլն ու ղազախը չէին Թողում, Թէ ոտս ոտխ յառաջը դնեմ, ղամչի (մթրախ) էր, որ Թիկունքախառը ուսագլխներիս համնում էր. Թնացել էի մոլորուած. շնորհակալ եմ, սորա հէրը լո՛յս դառնայ, էն կողմիցը դուրս եկաւ, հալս տեսաւ իւր բարի աչքովը, առանց իմ բերան բանալու ինքը մօտ եկաւ, քիսէն հանեց, մանէԹն ուեխները քցեց, միջքիս դաղդղորիկ դալը կորեց, երեխէքանցս տակի կարպետը ծախելուց ազատեց։ Հին պարտքն ու նորը հաշուեցինք, էլաւ հինգ հազար դեան տասն շահի (1 մանէԹ 65 կոպ.), շահը դլուխ արինք, դառաւ վեց հազար դեան. ժամանակին ձեռքներս չը հասաւ, որ տայինք, եախէքս (օջեր) ազատէինք, հիմի հինգ մանէԹից աւելցել է. էնպէս չի՞, աղպէր Բղդէ։

—Միտքս չի գալիս, գիրը կըխօսի, ինչ որ կայ՝ կայ, իմ ասելովը չի աւելանալ, քո խօսքովը չի պակասիլ. եԹէ ուզում ես, քո գլխին մատաղ լինի, Թուղթը ճղենք՝ կորչի։

—Վա՛յ, Աստուած էն օրը մահ տայ, Բղդէ ջա՛ն, մեր հոգու պարտքն է, քեզանից քաշեմ, կորեմ, քո դառը, հալալ քրտնքին չար աչքով մտիկ տամ, ո՞ւմն ուտացնեմ։

—Ախար ընչի՞ էք ծուծուացնում, ձգձգում, ինձ նեղուԹիւն տալիս, այ որդի՛ք, դուք երկուսդ էլ անպատճառ ձեր առնելացուկի ու տալացուկի հաշիւը լաւ գիտէք, ասացէք ու վերջացրէք, մէկ էլ աչքերիս զօռ չ՚անեմ, արդար տրտունջ յայտնեց հազալով և կոկորդը մաքրելով տէր հայրը և ճարահատեալ սկսեց շուտ շուտ կարդալ։

—Դէ՛ որ էդպէս ջրի նման սուար (ատլու) կարող ես կարդալ, ա՛յ տէրտէր, էլ ի՞նչ ես մեզ խօսացնում, կարդա՛ ու պրծի՛, իրաւամբ կշտամբում էր տէր հօր ուշացնելը Մաղաքը։ Բայց Մաղաքի պահանջն արդարացի չէր. տէր հայրը ինչ արագուԹեամբ որ սկսեց մուրհակի կարդալը, նոյն ձևով չը կարողացաւ մինչև վերջը հասցնել. կիսումը յանկարծ կանգ առաւ և ը՛...ը՛...ըա՛... ծորելով՝ մատների ծայրով սկսեց աչքերը տրորել։

Աւելորդ Թող չը լինի կրկնել տէր հօր կարդացածը. «ԶօրուԹիւն գրոյս այս է, որ ես Փարբի գիւղի բուն բնակիչ ՍէԹօյի Մաղաքս վեր առի և պարտ եմ Կարբի գիւղի վերաբնակիչ Գասէի Բղդէից, այսինքն չարչի Բաղդասարից...

Հէնց այստեղ կանգ առաւ տէրտէրը, Թուղթն աչքերին մօտ բերեց և ը՛...ը՛...ը՛... անելով, ամէն մի ը՛... հնչիւնի հետ գլուխն էլ յաճախակի տմբացնում էր։

—Դէ՛, Բղդէ ջա՛ն, վրայ քցի՛, ասա՛, տէրտէրին նեղուԹիւն մի՛ տալ, ընդհատեց Մաղաքը։

—Վալլա՛հ (յանուն Աստուծոյ), լաւ միտքս չի

գալիս, կարծեմ, գլուխը պէտք է լինի երկու թուման, տասն ու հինգ շահի (6 մ. 15 կոպ.) վրայ բերեց Բղդէն։

—Վա՛յ գլխիս. թափահարուեց ոտից գլուխ Մաղաքն և ատամներն անգիտակցաբար մին մնի կպան՝ ճիշդ պղնձգործի սալի վրայ մի քանի հոգւով միմեանց ետևից կռանահարողների հարուածների նման. Նորա ուսերքի մինը բարձրանում, միւսը ցածրանում էր, մարմնի ամբողջ ջղերը շամփուր շամփուր ցնցուեցան և լեզուն բերանումն ինչ որ անհասկանալի հնչիւններ էր շաղփաղփում։

—Ի՛նչ պատահեց քեզ, օրհնեալ լինիս դու, Մաղա՛ք։

—Ոչի՛նչ, ոչինչ, տէրտէր ջա՛ն, գրի՝ ինչ որ ախպէր Բղդէն ասում է, դրան աւելի լաւ է չայտնի, թուղթն ամեն օր կշտին է՝ կարդալ կը տայ, կ՚իմանայ. մէջ տեղը վեց ամիս է անցկացել, ինձ պէս հազար ցաւ ու հոգսի տէր, մոքամոլոր մարդի մտքին բան կը մնա՞յ։

—Ինձ չես հաւատո՞ւմ, զարմանք յայտնեց Բղդէն։

—Դէ՛ քանի՞ գլխանի եմ, որ չը հաւատամ, երևում է՝ ես եմ սխալ, իմ կարճ խելքովը հինգ մանէթ ու մի քանի սև փող էր, հալբաթ ճուտեր է հանել։

—Փա՛ռք Աստծու, տէր հօր ձեռքին է, քո էլ մուրհակն է, թո՛ղ տէրտէրն իւր օրհնած բերանովը

կարդայ. դու է՛լ գիտես, վերևն Աստուած է՛լ, ներքևը բանդէն (Նոտար) է՛լ, որ ես ոչ գիր գիտեմ, ոչ ղալամ։ Աջիդ մեռնեմ, աչքերիդ մի լաւ զոռ տո՛ւր, ճմռի՛, թող ջուրը թափուի, գրածները լաւ ջոկի, խնդրեց Բղդէն. մարդ ենք, հողեղէն ենք, սխալական ենք, օրը հազար մարդի հետ հանդիպում եմ, կարելի է, մոռացել եմ, երեկուայ կերածս միտքս չի, վեց ամսուան գործն ի՛նչ կը մնար։

—Ը՛...ը՛...ը՛... կրկնում է նորից տէրտէրը և աշխատում գիր կապելով մի բան գոյացնել. հօ՛... ինի՛... նո՛ւ... չէ՛, չէ, հէնց իմանաս էչի նման է... ե՛չ...րէ...

—Սաքի էլ ընչի՞ ես գլխիդ ու աչքերիդ նեղութիւն տալիս, քո աջի՛ն մատաղ, ընդհատեց Մաղաքը, մեր Բղդէ ախպէրը մի քանի շահու համար իւր հոգին հօ՛ սևացնելու չի. թէ որ ասում է՝ երկու թուման տասն և հինգ շահի է, հէնց էդքան էլ կը լինի։ Էգուց չէ էլօր, գարնան Մողնու ուխտի շաբաթ օրը, ժամանակը լրանում է. հաշիւ արա՛ էս օրուանից մինչև նաւասարդի պաս երկուշաբթին, ինչքան շահ կը բռնի՝ վրէն արի՛, տասին երկու շահով խզբզի, մատս հուպ տամ՝ վերջանայ։ Ինչքա՞ն կը բռնի, Բղդէ ջա՛ն, դու ինքդ հաշուի՛, դու աւելի գլխի ես (Հնուտ ես)։

—Ես ի՛նչ գիտեմ, ախպէ՛ր, տէրտէրի ոտը մեր գլխիցը շատ գիտի։

—Օրհնա՛ծ, օրը մինչև իրիկուն դու ես փողի

հետ խաղում, էս հօ «Հոգւոց» չի, «Պահպանիչ» չի, որ աչքդ բաց ու խուփ չարած՝ հինգ անգամ ջրի պէս ասեմ ու փէշս թափ տամ, յետ կանգնեմ, ասիլ տուողի ձեռին մտիկ տամ, թէ ի՛նչ պտի հանի քիսիցն ու բուռս դնի։

—Շահը գլուխ արած՝ մինչեւ Նաւասարդը կը բռնի ճիշդ, մի սեւ փող ոչ աւել ոչ պակաս, երկու թուման ու կէս ու մի շահի, թող շահին էլ մեր ախպէր Մաղաքի ցաւը տանի, հաշուեց եւ առատօրէն նուիրեց կոլոտը։

—Օ՛հ, միտս սրթսրթաց, էդ ի՞նչ ասացիր, Բղդէ ջա՛ն, ասա հէնց էս օրուանից երեխէքանց կուռը բռնեմ, ջուրն ածեմ։

—Ընչի՞ ես նեղանում, Մաղաք ջա՛ն, բոլորը քեզ մատաղ, ահա ա՛ռ էս մի մատը թղթի կտորը, պատռի՛ ու շպրտի՛, ես չեմ ուզիլ, որ իմ ձեռից քո մի մազը թեքուի. մենք ախպէր-տղէք ենք, տես ու ծանօթ, աղ ու հացկեր ենք. ի՞նչ ես հրամանք անում, աջի՛դ մեռնեմ, տէր հա՛յր, քո կարգն ինձ գունդ ու կծիկ ածի, թէ խօսքումս սուտ գտնուի։

—Զէ՛, ախպէ՛ր, շատ շնորհակալ եմ, քո հատ սեւ փողն ինձ լեղի թող լինի, մորդ անուշ կաթի նման քեզ հալալ ու մարսական. թէ որ երկնային Թագաւորն իր ողորմութեան դռները բաց կ՚անի, իր քաղցր աչքովը մեզ մտիկ կը տայ, հողը քցած բերքերս անվնաս տուն կ՚ածենք, բաղերն էլ երես կը տան, կարկտից, թրթռից, ցասումից, ցաւ ու

չռից մասիլներս (էլհամտուլ) ազատ կը պրծնի, մենք էլ քո մօտ սեւերես չենք մնալ. թէ չէ, Տէրը մի՛ արասցէ, լեզուիցս թռչի, քամին տանի, մեր ծովացած մեղքերի համար Աստուած գլխներիս խռով կը կենայ, իւր բարկութիւնը մեր վրայ կը թափի, էն էլ իր սուրբ կամքն է, վերջին շապիկս կը ծախեմ, տաշտիս տխտմորը (խմոր, մայա, խաշ)—երեխէքանցս բերնի պատառը կը խլեմ ու հոգիս չեմ սեւացնիլ ու յետոյ վիզս մի գութանի գնջիլ (շղթայ) կը քցեմ, անմեղ խմորակերների կուռը կը բռնեմ, երկրէ երկիր քաշ կը գամ, կը մուրամ, ժողովարարութիւն կ՚անեմ եւ ուրիշի դառը քրտնքին խէթ չեմ մտիկ տալ։ Գրի՛, տէրտէր ջա՛ն, գրի՛, ինչ որ Բղդէ ախպէրն ասում է. Աստուած ողորմած է, թէ որ մեռնիլ չենք՝ կը վճարենք, դու ողջութիւն, առողջութիւն ասա՛, ամեն բան հեշտ է։

—Տէր ինքը կ՚ողորմի, որդեա՛կ, մի՛ վախիլ, Աստուածահայր մարգարէն Դաւիթ իւր օրհնաբանեալ սուրբ բերանովն ասել է, թէ «գուբն զոր փորեաց եւ պեղեաց, ի նոյն անկցի ի խորխորատ զոր եւ գործեաց». այսինքն՝ թէ խոր հորի ու փոսի բերնին էլ որ կանգնած լինիս, իմ անունը որ տաս, արագահաս սուրբ Սարգսի զօրութիւնովը կողքիդ կանգնած եմ, կռնիցդ կը բռնեմ, յետ կը քաշեմ, չեմ թողալ, որ գլորուես, գբի մէջն ընկնես, քիթ ու պռունգդ ջարդես։

—Որ էդպէս է, տէր հայր ջա՛ն, գրի՛, մեռնեմ

սուրբ Գրիգորի զօրութիւնին, ընդուր համար է եկել մեր բաղերի միջին իր համար վանք շինել, որ մեր կռանը կենայ, թէ որ մեր սուրբը արար-աշխարհքի կատաղածներին փարատում, փրկում է, փարբեցուն կը թողա՞յ որ Բզզէի պէս մարդի առաջին ամօթով մնանք, էնպէս չի՞, ախպէր Բզզէ՛։

—Ծառա՛յ եմ սուրբ Գրիգորի զօրութիւնին, երեսին խաչ քաշեց Բզզէն։

—Դէ՛հ, դվիթ-ղալամդ (Գրիչ-Թանաքաման) հանի՛, Բզզէ՛, աչքերի հայեացքով ցոյց տուեց տէրտէրը Բզզէին իւր գօտին։

Բզզէն հանեց իւր գօտածալից պղնձեայ երկայնակոթ սախական թանաքամանը, հանեց կոթի դատարկութիւնից սագի գրիչը և դրեց քարի վերայ՝ տէրտէրի կողքին։

—Դէ՛ թուղթ էլ հանի՛, որդի՛ս, շուտ արա՛, ես «Տուն փարատումի» պէտք է գնամ, Բաբլօյին տղայ է ծնել, եկող շաբաթ մի լաւ կնունք ունինք ուտելու. օրհնած Բաբլօն անքուն ցեցերի պէս ոսկիքը հաւաքել է ու մի կիշատակ չ՚ունէր, որ իրանից յետոյ շուն ու գիլլի բաժին չը դառնար, հիմի փա՛ռք Աստծու, արու զաւակ ունեցաւ, իր աշխատածն իր տանը կը մնայ։

—Ա՛յ մեռած Բզզէ ախպէր, ծաղրել սկսեց Մաղաքը, ասում ես գիր ու ղալամ չը գիտես, բայց քեանդիրբաղի (շարախաղաց) տակի մասխարի պէս հպարտ հպարտ դվիթը գօտիդ ես խրել, գլուխն էլ

երևացնում, տեսնողներն էլ կ՚ասեն փիլիսոփայ ես, երկնքիցն աստղեր ես վէր բերում։

—Դէ՛հ, ի՞նչ անեմ, շուտ շուտ պէտք է գալիս, քանի՞ գեղում թանաքաման կը ճարես, Աշտարակը մի կողմը դի՛ր, որ մի քանի հատ կայ, մնացած գեղերը բոլորը կրակ տո՛ւր,—մէկը չես գտնիլ։

—Կ՚ուզե՞ս մէկի տեղակ երկուսը դուս բերեմ մեր տանիցը, ո՞ւմ ես վէր քցում, գետնովը տալիս, օրհնած Բզզէ՛, վշտացաւ ամենայն իրաւամբ տէր հայրը։

—Ես մեղա՛յ Աստծու, տէրտէր ջա՛ն, քո ոտի հողն ու մոխիրն եմ. իմ ասելիքս քո համար չէ, քո համն էս կարբու մհալումը (գիտես) ո՞ր գիւղումը կը ճարուի, դու մէկ ես, որ կաս։

—Լա՛ւ, լաւ, պրծի՛, թուղթը հանի՛, հանաք եմ անում, քաղցրացաւ տէր հայրը։

Բզզէն յետ բաց արեց սև խշուկին պէմ ընկած խուրջինը, հանեց կէս թերթ թուղթ, նորա կէսը կտրեց, խնամքով ծալեց, պահեց, միւս քառորդը տուեց քահանային։

Լռութիւնը մի քանի րոպէ տիրեց. լսւում էր միայն գրչի ծանր և անհաստատ ճռճռոցը. հմուտ գրագէտը, առանց տեսնելու հեռու տեղից կարող էր հաստատապէս վկայել, որ գրողն անփորձի մէկն է և ձեռքերը դողում են։

Վերջացրեց տէրտէրը մուրհակը և մի թեթև հազով կոկորդի լարերը մաքրելով՝ գլուխը բարձր

բռնած՝ սկսեց կարդալ. հասաւ մինչև չարաբաստիկ «վեր առի և պարտեմ»-ը, բայց առաջուայ պէս էլ կանգ չ՚առաւ թշուառական նախադասութեան վերայ, ընդհակառակն՝ լաւ հասկացնելու համար շեշտեց, «վեր առի և պարտ եմ Գասպէի Բղդէից, « այսինքն Գասպարի որդի Բաղդասարից երկու թու- « ման ու կէս փող, տասին երկու շահումն. այս գար- « նան Մողն՚ուխտի ուրբաթ օրուանից՝ վաղէն՝ այ- « սինքն ժամանակն գնայ համնի մինչև Նաւասարդի « պահոց երկու շաբթի օրն, այսինքն վեց ամիս « ժամանակաւ, տասին երկու շահումն վճարեմ ան- « պատճառ. աստուածակոյս կողմանէ գիր չը գիտե- « նալով՝ մատամբս կնքեցի. Կարբու բուն բնակիչ « Սեթօյի Մաղաքիս հոգու պարտքն է»։

—Այսպէ՞ս է, որդի՛ք, թէ էլի բան մնաց, յա- ւելացրեց տէրտէրը։

—Քո ղալամդ (перо) անսխալական է, աջիդ մեռնե՛մ, դու ուրիշ տէրտէրների պէս հօ չե՞ս, որ այբբ հազար չանգալով են բռնում, մինչև նրանք գրիչը ձեռի միջին պտիտ կը տան, դու երկու երես կը լցնես, էս գիր հօ չի, էս շարած մարգարիտ է։ Ի՞նչպէս չի՞, Մաղաք ջա՛ն, սուտ եմ ասում, մատդ տար, աչքս կոխի՛։

—Մեր տէրտէրին տէրտէր չի համնիլ։

—Տէր լուսաւորեսցէ զուռնաչի Փիլօյի չրաղ (ученик) մեծ տէր Սիմոնի հոգին, ես նորա ձեռա- ցաջուրն եմ, նորա չրաղն եմ, լսի բաժին եղիցի. մի

տուն սաղմոսի համար օրական հինգ անգամ ինձ փալախայ էր դնում. էս օր ես դեռ յառաջ նորա համար եմ «Հոգւոյ» ասում, յետոյ իմ մարմնաւոր ծնողաց համար։ Եթէ լուսահոգի տէր Սիմոնը չը լի- նէր, ես էլ ուրիշ տէրտէրներից մէկը կը լինէի, որ մինչև գրքին մտիկ չեն տալիս, մի կարճ մաղթանք չեն կարողանում ասել. ես Ատենին ու ձայնաքաղ Շարականը գլխէ գլուխ ասում եմ ինչպէս առատա- բուղխ քչքչան աղբիւր։

—Դէ՛ դու ժամի մեծ գիրքն էլ ես եզին-եզին կարդում, ուրիշները քեզ ընչի՞ պէտք է համնեն, մէկ էլ թէ մեր Բղդէենց բօյը մի թիզ, միրուքն երեք թիզ տէրտէրը կարայ քեզ հետ ոտ ձգել ա՛յ, պարծեցաւ Մաղաքը։

—Խոստովանք ըլլի, մի քիչ դժուարս գալիս է ծաշոցի ուշ-ուշ կարդացուող աւետարանները. ասենք դրանց ճարը հեշտ եմ գտնում, մեռել թաղելու ու մկրտութիւնի աւետարաններն անգիր գիտեմ, հէնց որ նեղ տեղն եմ ընկնում, մէկն ու մէկը բերան ասում եմ, հասկացո՞ղն ով է. բայց ամենից ծանր լուծ են, շնքի միս են տէրունական տօների հա- մար գրած երկար ու ձիգ աղօթքները, եւ առաւել Ջրօրհնէքի մեծ պասից երկար «Այսօրները». մէկէները Ջրօրհ- բաց եմ թողում, գլխահան եմ անում, բայց Ջրօրհ- նէքի աղօթքի կէսն էլ է պէտք է, ոնց լինի, գդես, թէկուզ հազար էլ կուչ ու ձիգ անես։

—Հերու, տէրտէր ջա՛ն, ասաց Բղդէն, ես Գա-

ւառ (Նոր Բոյաղեփ) էի գնացել՝ մեր քեռոնց տես. յետ դառնալուս՝ խաչը ջուրը քցելու օրը բքարգ (Ճօւրճէլ) մնացի Ախտա գեղումը. մի վարդապետի վանքիցը պատժել էին, Սևան էին ղրկում, աւելի անունը, կարծեմ, Լամօ պէտք է լինէր։ Նա էլ վանքի թուանքչու հետ ինձ պէս բքարգ էր մնացել Ախտումը։ Էդ երկար աղօթքը տէրտէրները համեցէք արին վարդապետին կարդալու։

—Յետո՞յ։

—Գզեց ու գզեց, հազաց ու հազաց, տնքաց ու տնքաց, աչքերը տրորեց, քիթը ճմռեց, բան յառաջ չ՚ընկաւ, խօսքերը բերանիցը դուրս չեն գալիս։ Վերջը որ չարէն կտրեց, յետ դառաւ ժողովրդին ասաց. օրհնեալ ժողովուրդ, չ՚ասէք, թէ վարդապետը կարդալ չը գիտի, աչքերս ձիւնով են ընկել, գրերն աչքիս տակիցը փախչում են, ուրեմն կարճ կտրենք. այսօր մեր Տէրը Յորդանան գետումն էս խաչի պէս կզուել էր, տաղ էր արել, Յովհաննէս Մկրտիչն էլ բռնով ջուրը գլխին էր ածում, լողացնում էր. օրհնեալ էք և օրհնեալ լինիք. ա՛մէն։

—Դէ՛, Լամօ վարդապետը խաչագող է. չե՞ս իմանում, որ խաչագողին ջաղացի բուգն (Նօնօրդ) էլ քցես, դուրս կը պրծնի. մարդը մի տեսակ գլուխը խայտառակուելուց ազատել է, ախտեցիք էլ էշ մարդիկ էին՝ կը հաւատային։

—Լա՛ւ, տէրտէր ջա՛ն, յետոյ մեղք չի՞, որ կիսատ էք թողում, հարցրեց Մաղաքը։

—Է՛յ, ա՛յ որդի, մեղքի թողութիւն տուողը տէրտէր—վարդապետները չե՞ն, մեղքը ձեր աշխարհականների համար է դրած. մենք՝ հոգևորականներս էնքան աղօթք ու մաղթանք ենք կարդում, որ Աստուած կը ների ու կը ների։

—Ես մեղայ Աստծո՛ւ։

—Էդ մեր բանն է, Մաղաք ջա՛ն, դու ճկոյթդ մօտ բե՛ր, հուպ տո՛ւր էս թղթի տակին։

Տէր հայրը գրիչը թանաքով լցրեց և մուրհակի վերջումը՝ ճիշդ ստորագրութեանը կից՝ կաթեցրեց մի կաթիլ թանաք։

—Ա՛յ, էս թանաքի վերայ ճկոյթդ հուպ տո՛ւր և ինձ հետ կրկնի՛ր՝ «գիր չը գիտենալով՝ մատամբս կնքեցի. Կարբի գիւղի բուն բնակիչ Սէթոյի Մաղաքիս հոգու պարտքն է»։

Մաղաքը բառացի կրկնեց և աւելացրեց.

—Հոգու պարտք չի, բաս ի՛նչ դարտ ու բալայ է, աշխարհքս առուտուր է, առ ու կուլ հօ չի՞։

Նա երկիւղածութեամբ առաւ մուրհակը տէրտէրի ձեռքից և մեկնեց դէպի կօլոտ Բղդէն։

—Էս էլ քո հին թուղթը, ասաց Բղդէն և յետ տուեց հին մուրհակը։

—Զհինն ի նորս փոխելով, զստուերն ի լոյս ճշմարտելով. հէնց դորա համար է ասել «Այսօր անճառը», հաստատեց տէրտէրը։

—Քո ժամոցն իմ արևից էրուած ու խանձուած շնքին, աջի՛դ մեռնեմ. աշնանը Էջմիածնի պողին

հաւաքելուս, թէ ցորէն կը հաւաքէք, երկու կոտ աւել կը լցնեմ քեզ բաժին, բայց եթէ գինի կը ժողովէք, մի մեծ ուսաբզուղ գինի աւելի շուռ կը տամ տկի մէջ, որ անուշ անես, ինձ համար աղօթք անես, Եղդէի պարտքիցը շուտ պրծնեմ:

—Օրհնեա՛լ լինիս, Մաղա՛ք, կը ղրկես, բաս ի՞նչ կ'անես. դու միշտ տուել ես, էլի կը տաս, դու որ կաս, մեր տան մէրուն հաւերից մինն ես, քո ձուն միշտ կերել ենք, էլի կ'ուտենք. Թուչկանն էս մեր Եղդէն է, որ քչիցը տարին հինգ մուրհակ գրել է տալիս էն օրից, որ խուրջինն իր ուսից վերցրեց, իր անբաժան ընկեր, մոխրաթաւալ, հնազանդ, բօշի տղայ, սև իշի շալակը քցեց. ամէն գրելուս մի-մի բան խոստանում է ու անցուկ-մոռացուկ անում, ականջի քամակը քցում: Սրան ներելի է, կարբեցի է, սատանախաբ կարբեցի է:

—Մասիսի գլխի արեն ես հրամանք անում էլի՛, տէր հա՛յր, շեշտեց կատակ անելով Մաղաքը:

—Միայն այդ չի, որդի՛, էլի կայ. չը գիտե՞ս:

—Ո՛չ, տէրտէ՛ր, ես էդ մէկն եմ լսել, հրամանք արա՛ տեսնենք:

-Եթէ ամէն բան գիտենայիք, դուք էլ ինձ պէս բաբունի կը լինէիք, ինքնաբաւական պատասխանեց քահանան և պատմեց հետեւեալը.

—Երբ որ չարն սատանէն, անիծուի՛ ինքը, կործանուի՛, անշարժ քարի տակն եղիցի՛, իմացաւ, որ կարբեցին արեն իրանից շուտ տեսաւ, ինքը սևերես,

ամօթով մնաց, միտք արեց՝ մի հնարքով երեսի կեղտը սրբել, խօսքի տակ չը մնալ:

—Եթէ դու այդքան գիտուն ես, ասաց նա կարբեցուն, կը նշանակի մի պստիկ սատանայ էլ դու ես. արի՛ եղբայր դառնանք, աշխատանքի կպչենք, առուտուր անենք, թէ կ'ուզես՝ վար ու ցանք անենք, դատումը (օգուտը) հաւասար բաժին անենք:

—Շատ լաւ, ասաց կարբեցին. ու մէջները համաձայնութիւն կայացաւ:

—Ի՞նչ գործ բռնենք, որ օգուտը շատ լինի, մտածեցին նրանք ու վերցրին, գազար ցանեցին:

Տարին անձրեւային էր, գազարի թուփը մի գազ բարձրացաւ:

Սատանէն, զորթ է, սատանայ է, ճարպիկ ու զալում է, բայց մարդիկ մոլորեցնելուց ու մեղքի մէջ գլորելուց աւելի ուրիշ շնորհքներն Աստուած նրանից կտրել է. նա իր կեանքումը հողագործութիւն չէր արել: Բայց ի՛նչ կ'անես, որ աչքածակ է. միտք արեց, թէ ի՛նչ հնարքներ գործ դնի, որ կարբեցուն խաբի, օգուտից զրկի:

—Արի՛, ասաց, կարբեցի եղբա՛յր, էլ դու նեղութիւն մի՛ քաշիլ գազարը հնձելու, ես ինքս կը հնձեմ, երեսն ինձ՝ արմատը քեզ. ես ինքս կերած չեմ, բայց լսել եմ, որ գազարի արմատը թփերիցը համեղ է:

Կարբեցին մոտիկ տուեց սատանի աչքերին, իր սուր խելքովը նրան ոտից գլուխ չափեց, տեսաւ,

որ էդ անպողի հէնց անուՆն է սատանայ, ինքը կատարեալ անաստուններն անաստուն է, երևում է, որ գազարի հոտն էլ չի առել, ծիրանի ու դեղին գոյնն էլ չի տեսել:

—Շատ լաւ, ասաց նա սատանին, թո՛ղ քո ասածը լինի, քեզ փեշքեա՛շ, գնա՛ երեսը հնձի, վեր կա՛լ, տակը թող ինձ մնայ:

Ուրախ ուրախ հնձեց սատանէն գազարի տերևները, գեղացու պատկերի մէջ մտաւ, մի մեծ սէլ լցրեց ու տարաւ Երևան ծախելու:

—Գազա՛ր եմ ծախում, գազա՛ր եմ ծախում. քանի ոյժ ունէր, սկսեց գոռալ ու մուշտարիք տաքացնել սատանէն:

—Ցիմա՛ր գեղացի, լողը պատասխանեց, էշն ինքդ ես, որ ուզում ես մեզ խշացնել. ո՞վ չը գիտի, որ գազարի թփերն էշն էլ չի ուտում:

Ղորթ որ շփոթուած ու մոլորուած կանգնել էր սատանէն շաշի նման, բերանը բաց:

Մէկ էլ ի՛նչ տեսնի, իւր հարակաշ (ըռնչեր) կարբեցին գազարի բեռն իշին բարձած՝ բերեց մէյդանումը վէր դրեց: Բազմութիւնը գլխին հաւաքուեց, ձեռաց մարդի ապրանքը ծախուեց, փող դառաւ:

Առնողը յետ էր դառնում, սատանին անպատուում, թէ՝ անխելքի որդի անխե՛լք, աչքերդ չորս բաց արա՛, գազարի թփերն իշի նման դու կե՛ր ու արմատը բեր մեզ ծախի՛ր. էս մարդիցն օրինակ վե՛ր կալ, սա էլ քեզ նման մի գեղացի է:

Զարն սատանէն սրտի հերսիցը (Ճարչո-Մեխան) սևացաւ, կուպր դառաւ, ինչպէս իւր պիղծ հոգին սև է, ամօթիցը տեղն ու տեղը անդունդը հալածակուեց. բայց ատամները կրճտացրեց կարբեցու վերայ, թէ՝ ես սատանայ չըլնեմ, եթէ վրէժը չը հանեմ:

—Առա՞ւ վրէժը, տէրտէ՛ր, հարցրեց Մաղաքը:

—Հողը գլխին, ցեխն արևին առաւ. միւս գարունք էլ եկաւ, կարբեցուն առաջարկեց ընկերանալ: Նա էլ համաձայնեց:

Էդ տարին հացի թանգութիւն էր, վճռեցին ցորեն ցանել:

—Չէ, ախպե՛ր, ասաց նրան աշունքը սատանէն, հերու գազարումն ես վնաս քաշեցի, խաբուեցի, երեսը ես վերցրի, տակը քեզ տուի, էս տարի մեռել ես, կորուել ես, արմատը ես պէտք է վերցնեմ, երեսը քեզ տամ, հնձի՛, առ գնա՛, կ'ուզես ինքդ կե՛ր, կ'ուզես տաւարիդ ուտացրո՛ւ:

—Համ ինքս կ'ուտեմ, համ տաւարիս կ'ուտեցնեմ, պատասխան տուեց կարբեցին և մարանդուն (Քծ մանգաղ) դրեց, ցորնի արտը հողի բերնիցը հնձեց, վերկալաւ, անպէտք արմատը սատանին բաժին թողեց:

—Էս բաների համար է, որ կարբեցոնց «սատանախաբ» են ասում, շարունակեց տէրտէրը և դարձաւ դէպի Բղդէն:

—Դէ Բղդէ՛, որդի՛, օրհնեա՛լ լինիս, յետ բաց

արա՛ խուրջնից բերանը, տեմնենք՝ քո հալալ սրտից ի՞նչ է բղխում տէրտէրիդ համար, ի՞նչ ես շնորհում։

—Երեւան գնալուս քեզ համար մի քթի աղլուխ կը բերեմ, պարտքս լինի։

—Չէ՛, որդի՛․ ասած է՝ էգուցուան բանին ձիւն է եկել, էս օրուայ սեւ փողն էգուցուայ սհաբղանից (30 կ․) լաւ է․ հանի՛ ինչ որ տալու ես, հիմի՛ տուր։

—Դէ հիմի գիտես, որ մորս շինած, անուշ հոտով բուռնութուցն աւելի քեզ վայել բան չ՚ունեմ։

—Շանիցը մազ պոկելը խէր է, ծիծաղելով ասաց տէրտէրը եւ հանեց իւր քթախոտի պարկը լցնել տուեց։

—Երեխէքանց համար էլ մի քիչ ծամելու մաստաք տո՛ւր, յաւելացրեց տէրտէրը։

Շատ շողոքորթ հաճոյախօսութիւններ գործ դրեց ընչաքաղց կօլտ Բզզէն, որպէս զի մի հնարքով քահանայի աննշան պահանջից ազատուի․ բայց, տէրտէրի խրատական խօսքերի բոպէական տպաւորութեան տակ՝ ստիպուեց մի կտոր ծամոն պարգեւ ուղարկել նորա սիրելի զաւակներին։

Ժ.

ԿԱՐԲՈՒ ԿԱԼԱՏԵՂԸ

Քասախ գետի ձախակողմեան ափին, Կարբուն հանդիպակաց մի ընդարձակ դաշտավայր շատ անյիշելի տարիներից անջուր ընկած էր։

Մշակելու, վարուցանքս անելու համար չէր պէտք գալիս ամայի հովիտը․ չու գնացող Զօրանքեարաների եւ Քրդերի անասունների փորն էր կշտացնում; Աշտարակի նախիրն էր ծնկնահար խինալի խոտը ուտում եւ փխփխալով կաթը տալիս։

Արայի մեծանիստ լեռան շրջապատի արեւմտահիւսիսային ստորոտն է մեր ասած տեղը։

Արայի հնադարեան, պատմական, վեհապանծ սարը՝ ընդհատուած իւր շրջակայ Ծաղկոցաձորի եւ Փամբակու լեռնագօտիներից եւ հսկայականն Արագածի բարձրաւանդակութիւնից՝ գոռոզաբար բազմել է այն լայնատարած տափարակի վերայ։

Արեւելքից՝ Արայի լերան քղանցը համբուրելով՝ սահում է դէպի Երեւան կարկաչաձայն Հրազդան—Զանգուն․ արեւմտքից՝ սարի ստինքից դուրս բղխած աղբիւրների ծորակներն իւր մէջն առած՝ յորդանում է համեղաճաշակ եւ առողջարար Քասախը։

Այս երկու անուանի գետակների շնորհիւ արգաւանդութեան հռչակ է ստացել Արարատեան բարեբեր դաշտը։ Ժողովրդի բերանում աւանդաբար այսօր էլ ասուում է․ Զանգուն օրական մի լիտր ոսկի է տալիս, Քասախը՝ մի լիտր արծաթ։

Յիշեալ տափարակի վերայ, դարաւոր ժամանակից կողք կողքի տուած, ապրում են բաւականին աւերակներ։

Շէնքից-շնորհքից՝ արտաքուստ գիւղատեղի նմանութիւն ունին աւերակները․ հաւանական է, որ

հնումն այնտեղ բանել է մի աշխատասէր ժողովրդի գութանի սուր խոփը, խմելու համար օգտուելով Քասախի ջրից. բայց ի՛նչ կ՚անես, որ առաջ էլ լսուել է, այսօր էլ լսւում է, որ աւերակները Կարբու կալատեղերն են եղել. դրանով հաստատւում է, որ մեր հին նախնիքը մեր նոր պապերից շատ խելացի են եղել. հները հասկացել են, թէ ուր գազաչափ խոտը ամիսներով թարմ կը մնայ, այնտեղ ցորենն ու գարին առանց ջրի կը բուսնին ու կ՚աճին, իսկ նորերը կամ մեծ կարիք չեն զգացել, կամաւ խոպան են թողել, կամ թէ՝ Արայի սարի անհամար այրերում բնակւած աւազակների խմբերի երկիւղից՝ քչով բաւականացել են և այն արիւնի հոտ եկած տեղերից հեռու են փախել։

Քսան, երեսուն տարի է, սակայն, որ մենք հին պապերին նմանեցինք, այդ առատաբեր, մեծատարած դաշտը մէկս մէկու ձեռքից խլեցինք, մօտակայ գիւղերի վերայ բաժին-բաժին արինք, պատուական գոված ցորենի տէր դառանք, Զօբանքեարի անխիղճ աւերածութիւնից արտերն ազատեցինք և մեր նախրի համար ընդարձակ արօտատեղեր պահեցինք։

Ամենայն իրաւունքով, ուրեմն, ներկայ կարբեցին էլ իւր բաժինը կը ստանար։ Կարբու կալատեղերը իրանց շրջակայ հողերով նրանցն էր և նրանց մնաց։

Այնտեղ է կալսում այժմ կարբեցին Արայի դաշտից հնձած ցորենը, աւերակների մէջ է տեղաւորում առժամանակ իւր դարմանը։

Տաժանելի աշխատութիւն է քաշում կարբեցին, մինչ տեղափոխում է իւր բերքը կալատեղերից. անհուն ձորը, որի միջով անցնում է մեծարգիւն Քասախը, իւր անմատչելի քարափներով կտրել է գետի երկու ափերի հաղորդակցութիւնը, բայց բնութիւնը սիրել է իւր բարիքներից օգտուող մարդին. նա տեղ-տեղ բաժանել է իրարից ժայռերի միաւորութեան շարունակութիւնները ու հնարաւորութիւն է տուել մօտակայ ժողովրդին անց ու դարձ անել գետի այս ափից միւսը։

Ահա՛ այսպիսի մի ձորախորշի մէջ եղած նեղ շաւիղ կապում է Կարբին իւր դիմացը գտնուող կալատեղի աւերակների հետ։

Ուղիղ դէպի կալատեղն էր բարձրանում ձորից հեւալով՝ խուրջինն ուսը ձգած՝ մի կարճահասակ երիտասարդ։

Գարնան մի ցուրտ առաւօտ էր այդ օրը։

Խոտն ու ծաղիկները թէպէտ սփռուել էին ձոր ու դաշտերում, բայց խստաշունչ քամին քարից քար, խորշից քունչ դիպչելով կորցրել էր միանգամայն բնութեան սքանչելահրաշ պարգևների գեղեցկութիւնը և անուշ բուրմունքը. անկարգ, անկանոն մէկ աջ էր ճկում բարակ ցողունները, մէկ ձախ, մէկ վեր, մէկ վայր. քիչ էր մնում՝ քարերն էլ տեղահան անի, ո՛ւր կը մնային բոյս ու բուսականութիւն։

Զը նայած այս դաժան եղանակին և դժուարագնաց նեղ շաւղին, երիտասարդը կռւում էր փոթոր-

կալից հողմի դէմ և ձորախորշով վեր էր մագլցում, բռնելով քարերի փոսերը, որ վայր չը գլորուի, քիթ ու մռութ ջարդ ու փշուր չ'անի։ Նա շտապում էր։ Մի գերեմաստի մահակ բաւականին թեթևացնում էր նորա ծնկների յոգնածութիւնը։

Երիտասարդը մի գիւղացի էր. նորա հագուստից աւելի չքաւորի, քան թէ կարողութեան տիրոջ հոտ էր գալիս։ Գոյնն ու ձևը կորցրած մի հնմաշ արխալուղ, տակից երևացրած կապոյտ օձիքով՝ կտաւի շապկի հետ միասին՝ խեղճ հողագործի տեսք էին ընծայում մարդին. նոյնը չէին հաստատում, սակայն, երիտասարդի գորշ հնացած եամանի կոչուած կօշիկներն և ուղտի բրդից կարած կոպիտ շալ չուխէն. վերջինս չէր համապատասխանում իւր ձևովն ու տարազովը տեղական արխալղին. այդպիսի չուխաներ սովորաբար հագնում են Պարսկաստանից իշակարաւանով ապրանք կրող պարսիկները։

Պարզ երևում էր, որ անծանօթն իւր հայրենի հագուստի մէջ 'չէ ու երկրագործ էլ չէ։ Բայց թէ ի՞նչ է, ո՞վ է — ոչինչ չենք կարող վճռաբար ասել. առաւել լաւ է, մենք հետևենք նրան։

Քրտինքը ծլծլալով ցած էր իջնում այս մարդի երեսովը և երբ ժամանակ ժամանակ վերցնում էր հնոտի արխալղի քղանցը ճակատի կաթիլները սրբելու, գոլորշին գալարուելով յափշտակւում էր սառը քամուց և անխաղաղ մթնոլորտի մէջ անհետանում։

—Էս անտէրի քամին էլ ո՞րտեղից սար ու ձոր

գլուխն առաւ. տանից դուրս գալուս շատ հանդարտ էր. չը լի՞նի թէ խոփս քարին առնի, մոքումս դրածին չը կարողանամ հասնել. էն ժամանակն իմ գլուխս էլ ընչի՞ է պէտք, լաւն էն չի՞ մեռնեմ ու վերջանամ։

Այս տրտունջն անում էր մարդը, երբ ոտքը քարին առաւ, գայթեց, վայր ընկաւ ու ճակատը դիպաւ քարափին ու քերցուեց։

—Օ՜հ, արի՛ւն, բացականչեց նա՝ ձեռքը ցաւած տեղը քսելով։

—Վնա՛ս չ'ունի, տղամարդի կէսը կտրեն՝ ա՛խ չը պէտք է անի. մինչև մարդ դժուարութիւններ չը քաշի, հեշտ ու հանգիստ չի կարող ապրել։ Էս օր չի, որ ես քաշում եմ, պէտք է սորա ճարը գտնել. հէնց գիտէ արածը շատ մեծ բան է. օրը մէկ է, գլխիս կարդացած գայլի աւետարանները՝ հազար ու մէկ. — շատ նեղութիւն մի՛ տալ, մուշտարու հետ սիրով կառավարուի՛ր, շատ շահ մի՛ վերցնիլ, առուտուրիդ մէջ հարամ մի՛ մտցնիլ, քչով բաւականացի՛ր, որ Աստուած քեզ շատ տայ։ Չէ՛, չէ՛, մինչև հիմի լռեցի, էլ չեմ կարող համբերել, մի օր էլ գիժ կովլի պէս կը պոզահարեմ, արած լաւութիւնը ոտնատակ կը տամ, կը տրորեմ։ Երեկ էլ վրէս հարփ ու զօրփ էր անում (տղատնուլ). — պարտքատէրերիդ նեղացնում ես, ասում է, եթէ միւս անգամ լսել եմ, ապրանք չեմ բաց թողալ։ Քիչ մնաց, որ ասէի՝ դո՛ւ էլ, քո ապրանքն է՛լ. բայց էլի բերանիս հուպ

տուլի, միտք արի, որ եթէ ջհուտ Աղաջանն ինձ ապառիկ ապրանք չը տայ, էնքան կարողութիւն չ'ունիմ, որ Երևանից զուտ փողով առնեմ։

Երիտասարդը կրկին վայր ընկաւ։

—Մեռնեմ էլ՝ պէտք է բարձրանամ, էս է քիչ է մնացել ձորը դուրս գալուն։ Տուտու Նանէն ասում էր, որ ինքը նետ գնելով չի կարող հասկանալ մարդի գլխի գալացուկը, բայց ղարաչի Ֆաթմին շատ էր գովում. նա, ասում էր, գետնի տակի գանձ ու հարստութիւնների չափն էլ գիտի՝ բացի տեղը, իւր համար իրաւունք չ'ունի վերցնելու, բայց ում ձեռքն ընկնելու է՝ պարզ, աշկարայ կասի։ Գնամ մի տեսնեմ, էդ փող ու կայանքից ինձ էլ բաժին կա՞յ, թէ մինչև մահս չարչի պէտք է մնամ, մեծ ու պստիկի ծաղր ու ծանակ պէտք է լինեմ՝ Կօլոտ Բղդէ, ծառի որդ, բօշի տղի ախպէր ու հազար ու մի թէքանք ու մրանք անուններ պէտք է լսեմ, ջհուտ Աղաջանի աչքին պէտք է մտիկ տամ, նորա փթանոց թուք ու մուրը պէտք է մարսեմ։

—Ախար արի՛ ու համբերի, մարդ ես՝ դիմացի՛ր. Փարբու տէրտէրն էլ երկու տող մուրհակ խզմըզելու համար ինձ ծաղր է անում, խուրջինն, ասում է, քո ուսից վեր առար՝ քո մոխրաթաւալ ընկերի շալակը տուիր։

—Կա՛ց, տէրտէր ջա՛ն, շատ չի քաշիլ, քո բարի աչքովդ կը տեսնես, որ մոխրաթաւալ բօշի տղէն Արաբստանի հրեղէն ձիու է փոխուել, էս օրուաց

կոպիտ չարչի Բղդէն խօջայ Բաղդասար է դառել։

—Դէ՛հ, սուտ էլ չէր ասում տէրտէրը, շատ էլ յառաջ չեմ գնացել, մի քանի շահի ունիմ գեղերումը սորա նորա վերայ, էն էլ անունը կայ՝ ամանումը չկայ. ինձ տուր՝ քեզ տամ, ով գիտէ, ձեռքս պէտք է գա՞յ՝ թէ չէ։ Էս մի բանը լաւ է, որ աշխարհքը դեռ կոյր է, մարդիկն իրանց օգուտն ու վնասը չեն ջոկում, շատ մասը տխմար փարբեցի Սէթօյի Մաղաքի օրումն են, փող չեն տեսել, որ պատիւն իմանան, երկու կոպէկ հաշուելու գլուխ չ'ունին, ասածդ հալած եղի տեղ ընդունում են, ուզածդ գրում ես, ծոցդ դնում։ Երեկ մէկէլ օրն էր, որ Մաղաքի վերայ հինգ մանէթի տեղ երկու թուման ու կէս գրել տուի. մի քիչ հոգուցս որ ձեռք քաշէի, երեք թուման էլ կը գրէի։ Բայց էս պստիկ կոպէկներով ինչ գլուխ կը քցենք, դրանցով մարդի մարմնից փուշ չի հանուիլ, պէտք է հարստանալ, պէտք է ջհուտ Աղաջանին հողի հետ հաւասարացնել, պէտք է մատով ցոյց տալու դառնալ. ինչ դար ու փոս էլ առաջ գալու լինի, պէտք է լոք տալ անցկենալ։

—Դեռ շատ մի՛ փրթփրթալ, Բղդէ՛, գլուխը շարժեց մեր կօլոտը, դեռ տեսնենք՝ անատամ ղարաչու պառաւ Ֆաթմէն իւր ծնօտներն ի՞նչ տեսակ է շարժում։

—Օ՛հ, օրհնեա՛լ է Աստուած, ձորը դուրս եկանք, ազատ շունչ քաշեց նա տափարակի բերանին։

Բզզէի ուրախութիւնը կարճատեւ եղաւ. աւերակների միջից, ինչպէս գետնի տակից, յարձակուեցին նորա վրայ 10, 15 որսկան բարակներ, որոնք մեծ ու մանր շներ ու լակոտներ և հաչոցի արձագանգը մինչև ձորի անդունդը թնդացրին։

—Օ՛շտ, օշ՛տ, ա՛յ շուն, ա՛յ թուլայ, կուտո՛ւ, կուտո՛ւ, կուտո՛ւ, մի քանի սպառնական և համոզկեր բացականչութիւններ արեց Բզզէն, բայց աներես շները ոչնչով չը նմանեցին Բզզէի քաջածանօթ գիւղական գայլ խեղդող գամփռներին, նրանք շարունակում են հաչալը։

Մի երկու աւելի կատաղիները, առ ոչինչ համարելով մինչև անգամ Բզզէի յաջող մահակաշարժութիւնը, անցկացան գաւազանի հարուածից, մինը վարտիկը պատառեց, միւսն արխալղի քղանցը դուրս պոկեց և բերանն առած թափէ թափ էր տալիս։

Մինչև որ ղարաչիքը դանդաղաքայլ վրաններից դուրս կը գային օգնութիւն հասնելու, Բզզէն յիշեց իւր մօրից լսած շների մի առանձնայատկութիւնը։

Զարչի դառնալու առաջին օրուան մօր խրատներից մէկն էլ այն էր, որ երբէք շների վրայ փայտ չը պէտք է բարձրացնել նրանց յարձակում գործած ժամանակը, ընդհակառակն՝ պէտք է փայտը վայր ձգել։

Նոյնն արեց այսօր Բզզէն և չը սխալուեց։

Շատ չը տեւեց Բզզէի բանտարգելութիւնը. ղարաչիքը հասան, շներին հալածեցին և այս յօժարակամ կալանաւորին ազատեցին։

ԺԱ.

ԳՆՉՈՒՆԵՐ

Գնչուների ցեղերից երեքն են թափառում հայ աշխարհի գիւղերումը—հայ բօշէք (գնչու), մթռուբներ և չինգեանէք, կամ ղարաչիք։ Թէ առաջինները հին ժամանակն ի՛նչ ծագում են ունեցել և ի՛նչ լեզու՝ իմ գործս չէ, բայց այժմ նրանք հայ են լեզուով և դաւանութիւնով, հայ են հագուստով և բարեհամբոյր ու խաղաղ բնաւորութիւնով։

Ախալքալաքի Ծալկայի գաղթական ժողովրդի լեզուն ու հագուստի տարազն ունին նրանք։

Բօշէքն են մատակարարում մեր աշխարհքին զատկութիւն քաղցր խմորեղէններ և թղթի նման բարակ ու սպիտակ կծկուած լաւաշներ շինելու համար շարմաղ ալիւր (նոշիհ) մաղելու շարմաղի մաղեր, սովորական հաց թխելու մաղեր, ցորենի միջից չը ծեծուած հասկերը մաքրող շատարարներ, բրինձ և այլ հացահատիկներ ու ընդեղէններ յստակող խալներ, ցորենի քարերը ջոկող քարմաղներ և տներ շինելու հողմաղներ։ Առաջին երկուսը շատ ճարտարարուեստութեամբ գործում են ձիու պոչի մազից, կամ որ նոյնն է՝ ձարից, միացածը հիւսում են հորթի կաշուց քաշած բարակ փոկից։

Բօշէքանց ձեռագործներն են նոյնպէս ուռի բարակ և ճկուն ճղներից հիւսած մեր լաւաշ թխելու

յառափաթէքը, մեր հաց դարսելու, մրգեղէն չորացնելու և գինու կարասների բերանը ծածկող սալները։

Բօշէքանց վաստակն արդար է, աշխատում են և վարձ են ստանում։

Նրանք չ'ունին հաստատ բնակութիւն. վարում են թափառական կեանք և ամեն տեղ վայելում են ազգաբնակութեանց յարգանքն ու համակրանքը։

Թափառում են բօշէքը խմբովին՝ հինգ հինգ, վեց վեց գերդաստան միասին, և ամենայն գիւղ ուրախութեամբ պատսպարում է նրանց իրանց դատարկ մարագներում։

Նրանց բարձրահասակ հաստ ու պինդ ընտիր իշանն են բառնում իրանց վերայ բոլոր ծանրութիւնը։

Իջնում են բօշաները մի գիւղում և գիւղը կենդանութիւն է ստանում։

Բօշի տղամարդը բինումը (վրան) նստած՝ գործում է մինչև երեկոյ մաղ ու խախալ, սալայ ու յառափաթայ. իսկ նորա կինն ու հարսը, կամ հէնց հասած աղջիկը, կոկիկ տրեխները հագին, մի մի երկայն հոնի մահակ ձեռքներին, շրջում են դռնէ դուռը և վաճառում են։

Արևն ու անձրևը, թափառականութիւնն ու բաց օդը ծեծում են բօշի կնոջը, ներգործում են նորա կաշու և դծագրութեան վերայ, բայց անզօր են գտնուում խլել նրանից նուրբ և սիրուն ու հաճոյական կերպարանքը։

Գտնուում են տգեղներ բօշի կանանց մէջ, բայց մեծամասնութիւնը գեղեցիկ և գրաւիչ է։ Նրանց գլուխն ու երեսը, ներքին ծնօտի հետ բոլորուած՝ մի ձուաձև շրջանակ են կազմում, որոնց միջին շարունակ խաղում են բօշի խաժակն աշխկայ կրակոտ, փայլփլուն և կենդանի աչքերը՝ բարակ, շիկագոյն, կամար յօնքերի տակից։ Ամբողջանում և լրանում է գեղեցկութեան կատարեալ տիպը, երբ խորամանկութեան հետ մի ամօթխած ժպիտ էլ խաղում է նորա բարակ և նօսր շրթունքների վերայ։

Մտնում են ազատ համարձակ բօշի կանայքը գիւղացու տունը և իրանց ապրանքը փոխում են սովորաբար տեղական բերքերի հետ։

Բօշի կնոջ համար ոչ մի փակ դուռը չը կայ. նա վստահաքայլ յառաջ է գնում մինչև վերջին անկիւնը՝ եթէ տան տիրուհին բակումը չի իրան դիմաւորում։

— Անանե՛ր (մայրեր), բաջինե՛ր (քոյրեր), խաթուննե՛ր, մաղ առէ՛ք, խախալ առէ՛ք, սալայ առէ՛ք...

Ո՛չ միայն տան տէրը չի վշտանում բօշի կնոջ ազատ ներս մտնելու վերայ, այլ կատաղի շներն էլ անզօր են գտնուում արգելել նրանց մուտքը։ Բօշի աղջիկը այնպէս յաջողակ է պտտեցնում մահակը և շրջանաձև գիծ կազմում օդի մէջ իւր չորս կողմը, որ գլխից ձեռք քաշած շունն էլ յետ է ընկրկում և ճանապարհ է տալիս։

Գնեցիր բօշի կնոջից ցանկացածդ ապրանքը կամ

ոչ,—մի և նոյն է, դու նրանից չես ազատուիլ՝ մինչև նորա կողքից կախուած ոչխարենի պարկի մէջ ժողոված հացերի վերայ մի կտոր չ'աւելացնես։

Ահա՛ մի առելի յատկութիւն, որով բօշան ընդհանրապէս զանազանուում է իւր նստական կեանք վարող հայ եղբօրից։

—Բօշի երես ունիս, ասում են մեզանում պընդ-երես մարդին։

Սխալ համեմատութիւն չէ այս, հայհոյի՛ր, անարգի՛ր, հրի՛ր, կռնիցը բռնի՛ր դուրս ձգիր,—բօշի կինը քո տանից դուրս չի դնիլ ոտքը, մինչև մի բարիք դուրս չը տանի. իսկ այդ բարիքներից առաջինը և բօշի կնոջ գլխաւոր օգտուելու առարկան հացն է։

Հազար կրկնի՛ր, երդուի՛ր, հաւատացրո՛ւ, թէ տանը թխած հաց չը կայ, թէ վաղը հաց պէտք է թխենք, վաղն արի տար՝ անհնար է, բօշի կինը երեսը դէմ կը տայ և թօվչի լեզու կը թափի, մինչև մի բան դուրս խլի։

—Աստծուն ամանաթ եղնի՛ս (աւանդ), մանչեբուդ խէրը տեսնես, Լուսաւորչու լուսէն բաժին առնես, արևուդ աղաղէն ([illegible]), բօշին բաժինը տո՛ւր, մի՛ կտրիր։

—Մի մաղ տուիր, երկու մաղ ալիւր ստացար, տա՛ր հաց թխիր ու կե՛ր, ստիպում ես ասել բօշի կնոջը։

—Բօշան հաց չի ըներ, ջանի՛կս, բօշի ձեռքը խմորին չի կպչիր։

Նա սուտ չի ասում. հաւանական է, որ շարունակ թափառականութիւնը խլել է բօշայից հաց թխելու սովորութիւնը և այս դարձել է նրանց համար աւանդական նուիրագործուած սովորութիւն։

Մահու չափ յանցանք է բօշի կնոջ համար ձեռքը խմորին դիպցնելը. ամենածանր անէծքը, որ բօշի կինը տալիս է իւր դստերը, այդ խմոր անելու դատապարտելն է նրան։

—Քեզի տեսնիմ՝ սև առիքին ([illegible]) տակը ծածկուե՛ս, ջուխտ ձեռքով խմոր էնե՛ս։

Յայտնի է, որ հացատուններն առաստաղը թոնրի մխից մշտասև է. իսկ խմորը շաղախուում և թըխուում է սև առիքի կամ առաստաղի տակ։

Ամենասիրելի գրաստը բօշայի համար, ինչպէս ասացինք, հեզ էշն է, միակ չորքոտանին է, որ նորա հարստութիւնն է կազմում, նորա գգուանքի առարկան է, նորա երեխաների ուրախութիւնն է։

Կով, եզ, ոչխար, այծ հօտերով առաջարկի՛ր բօշային, նա եօթն օրէն ճանապարհ հեռու կը փախչի, դրանով դու նորա ընտանեկան պատիւը կ'արատաւորես, նրան կը վիրաւորես։ Նա ինքն իւր սրտի վիշտը դէպի իրան ցաւացնող, ստահակ, անհնազանդ զաւակը հետևեալ կծու անէծքով է դուրս վիժում իւր նեղացած սրտից.

—Քեզի տեսնիմ, օղո՛ւլ (որդեակ), հօ՛-հօ՛ էնես, չո՛ւ-չո՛ւ չ'էնես, քուռօյի (էշի) ձէն չը լսես, սև մա-

քու գառը գրկես, անպէս իմանաս, թէ սև իշուն ափան է (էշէ փոււււէ):

Հօ-հօ հնչումով սովորաբար քշում են կով ու եզանը, իսկ չո՛ւ-չո՛ւ ձայնով վարում են իշին: Բօշէն անիծում է իւր որդուն, որ նա երբէք իւր կեանքի մէջ չ'արժանանայ էշ քշելու, իշի զռոց լսելու և իշի ձագ գրկելու: Այս անէծքով նա իշին առաւել գերազանցութիւն է տալիս գառնից:

Այսչափը չէն, որով բօշէքը խոստովանում են իշանց առաւելութիւնը ուրիշ գրաստներից. շատ ասացուածքներ ու աւանդութիւններ ծածկում են նրանք բօշայական շրջանից դուրս գտնուած արտաքին աշխարհից:

Հետաքրքիր են նոյնպէս բօշէքանց հարսանիքների, մահենիքների, հասարակական ճաշերի և այլ ծէսերի նկարագիրները՝ երգերով և գործով կատարուած: Ափսո՛ս, որ խպառ կորչելու է անյայտութեան մէջ: Վախենալով չ'ենթարկուել ծաղրի ու կատականքների այն ժողովրդականներից, որոնց մէջ իրանք կատարում են այդ ծէսերը, բօշէքը աշխատում են փախուստ տալ պապենի աւանդութիւնից. այժմ նրանք ոչ միայն դադար են առել կատարելուց, այլ և մերժում են այդպիսի սովորութիւնների և երգերի գոյութիւնն իրանց մէջ:

Բօշէքը սովորութիւն են ունեցել պսակուած երեկոյին նորափեսային նստեցնել սառը թոնրի մէջ. նրստում էր փեսան և չէր դուրս գալիս թոնրից, մինչև

որ նորահարսը մի երկար ու ձիգ երգով խոստումն չ'անէր տունէ տուն թափառիլ, վաստակել, մուրալ, անարգանքներ կրել, երեսը սևացնել, բերել և նրան պահել ու սնուցանել:

Բանաստեղծական բարձր հանճարի ծնունդ կարելի էր համարել այդ երգուածքը, եթէ հնար լինէր ձեռք բերել:

Ոչինչ խոստումներ և բարիք իմ կողմից չը հրապուրեցին բօշայի պառաւին՝ նորից թելադրել ինձ իւր ուրախ տրամադրութեան վայրկենական ազդեցութեան ներքոյ երգածը գրի առնելու համար:

Բօշայի կինն իւր գլուխն սպանում էր. նա լեզու հանած աղաչում էր ինձ՝ իբրև ամենագաղտնի խոստովանութիւն պահել իւր ցիմարական լեզուագարութիւնը:

Բոլորովին նման չեն հայ բօշէքանցը հայ աշխարհի թափառաշրջիկ գնչուների միւս երկու ցեղերը — չ ի ն գ ե ա ն ա ն ե ր ը և մ թ ռ ո ւ բ, կամ ղ ա ր ա չ ի ն ե ր ը:

Չինգեանները մահմեդական շիա դաւանութեանը պատկանող մի ցեղ են, որոնց գործածական լեզուն և հագուստը վերցրած է Ադրբէջանի թաթարներից: Աշտոտ են նրանք, աներես են, գող են, բայց մի որոշ չափով. նրանց պարապմունքը մաղ ու խալխալ ծախելն է. սիրում են նոյնպէս և բարակներով որս անել: Աշուէններ, կուզներ և մասամբ գայլեր, էժան գնով ձմեռները կարելի է նրանցից

առնել: Շրջում են նոքա գլխաւորապէս Թուրքերի գիւղերումը. Հայերի մէջ մի տեսակ խորթութեամբ են ներս սողում:

Զինգեանի կնոջ գլխաւոր շահաւէտ եկամուտներից մինն է՝ բարեբաստ գուշակութիւններով հայ կանանցը խաբելը. Նրանք գուշակում են առաւելապէս եղունգի վերայ և գաւաթի մէջ լցրած ջրին նայելով:

Զինգեանաներն իրանց հետ տանում են սև այծի մազից գործած մի վրան, որի տակին նստելը մի և նոյնն է, թէ բաց օդումը. ամեն կողմից փչում է, անձրևն էլ շռշռալով ներս է վազում:

Ամենից անպատիւ, աներես, անհասկացող, Թուրք և Հայ ձանձրացնող, բոլորից արհամարհուած ու անարգուածները՝ ղարաչի կամ մթռուբ ասուած ցեղն է:

Ի՞նչ կրօն են դաւանում սրանք, ի՞նչ նախնական ծէս ու աւանդութիւն ունին—իրանք էլ չը գիտեն. աւելի հաւանական է, թէ սիւննի աղանդին յարուած լինին, բայց և ոչ երբէք չեն մտածում կրօնի վերայ. խօսում են մի տեսակ քրդերէն և պարսկերէն լեզուների խառնուրդով:

Սրանք դառն աղքատ են, ծոյլ են, գործել չեն սիրում և միայն մուրացկանութեամբ են քարշ գալիս:

Զզուելի է ղարաչու տեսքը, գործքը, չափազանց աներեսութիւնը, անասելի աղտոտութիւնը,

նիստ ու կացը և վարք ու բարքը: Մարդկութեան խողերն են իրանց կեղտոտութիւնով այս աւելի, մերկանդամ Թափառաշրջիկները. ընտանիք, տուն, կահ կարասիք, անօթեղէններ ի՛նչ է,—չը գիտեն. աղբանոցներից ժողոված հնոտիների կտորներ առանց գոնէ սառը ջրի մէջ լուանալու, հաստ մախաթով միմեանց կպցրած՝ փակում է չափահասների մերկ փորոտիքը և մէջքը. կին է, մարդ է, աղջիկ է, նորահարս է, երիտասարդ է, թէ ծեր է՝ հաւասարապէս կիսամերկ են, ձեռք ու կուներ, սրունք ու անդամներ, կուրծք ու գլուխ անպատկառաբար բաց են. մանուկները հօ՛ երկու սեռն էլ միանգամայն ադամմերկ են: Այս ամենը, ի հարկէ, մեզ համար է անպատկառութիւն, նրանք ամօթխածութեան վերայ գաղափար անգամ չ՚ունին:

Մի աղտոտ փալասի մէջ պարանոցովը կապած, լանջի վերայ ճնշելով՝ քարշ է ածում իւր հետ սանդու մայրն իւր երեխային: Զմքած, ցամաքած, ածխի նման սևացած ստինքը տալիս է մարդակերպ փոքրիկ լամուկի բերանն ու աչքը շլացրած, մէջքը կզացրած, ոտքը կաղալով, ուժահատ, կիսամեռ հիւանդի դալկացած դէմքով, ձեռքի երկար մահակով շների հետ կռիւ տալով, ձախ ձեռքով մի ուրիշ մերկ երեխայ էլ քարշ ածելով գիւղերի փողոցներում, ճանապարհներին՝ հանդիպողին ձեռք է պարզում ղարաչու կինը:

Մարդ չը կայ, որ նրանց չ՚անարգէ, չը հայ-

հոյէ, չը հալածէ. մարդասէր գեղջուկ հայ կանայքը, որոնց համար աղքատից երես թեքելը մահացու յանցանք է, որոնց ողորմածութեան պատուհանն է՝ «տո՛ւր ոսկի դոտին, մի՛ քննիր», որոնց համար ամեն աղքատ ու տնանկ, ինչ ազգ ու լեզուից կ'ուզէ՝ թող լինի, Աստուծոյ աղքատն է, այսպիսի խնամագութ կանայքն անգամ շատ յաճախ զզուանքով դուրս են անում ղարաչու կնոջը, ղարաչու մարդուն, ղարաչու մանուկին։

—Մայրի՛կ, աղքատ է եկել, ի՞նչ տամ, հարցնում է կարեկցելով դուստրը։

—Ամա՛ն, ամա՛ն, դուրս արա՛, ներս մի՛ թողնիր, մթուրբ է, զգուշացի՛ր, աչքի սուրմա կը թռցնի, դրանց մեծ ու փոքրը բոլորը գող են։

Անուշադիր է մթուրբը տանտիրոջ արհամարհանքին. նա ճկուում է, ոլոր մոլոր է գալիս, հաշմ ու արատաւորի դիրք է առնում, երեսի կնճիռները թշուառի է նմանեցնում ու ողորմութիւն է հայցում։

Քրիստոս, մեր-Մայրամն են հայ գիւղերումը նորա մաղթանաց առարկաները, խաչակնքելն է դուլթ ղարթացնող զէնքը. իսկ պարսկին պատահելուս՝ մահմեդական գիւղերում՝ Փէյղամբարը, հազրաթի Ալին, Հասան Հիւսէյիններն են նրան օգնութիւն հասնողը։

—Մայրի՛կ, ինչ անում եմ, չեմ անում՝ ղարաչու կնիկը չի գնում, գանգատում է գիւղացու աղջիկը։

—Աղչի՛, թող մնայ, լաւ միտքս ընկաւ, գամ քեզ համար վիճակ բաց անել տամ, ձայն է տալիս ներսից ղստեր ապագայ բաղդով հետաքրքիր մայրը։

Այդքան բաւ էր մթուրբի կնոջ համար. նա տեղն ու տեղը ծանր նստեց չոր գետնի վերայ և սկսեց գովել խորոտիկ աղջկայ ղարաղաշ (Ռեխայօն) աչքերը, բերանը, քիթը, քայլքը և ամեն ինչը։

Սիրուն օրիորդի քիմքը քաղցրացաւ ղարաչու կնոջ հաճոյախօսութիւնից. մոր բազմապատիկ գգուշական խօսքերը նա մոռացաւ, տուն մտաւ, գոգը լիքը դուրս բերեց հաց, ալիւր և մթուրբի կնոջ պարկը լցրեց։

Այս դուշակութեան վճարքը չէ, այն փողով պէտք է լինի, ապա թէ ոչ՝ Փալը չի խօսիլ (գու- շաչուեթիւնը չէ երագործուել)։

Ահա ստացաւ մթուրբի կինը զաւակասէր մօրից մի երկու կոպէկ և սկսեց անխնայ շռայլել սիրուն աղջկայ առաջին ամենայն բարիք։

—«Սպիտակ նժոյգի վերայ, աստղերի տակ թռցնելով՝ նստած է ընչացքը նոր ծլած փեսացուն՝ ձեռքերը ոսկու և արծաթի մէջ. նա գալիս է իւր բաղդի ոտքը. վաղուց նա օդը ճղելով թռած, յափըշտակած կը լինէր իւր գողտրիկ որսը, բայց մի մեծ, անհուն անդունդ նորա առաջին բացուած է, մի երկնամբարձ սար ճանապարհ չի տալիս նրան. իսկ այդ վիհն ու լեռը ոչ ոք են, եթէ ոչ քանի մի ուրիշ կարիճներ, որոնք նախանձելով երիտասարդի բաղդա-

ւորութեանը, իրանք են ուզում անմահական խնձորին տիրանալ»։

—«Օ՛հ, ի՜նչ երջանիկ ես, խորոտ-մորոտ աղջի՛կ, գլուխդ լուանալուս սանտրի հետ իջած քո մի հատ մազը աներևութաբար մօտդ կանգնած խատուտիկ աղաւնու ոտքն է փաթաթուել. աղաւնին բաղդ բաժանող հուրիների հրամանակատարն է. նա պարզ երկնքի վերայից թեթև հողմին է յանձնել քո մազը. հողմն երկար ժամանակ իւր թևերի վերայ տարուբերել է անուշ քնով քնած սիրաբորբոք երիտասարդների գլխավերևը. շատերի միջից միայն քո ճակատագրուածն է դուր եկել իւր քաղցր ու սիրուն պատկերով հեզասիւգ հովիկին և նա վայր է ձգել մազդ ջահել տղամարդի աչքերի վերայ, երբ նա անոյշ երազներով հարբած՝ մրափած է եղել քնի մէջ։ Մազդ խտտղեցրել է երիտասարդի աչքերը. նա ձեռքը տարել և վերցրել է երկար ու փափուկ կանացի մազը։ Այդ մազ չէր, այդ Ջաֆար աղի ճօճիւն տէգի սուր ծայրն էր, որ ցցուեց հուրիների սիրելի քաջ իգիթի սիրտը, չը վիրաւորեց, արիւն չը դուրս բերեց, այլ կրակ դառաւ, վառեց նրան.—Եօթը սարի ետևը լինիս, եօթը թերթ երկինքը բարձրացած լինիս, եօթը տակ գետինքը մտած լինիս, ուր որ կաս, որտեղ գտնուում ես, դու ի՛մն ես, իմ ձեռիցը չես պրծնիլ, ասաց սիրեկանդ ու թուրը մէջքը կապեց, նժոյգի քամակն ընկաւ։ Խե՛ղճ տղայ, ի՜նչ դժուար տեղն է. քամին ուրիշ սիրակէզ երիտասարդների

քիթն էլ է մտել, նրանք բոլորը զարթնել են, հոտով իմացել են մազի տեղը, եարիդ («ետեհար») առաջը կտրել են և հուրիների պարգևին տիրանալ են ուզում։ Ա՛յ, ա՛յ, ա՛յ, ո՛ւֆֆ, Արարիչ Աստուա՛ծ, դու ազատես, էս ի՜նչ եմ տեսնում ջրի մէջ՝ սո՛ւր, կռի՛ւ, արի՛ւն, բրդո՛ց, կոտորո՛ց. բոլորն իրար են խառնուել. հարիւրը մէկի վերայ են յարձակուել»։

—«Ո՛ւհ... փակում է ղարաչին աչքերը և ցընցողական շարժումներ անում. նայեցէ՛ք, լաւ մտիկ տուէ՛ք, գաւաթի ջուրն արիւն դառաւ, չէ՞ք տեսնում»։

Ղարաչին մօր ու աղջկայ ուշադրութիւնը հրաւիրում է դէպի գաւաթի ջուրը։

—Ոչինչ չի երևում, յայտնում է մայրը. իսկ խեղճ աղջիկը, ցանկանայ ևս, հնարաւորութիւն չ՚ունի տեսնելու. նորա աչքերը արտասունքով լցուած՝ մթնակալել են. եթէ ամօթխածութիւնը արգելք չը լինէր, վաղուց նա երեխայի նման լալիս կը լինէր»։

—Մի՛ ցաւացնիլ գեղեցիկ աչքերդ, աննման աղջի՛կ, աչքի կոպով աղջկայ այլայլմունքը տեսնելով՝ ասում է ղարաչին. մտի՛կ տուր, հուրիները քեզ սիրել են. «ահա ոտնատակ տուեց քո սիրահարդ բոլոր միւս երկչոտ մրներին, նրանցից շատերին կոտորեց, գետնին փռեց, մնացողներին էլ փախցրեց և իջաւ ձիուցը, պարզ աղբրի ական վերայ կռացած՝ լուանում է արիւնոտ սուրը. ահա՛ նա կրկին թռաւ հրեղէն ձիու արծաթապատ թամբի մէջ. պատրաստ

կա՛ց, նազելի աղջի՛կ, այսօր է՝ նա կը գայ, վաղն է՝ քեզ կը ճկի իւր ուժեղ կռների մէջ»:

—«Ի՞նչ ես գոյն տալիս, գոյն առնում, սիրունի՛կ, ժպտալով խրախուսում է ղարաչին, չը լինի՞ վախում ես նորա տղամարդի խոժոռ դէմքից. նորա առնական հսկայ մարմնի մէջ Թագ է կացած մի քնքոյշ սիրտ, սէրն իւր գահը դրել է կորիճի սրտի մէջ. այդ սէրը ապրում է, շնչում է քեզ համար ու քեզանով:—Դու ինքդ ես այն սէրը»:

Արշալուսին Թերթիկները արձակող կիսաբաց կոկոն վարդի Թարմ կարմրուԹիւնից աւելացաւ պարկեշտ կուսի կարմրուԹիւնը: Նա համեստօրէն ցած Թողեց իւր նազիկ աչքերը և նորա կուրծքը սկսաւ մեղմ և պարզորակ լճակի երեսին խաղացող հեզասահ զեփիւռից պատճառած ծածանումի նման ել և էջ առնել:

ՄԹռուբի կինը հասաւ իւր նպատակին: Օրիորդից ոչ պակաս ցնծաց որդեսէր մայրը. նա հրամայեց աղջկանը մի հաց ևս վերադիր պարգև տալ բաղդ գուշակողին:

—Նանա Մէյրամը (Մայր Աստուածածին) քեզ բաշխի այս Թառլան ղուշը (բազէ), բաջի՛, օգուտ՚ է քաղում յարմար դէպքից ղարաչին, մի հին շապիկ, կամ վարտիկ տուր իմ այս երեխային, հիւանդ է, մրսում է. մի կտոր էլ պանիր, միս, ձու, ինչ որ քո քաղցր սրտից բղխի՝ տո՛ւր, մի՛ խնայիր, որբ է, հայր չ՚ունի, հինգ օր չը կայ՝ հօրը Թաղեցինք:

Ղարաչու կինը հաստատ հաւատացած էր, որ մի երկու բան դուրս պէտք է տանի այս տանից. և չը սխալուեց:

Մեղաւոր չէր գիւղացի հայ մայրը. մԹռուբի կինն այնպիսի վստահուԹեամբ և վարժ է ապագան առաջին բաց անում, այնքան ճարտար և կենդանի է նկարագրում և այնպիսի կոկ ու ողորկ ոճով, որ ո՛վ ասես՝ կը հաւատայ. իսկ բոլոր գուշակուԹիւնը կատարում է տեղական Թուրքերէն լեզուով, ապա Թէ ոչ, մԹռուբները հայերէն շատ քիչ են խօսում՝ այն էլ ալաշկերտցու աղճատեալ բարբառով:

Այդ մԹռուբների կանայքն են, որոնց դիմում է շատ անգամ գիւղացին՝ իւր կորուստը գտնելու համար:

Մի յուսալի երկդիմի պատասխան տալիս է միամիտ նախապաշարեալին ղարաչին և իւր հասոյԹն ստանում:

ՄԹռուբները, սովորաբար, իջնում են գիւղերից շատ հեռու, ճանապարհների վերայ, ջրին մօտիկ: Զինգեանի վրանների նման մի կիսամաշ ծածկոց էլ սրանք ունին:

Բաւական է, եԹէ մի մաքուր հագնուած ձիաւոր, կամ փոստով գնացող մի ճանապարհորդ տեսնեն մԹռուբները: Առանց ժամանակ կորցնելու՝ մօր մի ակնարկից հասկացան և դուրս Թափուեցան վրաններից մԹռուբի երեխայքը շների հետ միասին: Վազում են նրանք ամենայն զօրուԹեամբ. նրանց աղա-

չական ձայները կորչում են վտիտ և ազազուն շների նուազ հաչոցի մէջ. հետզհետէ շները յոգնում են, էլ չեն ընկնում ճանապարհորդի քամակից, դադարում են հաչելուց, իսկ ժիր մանուկները մի քանի հարիւր քայլ հետևում են թռչող սայլակին, կամ արընթաց ձիաւորին։

Նրանց շունչը կտրուում է, ձայները փորն է ընկնում և միայն մի խուլ մրմռոց լսուում է ձեռքերը պարզած ողորմութիւն հայցող մանուկների վոհմակից։

Կաց ու զուարճացի՛ր, եթէ ճանապարհորդը խղճաց և մի կոպէկ շպրտեց ձանձրալի մուրացկաններին։

Ականջներդ փակի՛ր, որ չը լսես նրանց բերանից դուրս թափուած, միմեանց ուղղած, անգրելի հայհոյանքները. կոպէկը ձեռքից ձեռք անցաւ, ծեծ ու ջարդ, երես ծուատել, խռպոտ և կերկերաձայն աղաղակներ, նզովք, անէծք իրար է խառնուել։

Վերջապէս մի աւելի ճարպիկը փախցրեց փողը, իւր մօրը տուեց և խաղաղութիւնը տիրեց։

Ահա՛ հէնց այս չինգեանների մէջ նշանաւոր Ֆաթմա պառաւի մօտ էր գնում մեր բաղդախնդիր Բզզէն։

Նա մտաւ վրանի տակը։

ԺԲ.

ԱՄԵՆԱԳԷՏ ԵՂՈՒՆԳ

—«Մի բուռն աւազին թիւ ու համար կայ, դեղին շողշողուն իշամեղուները նրանցից շատ են, բզզոցը ականջին դուրեկան է, տուածը սրտի ուրախութիւն է. դառը քրտինքի բերած կոպէկը ուղտի պոչ է՝ չի երկարիլ. իշամեղուն թող քեզ կծի, թաք ընի դու նորա արիւնը ծծի. սև փողը սև օրին բանացրո՛ւ, դեղին ոսկով սարեր դարձրո՛ւ. ի՞նչ ես հարցնում՝ ո՞վ է, տրորի՛ր վրովը անցկացի՛ր՝ թէկուզ անտակ ծով է. իգիթ մարդի մի ձեռը եղումն է, մինը մեղրումը։ Սև իշով գնացած ճանապարհը կարճ կը լինի. Քեօռօղլուի ամպերում թռչկոտող ղռաթը կատարեալ արծիւ է, որ կայ. որտեղ հասար՝ ճանգերիդ մէջն ա՛ռ, ծուլիկ ծուլիկ արա՛, սիրտը քըքրի՛, փետուրն աշխարհքով մին արա՛. ոյժը քոնն է, ոչ ով չի համարձակիլ ասել, թէ աչքիդ վերևն յօնք կայ. իշամեղուն շատ զօրեղ է, ինքը փոքր է, բայց խթանը ջուհարդար պողպատից սուր է»։

—«Սիրուն աղջիկն ուրիշի ապրանք է, բայց ուզեցար՝ քոնը կը լինի. մէկ երկու պապղան ոսկով գլխին տուիր՝ հասած ծիրան է կը կաթի, բուռդ կ՚ընկնի. ճաշակովդ չէ՝ ճխլի՛ր ու շպրտի՛ր, ուրիշ ծառերի վերայ շատ կան»։

—«Կրակը լափեց շէներ ու աներ՝ կրակ տուողի սի՞րտն ընչի ցաւի, ձիդ քշի՛ր վրայովը անցկացի՛ր,

իշամեղուն բուռն արա՛ քցի՛ր, ո՛չ մտածիր, ո՛չ հոգս քաշիր...»

—«Փա՛հ, փա՛հ, փա՛հ, փա՛հ, հեղեղատի ջուրը վարարել է, սարեր է պատռում, քար ու թումբ է քանդում, ամեն բան կուլ է տալիս... Է՛... է՛... է՛... է՛հ, ափսո՛ս, ջուրը նստում է, սարերի ձիները հալուեցին...»

—Դէ՛ հերիք է, աշխարհքումն ի՛նչն է յաւիտենական, ասաց և աչքը բութ մատի եղունգից հեռացրեց ղարաչի Ֆաթման։

Վերևի անկապ ու անհասկանալի երկդիմի խօսքերը սազի ու քեամանչի ներդաշնակ նուագից առաւել քաղցր հնչեցին կոլոտ չարչու համար։ Նա շատ լաւ հասկանում էր ղարաչու կնոջ խօսքերը։

Ֆաթմէն փալ էր բաց անում, ղարաչու պառաւը Բզզէի բաղդն էր գուշակում. չինգեանէն եղունգին նայող էր։

Բզզէն երկու կոպէկանոցով երեք անգամ խփել էր ղարաչու պառաւի եղունգին ու սև փողը բուռը դրել, դրամը յետ էր գցել եղունգի գաղտնիքը ծածկող հաստ վարագոյրը, բացել էր պառաւի աչքերը և նա յայտնապէս կարդացել էր Բզզէի երեսին իւր ապագայ վիճակը։

—Բերանիդ մեռնե՛մ, բերանի՛դ, սրտի ուրախ փղձկանքն արտայայտեց Բզզէն և ձեռքը գրպանը տարաւ, մի երեք կոպէկանոց էլ պարգև տուեց Փալչի կնոջը։

—Թէ Աստուած կը տայ, ասածներիդ կէսն անգամ կը կատարուին՝ գլուխդ ոսկու մէջ կը թաղեմ,— լիասիրտ խոստումն արաւ նա և տեղիցը վեր կացաւ։

ԺԳ.

Ի Շ Ա Մ Ե Ղ Ո Ւ Ն Ե Ր Ը

Շատ ուշ գլխի ընկաւ կոլոտ Բզզէն։ Նա կանգնել էր Կարբու Կիզիլ-մատուռի զանգակատան մէջ, ապուշի նման բերանը բաց՝ ինքնամոռացութեամբ աչքը չէր հեռացնում զանգակատան լուսամուտի քարի ճեղքից։

Նորա աչքի առաջին կատարուում էր մի նորանշան երևոյթ և այնքան անսպասելի արագութեամբ, որ նա ժամանակ չ՚ունեցաւ արտասովոր դէպքը ծանր ու թեթև անելու։

Ասեմ, թէ ի՛նչ պատահեցաւ։

Այս անցքից մի քանի օր յառաջ Բզզէն գնացել էր Երևան՝ ապրանք գնելու։

Շատ ժամանակ չէր, որ նա իւր գործը կապել էր Երևանի հետ։

Ջհուտ Աղաջանից նա ձեռք քաշեց այն օրը, որ առաջին անգամն Աղաջանը սկսեց հայրաբար յանդիմանութիւն կարդալ նորա երեսին։

—Ամեն տեղից զանգատներ են հասնում ականջիս, նախատեց Աղաջանը. ասում են, որ դու ձեռը կարճ, աղքատ մարդի երեխէքանց բերանի հացն ես

կտրում, նրանց տակի վերջին փալասն ես դուրս քաշում, մէկին երկու տոկոս ես առնում, մի շահու ապուռին երեք անգամ աւելի ես նշանակում, քո ընկեր չարչիներին վնաս ես տալիս, քաղցր լեզուով մուշտարու աչքն ես մտնում, վերջը տակը ջուր կապում. իրա՞ւ է այս բաները:

—Հապա՛ ես ո՞ւմ հօրն եմ պարտական, որ մինչև երեկոյ ոտքեր մաշեմ, տանջուեմ, չարչարուեմ ու աշխատանքս պատահողի փորը կոխեմ:

—Քչով բաւականացէ՛ր:

—Աղբանոցներումն եմ գտե՞լ, թէ տուած ապրանքիդ փողը չես ստանում, յանդգնաբար պատասխանեց Բզզէն Աղաջանին:

—Բայց ես քեզ խեղդո՞ւմ եմ, անխիղճ կերպո՞վ եմ հետդ վարուում, կրկնապատիկ օգո՞ւտ եմ ստանում:

—Շահ չ'ունենաս ընչի՞ կը տաս, գանձ հօ՛ չե՞ս գտել, հողի տակիցը հօ չե՞ս հանել. արդար վաստակով ո՞վ է հարստացել, որ դու մի կապոց հասարակ կտաւով ջհուդութիւն անէիր, էնքան վաստակէիր, որ էս ծովի պէս խանութը բաց անէիր ու չարչիք շինէիր, աշխարհքը տարածէիր. ի հարկէ դու էլ նեղել ես, հարստահարել ես, մէկին հինգ գրել ես, տներ ես քանդել, էս օրին հասել, որ Կարբու մէջ բոլորը գլորուեցին, դու ոչինչ տեղից յառաջ եկար. մտի՛կ տուր էնքան հին խօջաներին, որոնք Բայազիդումն անքուն ցեցերի, անթիւ հարստութեան

տէր են եղել, հետները բերած կայանքը թիով է քերուել ու էս օր վերջին շունչներն է կոկորդումը տրորւում, քթերը բռնես՝ քաղցածութիւնից հոգիները կը տան, ամեն մէկի խանութումը քո մի օր ծախածի չափ ապրանք չը կայ. էս ի՞նչպէս եղաւ, դու նրանցից շա՞տ խելօք ես:

—Տօ՛, ապերախտ ու անաղուհաց քրդի շո՛ւն, բարկացաւ ջհուտ Աղաջանը, իմ տնկած ծառերի մէկն էլ դու ես, ոչ բարով իմ չրաղն ես, քեզ մի օր նեղացրե՞լ եմ:

—Իմ աչքը ծակում է, որ ուր գնում եմ, քո լաւութեան վերայ են խօսում, քո լիքը խանութն են գովում, քեզ են երկինք բարձրացնում. լեղի է իմ կերածն ու խմածը, եթէ քեզ գլխի վերայ չը կործանեմ, հողի հետ չը հաւասարացնեմ ու մէն միայն Կարբու գաւառումը մատով ցոյց տալու չը դառնամ:

—Օձի ձագ եմ տաքացրած եղել ծոցումս, որ ուրիշներին կծելուց յետոյ՝ ինձ էլ խայթի, դո՛ւրս, անպիտա՛ն, ճչաց ջհուտ Աղաջանը և հանեց իւր արկղի միջից Բզզէի հիմնադրամ նշանաւոր տասը չուրուկ կոպէկը ու քափով շպրտեց փողոց:

—Ես Սալբու տղայ կոլոտ Բզզէն չեմ, եթէ ասածս չը կատարեմ, ասաց դառն և կծու ժպիտով ու աներես անպատկառութեամբ և շտապ քայլերով դուրս ընկաւ, վերցրեց իւր քակն ու աներևութացաւ:

Այդ օրից էր ահա, որ Բզզէն կորուել էր Աղա-

ջանից և ամիսը մի անգամ Երևան էր գնում ապրանք բերելու. այդ օրից սկսած՝ Բղդէն աւելացրել էր իւր ագահութիւնը, կրկնապատկել և եռապատկել էր ընչաքաղցութիւնը. ամենատեսակ միջոցներ՝ ներելի և աններելի՝ չէր խնայում հարստանալու և իւր բարերարին կործանելու.—դափում էր, գզլում էր, տեղն ընկած ժամանակը գողանում էր, բայց աչքը միշտ անկուշտ էր, ախ էր քաշում ու ծուխը քթիցը չէր դուրս գալիս. այս մանր ու աննշան հնարքները բաւական չէին իւր նպատակներն իրագործելու համար։

Ի՞նչ անէր ուրեմն. ի ցաւ իւր սրտի՝ նորա յայտնի հակառակորդը, քանի գնում է, ընդլայնում է իւր առևտուրը. բաւական չէին նորա ստեղծած չարչիքը, որոնք Բղդէի աչքի փուշն էին, մի օր էլ յանկարծ Կարբու նախկին հարուստ և այժմ ընկած տներից մէկին՝ Բատինենց Կարապետին, որը մշակութեան և երկրագործութեան անսովոր լինելով՝ դուռն երեսին ծածկած էր մնացել, մեր բարեսիրտ ջհուտ Աղաջանը հրաւիրեց քաղցրութեամբ իւր խանութը, խոստացաւ դրամագլուխ և խորհուրդ տուեց Աշտարակումը մի խանութ բաց անել, կտաւեղէն և մանրունք ծախել։

Այս էլ հերիք չէր. ջհուտ Աղաջանն առաջարկեց իւր մի հատիկ աղջիկը Կարապետի որդի Սահակին, որին, տեղական սովորութեան համաձայն Սհօ կրճատեալ անունով էին կոչում։

—Հիմի՛, որ հացիս կէսը պակասեց, Աշտարակն էր իմ գլխաւոր առևտրի կենդրոնատեղին, եթէ այնտեղ խանութ բացուեց, էլ ո՞վ ինձ պէս մի չարչուց ապրանք կ՚առնի, մտածեց Բղդէն և քիչ մնաց իսպառ խելքը կորցնում էր։

Ահա այս հանգամանքներն էին, որ նրան փալչի Ֆաթմայի դուռն ուխտ ուղարկեցին, այս ձեռնարկութիւններն էին, որ նորա ոտքը Աղաջանի խանութից կտրեցին և երեսն Երևան դարձրին։

Ահա գնել էր Բղդէն Երևանից կարևոր ապրանք և բօշի տղին բարձած՝ յետ էր դառնում, երբ Կարբուց Երևան փոխուած իւր հայրենակից մի վաճառական նրան կանգնացրեց և իւր հետ խօսող ուրիշ անծանօթին ասաց.

—Ամէն օր Կարբի գնացող էիր հարցնում, այս չարչին մեր Սալբու տղայ Բղդէն է, սա է Կարբու անդրանիկ ծնունդը, հիմի տուն է գնում, ինչ ասելու ես՝ սրան ասա՛, սա կը կատարի։

—Եթէ այդպէս է, մի լաւութիւն արած կը լինես, Բղդէ եղբա՛յր, ասաց նրան անծանօթը, եթէ այս թուղթը տանես և դնես ձեր եկեղեցու Կիզի-մատուռ կոչուած զանգակատան լուսամտի վերայ։

Անծանօթը հանեց գլխարկի միջից մի թուղթ՝ եռանկիւնի ծալած, և տուեց Բղդէին։

—Անցեալ տարի ես Սպահանումն էի, պատմեց անծանօթը, մի սպահանցի հայ, երբ իմացաւ, թէ ես երևանցի եմ, Կարբին մեզանից մօտ է, խնդ-

րեց, աղաչեց, օձի լեզու թափեց, որ այս թուղթը
իմ, կամ ուրիշի ձեռքով հասցնեմ Կարբու զանգա-
կատունը: Սպահանցին ինքը մեր կողմերը չէր եղած.
իւր ասելովը՝ նրանք բնիկ հին կարբեցի են եղել.
իրանց պապերից մէկը կտակել է իւր զաւակներին,
թոռներին և ծոռներին՝ երբ և իցէ, ինչպէս որ լինի,
էս թուղթը հասցնել Կարբու Կիզի-մատուռի զան-
գակատան պատուհանը. Նզովքով ու անէծքով պա-
տուիրել է իւր կտակը կատարել:

—«Հիմա, ասում էր ինձ սպահանցին, կարծես
մեր պապի անէծքը մեր տան գլխին ծանրացել է,
մեր մէկն երկու չի դառնում, անբաղդութիւնը տա-
րէց տարի մեզ իւր ճանգերի մէջ է սեղմում»:—
Աղաչում էր, որ էն ցասումն իրանց տանից վերաց-
նեմ, որովհետև իրանք աչք չեն բացանում, որ ան-
ձամբ կատարեն պապի հրամանը:

—Ահա տարին լրանում է, աւելացրեց ան-
ծանօթ երևանցին, որ թուղթը մօտս է, չը գտայ
մի կարբեցի, որին յանձնեմ. շնորհակալ եմ բարե-
կամիցս՝ խնդիրս կատարեց, քեզ ինձ հանդիպեցրեց:

Ամենայն ուրախութեամբ յանձն առաւ Բղդէն
և թուղթը դրեց ծոցը:

Այս թուղթն էր այժմ, որ Բղդէի ուշադրու-
թիւնը գրաւել էր:

Դրեց չը դրեց նա հռանկինի թղթի փա-
թեթը Կիզի-մատուռի զանգակատան բաց պատու-
հանի վերայ, որ նորա աչքերի բբերը յետ բացուե-

ցան, խելացնորէն կերպարանք ստացաւ և աչքը սըն-
կեց պատուհանի տակի շարաքարերից մէկի ճեղքին:

Ի՞նչ էր այն:

Դուրս թռան յանկարծ միմեանց ետևից, կար-
գապահ զինուորների նման, ոսկեփայլ և խոշոր իշա-
մեղուները, որոնց ժողովուրդը «բոռ» անունն է տալիս
և որոնց խայթուածքը կարճի կծածից աւելի կսկը-
ծեցուցիչ է:

Բոռերը հետևելով իրարու՝ պատուհանից դուրս
էին թռչում:

Միջատների այդ տեսակից ամեն ոք զգուշանում
է, միայն մեր Բղդէն էր, որ անշարժ արձանի նման
տեղումը մնաց ու մնաց: Նա շուարած էր: Նորա
գլուխը միայն ամառուայ շոգին՝ թէժ արևի տակ՝
դաշտումն արածող և ճանճերից ձանձրացած ձիու
գլխի նման բարձր ու ցած էր անում. Նա աչքով
ուղեկցում էր իւրաքանչիւր իշամեղուին, մինչև որ
օդի մէջ աներևութանում էին:

Սթափմունքը շատ ուշ եղաւ, կերևի, Բղդէի
մտքովը մի բան անց կացաւ. մի ակնթարթում
գլխարկով տուեց, ճեղքից դուրս եկող միջատներից
երկուսին սպանեց: Միջատը գետին ընկաւ և թափ-
ուած խճերի մէջ կորաւ:

Բղդէն կռացաւ որոնելու իւր արած որսերը:

Օ՜հ, սարսա՛փ, ոսկի էր առաջին անգամ նորա
աչքով ընկած առարկայն, մի մեծ, մէջը փոս, գոգա-
ւոր ոսկի:

Այնպիսի արագութեամբ չի յարձակուում որսկան կատուն ծակից անզգուշաբար դուրս սողացած մկան վերայ, որքան Բզզէն իւր անձը սարսուռ ձգող ազնիւ մետաղի վերայ: Չեմ կարծում, թէ նա զգացած լինէր իւր մատի կսկիծը, կամ տեսած լինէր արիւնը, որ սուր քարերին դիպչելով ծորացել էր նորա եղունգի ծայրից:

Բզզէն չը դադարեց որոնել. ինքն երկու հատ բոռ էր սպանել. այդ նա լաւ տեսել էր, իսկ այժմ գտել է միայն մինը. անկարծիք, երկրորդն էլ պէտք է լինի և կայ, մի ինչ որ դեղին փայլուն բան պսպղում է խճերի արանքում. ոսկի է անշուշտ: Երկմտութիւն չի պէտք, իսկական ոսկի է: Բզզէն շատ տանջուեց և չը գտաւ:

— Յիմա՛ր եմ, ի՛նչ է, բարձր ձայնով արտասանեց Բզզէն, իմ բաղդին իմ ձեռքով եմ հարուածում. ո՞ւր եմ թողնում սրանց հեռանամ:

Նա դիւթական զօրութիւնով օժտուած թուղթը յափշտակեց լուսամուտի վրայից, գրպանը կոխեց և ձեռքով պինդ փակեց քարի ճեղքի բերանը:

Բզզէն կրակ է կտրուել. սարսափելի միջատների խայթիւնը նորա վերայ լուի կծածի չափ սկըզբումը չեն ազդում, ոսկու խանդը ցաւի մրմուռի զօրութիւնը չքացրել է: Բայց այս միս ու արիւն է, քար ու երկաթ չէ, խայթի հարուածը մէկ չէ, երկու չէ՝ հարիւրաւոր սլաքներ են շեշտուում նորա ձեռնամիջին, սրան տանել չի լինիլ: Որքան և ատամ-

ները միմեանց սեղմեց, երակները ձգեց ամրացրեց, բայց և այնպէս յաղթուեցաւ, թուլացաւ, ձեռքն ինքն անգիտակցաբար յետ գնաց խորշաբերանից:

Ո՛վ զարմանք. անցքն ազատ է, բայց բոռերն այլ ևս չեն դուրս գալիս, իսկ բզզոցը զանգակի մեղմացող ղօղանջիւնի նման դեռ լսուում է Բզզէի լսելիքում:

Ի՞նչ է այս:

Բզզէն չը կարողացաւ հաստ լինել. արդեօք ի՞նքը ձեռքով ճմլել է խորշից գլուխը նոր դուրս հանած ժամանակը մի երրորդ իշամեղուի, որ ոսկի է դարձել և անցքի մէջ ամրացել մնացել, թէ ինչպէս պատահեց, որ խորշն ինքն իրան փակուեց:

Այսպէս է, այնպէս է, վեց հազարեակի զօրութիւնն է,—իւր գիտնալիք գործը չէ, բայց երրորդ ոսկին փականքի պաշտօն է կատարում, կենդանի գանձերին ներսը բանտարկել է, այլ ևս դադարեց միջատների ուղևորութիւնը:

Ով կեանքի մէջ առիթ է ունեցել տեսնելու բարակ որսկան շանը, երբ նա քանդում է աղուէսի գետնափոր որջի բերանը, նա կը՛ նմանեցնի այս վայրկենում մեր Բզզէին որսորդի բարակին: Շտապ շտապ յետ է տալիս որսկան շունը ճանգերի ծայրով փորուած հողը և հոտոտելիքը դնչի հետ միասին թաղում ծակամուտքի մէջ հաւատալու՝ նե՞րսն է այժմ թանկագին մուշտակացու կենդանին:

Սոյն օրինակ քանդում, քերում է Բզզէն արիւն-

լուայ եղունգներով պատուհանի քարացած, դարերով ամրացած կրի շաղախը, որպէս թէ, իւր խելքով լայնացնելու ճեղքի բացուածքը և դուրս քաշելու ներսումն ամրացած մետաղը. բայց երբ եղունգները չեն բռնում, երբ մատների ոյժն ու յարմարութիւնը անբաւական են լինում ծայրն երևցնող դրամը դուրս կորզելու, կոլոտը գլուխը կորցրած՝ ատամներն է ի գործ դնում, քիթ ու մռութն է քարերին շփում:

Ի զուր էր խեղճի տանջանքը. կարելի է ասել, ամբողջ ժամ ունայն կորցրեց նա. երբեմն կռանում էր, շաղախները քանդում, երկրորդ սպանածը որոնում և դարձեալ ծակում մնացածի ետևից ձըգտում. ոչ մինն է ձեռք գալիս և ոչ միւսը: Նա սկսեց մինչև անգամ ատամներով կրծոտել քարին կպած շաղախը, բայց զուր ջանք և անօգուտ վաստակ, քարը շաղախից և շաղախը քարից կարծրացել էին:

Յուսահատութիւնից սիրտը քիչ էր մնում պատռուի, և գուցէ առաջին անգամ իւր երեխայութիւնից դուրս եկած օրից լաց եղաւ՝ ճիշդ կամակոր երես տուած մանկան նման, որի անտեղի պահանջներն անկատար են մնում քնքոյշ մօր կողմից:

— Ի՞նչ ցաւ ու կրակ է, մրմնջաց նա, հիմա ես ի՞նչ անեմ:

— Ոչի՞նչ, շա՛տ հեշտ գործ, — շտապի՛ր տուն, ա՛ռ բրիչն ու մուրճը և վերադարձի՛ր, դրդեց նրան ներքին ձայնը:

Բայց օրով-ցերեկով ո՞նց անէր. Կիզի-մատուռը գիւղի կենդրոնումն է, դուռը շարունակ բաց է, չարաճճի մանուկները սովորաբար խաղում են աւերակի մէջ, վայրի աղաւնիների բներն են քանդում, մաշկաթև չղջիկներ են հանում պատերի արանքներից. բացի դրանից քուչիցն անցկենողը կարող է նկատել նրան, և ահա Բզզէն իւր հացը կերաւ:

Ի՞նչ անի ուրեմն, ի՞նչ քար գցի իւր գլխին: Նա մնաց տարակուսած կանգնած, ոչինչ ելք չը կայ. կէտ ու կէտ գնաց անգիտակցաբար, նստեց թափուած քարերից մէկի վերայ ու աչքը տնկեց պսպըղան ոսկու երևցող ափին: Երբեմնապէս էլ նորա գլուխը կէտ է դառնում դէպի դուրս. — այդ զգուշութեան թելադրութիւնն էր:

— Ցորեկո՛վ... գիշերո՛վ... ցորեկո՛վ... գիշերո՛վ... կրկնեց նա մի քանի անգամ այդ անկապ խօսքերն և վերջը տեղիցը կանգնեց:

— Ե՛ւ ցորեկով և՛ գիշերով, թէկո՛ւզ տարիներով, մինչև որ ձեր բունը քանդեմ, իմ սիրուն շողշողուն բուե՛ր. գլուխս այստեղ վէր կը դնեմ և ձեզ չեմ թողալ այստեղից հեռանաք: Ի՞նչ ուրախ եմ, որ ձեր ընկերը ձեռքիս տակին ճխլուեց, պատի խորշումը մնաց, ձեր ճանապարհը փակեց, ձեզ բանտը ձգեց: Ափսո՛ս, սկզբից յիմար ոչխարի նման պէլացել մտիկ էի տալի, թէ ի՞նչպէս են ձեր ընկերները մին մին հեռանում, իմ տունը քանդում, սպահանցու տունը շինում. տե՛ս՝ ի՞նչ Աստուած խելքս առել էր,

թլխմի թուղթը շուտ չէի վերցնում։ Հը՛...հը՛...հը՛... տեսա՞ք ինչպէս տաք արիք. հարիւրաւոր տարիներ հանգիստ պառկած էիք, ո՞նց հիմի էլ լուռ կացաք ու կուչ եկաք քարի տակին, որ մի ժամից շշկլաք իմ քսակի միջին։

—Դուք հօ ի՛մն էք ու իմը, բայց ի՞նչ եղաւ ձեր երկրորդ ընկերը. ես իմ աչքովս տեսայ, որ գտակով ձեզանից երկսին սպանեցի, ա՛յ մէկն ահա իմ գրպանում, հապա մի՞ւսն ուր է։

—Չէ՛, չէ, գլուխս մահի կը տամ ու ձեզնից ձեռք չեմ քաշիլ, հաստատապէս շեշտեց Բզզէն և նորից սկսաւ շուռ շուռ տալ գետին թափած խճերը։

Արևի ուղղահայեաց ճառագայթն այնպէս զգալի կերպիւ չէր ծակծկոտիլ ու փակիլ Բզզէի աչքերը, ինչպէս մի քարի մութը անկիւնից հուրհրատող փոքրիկ մետաղը։ Երեք անգամ միմեանց վերայ ցնցուեց նորա ամբողջ ջղային ցանցը, մինչ նա փայլակի արագութեամբ յարձակում գործեց իւր որսի վերայ և հողախառն սեղմեց բռան մէջ։

Այս տեսիլք չէր, երևակայութեան վաղանցուկ խաղ չէր. այժմ Բզզէն բռնած ունի ձեռքի ափի մէջ երկու հատ ոսկի—փայլուն ոսկի. հողը՝ որի մէջ հարիւր տարիներով նրանք թաղուած են եղել, կարծես աւելացրել է նրանց փայլը։

Բզզէն համբոյրներն անդադար կրկնում է և չի կշտանում։ Տարփածուն, տարիներով ձգտած իւր սիրեկանի քամակից և հազար անժանելի տանջանք-

ներից յետոյ հասած սրտի փափագին, այնպիսի խանդակաթ ակնարկ և համբոյրներ չի դրոշմիլ իւր սրտի առարկային, ինչպէս կօլոտ չարչին թեթև և փոքրիկ ոսկիներին։

—Այս երկո՛ւ, բարձր ձայնով հաշուեց նա, դեռ քանի՛ երկուսը դարսուած են քո տակին, ո՛վ անխօս քար. շատ չի քաշիլ, դրանք բոլորն իմը կը լինին, և, սպասի՛ր էն ժամանակը, ջհուտ Աղաջա՛ն, դու քո հացը կերար։

Բզզէն սկսեց խճերով ծածկել քարի բացուածքը, այնպէս որ ոսկու ծայրն էլ չ'երևաց։

—Զարն սատանէն հակառակ է, բաց դուռն է, մէկը ներս կը մտնի, ոսկու փայլն աչքերին կ'ընկնի։ Այն ժամանակն արի՛ էշը ցեխից հանի՛ր, համ էն մարդի արիւնը զուր կը թափեմ, համ իմ գլուխս կը կորչի, փսփսաց Բզզէն իւր մէջ և յետ յետ նայելով, դուրս եկաւ զանգակատանից։

Նորա բացակայութիւնն երկար չը տևեց. մի բրիչ և մի կռան ձեռքին, գող շան նման, զգուշութեամբ մի տեսակ անցկացաւ Կարբու նեղ փողոցներով և իրան ներս ձգեց Կեզլի-մատուռը։

Երկու ժամից աւել նա անընդհատ աշխատում էր. քրտինքը գագաթի վերին կենդրոնից առուացել էր և չաերի պատուածքից դուրս հոսում։

Աւելորդ աշխատութիւն էր. մի քանի կռանի հարուածներ և ահա՛, և ահա՛ փշուր փշուր, կտոր կտոր կը թափուէր փուխր և փափուկ քարը։ Այդ

քարերից շատ կան Հայաստանի ամէն կողմերում. այդ քարերով են կառուցած մեր հռչակաւոր անթիւ տաճարները։ Ճարտարարուեստ քարտաշն այդ քարիցն է տաշել և կերտել մեր սուրբ վանքերի վերայ հայ փառաւոր անցեալի դրօշները։ Հայ ճարտարապետութեանն յատուկ սքանչելահրաշ քանդակներն այդ փուխր քարերի վերայ են ձեռագործուել և այսօր աշխարհքի մէջ հայկական ճարտարապետութիւն անունն են յատկացրել։ Հեշտ էր ուրեմն Բզզէին փշրել լուսամուտի քարը, եթէ նա երկիւղ չը կրէր հարուածների թնդոցով իւր գլխին ժողովել հետաքրքիր հարևաններին։

Բաղդաւոր էր Բզզէն, որ յունիսի վերջերն էր, ամէն ոք իւր կալ ու կուտի, իւր դաշտային աշխատանքի հետ էր, բացի պառաւ կանանցից և մանրահասակ երեխաներից՝ գիւղումը ոչ ոք չը կար. բայց և այնպէս զգուշութիւնը ձեռքից թողնելու չէր, կռանի հարուածները կարող էին հետաքրքրութիւն զարթացնել։

—Է՛հ, ի՞նչ կը լինի, թող լինի՝ էս ժամանակ ո՞վ կայ գիւղումը, որ քարի թրխկոցը լսի. երկու-երեք հարուած, և ամէն բան վերջացաւ, տանջուելով հոգահան եղայ, մտածեց Բզզէն և մի զարկով իջեցրեց քարի անկիւնին։

Նորա ձեռքերը թուլացան, նորա մազերը ոզնու սուր սուր փշերի նման ցից ցից կանգնեցան. այս դրութիւնն է ստանում կենդանին, երբ մի հե-

ռաւոր ոտնաձայն նրան զգալ է տալիս թշնամու մերձաւորութիւնը. Բզզէի աչքերը մթագնեցին, երկաթի գործիքը ձեռքիցը թռաւ, ծնկները ճկուեցին։ Անշուշտ վայր կ՚ընկնէր Բզզէն, եթէ օգնութիւն չը հասնէր նրան նոյն լուսամուտի գոգը՝ նա խոնարհեց, գլուխը վայր դրեց լուսամուտի վերայ և այնուհետև ինքն էլ չ՚իմացաւ, թէ որքա՞ն ժամանակ աչքերը փակ մնաց նոյն անզգայ դրութեամբ։

Ի՞նչ պատճառաւ։

Մի ահարկու և զարզանդելի խուլ թնդիւն էր, որ բարձր երկնակամարից կամ հեռաւոր անդնդից տարածուեց զանգակատան ներսը։ Բզզէին թուեցաւ, թէ ամբողջ երկրագունտն իրար անցաւ. մթնոլորտի խաղաղ դրութիւնը նորա փակ աչքերի առաջ երերում էր, սրբավայրը գլխովին տարուբերուեց։

Առաջին անգամ, գուցէ, սև փողի նշանակութիւնը ճանաչելու օրից, Բզզէի կրօնական զգացմունքը վիթխարի հսկայի ահաւորութեամբ կռանի զարկի թնդիւնի հետ՝ մատուռի արձագանքի միջոցով՝ իւր բոլոր վեհութիւնով նկարագրուեց ջերմեռանդութեան և կրօնասիրութեան մէջ սնուած, բայց մոլորութեան մէջ ամէնը կորցրած գիւղացի երիտասարդի աչքին։

Արձագանգն էր այն, որ ներս մտաւ կամարակապ զանգակատան պատերի մէջ դրուած հողեայ բղիկների մէջ, ոլորապտոյտներով անդրադարձ շրջաններ արեց և Բզզէի գործած մեծ յանցանքի ահա-

ւորութիւնը նորա մտապատկերի մէջ կենդանի նկարագրեց:

Բշշէի և ամէն մի հայ-քրիստոնէի համար Աստուծոյ սուրբ տաճարների ամէն մի քարը նուիրական է. նա լաւ գիտէ, որ մինչև անգամ անհաւատ Տաճիկը, վայրագ Քուրդը, սատանապաշտ Եզիդին մի մթին երկիւղածութեամբ են վերաբերւում դէպի այդ աւերակ սրբավայրը, շատերը ոտքով մտաղ են բերում, ճրագալոյս են վառում և միայն խիղճը կորցրած շահամոլ սակաւաթիւններն են եղել, որ չեն խնայել պիղծ ձեռքերով քանդել, աւերել մեր վանքերը:

Կոյր Բշշէն գիտէ այս ամէնը և այժմ ինքը ձեռի կեղտ մետաղի համար անհաւատից աւելի զզուելի ու անգոսնելի գործ է կատարում, իւր ձեռքով կործանիչ է հանդիսանում իւր նախնեաց արեան քրտինքով կառուցած սուրբ տաճարին:

Այդ արդարացի պատճառաւ՝ ինքը՝ ահաւոր սրբութիւնը եօթն թերթեան երկնքից լսելի արեց իւր ահեղաստատ բարկութիւնը:

—Մեղա՛յ քեզ, Տէ՛ր, սևերես մեղաւոր եմ Քո առաջին, հազիւ երկչոտութեամբ մի շշունչ արձակեց շրթունքներից կոյրը և անվստահ հայեացքով, կուչ ու ձիգ անելով՝ երեսը դարձրեց դէպի զանգակատան կաթուղիկէն: Ես մեղա՛յ Աստուծոյ, խնայէ՛ր ինձ, ո՛վ սուրբ Կիզի-մատուռ, մի՛ բլիր իմ գլխիս, աղաչեց Բշշէն, քեզ էլ քաջ յայտնի է, որ քեզ քանդելու մտքով չը զարկեցի քո քարին:

Կարծես, երկնային բարկութիւնն անցաւ, ամենայն ինչ նախկին անշարժութեան մէջ մտաւ, լռութիւնը թագաւորեց, արձագանգը դադարեց:

Մի քանի րոպէ ևս մնաց Բշշէն և գլուխը բարձրացրեց:

—Հապա ի՞նչ անեմ, թողնե՞մ այս պսպղան ոսկիքը քարի տակին թաղնուած, կամ թէ թլիմը կրկին տեղը դնեմ, ճանապարհ տամ՝ գնամ, հեռանամ, ո՛վ գիտէ ո՛ւմ ճանգն ընկնեն ու ես այստեղ աչքերս պլշած՝ ձեռնունայն դատարկ յե՞տ նստեմ և օրը մինչև երեկոյ ոտքիս կաշին ուտելով, լեզուս կէս գազ կախած, որսորդի շան պէս գիւղէ գիւղ քարշ գամ, թէ մի քանի սև փող պէտք է աշխատեմ, որ նրանով կարողանամ փողի, անուանի տէր դառնալ ու ջհուտ Աղաջանին—իմ ոխերիմ թշնամուն հողի հետ հաւասարացնել, գլխի վերայ կործանել:

—Ամա՛ն, ո՛վ սուրբ Կիզի-մատուռ, քո զօրութիւնի՛ն մատաղ, տարեկան հինգ նաւակատիկին մի մի սպիտակ գառը քո դռանը կը մորթեմ, հում հում կը բաժանեմ, միայն թէ դու մեղք չը համարես, չը բարկանաս, գլխիս խռով չը կենաս, թողնես, որ ես էս քարը տեղահան անեմ, ոսկիքն իմը շինեմ, ջհուտ Աղաջանի աչքը հանեմ, ես խօսք եմ տալիս՝ նորից իմ ձեռքով քարն իւր տեղումն յարմարացնել:

Բշշէն սիրտ առաւ իւր խոստմունքից և երեք անգամ երեսին խաչակնքեց:

—Հիմի գիտեմ, որ Կիզի-մատուռն իմ կուռնն է, վստահօրէն ասաց նա, երբ իւր աչքին երևաց քարի ներքին կողմը, քարքարուտների մօտ, մի լայն ճեղքուած:

Անմիջապէս բրիչի ծայրը խուռչին դէմ տուեց Բղդէն և մի վերջին ուժով քարը տեղահան արեց:

—Բր՛գ…վր՛գ…պր՛գ… շչացին Բղդէի ականջին հազարաւոր իշամեղուներ և իրար խառնուեցին:

Մի րոպէաչափ շշմեց Բղդէն, անզգայօրէն շրթունքները յետ բացուեցին, աչքերի բբերն ու բունը լայնացան, մատները անգիտակցաբար չռուեցին, իրարից հեռացան, և ո՛վ գիտէ, դեռ կարելի է շատ ժամ այդ անբնական դրութեան մէջ, եթէ նոյն ինքն անբան միջատները չը սթափեցնէին նրան:

Բոռերը գտան իրանց հանգստութիւնը խանգարող թշնամուն, սրեցին իրանց՝ առանց այն էլ՝ սուր խայթոցները և չորս կողմից գրոհ տուին քաջ պատերազմողների հմտութեամբ Բղդէիս վերայ: Սուր սուր սլաքների հարուածից աւելի զգալի էին մըլսուում իշամեղուների կնճիթիկները Բղդէի երեսին, պարանոցին, աչքերին, քթին, ձեռքերին, միով բանիւ մարմնի բոլոր բաց տեղերին:

Ի զուր չէ՞ր նորա ճչոցը. նա սկսեց աչքերը փակել և ձեռքերը օդի մէջ պտըտեցնել, որպէս թէ իւր բազուկների զօրութիւնով ցրուելու թշնամու բանակը: Բայց շատ սխալ էր նորա հաշիւը, թշնամին խիստ հզօր է եղել. կատաղի միջատները այդպիսով

աւելի դրդուեցին և աւելի խստօրէն յարձակում գործեցին:

Էլ չը տարաւ Բղդէն, նա յաղթուեց. կծած տեղն ուռչում է ընկուզաչափ և բարձրանում:

Բղդէն երեսի վերայ վայր ընկաւ խճերի մէջ:

Այժմ թշնամու բանակին օգնութիւն հասան Բղդէի իրան ձեռքերը. ապտակներ է, որ իջեցնում է թշուառական մոլորուածն իւր գլխին, վզին, երեսին. այդպիսով, իւր խելքով, բոռերի դէմ է պատերազմում, բայց իսկապէս ինքն իրան է ծեծում:

Այդ հնարքն էլ չ՚օգնեց:

Բոռերն աւելի զայրանում և չեն հեռանում. շատերն սկսեցին խայթոցները նորա հագուստի կործուածքով ներս խցկել:

Այս անգամ անձնապաշտպանութիւնը յաղթեց ագահութեանը. կսկիծն ու մրմուռը, քիչ է մնում, Բղդէին ուշագնաց անի. նա աչքախուփ, խարխափելով դուրս ընկաւ մատուռի միջից:

Նա փախչում է աննպատակ դէպի դաշտը:

Նորա բաղդից ոչ ոք չը հանդիպեց նրան, ապա թէ ոչ, ամենքը կը վախենային այս մարդակերպ, փչուած, տկզած տկից:

Միջատների կծած տեղերը հաւասար ուռել էին, աչքերի կոպերն ամբարտակի նման բարձրացել, ծածկել էին տեսանելիքը, մի մի նեղ անցքից միայն աչքերը հազիւ գործում էին:

Ցաւը չը թողեց Բղդէին շատ յառաջ վազելու:

Մի առուակ խոխոջելով վայր էր հոսում լեռնաթմբից և Բզդէն նստեց ջրի ափին ու գլուխը դէմ տուեց փոքրիկ ջրվէժի տակին։

Մի գիւթական հանգստութիւն, մի մեղմիչ զովութիւն ամոքեց ցաւի կսկիծը։

Կոլոտը գտաւ իւր դեղը․ սառը ջուրը փրկարար ազդեցութիւն գործեց։ Աւելի մեղմացուցիչ էր լինում հեղուկ տարրը, եթէ երբեմնապէս մի բարակ քամի, թէև լինէր նա ոչ ցուրտ, հովահարում էր ջրի թրջած տեղերը։

—Ափսո՛ս, ջուրը տաք է, մտածեց Բզդէն, ի՛նչ լաւ կը լինէր, եթէ սուրբ Յովհաննէսի սառն աղբիւրը հեռու չը լինէր, րոպէի մէջ երեսիս ուռուցքները կը նստացնէր։

Երկար չ՚եղաւ նորա մտածմունքը․ անձը քաղցր է, ցաւի խստութեան դէմ տաք առուակն անբաւական էր, նորա արած տպաւորութիւնը վայրկենական էր, ուռոյցը քանի գնում, բարձրանում էր, հզօր միջոցների պէտք էր դիմել, և այդ միջոցը—իւր բուժուելու ամենաճիշդ դարմանը նա գտաւ սուրբ Յովհաննիսի ցրտասառոյց աղբրակը։

Կիզլի-մատուռ, ոսկի, ամէնը զոհուեցին անձի առողջութեանը, բոլորը Բզդէն մոռացաւ։ Ինչ արե՞ց, մոռացա՞ւ, այն էլ Բզդէ՞ն։

Հազար ա՛խ ու վայ արեց, հարիւր անգամ ծնկները ծեծեց, քանիցս քայլերն իրանք իրանց էին մատուռի կողմն ուղղուում, բայց կրկին յետ

էին կասուում։ Թշնամու բանակը քնած չէր․ իշամեղուներից մի քանիսը դաշտումն էլ նրան հանգիստ չէին տալիս, առ ոչինչ համարելով Բզդէի գործ դրած զէնքերը—ձեռքերը, հագուստի քղանցը՝ ձեռք չէին քաշում նրանից․ մի յանդուգը մինչև անգամ իջել էր նորա թիկունքին և իւր բարակ ու սուր կնճիթը շորերի գործուածքների միջումն էր ցցել Բզդէի թիկնամէջը։ Ի՛նչ դժուարութեամբ ձեռք հասցրեց Բզդէն և բռնին հեռացրեց։

—Ո՛վ է իւր գլխից ձեռք քաշել, որ բռների ճանկն ընկնի, կամ ո՛վ կը հասկանայ, թէ ամէն մի բռան երկու երեք թուման փող աժի, թլխմի թուղթը դրպանումս է, էս օր չը լինի, էգուց լինի, դեռ ցաւի կսկիծը հովացնելու ճարը տեսնեմ, ասաց վերջապէս Բզդէն, դարձրեց երեսը դէպի հարաւ և փութաց բռնել Քասախ գետի խոր անցքի ճանապարհը։

Սուրբ Յովհաննիսի աղբրակն էր շտապում նա։

ԺԴ.

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍՆ ԵՒ ԻՒՐ ԱՂԲԻՒՐԸ

Կարբուց դէպի արևելա-հարաւ, Քասախ գետակի ձորաժայռի վերայ, մի գետնափոր խղճուկ գիւղի մօտ գտնուում է մի կիսակործան սքանչելակերտ աւերակ վանք։

Գիւղի կողքովն անց է կենում Աշտարակից Աբարան տանող ճանապարհը, որտեղից շատ հեռու չէ հսկայական շէնքը։

Սովորական անցորդը, կամ անհետաքրքիր գեղջուկը մի բարեպաշտական երկրպագութիւն մատուցանելով կատարած կը համարի իւր պարտքը դէպի քրիստոնէական սրբարանը. իսկ հնախոյզ գիտնականը յանցանք գործած կը լինի, եթէ ժամեր և օրեր չը նուիրէ ճարտարարուեստ և հրաշալի շէնքի ուսումնասիրութեանը։

Յովհաննու վանքն է այդ մեծափառ տաճարը, Արագածոտն գաւառի բազմաթիւ հռչակաւոր վանքերի առաջիններից մինը։

Կար ժամանակ, որ Յովհաննու վանքի պարըսպում շէն էին հարիւրաւոր վարդապետական խցեր իրանց տնտեսատնով, լիառատ մառանատներով, թանգարաններով և ժառանգաւորաց դպրոցով. մի օր Յովհաննու վանքը կենդրոնն էր Արարատեան աշխարհի աստուածաբան հեղինակ մատենագիրների. 700 տարի առաջ էր այդ, իսկ այսօր միայն քարակոյտների դիզուածքներ և պատերի բեկորներ են մնացել նախկին փառազարդութիւններից։

Հրաշաքանչ է Յովհաննու վանքի ճարտարապետութիւնը. ամբողջ շէնքը կոփածոյ կարմիր և սև քարերից պնդապէս ամրացած և շաղախուած են միմեանց հետ. մեծ դժուարութեամբ հնարաւոր է այսօր էլ որմնաքարերի կցուանքը որոշել։

Մի ահագին քանդակալից և դրոշմաւոր յաղթանդամ շինութիւն պարսպի միջակէտումը հպարտ կանգնած՝ զետեղում է իւր մէջ երկու լայնադիր տաճարներ։ Մինը գաւիթն է և միւսը բուն տաճարը։

Հիւսիսից, երևի վերջին դարերում, միացած է փառահեղ շինութեանը մի նոր եկեղեցի սագաձև կամարով։

Երկու կաթուղիկէ հովանաւորում են մեծանիստ տաճարին։

Մինը կանգնած է լայնատարած գաւթի գլխին, ամրացած չորս բոլորակաձև հաստատուն սև ապառաժեայ կոփածոյ սիւների վերայ, իսկ երկրորդը՝ բուն տաճարի գլխին։

Երկուսն էլ կիսաքանդ են։

Թէ տաճարի և գաւթի միջին կողմը և թէ արտաքին երեսը լիքն են զարմանալի նուրբ քանդակներով. զանազան խաչեր և սրբոց պատկերներ են ներկայացնում այդ քանդակները։

Վանքի հարաւային պատի վերայ, դրսևից, վերից վայր ձգուած են երկու խաչաձև կարմիր քարեայ շրջանակների մէջ հարաւային պատուհանները. մի այդպիսի շրջանով ևս մէջ է առել արևելեան կողմից սեղանի լուսամուտը։

Վանքը կանգնած է անդնդախոր ձորի ծայրին՝ քարափների վերայ։

Մի ահագին այր ձորի կողմից մտնում է ուղիղ վանքի տակը։

Վանքի հարաւային կողմը Քասախի ափին ձորի մէջ քարափների խոռոչների մէկից դուրս է ցայտում սուրբ Յովհաննիսի ամենապարզ և վճիտ աղբրակը։

Ոչինչ էջք, ոչինչ ճանապարհ դէպի աղբրակը վանքի պարսպից թոյլ չեն տալիս ամեհի ժայռերը. սեպաձև քարափները դուրս են ցցել վանքի տակի քարայրի շարունակութեամբ իրանց խորթ ու բորդ քիթ ու մռութը, հէնց իմանաս՝ համբոյր տալու ձորի միւս ափերի ժայռերին, իսկ դրանց տակը կաղմուել է անհուն անդունդ, կարծես, վերևից նայել վստահացողին գահավէժ կործանելու։

Ուզում եմ ասել, թէ աղբրակը երկու-երեք հարիւր քայլ հեռաւորութիւն հազիւ թէ ունենայ վանքից, բայց իջնելու ճանապարհ միանգամայն չը կայ։

Հաշուի տակ չեն մնում գիւղական մանուկները. Նրանք գետի յորձանքը ճղելով կարող են միշտ խմել սուրբ Յովհաննիսի աղբրի քաղցրանոյշ ջուրը. Նրանք վայրի այծերից աւելի ճարպիկութեամբ ներքև կը սողան ամէն մի քարանձաւի խորշից։ Քասախի ձորամիջումն երեխաների համար անմատչելի տեղ չը կայ։

Կանոնաւոր և միակ ճանապարհը, որտեղից կարելի է այցելել սուրբ Յովհաննիսի աղբրակին, այդ Կարբու ձորամուտքն է՝ վանքից կէս ժամաչափ հեռի. Նոյնքան էլ կը տևի ձորամուտքից մինչև աղբիւրը։

Նշանակում է՝ Յովհաննու վանքից աղբրակը գալու համար՝ մի ամբողջ ժամ զոհելու է։

Շրջակայ բնակիչների համար նուիրական սրբատեղի է սուրբ Յովհաննիսի աղբրակը։ Ձորի մէջ՝ աջ ու ձախ ափներից՝ շատ տեղեր բղխում են մեծ ու մանր վճիտ աղբիւրներ, բայց նրանից ոչ մէկն այն յարգն ու նշանակութիւնը չ՚ունի, ինչպէս այս ընկուզի տրամագծի չափ հազիւ բղխող աղբրակը։ Ամէն ոք մի ներքին երկիւղածութեամբ է արտասանում սուրբ Յովհաննիսի աղբրի անունը. հազարաւոր հրաշագործութիւններ պատմում են պառաւներից սուրբ Յովհաննիսի աղբրի մասին. Նորա ուխտաւորն անպակաս է։

Հարցասիրական է լսել աշտարակցի երկու պառաւի խօսակցութիւնը. դրանցից մէնը թող լինի հանգուցեալ Քարտաշենց պառաւը, միւսը՝ իրանց հարևան Գիւլբահարը։

—Հաստատ կենայ սուրբ Յովհաննէսի աղբրակը, մեռնիմ նորա տիրոջ՝ սուրբ Կարապետի ոտի տակին, ասում է Քարտաշենց պառաւը. աղջի՛, վեց ամիս էր Հօլիս (Հռիփսիմէ բառի կրճատումն է) դող ու էրոցքի մէջ տանջւում ու մաշւում էր, էլ դրբաց ու ջինդար չը մնաց, որ չը լիացրինք, խունկ ու մոմին հօ՛ հաշիւ չը կայ, որ սրբերի դռներին վառեցինք. մեծ տէր-Առաքելի կապած դողը թրի պէս կտրում է. խեղճ երէցն երեք չորեքշաբթի իրար վրայ կապեց երեխի դողը, ճար ու մունքին չեղաւ.

լալազար ծաղկի նման կարմրաթուշիկ բալէս մի բարակ դերձան էր դառել, ոսկրները մէկ մէկ համարւում էին, քիթը բռնէիր՝ հոգին կը տար. Մնացել էինք մոլորուած, ուշք ու մտքներս միանգամայն կորել էր, սուրբ Յովհաննէսի աղբիւրը, հէնց բռնի, մոռացել էի։ Ասում է՝ ծովն ընկնողը ձեռները կ'ածի։ Լոյս դառնայ տատմէր պառաւի հէրը, որ սուրբ Յովհաննէսի աղբրի անունը չը տուեց, ես ինձն ու ինձ գետինը մտայ. դու մի՛ ասիլ, հէնց սուրբ Յովհաննէսի աղբիւրն է մեր վերայ բարկացած եղել։ Զօրանայ Տրդատս, էն օրն և եթ մի շիշակ, տարեկան, գմբռճիկ թօխլի-ոչխար է առել, ձիու վերայ նստել, առջևը դրել, մենք էլ տուն ու տեղով հաւաքուել ենք, տարել սուրբ Յովհաննէսի աղբրի մօտ մորթել, մատաղ արել։ Աղջի՛, կ'աւա՜տաս, Հօլուս աղբրի սառը ջրովը լողացնելս ու դողն ու էրոցքը դանակի պէս կորիլ կորչիլը մին էլաւ։ Աղիզ քօրփէս (ֆօտրբէնօ) մի շաբթի մէջ առաջուանից աւելի լաւ լցուեց, կարմրեց, վռշնեց, էս օր էլ հօ՝ քո բարի աչքովդ տեսնում ես, գեղի ազափ աղջկերանց աչքն ու մարալն է, թևերն եկել են, էս օր էգուց կը թռցնեն։

—Ընչի՞, քի՛րս (տօյր), դու սուրբ Յովհաննէսի աղբրի զօրութիւնից խամ էի՞ր, մեղադրում է խօսակիցը, դու չը գիտե՞ս, որ ինքն է դող ու էրոցքի տէրը. դարունքը ծէգում է, չորս բոլորքի գեղերից նորա ըխտաւորը չի կտրուում, թուրք ու հայ, ով դողացնում է՝ գալա նրան է վազում, փրկուում ու

չէտ դառնում։ Ես ինքս էլ Մողնու ծեփի տարին [1] էնքան դողացրել էի, որ ուժից ընկել էի, երեսիս գոյնը՝ դեղին զաֆռանը քեզ օրինակ. շատ էլ տապտապում էի՝ օր յառաջ ինձ քցել սուրբ Յովհաննէսի աղբիւրը ու ական առաջին շինած պստիկ գեօլիցը (լճակ) մի երկու փարչ ջուր վրէս ածել, բայց քեզ յայտնի է էն տարուայ ցասում բարկութիւնը, գնայ, ոչ չէտ գայ, խէր բանը (ծանօթութ) Մողնին վեր էր կալել, ռսի սալդատը չորս բոլորքը կապել նստել էր, երկնքի թևաւորներին էլ չէին ուզում բաց թողալ, ո՞վ էր իւր գլխիցը ձեռք քաշել, որ գնայ իր ոտովը կրակը մտնի, կէս սհաթումն ուռուցուորի, սևանայ, անծուխ կորչի ու ճրագի պէս հանգչի. քո միտը կը լինի, կարծեմ, հասած կատարած աղջիկ էիր, էնպէս չի՞, ես երկու տարուան քօղը գլխիս հարսն էի։

—Քա ի՜նչ ես ասում, էս օր էլ աչքիս առաջին է, ընդհատեց Քարտաշենց պառաւը, սալդատների մեծաւորին կանաչ կապիտան էին ասում, մեր տանն էր կենում. դէ՛, էն ժամանակն էնքան այվան օթախները ([illegible]) ո՞վ էր սեւցրել, գեղի լաւ տներիցը մինն էլ մեր էս օրուայ խոտանոց դառած կտեր օթախն էր։ Հէնց էն տարին ես նշանուեցի։ Էն գրողի տանե-

[1] 1840 թուականին էր, կարծեմ, Մողնի գիւղը ժանտախտը աւերեց։ Կառավարութիւնը զօրքով շրջապատեց, հաղորդակցութիւնն արգելեց։ Այդ արգելքը ժողովուրդը ծեփ կամ ծեփել բառով էր արտայայտում։

լուն, ո՛վ գիտէ, մեռած է՞, թէ կենդան, իր գործքովն իրան օղորմի, մի օր Թունդրի համար աթար ([illegible]) ներքև ածելուս՝ մին էլ օթախիցը դուս եկաւ ջրի փարչը ձեռին ու ոտով գլխով ինձ հասկացրեց, թէ գնա՛, ջուր բե՛ր։ Դէ՛, նորա աչքին ո՛վ էր երեւում, շուաքը տեսնելուս՝ օխտը պուճախն էինք ներս պրծնում, մէրս մահի կը տար, հէնց ահ էր տուել ինձ ու մեր լսի բաժին ջրատար Թէլլուին՝ պստիկ աղւորս նշանածին ([illegible]), խեղճն երկու տարէն հարսն էր. հէնց որ լսում էինք, թէ ոտները բակումը ման են գալիս, մենք տեղներս սսսում էինք։ Սատանական էր, էդ օրը մէրս գնացել էր մեր խնամի Մայրանին գլուխ ապրէք ([illegible])՝ իր փարբեցի հարսի մօր աշխարհքիս ցաւ ու դարդիցը ազատուելու համար. տղամարդկանցից էլ մեր տանն ոչ ով չը կար. ես էլ գիտէի, որ կռնատ կապիտանը տանիցը հազարիցը մի անգամ չի դուրս գալիս, արևէլին բարձրացայ կտուրն ու աթար ներքև թափեցի։ Էն էի ասում, աղչի՛, որ ցանկարծ դուռը բաց չ՚արեց ու շէմքի վերայ կանգնած փարչն ինձ մէկնեց, միս փշաքաղուեց։ Ճարն ի՞նչ, գնացի, լցրի ու աղլուխս ընչանք պնչիս ծէրը ցած քաշած՝ գլուխս կրծիս մէջ կոխած՝ վերև բերի։ Տեսայ՝ դուռը ծածկել էր ու ներս մտել։ Սիրտ չ՚արի, որ տուն մտնեմ, դուռը կամաց ծեծեցի։

—Պե՛ր, ձէն տուեց կռատ կապիտանը ներսից։ Մեր տղէքն ասում էին, թէ հայերէն կենո երեք

խօսք գիտէ—բ ե ր, հ ա ց, ջ ո ւ ր. էն էլ սուտ ու սխալ էր ասում. բ ե ր ասելու տեղակ՝ ասում էր պ ե ր, հացին՝ խ ա ց, ջրին էլ՝ չ ո ւ ր։

—Ի՞նչ անեմ. ահահար, դողահար դուռը կամանց ճռռացրի ու սիրտս լքլքալով տուն մտայ։ Ի՞նչ ես ասում, ա՛յ մէրս, մտիկ եմ տալիս, օթախումը մարդ չը կայ։

—Բաս ո՞ւր կորաւ; սատանայ հօ չէ՞ր, որ գետինը վէր խորտակուէր, ի հարկէ, մի տեղ կուչ եկած կը լինէր, խօսքը կտրեց խօսակիցը, երևում է մտքումը չարը բնակալած է եղել։

—Սուտ չես ասում, շարունակեց Քարաշենց պառաւը, գրողը նորա բկիցը կպչի՛, նրան խեղդի՛, ջրի փարչը պատի տակին վէր քցեցի ու ետ դառայ թէ չէ, մին էլ էն տեսնեմ, էն սև սրտին դուռը ծածկել է ու միջքով դռանը դէմ ընկել. դու մ՛ ասիլ, փորումն օձեր է ունեցել. քա՛, ի՞նչ ես ասում, աչքերս սևացան, բերանս տաք ջուրը կոխեց, ոտներս բռնուեցին, տեղն ու տեղս մխուեցի, ճնացի, երբ որ էն ծակծկոտուելուն ժանիքը ցէտ բացարած՝ լիրբ աչքերով ինձ մտիկ տուեց։

—Հողե՛մ նորա գլուխը։

—Ոնց որ մի նետ օձ, մին էլ էն տեսայ՝ ունեցած չ՚ունեցած ձախ ձեռքը շլինքովս է փաթաթել, ուզում է թուշս բերանն առնի։ Ընտուր են ասել՝ Աստուած սարը կը տեսնի՝ ձիւնը կը դնի։ Աստու ողորմութիւնն էր, որ աջ ձեռքն արմնկիցը կտրած էր։

—Է՛... յետո՞յ... հետաքրքրութեամբ բերանը կիսաբաց՝ հարց տուեց Գիւլբահարը:

—Յետոյ նորա խնդո՛ցը, թէ իրան կեր կըլնէի, բերնի տաք գոլը որ երեսիս չը դիպաւ, ոնց որ տկի բերանից դուս փչած արաղահոտ: Դեռ յառաջ ծնկներս մի րոպէ ծալուեցին, քիչ մնաց՝ էն քօռանալու պռօշներն երեսիս էր առնում: Մին էլ, հէնց իմանաս, թէ զինաւոր սուրբ Գէորգը կարմիր ձիու քամակին ինձ օգնութիւն հասաւ. մի էնպէս ծուռց բարձրացրի, որ օճուքը թնդաց, գերանները դողացին ու երկու ձեռքով որ դօշին հուպ տուի, ձեռը շնքիցս պոկ եկաւ ու թիկունքի վերայ թրխկալով՝ գետնին փռուեց. բարդու ծառը քեզ օրինակ, որ կտրում են ու շուռ տալիս:

—Այ թէ աչքը հանել ես:

—Ընչանք կռնատ կապիտանն ուժը կը հաւաքէր, խելքը գլուխը կը գար ու վեր կը կենար, ես շունչս մեր հացատանն առայ, ու ազատուի՛ ամէն հայ-քրիստոնեայ խաթից ու փորձանքից, ինչպէս որ ես ազատուեցի: Էլ էդ բանից յետոյ՝ օձի մի՞ս էլ կերել, որ ոսս կտուրը գնէլ՝ քանի էն գրողի խեղդածը մեր տանն էր կենում: Լա՛ւ, որ Աստուած աշխարհքի աղօթքը լսեց, խեղճ եկաւ, խէր բանը (ժանտախտ) վերջացաւ, ճամփէքը բացուեցին:

—Ախար խօսքդ մոռացար:

—Հա՛, էն էի ասում, շարունակեց Քարտաշենց պառաւը, էդ օրուանից դողը ջանս մտաւ, էլ դուս

չը գնաց. օրէց օր հալ ու մաշ էի ըլնում: Էդ հերիք չէր, մի առաւօտ էլ լուսադէմին կուժն ուսեցի, ծէգծէգելահան գնացի ջուրը: Քուչէքում Աչամորդի չը կար, առուի վերայ՝ ջրլցքումը՝ մի հարս, մի աղջիկ չէր երևում: Ես իմ կարճ խելքովս կարծել եմ, թէ որտեղ որ է, լոյսը կը բացուի, աղօթարանը կը կապըտի. սիրտս հանգիստ մօտենում եմ ջրլցքին, կուժը լցնում, հանում, առուի ափին կանգնացնում, ուզում եմ, սաքի թէ, երեսս լուանամ, կուժն ուսեմ, յետ դառնամ: Դեռ երեսս մի անգամ էի չոփ տուել (ջուր ցրուէլ), մին էլ առուի մէկէլ երեսին աչքիս առաջին մի կատուի չափ մարդ է ցցուած. ոչ աւել, ոչ պակաս՝ մեր պոչը ծաղիկ սև կատուն քեզ օրինակ:

—Յիսո՛ւս ու Քրիստո՛ս, երեսին խաչ հանեց Գիւլբահարը:

—Այ քեզ մատաղ, էս պտիկ մարդը քիչ քիչ ձգուեց, ձգուեց, երկարեց, բարձրացաւ, դառաւ Ձանճապանենց մեծ բարդի ծառի չափ, հաստութիւնն էլ՝ Խէչանենց պոպոքի ծառից երկու անգամ աւելի:

—Աղջի՛, բա դու նստել մտիկ էիր տալի՞ս, ախար ալէք է էլել:

—Հողը գլխիս, ցեխն արևիս էի մտիկ տալիս, զո՛րթ է, աչքերս բաց էին, բայց միջին լոյս մնա՞ցել էր, կամ գլխումս զօրութիւն կա՞ր բան հասկանալու. մին էլ տեսայ, որ էդ ալքը թռաւ ջրի մէջը ու լոք

լոք տալով՝ իմ կողմն է անցկենում: Դէ՛, Ցիցոյի թո՛ռը, տներդ իրար տո՛ւր: Ծտի պէս տեղիցս վեր թռայ ու երեսս յետ շրջեցի: Էլ չը գիտեմ, ո՞րքս դիպաւ, թէ ալքը լափեց կժին ու փշրեց. չըխկոցի ձէնն ականջս ընկաւ, բայց ես էլ չը կանգնեցի, մինչեւ տուն մի շնչի փախայ ու տեղաշորիս վերայ փռուեցի: Էլ հո՛ աչքս չը փակուեց, ուրիշները դրանից յետոյ օխտը հանգ (անգամ) քնեցին, նոր լոյսը բացուեց:

—Վա՛յ թէ ձեռաց դողդ կտրուեց. դող ու երոցքը մի փուչ (չնչին) բանից կտրուում է:

—Ինչ էլա՞ւ. դու ոչ մեռնիս, դողացնելը դու ըտուց յետոյ տե՛ս, ատամներս որ իրար չեն կպչում, կասես, ջաղացի չախչախ, ձեռ ու ոտս՝ ոնց որ մի ուռու լեզուակ տերեւ՝ թունդ քամու առաջին:

—Բաս վերջը դողդ ո՞նց կտրուեց:

—Դրախտումը ծլվլա՛ս, դու իմ ջրատար մէ՛ր, խեղճի հոգին դուրս եկաւ. ոնց որ դու ես ասում, էլ բան չը մնաց՝ արինք: Շատերը խորհուրդ էին տալիս՝ Թաքիա գեղի թուրք օձ մանածող Օջաղօղլուն բերել, որ օձի գլուխը լեզուիս վերայ դնի, աղօթի, բայց ո՞ւր էր ճանապարհ, անտէր կեր ցաւը (ծառատխա)՝ ոնց որ երկնքից վէր ընկած՝ մտաւ Մողնի գեղը, անսուր, անդանակ բրդեց խեղճ մողնեցոնցն ու ողջ գեղը ծրագի պէս հանգցրեց. դրա պատճառով ամեն կողմից ճանապարհները կապուեց, գնալ գալը, ոտքը կտրուեց, էլ ի՛նչ Օջաղօղլի, ի՛նչ օտա-

րական. սալդատի ահից ո՞վ էր տանից դուրս գալիս:

—Ախչի՛, հիմի էդ ուխ արածն Աստծուն ընդդէմ չէր գա՞լ, որ ճամփէքը կտրել էին, սաքի թէ ցաւն ուրիշ գեղ չ՚անցկենայ:

—Հօ՛, քո աչքո՛վդ տեսար, որ ցաւը Մողնուցն էն կողմը չ՚անցկացաւ. Աշտարակը Մողնուց շատ հեռու է՞, ձէն տաս՝ կը լսուի, մի ուլի քիթ խռուե՞ց. Կարբին, Փարպին, Պատի գեղը, Յուշին Մողնու չորս բոլորքի գեղերն են, հինգ օրէն ճանապարհ հեռու չեն, ընչի՞ մնի մի տեղը չը ցաւեց ու մենակ Մողնին հողէց—հողի կրաւ:

—Քա՛, խեղճ ես, հոգուդ մեղք մի՛ անիլ, Աստծուն էլ ընդդէմ չը լինի, դէ՛, էն է Աստծու բարկութիւնն էր, Իր հրամանն էր, որ կերցաւը Մողնումը գոյանայ, ընտեղ էլ վերջանայ, թէ չէ ցաւը մա՞րդ է, որ թօփ ու թուանքով, գիւլլայ-բարութով յառաջը կարես, տուն չը թողաս. Աստծու տակիցը փախչել չի լինիլ, մէ՛րս, դու քո խօսքդ մի՛ մոռանալ. յետոյ ո՞նց արիր, որ դող ու երոցքդ պրծաւ:

—Մենք մի մեծ, չալիկ-մալիկ աքլոր ունէինք, էնքան նախշուն ու սիրուն էր, որ արեւի տակին փուփռում էր, պոչի ջղէն (ափաղաղի պոչի երեւոյթ փետուրը) քրդի թրի պէս կռացել էր. տեսնեմ՝ մի օր մէրս բռնել է, գոգնոցի մէջ փաթաթել:

—Դէ՛հ, մաշկներդ տներդ անցկացրո՛ւ, ասեց, ուր որ կ՚երթամ՝ քամակիցս անխօս արի՛: Ես էլ

ի՞նչ խրատունք ունէի՝ պռօշս պռօշիս տամ, կամ բան հարցնեմ, հորթի պէս ետևիցը վազեցի։

—Մտել ենք ձորը, ուռի ծառերի փունջերովը (մոցառոսփ) անդադար վերև ենք բարձրանում. ընչանք Մողնու ձորն անցկացանք, մէրը մեզ հասաւ, ծառ չ՚եղած տեղը կուզէ-կուզ ենք գնում, որ չը լինի՞ թէ ձորի թմբից մի սալդատ տեսնի ու գլխներիս տայ, յետ դարձնի։

—Էլ ի՞նչ յետ կը դարձնէին, կը տանէին գեղից դուրս շինած կարախտինումը (չարտախին) մի շաբաթ կը պահէին, օրն երեք անգամ մուխ կը տային։ Միտդ չի՞, դժուարն էն էր գեղիցը դուս գայիր, բռնում էին մխակոլոլ անում։

—Դորա համար մենք էլ կուչ ու ձիգ անելով, շուաքներիցս վախենալով, խլշկոտալով՝ ոնց եղաւ, մեզ քցեցինք սուրբ Յովհաննէսի աղբիւրը։ Կարբեցի երեխէքը գետումը ձուկն էին բռնում. մէրս կանչեց, աքլորի գլուխը կտրել տուեց, կրակ արեց, աքլորը փետրահան արեց, սուրբ Յովհաննէսի իրան գլգլան, զուլալ ջրովը լուաց, լաւ պէս սիպտակցրեց. քեզ յայտնի է, փայտէ շամփուր էն տեղ հարիւրներով կայ, գնացողը շինում է, մատաղը խորովում ու քարափի տակին թողում։ Մէրս շամփուրն անցկացրեց, խորովեց ու էն տղէքանցն ուտացրեց. խեղճը ոչ ինքը մի կտոր բերանը դրեց, ոչ ինձ մասնաւորեց։ Ցեսոյ երեխէքանցը հեռացրեց, շորերս հանեց, աղբրի ջրիցն օխտը բուռը վրէս ածեց, լեղացրեց։

—Մեռնի՛մ սուրբ Յովհաննէսի զօրութիւնին, էն է՝ կը փրկուէիր էլի՛։

—Իմ երկու ջուխտ, մի կենտ աչլան տղէքանցս անունովն եմ երդւում, ամեն ցաւ ու չոռ էն տեղ թողի, 40, 50 տարիներ են գլորուել էն օրից, ի՛նչքան լաւ ու վատ ենք տեսել ու իմ ջանս դող ու էրոցքը չի իմացել՝ ի՛նչ բան է։

—Աղչի՛, դու լսել ե՞ս, ասում են էդ տեղ յառաջ աղբիւր չի եղել։

—Բաս ե՞րբ է դուրս եկել։

—Իմ տատս պատմում էր, թէ սուրբ Յովհաննէսի ժամ շինող վարպետը դողացրել է. մարդը հալւում, ուժից ընկնում է. շինութիւնը կանգնում է։ Ժամ շինել տուող վարդապետը շատ դեղ ու դիր է անում, ամեն ժամարարի դողը կապել տալիս, է միաբանքին տէր ողորմեա է չոքացնում, ճար չի լինում. նորա ձեռի գործը հնդստան էլ չեն կարող դուրս բերել։ Ի՞նչ անի վանահայրը, հօ՛ էնպէս փառաւոր տաճարի շէնքը անփորձ մարդկանց ձեռքը չէ՞ր քցիլ, շէնքն ու գեղեցկութիւնը կէս փող չէ՞ր շինիլ. ճարը որ կտրում է, ուխտ է անում, որ եթէ սուրբ Յովհաննէսն էս դժուարութիւնին մի հեշտ ճանապարհ ցոյց տայ, ինքը մի շաբաթ անսուաղ կը կենայ, մի տարի էլ օրը մի ձեռնաչափ չոր հացով կ՚ապրի։ Սուրբ մարդի ձէնն Աստուած կը լսի. հէնց էն գիշերը սուրբ Կարապետը դրան երազ է գալիս, թէ վարպետիդ տա՛ր ձորը, դուշ արած (է

գուշմօ տնչեղ) քարի տակին մի նոր աղբիւր եմ բղխացրել, նորա ջրից օխտը գաւաթ վրէն լցրո՛ւ, լեղացրո՛ւ, բե՛ր, հանի վանքի գլուխը, թող աշխատի:

—Հէնց էն օրից դէսն էդ աղբիւրը դողի փրկութիւն է:

—Բաս չե՞ս ասում, թէ ի՞նչ քաղցր ջուր է, խմելով չես կշտանում, մի թլլիկ գառը մենակ կեր, էն ջրիցը խմի՛,—կը մարսէս:

Այս և սորա նման շատ հրաշքներ են պատմում սուրբ Յովհաննիսի արծաթափայլ աղբրի մասին Արագածոտն գաւառի բնակիչները և, որ գլխաւորն է, ջերմողներից շատ սակաւին չի յաջողել դիմել, լողանալ և չ՚առողջանալ:

ԺԵ.

ՇՈՂԻԿԸ

Վազում էր Բզզէն գնդակահար էրէի նման դէպի սուրբ Յովհաննիսի աղբրակը, բայց մի քանի անգամ ոտքը ծանրացրեց: Նա տատանում էր թողնելու Կիզի-մատուռը և իշամեղուներին. բրէն ու կռան այնտեղ ընկած են, զանգակատան լուսամուտը քանդուած է, բոռերն այնտեղից չեն հեռացել, մէկը ներս կը մտնի, ամէն բան կը պարզուի և ինքը կը զրկուի ոսկիներից:

—Ե՛հ, թէկուզ մտնեն, ի՞նչ կարող են անել, հաստատապէս վճռեց Բզզէն, ամենաշատը՝ լինգն ու

գուրզը (Բրէն ու չօսո) պէտք է տանեն, բոռերը հօ՛ թևաւո՞ր են, թլիսմի թուղթը հօ՛ մօտս ունիմ, էլ ո՞ւմից եմ վախենում:

Նա ապահովացաւ և շտապեց տեղ հասնել, մինչ աչքերի ուռոյցը չի փակել իւր տեսութիւնը. արևի կիզիչ սաստկութիւնն իւր զօրութիւնը գործ էր դնում, աչքերը կարող էին բոլորովին ծածկուել և նա ամէհի քարաժայռի գլխից խոր անդունդը կը գահավիժուէր:

Ենթադրութիւնն իրողութեան փոխուեց. մօտ էր ձորի հունն իջնելու, որ Բզզէն էլ ոչինչ չը տեսաւ և ոչինչ չը հասկացաւ, մի «վա՜յ» միայն լսուեց և ոտքերը գետնից կտրուեցին:

Անդունդը կուլ տուեց մեր հերոսին:

Էլ Բզզէ չը կայ աշխարհի երեսին, ձեռքներս լուանանք:

Ոչ, չը յուսահատուինք, մենք այդպէս շուտ չենք զրկուիլ մեր սիրելուց. նա կորաւ, բայց կրկին լոյս աշխարհ եկաւ:

Ջրի յատակումը՝ ձորաթմբի ստորոտով վազում է գոչգոչալով Քասախի վտակը. դա մի արհեստական ճիւղք է գետակից հանած. Կարբու ջրաղացների հաստատկոլոլ աղօրիքը պտտեցնող ջուրն է դա, ջրաղացի առուն է: Նա շատ խոր չէր, բայց սրընթաց էր և լայն:

Բզզէի գահավիժուած ուղղութիւնից փոքր ինչ ներքև՝ ջրաղացի առուի վերայ՝ մի անհեթեթ

օտարոտի մարմին վեր բարձրացաւ ջրի տակից, աշխատեց ամրացնել իւր ոտքը և դիմադրել ա-րագավազ ջրի հոսանքին, բայց կրկին ծնկներն ընկրկեցան և նա սայթաքեց ու երեսն ի վայր փռուեց ջրի մակերևութի վերայ:

Մի քանի գլորումն և կանգնումն՝ և խեղդուողին օգնութիւն հասաւ առուի թմբանը անկած սաղարթաշատ ուռենու դէպի ջուրը հովանաւորող ոստը:

Տարօրինակ մարդանման երկոտանին գրկեց ուռենու բունը և դուրս սողաց առուի միջից:

Դա Բզզէն էր, որ վերոյիշած քարափից վայր էր գլորուել ուղղակի առուի մէջ:

Նա այժմ կանգնած է առուի ափին և մեքենաբար գլուխը շարժում է:

Նա թրջուած է ամբողջ մարմնով, ջուրը ծլծղալով հոսում է նորա վրայից, իսկ Բզզէն ամենևին ուշադրութիւն չը դարձնելով իւր անբնական դրութեան վերայ՝ փառաւորապէս տեղն ու տեղը պառկեց թաց խոտերի մէջ:

— Օխա՜յ, էս ի՛նչ լաւ էր, երկար ծորելով արտայայտեց նա իւր ինքնաբաւականութիւնը, բոռերի կծած տեղերի կսկիծն ու մրմուռը կորաւ, հովացայ ու հանգստացայ, ի՞նչ ցաւ, թէ թրջուեցի, արևն էնքան թէժ է, որ ձուն կը խորովի, շատ չի քաշիլ, էլ յետ կը չորանայ:

Բզզէն իրաւունք ունէր. ջուրն իւր փրկարար

ոյժը ի գործ էր դրել. իշամեղուների խայթիւնի սաստկութիւնը մեղմացել էր:

Վայրկենական էր ցաւի հանգստութիւնը, արևի տաքութիւնից կսկիծը նորից խստացաւ:

Այս անգամ Բզզէն հաստատապէս իւր դեղը գտաւ. պառկած տեղից ձեռքով ջուրը սկսեց վերցնել առուից և գլխին ածել:

Նա զգում էր զովութիւն:

Հետզհետէ Բզզէի աչքերի կոպերը յետ բացուեցին, հագուստի ջուրը քամուեց և սկսեց փաշաշել (փոքր ինչ ցամաքել). Նա վերկացաւ շտապելու դէպի սառն աղբիւրը:

Յանկարծական կատաղութիւնը Բզզէին ընդգրկեց: Նա ձեռքը գրպանը տարաւ, երկու հատ ոսկիներն էին միայն. կախարդական եռանկիւնի փաթեթը չը կար, թլիսմը գրպանից վայր էր ընկել, ջուրը տարել էր:

Ամեն ցաւ ու կսկիծ մոռացութեան տրուեցին. Բզզէն այս անգամ ինքը մտաւ առուն և ջրի ափերի խոտերը նշմարելով ու տնտղելով ներքև էր գնում:

Թուղթը չը կայ, որ չը կայ, արագահոս ջուրը վաղուց ջրաղացի նաւի շեշտակի հոսանքի մէջ քայքայել է թղթի շաղախը, թլիսմի թուղթն անշուշտ ոչնչացել է:

Բզզէն սակաւ մնաց իրան կորցնէր. նա մի տեսակ դուրս եկաւ առուից և սրտակոտոր վայր ընկաւ կրկին առուի թմբանը:

Նա լալիս և հեկեկում էր։

Յուսահատութիւնը շատ կարճատև էր։ Յակարծական ոստիւնով վեր ցատկեց Բզզէն պառկած տեղից և քիթը քամի մտած, ճակատը ծալիկ, կռմբոլ (չ[illegible]) գոմշի հայեացքով աչքերը լարեց դէպի իւր եղած տեղից բաւականին հեռու գետափին գտնուած Կարբու ջրաղացի դուռը, ուր կանգնած էր մի դեռահաս երիտասարդ և ձորն ի վեր դէպի արևելք սպասողական դրութեան մէջ նայում էր։

—Այ, իմ աչքի փշերից մէկը, մրթմրթաց ինքն իրան Բզզէն. երկու տարի է՝ ջհուտ Աղաջանը բերանիս իւղոտ պատառը խլել, սրան է ուտեցնում. իմ չարչու ապրանքս բոլորից աւել Աշտարակումն էր փող դառնում, հիմի Աղաջանն այնտեղ խանութ է բաց արել ու սրան մէջը նստացրել, ի՛նչ է՝ թէ իրան փեսայ պէտք է շինի։ Տե՛ս, տե՛ս, ինչպէս սիրտը հանգիստ կանգնած՝ մտիկ է տալիս երկնքին, երևում է՝ էս աշունք պսակուելու է, իւր հարսանիքի ալիւրն է եկել աղալու. ինչի՞ չի աղալ, ի՞նչ կ՚ասի, որ չի ուրախանալ, ինձ պէս չարչութիւն անելով՝ բօշէքանց նման գեղերը չի քարշ գալիս, անքրտինք, անվաստակ հացի վերայ է տուն գալու։

Բզզէն սպառնալից կատաղութեամբ գլուխը թափահարեց դէպի իւր համագիւղացի Բատինենց Կարապետի որդի Սհօն—Աղաջանի ապագայ փեսացուն։

—Ա՛խ, թէ որ սատանէն կռանս կը կենայ, էս իրիկուն Կիզլ-մատուռի բոռերը քսակս կը մտնեն ու

կուչ կը գան, ես գիտեմ, թէ ի՛նչ հացի կը հասցընեմ ջհուտ Աղաջանին ու քեզ, Սհօ՛ ջան, խորխտաց Բզզէն երիտասարդի վերայ, անուշադիր թողնելով այն կէտը, թէ Սահակը ոչ տեսել է իրան և ոչ մտածում է, թէ աշխարհքի երեսին մի աներևոյթ թշնամի է ստեղծել իւր համար։

—Ի՞նչ եմ ասում, նորից կսկծալի մորմոքով լաց եղաւ Բզզէն, մեղաւորին ո՞վ է տուել արքայութիւն, ընչո՞վ եմ պարծենում, մոռացել եմ, որ թլիսմի թուղթը չը կայ։

Մի՝ խոր հոգւոց վհատեցրեց Բզզէին. մի քանի ակնթարթ լուռ էր նա և անզգայօրէն նայում էր դէպի Սահակը։

—Ի՞նչ եմ յիմարացել, յական թօթափել ոգևորուեց նա, շատ լաւ եղաւ, որ թլիսմը կորաւ. ոսկիքը հիմի թևաւորուել են, բոռ են դարձել, ուր որ գնան, իրիկունը չեն դառնալու Կիզլ-մատուռը. թէ որ զանգակատան լուսամուտը թուղթը դրած մնար, բոլոր բոռերը կը թռչէին, Սպահան կ՚երթային, իրանց առաջուան տիրոջ սնդուկը կը մտնէին. հիմի նրանք իմն են ու իմն. ցորեկով մատուռին բոռերի ահից մարդ չի մօտենալ, էս գիշեր նրանք իմ ծոցումս բուն կը դնեն։

—Սպասի՛ր ուրեմն, ջհո՛ւտ Աղաջան, բռունցք արեց Բզզէն և կուռը քաջ կռփամարտի նման օդումը ճօճեց. մի քիչ ժամանակ էլ քաղցր երազներ տես ու գիշերները թաքուն նշանածիդ հետ պատի քա-

մակից քէփչա՛, Բաւինի Թոռը Ահօ՛, շատ չի քաշիլ, դուք կը ճանաչէք Բղդէին։ Դեռ ամենից առաջ բուերի կծածները լաւացնեմ, երեխու ուռուցքները նստացնեմ, էս իրիկուն էլ ոսկիքն իմը շինեմ, յետոյ ձեզ հետ կը խօսեմ, ձեր աչքին կ՚երևամ։

Անիւի նման մի ոտքի վերայ պտոյտ արեց Բղդէն, երեսը դէպի արևելք դարձրեց և շտապով ճանապարհ ընկաւ դէպի սուրբ Յովհաննիսի աղբիւրը, երբեմնապէս տեղ տեղ կզուելով առուի վերայ և գլուխը մէջը խորասուզելով։

Ահա՛ մօտ է Բղդէն աղբրին. ահա առուի թմբան նեղ շաւիղն արգելող մի քարափ, որի ստորոտով պէտք է շրջան անի նա և տասը քայլից փափագին հասնի։ Եթէ Բասալս գետի բարձրաձայն խողխոջիւնը մի խուլ արձագանգով բռնած չը լինէր ամբողջ ձորը, աղբրակի կարկաչիւնն այս քարի ետևից լսելի կը լինէր։

Առուի թմբանն անսահման ժամանակից ընկած այս մեծ ժայռը բնական սահման է դարձել սուրբ Յովհաննիսի աղբրի առաջը փռուած փոքրիկ սիզաւէտ տափարակին, որի արևելեան կողմում կանգնած է մի հատիկ դժնիկի մեծ և ոստաշատ թուփ։

Ժողովրդի հասկացողութեամբ, սուրբ Յովհաննէսն ինքն է տնկել և աճեցրել այս փշի ծառը, որպէս զի ջերմ ու տենդով հիւանդները երբ գան բժշկուելու իւր աղբրի ջրով, նրանք կարող լինին ազատ համարձակ մերկանալ թփի միւս կողմը և

աղբրակի ջրով լուացուել, լցնելով իրանց վերայ եօթը գաւաթ ջուր. իսկ ցաւը հետները յետ չը տանելու համար՝ հիւանդները պարտական են կտրել իրանց հագուստի քղանցից մի կտոր և կապել փշոտ թփի ճղնիկներից մէկին։

Այս իսկ պատճառաւ է, որ փշի մեծ թուփն իւր վերայ կապկպոտած հազարաւոր գոյնզգոյն ծուէնքների շնորհիւ նմանում է մի մեծ ծաղկի փնջի։

Մի վերջին անգամ սահմանաքարի արևմտեան երեսին Բղդէն գլուխը թաղեց առուի մէջ և կամեցաւ քարը բոլորուել։

Երկու քայլ՝ և նա տափարակի վերայ էր։ Բայց կօլոտ չարչին փոխանակ յառաջ գնալու՝ գնդակի արագութեամբ յետ ընկրկեց և տեղն ու տեղը քարի տակին կուչ եկաւ ու շունչն իրան քաշեց։

Խռիւներն ու խոտերը նրան ծածկեցին։

Բղդէն մնաց բերանաբաց, աչքերի բիբերը լայնացան, յօնքերը ճակատը թռան, ջղերի չափազանց ձգողականութիւնից երեսի ուռոյցն էլ տեղի տուեց։ Այս դրութեան մէջ նա ահռելի էր, կատարեալ սֆինքս էր դարձել. լա՛ւ, որ իրան չէր տեսնում, ապա թէ ոչ, երկիւղից սրաճաք կը լինէր։

Ի՞նչ էր Բղդէին այլակերպողը, ի՞նչ երևեցաւ աչքին։

Ճիշդ աղբրակի ական մօտ ընկած էր մի պղնձեայ գաւաթ. փոքր ինչ հեռու՝ գետնի վերայ

թափած էին մի երկու կանացի հագուստ, իսկ արեւի տակին կանգնած էր մի չքնաղահրաշ նորատի գեղեցկուհի։ Մի ուրիշ, միջին տարիներով կին մայրական գգուանքով հագցնում էր գեղանի աղջկանը։ Կարմիր կերպասի շապիկն արդէն ծածկել էր դեռահաս պատանի աղջկայ մարմինը։

—Ոսկի կոճակդ ինքդ կախի՛ր, մինչեւ ես արխալուղդ բերեմ, Նողի՛կ ջան. մի քիչ յառաջ գնա՛ դէպի արեւի տակը, քարափի շուաքը վրէդ ընկաւ, կը մրսես։

Խօսողը հասակաւոր կինն էր։

—Ձեմ մրսիլ, աղէ՛ (մայրիկ), ասաց սիրունիկը եւ սկսեց ժողովել շապկի օձիքը, որ յետ էր բացուած եւ տակից երեւում էր լուսափայլ լանջը, որի վրայ բարձրացել էին օրիորդական թարմ ստինքը։

Դեռ չէր ծածկել աղջիկն իւր փղոսկրեայ, թզաչափ բարձր, հոլանի, սպիտակ կարապային պարանոցը։

Մենք չենք կարող գուշակել, թէ ի՞նչ էր անցնում այն րոպէին աննման գեղեցկուհու մտքից, բայց նա խոնարհեցրեց իւր գլուխը, բոլորակ, սեւաթոյր եւ խոշոր աչքերը մի րոպէ սեւեռեց իւր մարմարոնեայ լանջին եւ մի հեզահամբոյր կարճատեւ ժպիտ խաղաց նուրբ շրթունքների վերայ. նա երկու ձեռքով յետ տարաւ կրծկալը եւ կանացի հպարտութեամբ նայում էր խանդաշատ աչքով բնութեան թանգագին պարգեւներին։

Աննման էր աղջիկը. յունական ծովային փրփրազգեստ յաւերժահարսն էր նա, որ ցնդեցնելով Յոյների գոռ պատերազմասէր աստուածներին, թեւածել էր հայ աշխարհը՝ Արագած լերան ստինքից բղխած Քասախի անմահական կաթնով լուացուելու եւ հայ ամպամած լեռնածոցերի անհամար քարայր-պալատների մէջ պար առնող ողջամիտ եթերականներին իւր ոտքի տակ ծունկ չոքեցնելու համար։

Բայց հողեղէն գիւղացին իւր համանման մահկանացուի վերայ միայն կախարդական ոյժ ունի. մինը գտնուեցաւ, որ ականատես եղաւ այս տեսարանին եւ, ինչպէս ասացինք, ոտքերը դողացին։

Մայր ու աղջիկ, անկարծիք, կը լսէին նորա ոտնաձայնը, եթէ նրանցից մինն իրանով զմայլուած չը լինէր, իսկ միւսը դստերը հագցնելու հոգսով չը լինէր զբաղուած։

—Նուռ կուրծքդ կապի՛ր, Նողի՛կս, քաղցր յանդիմանութիւն կարդաց մայրը, մեռնի՛մ կոկոն վարդերիդ, շատ չի քաշիլ՝ կը փթթին, կը բացուին ու խելքամաղ կ՚անեն նշանածիդ։ Ախչի՛, սատանէն հակառակ է, հիմի որ էս խոտերի միջից, կամ քարափի ետեւից Սհօն քեզ մտիկ տար, հօ՛ կը գժուէր։

Աղջկայ երեսը շառագունեց. նա շտապեց փակել կուրծքը եւ հագնուել։

—Ախար դու չը գիտես, յառաջուց ես Սհօյին ասացի, որ քեզ բերելու եմ վրէդ ջուր ածելու. ինձ խնդրեց, որ իրաւունք տամ հետներս գալ. ես նրան ասացի, որ կարող է հեռու հեռու ման գալով մտնել

ջրաղացն ու սպասի. ինչքան էլ լինի, ձոր է, լաւ չի առանց տղամարդի երկու հոգւով գիւղից էսպէս հեռանալ. հիմի մենք ջրաղացի առաջովը կանց կենանք, խեղճը մարաղ մտած կատուի նման քամակներից պէտք է քաշ գայ։

Ծողիկը ոչ մի խօսք չ'արտասանեց։

—Հիմի, ասում եմ, էդ քո սատանայ Սհօի սիրտը համբերած չը լինի ջրաղացումը, էս խոտերի միջին, կամ քարափների տակին բուսուն (փոքրան) մտած լինի՝ ի՞նչ կ'անես. ախար տղամարդիկը բոլորը յետ եկածներ են։

—Լա՛ւ չես արել, աղէ՛, որ թողել ես նրան մեր ետեւիցը գալ. լողն ի՞նչ կ'ասի. հայրս կ'իմանայ, կը բարկանայ։

—Ոչով էլ չի լսիլ, հերդ էլ չի նեղանալ, գողնովի ի՞նչ ունիմ, իմ փեսացուն է, իմ աղէն է, երկու երեք ամսից դու նրանն ես, նա քոնը, երկուսդ էլ մերը։ Մեռնի՛մ Սհօիս սև սև բեղերին, ի՞նչ բաղդաւոր աստղի տակ է ծնել, քեզ պէս մարալն ու ջէյրանն իրան բաժին է ընկել, քո հատը Հինդ ու Հնդստանումը չը կայ։ Փառքի՛դ մատաղ, Աստուա՛ծ, ո՞վ իմ պէս խորոտիկ աղջիկ կ'ունենայ. էս երկու շաբթուան դող ու էրոցքը քեզ մի քիչ հալեց ու մաշեց, սպասիր, սուրբ Յովհաննէսի զօրութիւնով էլ յետ լցուիս ու գիրանաս, տեսնեմ՝ թէ քեզ ո՞վ կը հանի։

—Ես պատրաստ եմ, աղէ՛, գնանք, քանի օր

կայ, կ'երևի, մօր խօսքերն ընդհատելու համար՝ ասաց վերջապէս Ծողիկը։

—Որ էդպէս է, հին անթարուցդ մի ծլանք կորի՛ր, տա՛ր քո ձեռքովը կապիր սև չալուի (փճնեկ) փչի ծառին. ասա՝ «էս էլ քեզ՝ իմ ցաւ ու չոռն էլ»։

Դժնիկին կապած հազարաւոր ծուէնների մօտ մինն ևս աւելացաւ։

Մայր ու աղջիկ մի համբոյր ևս տուին սուրբ Յովհաննէսի աղբրական քարին, մի մի գաւաթ էլ պարզօրակ ջրիցը խմեցին և ճանապարհ ընկան դէպի տուն, չը նկատելով խոտերի միջով դէպի գետափը սողացող շնչաւորին՝ մեր քարաթոթոշ (մօղնօկ տէօօնէ) Բղդէին։

ԺԶ.

ՈՒԽՏ

Թէ որքա՛ն նայեց, ինչքա՛ն ժամանակ տեղը մխուած մնաց, ի՞նչ մտմտուքի մէջ էր այս րոպէիս Բղդէն,—ինքն էլ չը գիտէր։ Նորա ուշքը տանող առարկայքը վաղուց ծառերի ետևն անյայտացել, հեռացել էին, իսկ նա դեռ ցցուած մնացել էր. նա այդ րոպէին մի խելքից պակաս ապուշ էր, որ ժամերով անշարժ մի կէտում մնում էր կանգնած ու աչքերը հեռու հորիզոնին անգիտակցաբար սևեռած։

Այս դրութիւնից խելացնորին սթափեցնողը լի-

նում են միշտ գիւղական չար երեխայքը. իսկ մեր Բղդէի յուշարարն իւր հետ էր, իշամեղուների կծածների կսկիծը նորից աւելացաւ։

Բղդէն յիշեց իւր գալստեան նպատակը. նա մեքենաբար ձեռքով աչքերը շփեց և խոտերի միջից յառաջեց, հետո էլ հառաչեց ու մօտեցաւ աղբրական քարին թիկնեց։

Նա սկսեց կծած տեղերը սառը ջրով լուանալ. գործողութիւնը խիստ դիւրալի էր և նա մի քանի անգամ կրկնեց։

Ցաւը զգալի կերպով մեղմացաւ։

Բղդէն դարձեալ կանգնեց տեղիցը և շարժուեց դէպի ճանապարհն արգելող մեծ քարը. նա եղունգներով ճանգռելով վեր մագլցեց քարի կատարը և շարունակ նայում էր ներքև։

—Գնացի՜ն, հեռացա՜ն, փնթփնթաց նա և ցած իջաւ։

—Աստծու բաները մարդ չի հասկանալ, փա՜ռք քեզ մեռնեմ, երկնային Թագաւո՜ր. ես ի՞նչ եմ մտածում, ի՞նչ է գալիս դէմս. ընչի՞ համար եմ գալիս, ի՞նչ է պատահում. եթէ Աստուածանից չը լինէր՝ առաջին անգամն է՞, որ ես Շողիկին տեսնում եմ. ամեն առաւօտ գեղիցը գնալիս մեր բակի դրանը կուժն ուսին հանդիպում է, ո՞ր օրն է մտքովս մի բան անցկացել. հենց էսօ՞ր պէտք է նորա մէրը մտածէր աղջկանն աղբրումը լողացնել, էսօ՞ր պէտք է բոռերն ինձ այստեղ քշէին։ Աստուածանից էր, որ կար։

Բղդէն գնաց, կանգնեց Շողիկի կանգնած տեղը։

—Ա՛յ նորա ոտը դրած տեղը. էս խոտերը Շողիկի տրորածն են, ա՛յ, հենց էս սիրի-սիրի ծաղիկն էր նորա ոտի տակին։

—Հը՛, հը՛, հը՛... ատամները բաց արած՝ յիմարական ժպիտով երկար ժամանակ հրհռում էր նա՝ աչքը տնկած գետնի վերայ բուսած խոտին։

Կիսացնոր Բղդէն յանկարծ կռացաւ ու սիրի-սիրի խոտի հետ մի բուռն ուրիշ խոտեր միանգամից պոկեց ու սկսեց քսել աչքերը, երեսը, մօտեցնել շրթունքներին, տրորել բռան մէջ, նայել վրէն, էլ յետ համբուրել, էլ յետ ժպտալ, կրկին բարձրաքրքիչ ծիծաղել։

Մի խօսքով կատարեալ գիժ էր նա։

—Ես էլ զարմացայ, թէ Բաթինենց թիլիկ-միլիկ Սհօն ո՛վ, ալիւր աղալն ո՛վ, դու մի՛ ասիլ, կիւրակի է եղել, խանութ չի ունեցել բաց անելու, յաջող ժամանակ է ճանգել. բայց մի հարցնես՝ թէ ա՛յ ծոծապախաս (—շապաչա), ի՞նչ ես ջրաղացի դրանը քիթդ քամուն բռնել, մնացել, ընչի՞ էս թուփ ու մացառներումը վեր ընկած՝ հայիլ մայիլ չես լինում, զօքանչիդ խօսքն ի՞նչ ես պարանի դնում (լսում). քո ապրանքն է, գողութիւն հօ չե՞ս անում։ Է՛հ, դորա նմանների համար է ասած. «Աստուած փլաւն ո՛ւմ է տալիս, ախորժակն ո՛ւմ». Սհօյի բաղդին էս պէտք է սիրացած լինէի՝ տեսնէիր։

Դարձեալ սկսեց ծիծաղել Բղդէն։

—Հրեշտա՞կ էր," թէ սատանայ. աչքեր էի՞ն, թէ առաւօտադէմին լուս եկող, պէծպծին տուող աստղեր. ադամորդու վիզ է՞ր, թէ Արայի սարի գլխի Աքլորաքարի վերայ մի մին ժամանակ կանգնող, հպարտ հպարտ աչքերը չորս կողմը գցող ջէյրանի շլինք. մանաւանդ կրծքին տմբտմբացող ջուխտակ նռները, որոնց վերայ Շողիկն ինքն էր գժուածի պէս հիացել: Ա՜խ, ես կը ցնորուիմ, ես ինձ կը սպանեմ, թէ որ Շողիկն իմը չը դառնայ:

—Ի՞նչ ես ասում, գլուխը շարժելով վերադարձաւ Բզզէն և նստեց աղբիւրի մօտ. ո՞վ իմը դառնայ, Շողի՞կը, իմ ոխերիմ թշնամու սերո՞ւնդը, ջհուտ Աղաջանի աղջի՞կը, ես գնամ Աղաջանին շլինք թեքե՞մ, կրկին նորա առաջին գլուխս ծռե՞մ, կծու-կծու յանդիմանութիւնները տանե՞մ, մտքումս դրածից յետ կանգնե՞մ, չը հարստա-նա՞մ, կեանքս չարչութիւնով անցկացնե՞մ:

—Ո՛չ, էդ գլուխ գալու բան չի, Բզզէն պսակուող, տուն ու տեղ դնողը չի. աչքիս տակն ունիմ փող, հարստութիւն, բոլորի գլխին ընկոյզ կոտրէ՛լ, խօջա Բաղդասար դառնալ, ջհուտ Աղաջանին հացից քցել, մի կտոր ցամաք հացով նորա ինձ արած լաւութիւնը վճարել, յետոյ Շողիկներն իրանք ոտիդ տակը գլուխ կը դնեն. թէ չէ էս օր Աղաջանն ինձ շեմքը չի թողալ, քարհալած կ՚անի: Իրաւունք էլ ունի. Պօղոս-աղայենց ամալլի տղային, իւր ողորմութիւնով յառաջ եկած չարչուն նա ի՞նչպէս աղջիկ

տայ. Բստինենց Կարապետի տղէն մա՛րդ է, մարդի որդի է, իսկ ես մի կօլոտ չարչի, հողի հետ հաւասարուած մի մարդ, ծառի որդը, աշխարհի ծաղրատեղը, ինձ ու թէ Աղաջանի պէս երևելի խօջէն, աշխարհքին լաւութիւն անողը՝ վերջին նախրչին է՛լ չի ուզիլ փեսայ շինել: Ախար ո՞նց շինեն, ո՞վ է գժուել իւր աղջկայ սիրտը խոռի (սըրտըբէնդ անել). ո՞ր աղջիկն ինձ կը սիրի, և ինչի՞ս համար պէտք է սիրեն,—սիրուն աչքերի՞ս, նախշուն պատկերի՞ս, սուր-սուր բեխերի՞ս, շիշակ հասակի՞ս. երկրիս երեսին էլ խայտառակ անուն չի մնացել, որ ինձ չը կանչեն,— կօլոտ, ծառի որդ, արջի քոթոթ, նառ ուղտ: Մարդիկ ուղիղ են ասում, մի մին ժամանակ իմ ծախած մանր հայելիքի մէջ որ թաքուն մտիկ եմ տալիս, զզուանքս գալիս է իմ երեսից, ուրիշներն ի՞նչ մեղաւոր են:

—Բայց ինչի՞ համար, ես ո՞ւմից եմ պակաս, տղամարդի սիրունութիւնը քանի՛ կոպէկ կ՚աժենայ, ուրիշների պէս մի տղամարդ էլ ես եմ, ա՛յ, հէնց էս աղբրի լճակի մէջ մտիկ տամ, կ՚երևամ:

Բզզէն քսուելով մօտեցաւ լճակին և մէջը հետաքրքրութեամբ նայեց, կամեցաւ կեանքումն առաջին անգամ համեմատութիւն անել իւր և ուրիշների գծագրութեան մէջ:

—Վա՛հ, դուրս թռաւ բերանից և նա մէջքի վերայ փռուեց խոտերի մէջ:

Բզզէն անշարժ ընկած էր. նա այս րոպէին մի

ծառի կոճղ էր, կարծես, մի գ ե տ ա բ ե ր ո ւ կ էր։ Այս անունը տալիս են գետերի ափին ընկած այն ծառի հաստ բնին, որ ով գիտէ, քանի՞ հարիւր տապա-րիզից, ո՞ր տարին, գարնանագայր յորդացած գետն ահագին քարափների հետ իւր յորձանքների և լեռնանման կոհակների վերայ փոքրիկ փետուրի թեթևութեամբ խաղացրել է իւր երեսին և երբ իջել, ջուրը նուազել ու իւր բնական դիրքի մէջ է մտել, ափումը մի տեղում թողել է անշարժ ընկած։

Անյարմար համեմատութիւն չէ. Բզզէն երկար ժամանակ ձեռքերով երեսը ծածկած՝ մեռելի նման ընկած էր։ Նրան սարսափահար յետ զարկողն իւր այլանդակ և հրէշային կերպարանքն էր, որ երևեցաւ պարզորակ լճակի խորութեան մէջ։

Արդարև, մի ևս առաւել անճոռնի և դժնդակ դէմք փոխարինել էր այսօր նորա բնական տգեղ տեսքին. իշամեղուները նորա երեսն այլակերպել էին. մի տեղ ուռուցքը ընկուզաչափ բարձրացել էր, մի այլ տեղ՝ խորշոմներ ու ակօսներ էր ձգել, շըրթունքներից՝ վերինն ուռել, գալարուել ու քթին էր առել, իսկ ներքինը կզակին էր կպել, լնտերքը մատնաչափ հաստացել, սեպաձև ատամներն էին ծածկել. ամեն մի ոտի վերայ չորս հինգ բլրանման բարձրութիւններ միմեանց հանդէպը կորած՝ մի մի ձորահովիտներ էլ միջանցքներումն էին յառաջ բերել։ Ես միանգամայն անգիտանում եմ որ և է շնչաւոր և անշունչ արարածի նմանացնել Բզզէի երեսը. մի՞թէ

բնութեան արարիչը չէր խնայել իւր ձեռակերտին այսպիսի անճոռնի կերպարանք տալ։

Շատ կարելի է երկար ժամանակ ուշքի չը գար Բզզէն, եթէ արեգակի ջերմութիւնն իւր ներգործութիւնը չ՚անէր։

Փոքրիկ միջատների նետերի թոյնը շատ ազդու էր։

Սիրտը կոտրած, յուսահատ վերկացաւ չարաբաստիկ արարածը և իւր չորս կողմն աչքերը ման ածեց։

Զորամիջումն ամեն ինչ իւր տեղն էր. միայն օդի մէջ բզզացող թևաւոր մժեղներն ու երբեմնապէս մի քարից մի թփի վերայ թռող թռչնիկները՝ այն ջ ր ի ծ ի տ կոչուած սիրունիկ թևաւորները, որոնք ջրային չեն, բայց ջրի սիրահար են, գետերի ափերից չեն հեռանում։

Զորի խաղաղութիւնը վրդովողը միայն գետակի հոսանքի խողխոջիւնն է։

Մի քանի րոպէ Բզզէն սիրտ չէր անում տեղիցը շարժուել, առաւել լաւը՝ չը գիտէր ո՛ւր գնար և ի՛նչպէս գնար։

Վերջապէս, յայտնի չէ, թէ ի՞նչը Բզզէին ոգեւորեց, նա կրկին մօտեցաւ աղբրականը և աներկիւղ նստեց լճակի մօտ ու մէջը նայեց։

—Ա՛յ յիմար մարդ, բացականչեց Բզզէն, ես իմ շուաքից խրանել եմ, ես կարծեցի, թէ ջրի միջից ինձ նայում է մի եօթնգլխեան վիշապ. դու մի՛ ասիլ, վիշապը ես ինքս եմ եղել, ես ի՞նչ օրն եմ ընկել։

Մի խոր թառանչք դուրս ծորաց Բզզէի ներսից։

—Ի՞նչ կ՚ասեն ուրիշները, ի՞նչ պատասխան տամ ես հարցնողին։

Յուսահատ թշուառականի խօսքեր էին նոքա։

—Հասկանում եմ, վհատած ասաց նա, Կիզի-մստուռն ինձ պատժեց, զրկեց, որ ես նրա պատուհանի քարը տեղահան արի։

Բզզէն սկսեց լալ և հեծկլտալ։

—Անիծա՛ծ վեց հազարեակի զօրութիւն, անպատճառ թլիսմը խիստ է եղել, կայ՝ չը կայ՝ գրբացն անէծք է դրել բոռերի վերայ և բոռերին ձեռք տուողի վերայ։ Ախար ընչի՞ յանձն առայ թուղթն Երևանից բերել, կամ թէ բերի, դրի պատուհանի վերայ, ընչի՞ էի կանգնում, ընչի՞ էի բոռերին սպանում, որ ոսկի դառնան ու իմ սիրտս քաշեն իրանց։

—Է՛հ, էս է՛լ չ՚ուզեցի, թող կրկին թև առնեն, թռչեն, իրանց տիրոջն արժանանան, ասաց Բզզէն և ձեռքը գրպանը տարաւ, հանեց երկու հատ ոսկին ու շպրտեց։

—Յիմա՛ր, յիմա՛ր, շարունակեց չարչին, թլիսմն ի՞նչ է, որ մարդի այլակերպացնի. Կիզի-մստուռն է բարկացել ու ինձ էս օրը քցել։ Տէ՛ր, ինչ է ինձ, ես մեղաւոր, անարժան սևերես եմ, հայ-քրիստոնեան իւր ձեռքով իւր եկեղեցին քանդի՞։

—Ո՛վ եօթն անուան տէր սուրբ Կարապետ, իմ ձեռքն է քո փէշը (փէշդ եմ ապաւինել), չոքեց, տեղն ու տեղն աղօթեց Բզզէն, քո դուռն եմ եկել, քո

աղբրի ջրովն աշխարհքն է ցաւ ու չոռից փարատւում, դու բարեխօս կա՛ց սուրբ Կիզի-մստուռի առաջին, խօսք եմ տալիս՝ իմ ձեռովը քարը տեղը դնել, նորա դուռը մի որձ ոչխար մատաղ անել։ Ամա՛ն, ո՛վ սուրբ Յովհաննէս, էս օր ես քո աղբրի ջրովն եմ լուացւում. ուխտս ուխտ լինի, որ եթէ իմ առաջին կերպարանքն ստանամ, մի օր քո Յորդանանն ուխտ գամ, Յորդանանի ջրովն էլ լուացուեմ։

Այս ուխտն արեց Բզզէն և գլուխը թաղեց լճակի մէջ։

Այս գործողութիւնը կէս ժամաչափ կրկնում էր նա։

ԺԷ.

ՋՈՒԱՋԵՂԻ ԽԱԹՐՈՒ ԹԱՒԻ ԿՈԹԸ ԿԸ ՊԱՉԵՆ

—Սուրն երեսիս խաղացրո՛ւ, ջհուտ Աղաջա՛ն, ես քո դռնից հեռացողը չեմ, ես նոյն Բզզէն եմ, որ էի, որին դու խղճացիր, հացի տէր շինեցիր, գալիս եմ կրկին ոտքերդ ընկնելու, գալիս եմ ասելու, որ Շողիկը Բատինի թուից հանի, ինձ տո՛ւր, ինձ քո դրանը կապած շունը շինի՛ր։

Այս խօսքերը դուրս թռան Բզզէի բերանից, երբ մի ժամաչափ անդադար լուացւում էր սուրբ Յովհաննիսի աղբրի մօտ և ջրի ափին՝ քարափի ստուերի տակ՝ պառկում։

Խեղճի քունը տարել է։

Մէկ է՛լ յանկարծ նա զարթնեց և ո՛վ Աստուած,

ջուրը հրաշագործութիւն էր արել, սուրբ Յովհաննէսը Սելովմայ աւազանն էր դարձել իշամեղուների շնորհիւ բորոտացածի համար։

Բզզէն իւր բնական կերպարանքն էր ստացել։

—Բայց մի՞թէ արածս յիմարութիւն չէր, մտածելով և խոհական դէմք բռնելով ասաց և աչքերը դարձրեց դէպի մերձակայ սիզաւէտ տեղը. այս ի՞նչ արի ես, ոսկիքն ընչի՞ կորցրի, հէնց իմանանք իմ ոտնավարձն էր. Թլիսի թուղթն Երևանից բերել եմ, տեղ եմ հասցրել, ի՞նչ մեղք էր, եթէ փոխարէնն երկուսն իմը լինէին, Շողիկի վզնոցի միջին շատ կը յարմարէր։

Բզզէն տեղիցը կանգնեց և երկար ժամանակ խոտերը յետ քաշելով որոնում էր։ Փշերը ծակոտում էին նորա մատները, բայց գիւղականի կոշտացած կաշուին այդպիսի ասեղներն ախորժ խտտղանք են միայն յառաջացնում և այլ ոչինչ։

Կարելի է շատ պէտք է որոնէր Բզզէն, եթէ իւր ոտի տակից երկու նոյնանման իշամեղուներ դուրս չը թռչէին դէպի գետը։

—Է՛հ, Աստուածանից որ կորուած է, քաշքշելով ոչինչ չես շինիլ, արդար վաստակ էին, գնացին իրանց տիրոջ քսակը մտնելու։

Երկար ժամանակ սրտաբեկ այս խօսքերի հետ Բզզէի աչքերը պլշած՝ մնացել էին դէպի բոռերի անյայտացած կողմը։

—Անիծածներն ի՛նչպէս փայլուն էին, ժպտաց

նա. ճի՛շդ այս թփի տակին են եղել կուչ եկած, այստեղից թռան։

Բզզէն աչքը ձգեց վայրի կանգառի փշուկի թփին և երկար նայում էր։

Յանկարծ թափահարուեց նա և յետս ընդ կրունկն մի ոստիւն արեց։

—Եթէ թռան գնացին, ճչաց նա, հապա էն ընչե՞ր են կանգառի արմատի մօտ։ Իմ ոսկիքս են՝ որ կան։

Նա յարձակուեց և հողախառն կորզեց գետնից իւր ձգած ոսկիքը։

—Երազում հօ չե՛մ։

Բզզէն, արդարև, իրան կորցրել էր. նայում էր իւր շուրջը, աղբրին, գետին, քարաժայռերին, ոսկիներին, շօշափում էր իւր անձը և գլուխը շարժում։

Նա սկսեց մի առ մի մտաբերել այս աւուր դէպքերը և թուել։

—Վեր կացայ տեղիցս, թլիսը տարայ մատուռը, ոսկիքը բոռ դառան, թռան, երկուսն սպանեցի, քարը տեղահան արի, պատիժս առայ, ուռուցուրեցի, եկայ սուրբ Յովհաննէս, Շողիկն այնտեղ էր կանգնած, էս էլ իմ շպրտած ոսկիքը, որ կրկին բռնում եմ։

—Ի՞նչ երազ, ա՛յ ձեզ մատաղ, դէ երկու հատ չէ՞ր։

—Բայց որ հիմի թռան ու գնացին՝ նրանք էլ երկու հատ չէի՞ն։

—Է՛հ, յիմա՛ր իմ գլուխ, աշխարհքումս հազարաւոր բոռեր կան, նրանք էլ հազարիցն երկուսը։

—Չէ՛, չէ՛, ես ձեզ զուր եմ շպրտել, համբոյրներ էր տալիս իւր երկու հատ ոսկիներին. էլ ձեզանից ես չեմ բաժանուիլ, դուք դեռ ինձ շատ էք պէտք. միայն դուք չէք, թլիսմի թուղթն էլ չը կայ, կիսից աւել Կիզի-մատուռի մէջ դեռ դժվժում էք, բոլորդ իմը կը լինիք՝ ձեր զօրութիւնովն էլ ջհուտ Աղաջանի աղջիկը:

Արեգակն սկսեց արդէն իւր կարճ ստուերը կրկնապատիկ երկարացնել դէպի արեւելք. ձիւնանման ամպերի կոյտերը հրափայլ շողշողուն էին ստանում, երբ վերջին անգամ Բղդէն լուացուեց աղբրակի վերայ, համբուրեց աղբրի քարը և քայլերը փոխեց:

—Ահա՛, գալիս եմ դէպի քեզ, ո՛վ սուրբ Կիզիմատուռ:

Նա շտապ շտապ յառաջ էր գնում:

—Էսպէս բան էք տեսե՞լ, գլուխը շարժեց Բղդէն և ժպտաց. ո՞ւր էի գնում, ո՞ւր եկայ. տան ճանապարհը դէպի աջ է, ես ձախ եմ ծռուել, եկել փշի թփի տակը:

—Կը գամ է՛լ, հոգիս էլ դուրս կը գայ, շարունակեց նա, շատ ու շատ անգամ դեռ մօտդ կը գամ, ա՛յ սեւ չալունի փշի թուփ. դու ինքդ չալու ես, անպէտք փշի թուփ ես, բայց ծաղկել ես, փթթել ես, հազար տեսակ ծաղիկներ ես տուել. բայց դրանց բոլորի հոտը կորցրեց քո վերայ էսօր աւելացած կոկոմ վարդը. ա՛յ, հէնց էս, որ ձեռիս եմ բռնել,

հոտ եմ քաշում, համբուրում եմ ու չեմ կշտանում:

Բղդէն ձեռքում շփում էր Շողիկի կապած ծուէնքը:

—Ասում են՝ քո վրայ կապոտած փալասներին ոչ ով իրաւունք չ՚ունի ձեռք տալու, թէ չէ դող ու էրոցքը վիզը կը փաթաթուի, բայց ես հօ հետս չե՞մ տանում, ի՞նչ վնաս, ինթէ ես օրը մի անգամ գամ էս կարմիր փալասի կտորին ուխտ, մինչև մի օր իմ սրտիս փափագը գլուխ գայ:

Այս խօսքերով մի անգամ եւս համբուրեց Բղդէն Շողիկի անթարու ծուէնքը և ճանապարհ ընկաւ: Զուաձեզի խաթրու թաւի կոթը կը պաչէն:

ԺԸ.

ՄԿՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

Արեւը մի ձողաչափ ճանապարհ հազիւ ունէր սարերի միւս կողմն անցնելու, երբ Բղդէն թողեց սուրբ Յովհաննէսն ու շտապեց դէպի Կարբի:

—Այս քարքարուտներից լուսով դուրս գամ, յետոյ ե՛ս գիտեմ, վճռեց նա և անհարթ ձորաթմբի դարաւանդներով ոլոր-մոլոր վեր բարձրացաւ:

Ամառն էր. երեկոյեան զովարար հողմիկը սփռել էր ամեն տեղ ճոխ բուսականութեան բուրմունքը. ամենայարմար ճանապարհ գնալու և զառիվեր բարձրութիւններ կտրելու չափած ու ձեւած ժամանակն է. ճանապարհորդի ոտքերն ինքնաբերաբար թեթեւա-

նում են, խոտոր-մոտոր ելեւէջներն անզգալի են լինում, ուղեւորը մի դիւրալի թեթեւութիւն է զգում։

Այս դիւրութիւնները չէին, որ Բզզէին շինել էին քարափների ուսերին սորորող, վազ առնող կարմըրակտուց կաքաւ. միայն այս օրուան բազմադէպ եղելութիւնները չէին նրան յառաջ վարողը։

—Մինչեւ ես ձորը դուրս կը գամ, մեր գիւղը սեւ պատանի մէջ կոլոլուած մեռել կը դառնայ, մտածեց նա, բոլորը քնոտած կը լինին. գործի տէր մարդիկ են, հիմի կալւորը եզներն է թողել, թեզի կողքին պառկել հանգստանում է, մշակը հանդիցն էկել եւ ոտներին ու ձեռներին դնջութիւն տալիս. էլ ո՛ւմնից եմ քաշուելու, շտապեմ՝ քանի ժամանակն է։

Մութը գետինն արդէն առել էր, երբ Բզզէն մտաւ իրանց տունը, մօրը քնած տեսաւ, աւելորդ համարեց զարթնացնելը, շօշափելով գտաւ հրահանի պարկը, հանեց չարչիական խուրջինից մի երկու զոյգ մեղրամոմ եւ իրան ձգեց Կեղի-մատուռի մէջ ու ճրագը վառեց։

Ամէն ինչ իւր թողած դրութեան մէջ էր. բրիչ ու մուրճն ընկած էին, պատուհանի քարը շրջուած մնացել էր, իսկ նորա մօտ՝ մի խորշում՝ մեղրի բճիճների վերայ եռում էին հազարաւոր իշամեղուներ։

Այս բճիճները մեղուների կազմածը չէին, նոյնանման բճիճներ կերտում են իշամեղուների երկու տեսակները, որոնցից մէկը մեզ ծանօթ բոռերն են,

միւսները նոցանից աւելի փոքրամարմին կրէտները։ Վերջիններիս շէնքը շատ աննշան է, իսկ բոռերինը կատարեալ մեղուաբճիճների են նման. այն զանազանութեամբ միայն, որ բճիճների մէջ լցուն մեղրը նոյն քաղցրութիւնը չ'ունի, ուտելու համար էլ միանգամայն անպէտք է։

Իշամեղուներն այս անգամ առաւօտեան հերոսութիւնը չը գործ դրին, բզզոց վզզոցը շատ նուազ էր. իրանք էլ մեղրահացերի վրայից չը թռան. ճրագի լոյսը խտտղեցրել էր միջատների աչքերը։

Բզզէն շուարել էր. նա մօտենալ չէր վստահանում, հեռուից միայն զարմացած նայում էր. «որքա՛ն շատ են եղել երեւակայեալ ոսկիքը. այնքանը թռչելուց յետոյ՝ դեռ մնացածներին թիւ ու քանակ չը կայ»։ Մի՞թէ ցորեկուան թռչողները ոսկիք չէին, բայց ի՞նչ են իւր գրպանի երկու հատը։

Բզզէն հանեց եւ ձեռքին բռնեց։

Երեւակայութիւն չէ, ազնիւ մետաղի փայլը ճրագի լուսումն էլ իւր զօրութիւնը չի կորցնում։

—Բայց կարելի է սրանք հէնց իսկական բոռեր են ու թլիսմի տէրը հարիւրաւոր տարիներով յառաջ իւր ոսկիքն էս տեղ թագցրել է եւ ուզեցել թլիսմի ձեռով տանել, սակայն չի յաջողացրել։

—Տեսնենք, ասաց Բզզէն եւ զգուշութեամբ գլխարկով ճմլեց բճիճից հեռու կանգնած միակ իշամեղուին։

Ոչինչ կերպարանափոխութիւն,— մի սատկած բոռ է ընկած գետնին։

Նա չը հաւատա՛ց աչքերին, բրիչի ծայրով յետ քաշեց սպանած միջատն և վերցրեց։

Իշամեղուի փափուկ մարմինն է և ուրիշ ոչինչ. նա տրորեց պտղունցի մէջ, մի տեսակ մածուցիկ հիւթ քսուեց իւր ձեռքին. բոռի սպիտակ արիւնն էր։

—Ի՞նչ կը նշանակէ ուրեմն, մի՞թէ սորա տէրը միայն երկու հատ ոսկի էր պահել, կամ ընչի՞ պէտք է դուրսն ընկած լինէին։

Բղդէն սկսեց մանրախոյզ հայեացքներ ձգել իւր շուրջը և քարի տակը։

Առաւօտն ամէն բան կը պարզուէր, եթէ նա շփոթուած չը լինէր։

Պատի տակին, քարերի մէջ, պատաշարի ճեղքուածքից դուրս է մաղուած երկու երեք բռնաչափ կրախառն աւազ։ Ամէն գիւղական մանուկ կարող է ասել, թէ գետնափոր մկների արարքն է այդ. այդպիսի հողակոյտերը հարիւրներով կան դաշտերումը՝ մկան ծակերի մօտ։

Դեռ հողի կոյտը չը խառնած՝ Բղդէն դիտեց հետաքննին աչքով և վճռեց, որ հողը թափուած է տեղահան արած քարի յետ բացուած ճեղքից։

Բղդէն սկսեց հողը խառնել։

Հրա՛շք...

Հողակոյտի մէջ լիքն է Բղդէի մօտ եղած ոսկիներով։ Նա մոռացաւ բոռերին։

Հողախառն բուռն արեց և գրպանը լցրեց։

—Ուրեմն գնացող բոռերը ոսկիք չէին, վճռեց

Բղդէն հողը քրքրելուց և վերջին ոսկին վերցնելուց յետոյ. ահա՛ առաւօտեան սպանած բոռերս։

Այդպէս իսկ էր. նորա սպանած երկու միջատները, որոնց ոսկի դառնալու վերայ աներկմիտ էր, այժմ ընկած էին քարերի մէջ փշրտուած։

Ինքնամոռացութիւնը հեռացաւ Բղդէից։

Նա ապահովուեց, որ միջատները կապ չ'ունին իւր գտած թանգագին մետաղի հետ։

Այժմ նա սկսեց գաղտնիքը քննել և գտաւ։

Իւր տեղահան արած քարի անկիւնում, մի արհեստական խորշում, գլխի վերայ շրջուած, ընկած էր մի փոքրիկ կաւէ բղիկ։

Նրանից քիչ հեռու ընկած էր իւր կափարիչը։

Խուփը միջից երկու կէս էր եղած։

Անշուշտ մկներին էր պարտական Բղդէն։

Մկներն են փորել բղիկի տակը, շուռ տուել և ոսկիքը հողի հետ դուրս թափել։

Առաջինը չէր այսպիսի դէպք պատահելը. շատ մօտիկ անցեալում մի հոգևորական նոյն ձևով վայելեց կրծանների աշխատութեան արդիւնքը. մենակեացն իւր հովանաւորութեան յանձնուած վանքի պատի տակին մկների դուրս թափած հողի կոյտի մէջ գտաւ ոսկիներ։

Որքանութիւնը սուրբ հօրն է միայն յայտնի, նոցանից միայն երկուսն իբրև հնութիւն դրուած են Մայր-Աթոռի թանգարանումը։

—Հիմի, ջհուտ Աղաջա՛ն, թէ ճակատ ունիս,

դիմացի՛ր, երկու ղօչի գլուխ մի պղնձում չեն եփուիլ. այսուհետև կամ չարչի Բղդէն, կամ ջհուտ Աղաջանը. օրն էգուց մենք իրար կը հանդիպենք, դեռ այս գիշեր գնամ մի հանգիստ քնեմ։

Այս խօսքերով բրիչն ու կռանն առած՝ առանց իւր խոստումը կատարելու, առանց քանդած քարը տեղը դնելու՝ դուրս եկաւ շտապով Բղդէն Կիզլ-մատուռից և դէպի իրանց տունն ուղղեց քայլերը։

Թէ որքա՛ն գիշեր էր անցել, ի՛նչպիսի երազներ նրան յուսալից կամ յուսալիք էին արել, հաշիւը կարաց տալ իրան Բղդէն, բայց մէկ էլ իւր անունը լսեց, տեղիցը վեր թռաւ, ցից կանգնեց, շփոթուեց, մթութեան մէջ նայում էր իւր առաջին կանգնող ստուերներին և իւր չորս կողմը։

Նա քնահարամի շարժումներ էր անում, աջ բազուկով աչքերն էր տրորում, ծործորակն էր քորում, յօրանջում էր և իրան առաջարկած հարցմունքներին միայն անկապ և անհասկանալի հընչիւններով էր պատասխան տալիս։

—Ա՛յ տղայ, Բղդէ՛, ի՞նչ ես շշմել, քեզ չե՞մ հարցնում, էս ժամանակ էստեղ ի՞նչ գործ ունիս, կրկնեց ձիու սանձը ձեռքին բռնած մի մարդ։

—Աբա... Աբա... Աբարանիցն եմ գալիս, քրթմնջեց վերջապէս ուշքի գալով Բղդէն, շատ յոգնած էի, նստեցի ձեր դրան առաջին, որ քիչ հանգստանամ, քունս տարել է՝ մնացել եմ էստեղ, Աղաջան ամի՛։

—Իսկ էս լինգն ու գուրզն ի՞նչ բաներ են։

—Արնագիւղի տէրտէրինն է, մի փոքր շինութիւն պէտք է անենք, մի քանի օրով խնդրեցի. բայց դո՞ւ որտեղից էսպէս ուշ. էս ի՞նչ ձիաւորներ են։

—Տօղա՛, դեռ քնա՞ծ ես, չե՞ս տեսնում՝ ապրանք է, Երևանիցն եմ բերում. էս էն բանն է, որ քո բերանդ խաղտեց, որ հիմի ինքդ ես բերում։ Վնաս չ՚ունի, ես շատ ուրախ եմ, Աստուած տայ աւելի հարստանաս, ձեռքդ երկարի. բայց ասել եմ, կրկին ասում եմ, Բղդէ՛, աշխարհքը քեզանից գանգատաւոր է. թանգ ես տալիս՝ հերիք չէ, ապառիկդ էլ աւելի ես նշանակում, մէկին մէկ շահ ես առնում, քերթում ես, կողոպտում ես ձեռը կարճ գեղացոնցը։ Էդ լաւ չի, որդի՛, վերևիցն Աստուած մտիկ է տալիս։

Գիշերն արդէլք եղաւ ջհուտ Աղաջանին նկատել Բղդէի կերպարանքը, ապա թէ ոչ՝ նա իրան կը պաշտպանէր, կամ յետ կը փախչէր, երբ տեսնէր, թէ ի՛նչ գազանային կատաղութեամբ կռացաւ և գետնիցը վերցրեց մուրճը։

—Դէ վե՛ր կալ լինգդ ու գուրզդ և գնա՛ հանգստացի՛ր. բարի գիշեր, ասաց Աղաջանը և հրամայեց իւր հետի մարդկանցը բեռներն իջեցնել։

Աղաջանի քաղցր խօսքերն էին, որ մի ակնթարթում իջեցրին Բղդէի բարկութիւնը։ Նա ատամները կրճտեց, առաւ իւր գործիքներն ու հեռացաւ՝ իւր մէջ փնթփնթալով հետևեալը.

—Էս ի՛նչ է պատահել ինձ, չէ՞ որ ես մեր տունն էի գնում քնելու, ապա ջհուտ Աղաջանի դրանն ի՛նչ բան ունէի։

—Հա՛, հա՛, հիմի յիշեցի, երկար ժամանակ մտածմունքներիմէջ խորասուզուելուց յետոյ՝ արտասանեց Բզզէն, գնացի որ կռանամ, համբուրեմ էն շեմքը, որտեղից օրն երկու անգամ՝ առաւօտը շատ վաղ և իրիկունը շատ ուշ՝ կուժն ուսին՝ անց ու դարձ է անում էս օրուայ հուրի փարին. հիմա եմ յիշում, չոքեցի, շեմքի փայտն երեք անգամ համբուրեցի, ինչպէս երևում է, գլուխս դրել եմ շեմքին՝ անուշ երազների մէջ մտել։

—Բայց գնա՛ որ գնա՛, ջհուտ Աղաջա՛ն, լաւ պրծար, դու անպատճառ էսօր մի լաւութիւն արել էիր, որ քո առաջդ եկաւ, քեզ մահից պրծացրեց, կամ թէ չէ քո մի կտոր հացը գուրգը ձեռքիցս խլեց, թէ չէ դու հիմի արենշաղախ, անշունչ ընկած կը լինէիր քո շեմքի առաջին։

—Ոչ է՛ս, ոչ է՛ն, դու, էիր, Նողիկ ջա՛ն, որ քո լաթաթախ ձեռներովդ ուժեղ փահլեվանի նման (**ըմբէշ**) կռներս ծալեցիր, ձեռներս թուլացրիր ու հօրդ արեը սև անող գործիքը խլեցիր. շա՛տ էլ լաւ արիր, դու հօ՛ չէիր կարող հօրդ արիւնով լուացած ձեռքը համբուրել:

—Ի՞նչ... ի՛նչ եմ ասում.. յանկարծ ցնցուեց ամբողջ մարմնով Բզզէն և վերմակը վրայից յետ բացուեցաւ։

Արդէն Բզզէն տուն էր հասել, հանել էր իւր շորերը և մտել մօր պատրաստած անկողինը։ Առաջինը չէր, որ մայրն այդ նախապատրաստութիւններն անում էր որդու համար։ Պատահում էր, որ Բզզէն երբեմն շատ ուշ էր վերադառնում գիւղերից. մօրն անհանգիստ չ'անելու համար՝ նա կարգադրել էր, որ իւր անկողինը պատրաստէր և ընթրիքը մօտը դնէր։

Գալիս էր Բզզէն, ուտում և տեղը մտնում։

Այս գիշեր նա իւր անկողին մտնելն էլ չէր հասկացել. նա դեռ իրան փողոցումն էր կարծում։

—Երբէ՛ք և երբէ՛ք, ձեռքը շարժեց նա, չարչի Բզզէն տղամարդ չի, որ մի աղջկայ առաջին կուչ գայ ու նորա հօր շպրտած արճճից ծանր խօսքերը մարսի... Հը՛... դառն ժպիտով խնդաց նա...—ուրախ եմ, ասում է, Աստուած տայ աւելի հարստանաս, բայց մուշտարիքանցդ հետ լա՛ւ վարուի՛ս... Չէ՛, ջհուտ Աղաջա՛ն, չէ, ձեռներդ լուա՛. Բզզէն էլ քո տեսած երեխէն չէ. Պօղոս աղայենց ամալէն քո իրաւունքի տակից դուրս պրծաւ, խրատներդ նորա ականջը չեն մտնիլ, այսուհետև հօ դո՛ւ, հօ մի բուռը փոշին,—քամուն տուիր՝ էլ չը կայ՝ սրա՛նք ողջ կենան, սրա՛նք։

Բզզէն վերցրեց մօտն ընկած արխալուղն և շարժեց, ոսկիքը գրպանումը զօղանջեցին։

—Բաս Նողի՞կը... Չէ՞ որ նա ջհուտ Աղաջանի աղջիկն է. չէ՞ որ իմ թշնամին Նողիկիս հէրն է, չէ՞ որ Նողիկս իմ դուշմանի միս ու արիւնն է. ո՞նց

կտրես միսը, որ արիւնը չը թափուի, ինչպէ՞ս թափես արիւնը, որ միսը չը կտրուի...

—Ա՛խ... ես կը խեղւե՛մ... Ադէ՛, ադէ՛, ադէ՛, մէրի՛կ, ձայն արձակեց մի քանի անգամ Եղդէն, ճակատին զարկեց, անկողնի մէջ կործ եղաւ, գլուխը կոխեց բարձի տակը ու հեկեկալով լաց եղաւ բարձրաձայն։

ԺԹ.

ՋՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Լուսադէմ է. բնութիւնը խաղաղ է և անուշաբոյր. մի թեթևասիւք զեփիւռ մեղմօրէն խաղում է ամառուան գիշերային մթնոլորտի մէջ. մթնաժեռ երկնքի երեսը զարդարող փայլուն գոհարները—բիւրաւոր մեծ ու մանր աստղերը—միմեանց ետևից ծորելով՝ անյայտանում են, կամ տեղն ու տեղը չքանում են. անսահման տարածութեան թանձր սևաթոյր վարագոյրը հետզհետէ նօսրանում և կապտագոյն անխռով ովկիանոսի մակերևութի է նմանում։ Արևելեան կողմից մի բարակ շառաւիղ՝ թափանցիկ ոսկեգոյն շղարշի նրբութեամբ՝ ձգուում էր երկնից երեսին, սփռելով և ցրիւ տալով իւր սեղանման սուր-սուր ծայրերը դէպի հեռի արևմուտ, դէպի խոր հիւսիս։ Այդ նօսրացած գոհարների խմբերում դեռ հպարտութեամբ խաղում են պայծառ փայլերով մէկ-մէկից բաւականին հեռու ընկած առաւօտն աւետող տասն երկու խոշոր աստղերը։ Բայց և նրանց երջանկութիւնը կարճատև է. լոյսը մօտ է, լուսոյ

երկիւղը նրանց էլ սարսափեցրել է, նրանք էլ հետզհետէ գունատուեցին և մէկ-մէկ գլուխ առան, կորան։ Մինը կայ, սակայն, որ չի ուզում ընկճուիլ,—դա արուսեակն է՝ լուսադէմի աստղերի թագուհին, գիշերային լուսաւորներից ամենագեղեցիկը՝ լուսնեակից յետոյ. նա երեսը դէմ է տուել, ուզում է հակառակել Արա՞յի լերան քամակից դէպի ինքը շեշտուած լուսաւորների թագաւորի սլաքներին։ Բայց և նա՝ յաղթահարուած ու դալկացած՝ գլուխ առաւ, չքացաւ։ Այդ բոլորից յետոյ արշալոյսն աւետում է մի գեղեցիկ առաւօտ և փութացնում է գեղջուկին դէպի իւր սիրելի պարապմունքը, իւր հանդը, իւր դաշտը, իւր այգին, իւր կալ ու կուտը։

Մի այդպիսի առաւօտ բացուեց միւս օրը Կարբում։

Զարաբաստիկ Եղդէն՝ սովոր շուտ զարթնելու և իւր չարչութեանը փութալու՝ այդ գիշերը ոչ քուն էր մտել, ոչ զարթնէր, հազարաւոր խառն ու շփոթ մտածողութիւնների և դիտաւորութիւնների ծրագիր կազմելով՝ ինչպէս պառկել էր, այնպէս էլ տեղից վեր թռաւ։ Նա ոչ մօրը զարթնացրեց, ոչ չարչու պայուսակին մօտեցաւ. մի աներևոյթ մղումից, կարծես, ձգուեց դէպի այն նեղ փողոցը, որ տեղից անցնելու էին՝ կժերն ուսերին՝ ջրի գնացող աղջիկները։

Այս գործողութիւնը սկսւում էր սովորաբար լուսաբացից շատ յառաջ, երբ այգն ու ծայգը չէին տուել միմեանց հրաժեշտի ողջոյնը։

Պառաւ կանանց երկճղի ձայներն էին լինում առ հասարակ ջահելներին քնահարամ անողը:

—Աղջիկնե՛ր, հարսնե՛ր, ելէ՛ք, ձայն էին տալիս մէկ էլ անուշ քնի մէջ մտած ժամանակն անքուն պառաւները. քանի՞ մրափիք, կը նմանիք քրդի մեռել, աքաղաղն երեք անգամ բարի լոյս աւետել է, վերի կողմը (արե–ելք) կապտացել է, ելէ՛ք դուռն ու տուն սրբոտեցէ՛ք, մինչև տաւարի ոտքը չի պղտորել առուները, գնացէ՛ք պարզ ջուր բերէ՛ք, բան ու գործի ժամանակ է:

Պառաւների այս պատուէրը շարժումն ու կենդանութիւն էր մտցնում գիւղական ողջ բնակութեան մէջ:

Մեծ պատրաստութիւն պէտք չէր գիւղի հարս ու աղջիկներին՝ իրանց արդ ու զարդն աւարտելու, իրանց պաճուճանքը վերջացնելու:

Հանեց պստիկ հարսը՝ գլխատակից պատառոտուն, կարմիր, խամ կտաւի անթարին, հագաւ իւր դեղին շապկի վերայից և ահա նա միանգամայն պատրաստ է գործի կանգնելու:

Ամուսնացած մատաղահաս կանանց գլխի ծածկոցները, որ նոյնպէս կոպիտ փաթաթաններից են ձևած՝ գիշեր ցերեկ գլխներից չեն բաժանուիլ, այլ միայն տօն օրերին կը բացուին: Միակ աժանագին մետաքսեայ փ ո ւ շ ի կոչուած թաշկինակն է, որ վերնազգեստի հետ՝ երեկոյեան տեղը մտնելուս՝ կը ծալուի և բարձի տակը կը մտնի, մութաքի տեղ պէտք կը լինի:

Հասած աղջկանց գլուխն աւելի սակաւ պատրաստութեան կարիք ունի, սանտրել, հայելու տակ կոկուել չը կայ, մի-մի չթեայ ծաղկաւոր թաշկինակ է, որ եռանկիւնի ծալում են, ծնօտի տակովը պատ տալի և սուր ծայրը թիկունքին փռում, որպէս զի յարմարին նորա հետ ամբողջ մէջքը բռնող տասն երկու երկայն ծամերը և իբրև ծոպեր ծառայեն գլխի ծածկոցին:

Սակաւապէտ է գիւղական կանացի սեռը, հրապուրիչ պճնազարդութիւններ նրան չեն զբաղեցնում, նա միայն իւր տնային տնտեսութեանն է անձնատուր եղած:

Խօսք չ՚ունիմ, նորահարսները խնամքով ծալած և պահած ունին իրանց բաժինքում բերած հարսնութեան հագուստները, բայց նրանք դեռ շատ տարիներ պէտք է բողչամիջում ծալած մնան. հարսներ իբրև օժիտ բերած ունին նոյնպէս մի փոքրիկ անագեայ հայելի՝ ձեռնամիջի տրամագծի մեծութեան տփի վերայ յարմարեցրած, ունին և մի ոսկրէ դիւրագին սանտր. բայց այդ ամէնը սովորական օրերի համար չեն, նրանք պէտք են գալիս զատկին, տօն օրերին, հէրանց գնալուս, ուխտատեղերում և այլն:

Աստուծոյ տուածից՝ ոտնաման հագնելու համար ևս կանացի սեռը ժամանակ չի կորցնում. գիւղացի կինն ու աղջիկը ի մանկութենէ վարժ են փուշ ու տատասկ կոխոտելու. Նրանց ոտքի տակի մորթը գոմշի կաշուց հաստացել է, փշերի ասեղանման

սուր ծայրերը փշրւում, բթանում են նրանց ոտքերի տակ։

Երդում չեմ ուտիլ, կարելի է զարդարուելու՝ ոտքերը լուացած օրը՝ այդ փշէ ասեղների ծակոցը փոքր ինչ զգալի լինի մեր քնքուշիկ սեռի ոտքերի համար, բայց այն էլ՝ ոտքի երեսից, ապա թէ ոչ, ժամերով, թէկուզ, չեչաքարը [1]) մաշեցնեն ոտքերին քսելով, ներբանի խոռոչներում ամրացած և մարմնի հետ միաւորուած խճերը մաքրել չեն կարող։

Տանն երես ու ձեռք լուանալու կարևորութիւն նոյնպէս չ'ունին գիւղի ջահէլ կանայքը, այդ նրանք անում են ջրլցքի վերայ՝ առուի փրփրալից պղպճակները փշրելով։

Մինչև տան տղամարդն իւր ոտնամանների առասանները կ'ամրացնէր, նորա քնքուշիկ կէսը, կամ հարսնացու քոյրը, երկու կուժ ջուր է բերում։

Եւ արդարև, գիւղացի տղամարդը՝ չէն թէ աղքատ՝ երբէք ոտաբոբիկ չի ման գալ, նոր թէ կարկատած՝ մի զոյգ իւր ձեռագործ կաշուէ տրեխ պէտք է ծածկեն նորա ոտքերը։

Ահա՛ մի գաւաթ սառը, նոր բերած ջուր ձեռքին առաւ տանու աղջիկը, համեստօրէն ձեռքի մէկը սրտին դրած՝ կանգնեց եղբօր կամ հօր առջևը, խո-

[1]) Մի փոքր բոլորակ չեչոտ քար է այդ՝ կանանց զարդերի անբաժան ընկերը. Նրանով են իջեցնում լուանալուս ոտքերի աղտոտութիւնը։

նարհութեամբ սպասաւորեց նրան, երեսը լուանալ տուեց և կրկին՝ կուժն ուսին՝ վազեց ջրի։

Երես-սրբիչի կարևորութիւն նմանապէս չը կայ, բաճկոնի քղանցը, կամ լայն թևաբերանը փոխարինում են նրան։

Ինչ ասել կ'ուզի, որ ջհուտ Աղաջանի աղջիկ Շողիկը բացառութիւն չէր, նա էլ զարթնել էր, նա էլ ջրի էր գնացել։

Բզզէն շատ առաւօտ էր անցել դէպի առուակը տանող ճանապարհովը միայնակ, խուրջինն ուսին, կամ իւր սև իշուկի հետ գիւղերը գնալուս, բայց ոչ մի ջրաբեր կնոջ կամ աղջկայ չէր հետաքրքրել, իսկ այսօր աղջիկներից շատերը միմեանց աչքով արին և իրար մէջ քչփչացին։

—Աղչի՛, հո՛ղս դրա կոլոտ գլխին, ի՞նչ է քուչէն չափում, մեր քամակից հոտոտելով վերև ներքև անում. չը լինի՞ իւր միջումը սիրահարուած է, էնո՞ր անշնորհքը դրան կ'երթայ, հարցմունքներ էին տալիս ու ծիծաղում սիրունները, երբ Բզզէն իրանցից հեռանում էր։

Զը գիտեմ, լսե՞ց Սալբու տղէն իւր դէմ արտայայտած Կարբու գեղեցկուհիների կշտամբանքը, թէ մի ուրիշ դրդիչ հանգամանք մղեց նրան դէպի գիւղի հարաւ-արևմտեան կողմը։

Նա այս արեց մի յանկարծական հայեացքից յետոյ։

Բզզէն ուղիղ ճանապարհով չը գնաց. մի քանի

ցածր պատերով պարտէզներ շատ ժամանակ չէր, որ տնկուած էին այդ կողմերը. Նա իրան ձգեց առաջին պարտէզը, այնտեղից էլ երկրորդը, երրորդը, մինչև որ վերջին պարտիզի պատի տակին կուչ եկաւ:

Բղդէն նստած տեղը դողդողում էր: Ժամանակ առ ժամանակ նա գլուխը բարձրացնում էր, աչքերը սևեռում էր դէպի պարտիզից դուրս գտնուած հինաւուրց աւերակը և նորից կռանում. Նորա այլայլուած դէմքից կարելի էր գուշակել, որ նա մի դէպքի ականատես է լինում, կամ մի խօսակցութեան ականջ է դնում. երեսը մի տեսակ ծռուել էր, բերանը բաց էր մնացել, շուտ շուտ էլ ականջն էր պատածակին դէմ անում:

Յանկարծ Բղդէն թափահարուեց և սարսափահար եկաւ. Նորա պատկերի վերայ կատաղութեան նշաններ արտափայլուեցին, նա կորզեց մօտն ընկած քարը, ձեռքը բարձրացրեց, որ շպրտի դէպի աւերակը, բայց կրկին ցած դրեց ու վեր ելաւ տեղիցը, պատի գլխովը թռաւ և սլաքի նման իրան ձգեց աւերակի մէջ:

—Ա՛խ...

Այս մի ձայն էր, որ հետևեց Բղդէի ներկայութեանը և դադարեց:

—Աղչի՛, էստեղ ի՞նչ ես շինում էսքան վաղ, Շողի՛կ, հարցրեց ճիչ արձակողին քաղցրութեամբ Բղդէն:

Ջհուտ Աղաջանի աղջիկը ոչինչ չը պատաս-

խանեց, նա սիրտը բաբախելով՝ կռացաւ ուսելու քարին դէմ տուած լիքը կուժը:

—Աղչի՛, այստեղ ո՛ւր, ջրի ճանապարհն ո՛ւր. ընչի՞ համար ես եկել այստեղ, դեռ լոյսն ու մութը նոր է բաժանուում, կրկնեց Բղդէն իւր հարցը:

—Ոչի՛նչ... հազիւ լսելի եղաւ մի մրմունջ:

—Կա՛ց, կուժդ ուսդ տամ, ժպտալով մօտեցաւ Բղդէն:

Շողիկն արդէն ուսել էր կուժը. նա քայլերն ուղղեց դէպի աւերակից դուրս տանող դռնակը:

—Մի քիչ համբերի՛, Շողի՛կ, ձեռքը կժին ձգեց Բղդէն, աղջկայ առաջը կտրեց և չը թողաց դուրս գալ աւերակից:

—Թո՛ղ..., ի՞նչ ես ուզում ինձանից, տրտնջաց շրթունքն ուռցնելով Շողիկը:

—Աստուա՛ծ վկայ, սուրբ Գէորգի գերեզմանո՛վն եմ երդում ուտում, ինձանից քեզ վնաս չի գալ. երկու խօսք ունիմ ասելու, կամ լսի՛ր, կամ ես ինձ անմահ, անգրող կը սպանեմ:

—Դու ո՛վ, ես ո՛վ:

—Հապա՛ դու ո՛վ, էն Աշտարակի ճանապարհը բռնած ներքև գնացող բաղդաւորն ո՛վ, որ թշերիդ ծերերը կարմրացրեց:

Շողիկը միանգամայն կարմրատակեց, դարձաւ բազուկի (ճակնդեղ) եփած տակ. նա չ'արգելեց Բղդէին կուժն ուսիցը վայր առնել. նա լռել ու գլուխը խոնարհեցրել էր:

—Ես համբոյրի ձայն լսեցի։

Շողիկը պապանձուած էր, աչքերն արնոտել էին։

—Քեզ եմ ասում, ես ձեզ տեսայ համբուրուելիս։

—Ես թագուն ոչինչ չ'ունիմ, իմ նշանածն էր, քեզ պէս օտար աղջկայ առաջը կտրող հօ չէ՛ր, մըրմրթաց Շողիկը։

—Եթէ հայրդ իմանա՛յ։

—Այսօր չէ՝ մի քանի շաբաթից հայրս ինքը պէտք է կռնիցս բռնի, նրան տայ։

—Էս տեղ ընչի՞ էիք եկել։

—Ո՞ւմ ի՛նչ բանն է։

—Եթէ դու շիտակ խօսող ես՝ ասա՛ ի՞նչ գործ ունէիք գիւղիցը դուրս՝ ճանապարհից ծռանց՝ էս աւերակի մէջ։

—Իմ նշանածն է, իմ գլխի տէրն է, հրամայեց գալ, իրան ճանապարհ դնել, ես էլ եկայ։

—Նա սիրո՞ւմ է քեզ։

—Մեղք է, որ չը սիրի։

—Դու է՞լ սիրում ես։

Շողիկը չը պատասխանեց, ձեռքը ձգեց կժի կանթին և ուզում էր վերցնել, բայց Եղդէն դրկեց կուժն ու չը թողեց։

—Ի՞նչ ես ուզում ինձանից, հիմի կը գոռամ, աշխարհքը գլխիդ կը ժողովեմ, սպառնաց Շողիկը։

—Մի խօսք եմ ասում, լսի՛ր ու գնա՛, —Աստուած քեզ հետ։

—Մի ժամ է բռնել ես ու ոչինչ չես ասում, քեզ համար մեծ ամօթ է, լոյսը բացուեց, երթևեկը հիմի կը շատանայ, ընչի՞ ես կամենում ինձ խայտառակել։

—Թո՛ղ Աստուած ինձ պատժի, եթէ ես քո մի մազին դիպչեմ, Շողի՛կ, միայն լսի՛ր՝ ինչ որ ասում եմ և մի՛ բարկանար, աղաչում եմ։

—Ասա՛, լսում եմ։

—Չի կարելի՞, որ Եսաինենց Սհօյին չ'առնես։

—Դու իմ հէ՛րն ես, իմ գլխի տէ՛րն ես, դու ո՞վ ես, որ ինձ էդպէս հրամանք ես անում։

—Հրաման տալու իրաւունք չ'ունիմ, միայն խնդրում եմ։

—Է՛... է՛... է՛հ, բարկացաւ Շողիկը և կրկին ձեռքը ձգեց դէպի կուժը։

—Աղաչում եմ, Շողի՛կ, ոտքերդ եմ ընկնում, ես գժուած եմ քո սիրով, կամ էս րոպէիս յետ արա՛ կողքիցս կախած դանակը, վիզս կտրի՛ր, կամ թէ չէ, Սհօյին մի՛ գնալ, իմ նշանածը դարձի՛ր։

—Ծո՞ւռ ես, ի՞նչ ես, երկու տարի է՝ ես Սհօյի նշանածն եմ։

—Հիմի էլ իմը դարձի՛ր։

—Վա՛յ, հո՛ղը գլխիս, ես անտէ՞ր եմ, ո՞րբ եմ, ձեռս ծոցումս անճարի մէ՞կն եմ, որ գնամ, կին դառնամ՝ էն էլ ո՞ւմ՝ չարչի Եղդէին։

—Հիմի ես այլ ևս չարչի չեմ, Շողի՛կ, ես հիմի փողատէր եմ, քո հօրիցդ շատ հարուստ եմ, օրն

էգուց Աշտարակումը մի մեծ խանութ եմ բացանելու, դեռ տան էլ ուրիշ գիւղերում պէտք է բանամ, քո Սհօյի հացը պէտք է կտրեմ։

—Մի մարդի հաց Աստուած չը կտրի, թէ չէ ադամորդին ի՞նչ կարող է անել։

—Քո Սհօյի աչքը հօրդ դռանը պէտք է մնիկ տայ միշտ, հէրդ պէտք է մի կտոր ցամաք հաց շպրտի, որ նա քեզ էլ պահի, իրան էլ. Բախինի թոռը հինգ գաղ խամ չիթ առնելու, վիզդ քցելու կարողութիւն չ՚ունի, բայց ես քեզ ոսկու մէջ կը թաղեմ։

—Կերածը կորած է՛, քիչ մարդիկ կա՞ն, որ էս օր իմ հօր հացն են ուտում ու հիմի նրա ոտը կռծում են. հօրս երախտիքը չ՚իմացողի աչքերը թող բռնի։

—Շողի՛կ, ես չեմ ուրանում, որ քո հայրն ինձ բարութիւն է արել, բայց այսօր նա իմ դանկի չափ կարողութիւն չ՚ունի. երէկ նա էր, էս օր ես եմ. աշխարհքս սանդուղք է՝ մինը վեր է ելնում, մինը ցած է իջնում. էս օր ես քեզ ոտից գլուխ ոսկով ու մարգարտով կը զարդարեմ։

Մի արհամարհական ծաղր արտայայտեց Շողիկը և ձեռքը կժին ձգեց։

—Սուտ չեմ ասում, Շողի՛կ, եթէ չես հաւատում՝ տես ի՞նչ եմ փռում ոտքիդ տակին, էս բոլորը քո ցաւը տանեն։

Բղդէն հանեց գրպանից մի կարմիր թաշկինակ, քակեց կապը և սփռեց գետնի վերայ։

Մեզ յայտնի ոսկիքն էին հուրհրատում և իրանց փայլի պակասորդը լրացնում առաւօտեան արևի ցոլացրած ճառագայթներից։

—Տասը, քսան էդքան էլ տանն ունիմ, Շողի՛կ, բոլորը քեզ մատաղ, ստախօսեց Բղդէն։

Ոչ մի ոսկի պակաս չէր, բոլորն այսքանն էր, բայց այս էլ քիչ չէր, հինգ վեց հարիւրից աւելի էին։

—Մենք մի կտոր հաց՝ Աստծու տուածից՝ ունինք, սոված չենք մեռնիլ, տա՛ր, ուրիշներին զարմացրու, շեշտեց բարկացած Շողիկը և այս անգամ վճռաբար բռնեց կժի ունկը։

—Չեմ թողնիլ՝ ոտքդ փոխես, մինչև չ՚ասես, որ էլ Սհօյին չես սիրում, ի՞նձ ես առնելու։

—Ինչ եմ անելո՞ւ. իմ հօր մի խօսքը քո պարկերով ոսկիքանց ու ակն ու մարգարտի հետ չեմ փոխիլ. Սհօյի կոխած սև հողը քո գլխից ինձ համար առաւել է, կօլոտ Բղդէ՛. գողնովի ոսկիքո՞վդ ես ուզում ուրիշի նշանածը ձեռքիցը խլել. ո՞ր աչքը կոյր, ոտքը կաղ, հաց ու ջրի կարօտ աղջիկն արժան կը համարի քեզ պէս այլանդակ մարդագիլի ճանգն ընկնել։

Շողիկն այս անգամ սաստիկ էր բարկացել. նորա վերայ մի անբնական ոյժ եկաւ, աչքերն արիւնակոխ եղան։ Վերջին բացականչական խօսքի հետ զոյգ ձեռքերով յետ զարկեց նա Բղդէին, կուժը թւցրեց ու շտապաւ դուրս եկաւ աւերակից։

Աւերակի պատը յենարան եղաւ Բղդէին և նա

ազատուեց մեծ փորձանքից, նա գլուխը, կամ մէջքը կը կոտրէր, անշուշտ, աւերակի մէջ թափուած քարերին զարկուելով՝ եթէ պատը նրան չը փրկէր։

—Շատ լա՛ւ, ջհուտ Աղաջանի աղջի՛կ, դու ինձ վա՛յ տաս, սպասի՛ր, հօրդ հողի հաւատարայնեմ, քեզ չո՛քէ չոք դուռս բերեմ, ո՛տս համբուրել տամ. եթէ խօսքս չը կատարեցի, գնա՛ ու պարծեցիր. բոլոր ոսկիքս դրա վերայ կը փչացնեմ, սպառնալով մատը թափ տուեց Բզզէն արագ քայլերով կուժն ուսին հեռացող Շողիկի քամակից։

—Ոսկիքդ տա՛ր մածնի տո՛ւր, գլուխդ քսի՛, կտրական պատասխանն եղաւ Շողիկի։

Աղաջանի դուստրն էլ չէր երեւում. նա ծռուել էր դէպի ձախ և մտել ջրի տանող փողոցն ու խառնուել ջրբեր աղջիկներին, որոնցից և ոչ մէկը չէր նկատել Շողիկի բացակայութիւնն և վերադարձը։

Բաւական ժամանակ էր անցել Շողիկի հեռանալու րոպէից և Բզզէն աւերակի պատին յենուած դեռ նայում էր ակնապիշ դէպի ջրի փողոցը։

Վերջապէս նա նկատեց ճանապարհովն անցնող Կարբեցի չարչիներից մէկին, որ խուրջինն ուսած՝ գնում էր գիւղերը շրջագայելու և տեղն ու տեղը նստեց, մինչև որ չարչին հեռացաւ։

—Կամ ե՛ս, կամ ջհուտ Աղաջա՛նը, երկուսից մէկը պէտք է Կարբու դաւառումը յիշուի, յիշատակուի, կամ ե՛ս, կամ Բատինենց Սհօ՛ն,—երկուսից մէկը պէտք է Շողիկին տիրանայ, դեռ տեսնենք ի՛նչ

կ՚ասի ուստայ Սիմօնը։

Այս խօսքերով նա կապեց կրկին իւր թաշկինակը, գրպանը դրեց և շտապով բռնեց Աշտարակու ճանապարհը։

Ի.

ԲՍՏԻՆԵՆՑ ՍՀՕՆ

Երկու տարի էր՝ Բատինենց Սհօն խանութ էր բացել Աշտարակումը. նա առաջին խանութպանն էր այնտեղ։

Սհօն մի գեղեցկադէմ երիտասարդ էր, բարձր հասակով, թուխ և խոշոր աչքերով, կարմիր երեսով ու նօսր նորաբոյս ընչացքով, միշտ ծիծաղադէմ, միշտ հաճոյախօս, յաճախորդների ամեն խօսքին ջանով պատասխանող, այն ջահէլներից մէկը՝ որի համար ամեն տեսնող ասում է. ի՛նչ տղայ է, ափսո՛ս, որ մայրը մէկն է ծնել. իսկ համեստ բնաւորութեան և գրաւիչ պատկերի համար՝ բոլորեքեան նրան նմանեցնում էին մօր ազիզ պահած, աբուռով մեծացրած աղափ աղջկայ։ Այդ համեմատութիւնը միանգամայն յարմարում էր Սհօյի բնաւորութեանը. նա չ՚ունէր Կարբեցու խորամանկ ճարպիկութիւնը. մի մազաչափ սխալմունք իւր կողմից, կամ սառը խօսք օտարից՝ նորա երեսը շինում էր երեկոյեան բոսորային երկինք, ականջները կէծանում էին, կարմրութիւնը սփռուում էր բոլորակ դէմքի վերայ և քափ ու

քրտինքը կոխում էր. այդ ժամանակ նորա ձայնն էլ նուագում էր, որ՝ խոստովանած՝ առանց նրան էլ ամօթխած օրիորդի մելոդիական և քաջոլոր ձայնից աւելի չէր:

Մի հատիկ հօր զաւակ էր Սհօն, Կարբեցի Բատինենց Կարապետի որդին էր:

Կարապետը, իբրև իւր նախկին կարողութիւնը կորցրած մարդ, ձեռնհաս չէր լինիլ երբէք իւր որդուն խանութպան շինել՝ մինչև անգամ Կարբու մէջ, թող թէ Աշտարակու նման տեղումը, եթէ ուրիշը նրան չ՚օգնէր: Ուստի և նա մեծ ուրախութեամբ պատրաստակամութիւն ցոյց տուեց, երբ մի օր ջհուտ Աղաջանն առաջարկեց նրան իւր խնամութիւնը, աւելացնելով՝ թէ Սհօյին մի մշտական կտոր հաց տալու համար՝ ինքը մտադիր է Աշտարակումը խանութ բանալ նորա համար:

Ասել, անել՝ շատ չը տևեց: Մի կիւրակէ երեկոյ Կարբու իշխանների ներկայութեամբ տէր Յակովբը «Պահպանիչն» ասաց, տէր Յովակը «Սուրբ Խաչիւը» և նշանի մատանին օրհնուեցաւ, Աղաջանի տանը մեծ հացկերոյթ եղաւ, Սհօն Աղաջանի փեսայ հրատարակուեցաւ:

Ամէն ինչ նախատեսած էր, խաչեղբայր պտռելու կարիք չը կար, նախ՝ որովհետև տեղական սովորութեան համաձայն՝ մի երկու տարի նշանածներին պսակը պաս էր, և երկրորդ՝ որ Աղաջանի սրտէ ի սիրտ բարեկամ Արամենց Յարութիւնը և՝ խաչեղբայրու-

թիւն պիտի անէր և իւր փողոցի կողմի սենեակի դրսևի պատը պէտք է ծակէր, դուռը կախէր, դարակներ շինէր և իւր կողմից մի մասնաւոր դրամագլուխ դնելով՝ պիտի ընկերութեամբ խանութ պահէր Սհօյի հետ:

Բարդ չէին այն ժամանակուայ կենսական պահանջները. պարզութիւն և նահապետականութիւնն էր թագաւորում հայ աշխարհումը և Սհօյի խանութը միանգամայն լրացնում էր Աշտարակու և մօտակայ գիւղերի կարօտութիւնը:

Սհօն միաժամանակ ժողովրդի մերկութիւնը ծածկող կտաւավաճառ էր և տնտեսական պիտոյքը հայթհայթող մանրավաճառ:

Առաջին պաշտօնով զգալի վնասը հասաւ թափառաշրջիկ հրէայ կտաւավաճառներին, երկրորդ առուտուրը գրգռեց Բղդէի և միւս չարչիների նախանձը, որ ասել է, թէ Աղաջանը մէկ ձեռքով շինածը միւսով քանդում էր:

Այսպէս չէր հասկանում ինքը ջհուտ Աղաջանը. նա իւր յաճախորդ չարչիներին խորհուրդ էր տալիս փոքր առ փոքր տեղի տալ մեծամեծ գիւղերից և իրանց գործունէութեան շրջանն ընդլայնել այնպիսի տեղերում, ուր դեռ շռայլութեան ոտքը տուն չի մտել:

Աղաջանի գուշակութիւնը սխալ չէր, տարէց տարի ժողովրդի տնաւեր զեղխութեան և աւելորդասիրութեան հետ բուսնում էին գիւղերումը խանութներն և աւելանում էին:

Բոլոր չարչիքը խոնարհելով իրանց ճակատագրին՝ բարձրացան լեռնոտ և քաղաքներից հեռու ընկած գիւղերը. իսկ յամառ Բզզէն էր, որ ոչ միայն հակառակեց Աղաջանին, այլ և կոյր բաղդի յաջող բերմունքով այսօր նրանից շատ վեր է նիւթական ուժով, նորա ոսխրիմ Թշնամին ու խաղաղութիւնը վրդովողն է:

Բզզէի վերայ չը կարաց ազդել Աղաջանը, ընդհակառակն՝ նա մեծ ներշնչութիւն ունեցաւ իւր փեսացուի բնաւորութեան վերայ:

Մեզ յայտնի է, որ Աղաջանը սակաւապէտ էր, տկարներին օգնող և անգործներին գործ տուող էր. նա ինքը հանում էր միշտ՝ Թագաւորական անյետաձգելի հարկապահանջութեանց ժամանակ՝ձեռքը պակաս գիւղականներին՝ ամենաօրինաւոր տոկոս միայն ստանալու պայմանաւ, ինքն էր, որ ամենատեսակ աղէտների միջոցին սրբում էր Թշուառի աչքի արտասուքը:

Այդ մի և նոյն սիրելի յատկութիւնները պատուաստեց նա և իւր փեսայի մէջ. շատ չը քաշեց, Սհօն մի բարի վաճառականի անուն և համբաւ ժառանգեց Աշտարակում և մերձակայքումը:

Նորա յաճախորդներն ըստ առաջնոյն մի քանի գազ կտաւեղէնի համար ստիպուած չէին լինում Երևան գնալ, կամ հրէաների տոմարի մէջ մշտապարտապան գրուել:

Սհօն ինքն էր ամեն կարիք հայԹհայԹողը և Երևանու վաճառականաց վստահութիւնն ու վարկը ձեռք բերողը:

Կրկնենք, որ Բատինենց Սհօն էր Աշտարակի առաջին խանութպանը. երկու տարի իւր դէմ մրցում չ՚եղաւ, բայց մի քանի օր է, որ գիւղի միւս ծայրումը մի երկրորդ առաւել լիքը խանութ էլ բացուել է:

Ո՞ւմն էր և ի՞նչպէս:

ԻԱ.

ԶԱՐԳԱՐ ՍԻՄՈՆԸ

Բարի և հեզահամբոյր մարդ էր Զարգար Սիմոնը. նորա ծննդավայրը մինչև այսօր էլ ամենքից անյայտ մնաց, բայց խեցբեկ բարբառը, լեզուի տակին ոլորուող բառերը, վարդակարմիր կխաբոլորակ դէմքը, խնամքով պահպանուած, ծիծեռնակի Թևից աւելի Թուխ, սրածայր ընչացքը, կոնաձև, մի կողմը ներս ծալած Բուխարայի Թանգագին մորԹուց գըլխարկը, մուգ կապտաւուն Թևաւոր չուխէն, այս ամենը նրան մատնում էին, որ Ղարաբաղի կողմից մի եկաւոր էր:

Սկզբներումը Սիմոնը մի Թափառաշրջիկ վարպետ էր՝ իւր համարուեստ շատերի նման. նա ձմեռները դաշտային գիւղերում էր մի փոքրիկ սենեկի մէջ բաց անում իւր խուրջը, գետնի մէջ ամրացնում փոքրիկ սալը (ջուղան), իսկ ամառները լեռնային հով ու զով գիւղերի հիւրն էր լինում:

Նա շինում էր պղնձեայ, կամ արծաԹեայ գիւրագին գիւղայարմար մատանիք և ապարանջաններ,

փոխանակում էր ցորենի, իւղի և ուրիշ տեղական բերքերի հետ և գեղջկական նորատի հարս ու աղջիկներին զարդարում:

Ուստա Սիմոնը հմուտ էր իւր գործին. պատահում էր, որ նա ոսկի զարդեր ևս պատուէր էր ստանում նշանադրութիւնների և հարսանիքների համար. նորա ձեռացաջուրն ամենքից հաւանութիւն էր գտնում:

Չը գիտեմ՝ աչքի (ոջոորդ) Փիլումի Սիրամարգ աղջկայ գեղեցկութի՞ւնն էր, թէ թափառականութիւնից ձանձրոյթ զգալը, բայց այդ երկուսից մէկը խլեց ուստա Սիմոնի ուսից պանդխտութեան խուրջը, կոխեց նրան Աշտարակու տներից մէկը, տանտէր շինեց և հաստատ գործի կանգնացրեց:

Հաւանական է, որ Սիրամարգի, (առաւել լաւ է գիւղական կոչումով ասենք) Սիմիզարի բարձր հասակը, կեռ-կեռ յօնքերը, գրաւիչ աչքերը, քնքոյշ և սպիտակ մորթը յափշտակեցին երիտասարդ զարգարի ուշքն ու միտքը, երբ նա, Փիլումի երկայնափող, բ ա ղ չ ա ս ա ր ա յ, անսխալական հրացանն արծաթի օղերով զարդարելուց յետոյ՝ մի օր էլ պատուէր ստացաւ չափել նորա հրեշտակագեղ դուստր Սիմիզարի հօլանի բիլակը (ձեռքի դաստակը), հնուց մնացած ջարդ ոսկիներից աղջկայ համար մի ապարանջան շինելու:

Այդ արտակարգ դէպքին էր պարտական ուստա Սիմոնը, որ տեղը պնդացրեց, Աշտարակից դուրս

քայլ չ՚արեց. ապա թէ ոչ, Ղարաբաղու զաւակը գաղթականութիւնից ձանձրացողը չէ:

Այսօր իսկ, ո՛ր գիւղը կամենաս՝ գնա՛, ո՛ր քաղաքումը կը ցանկանաս՝ հարցրո՛ւ, եղած օտարականների մեծամասնութիւնը ղարաբաղցիներից է կայացած. ղարաբաղցիք են, որ բնատուր խելքով և ճարտարութիւնով զանազան միջոցներով փող են աշխատում. վաճառական, արհեստաւոր, աշուղ, կապալառու՝ գլխաւորապէս ամեն հողում, ամեն երկրում ղարաբաղցիք են:

Սկզբներումն այս մարդիկն իրանք միայնակ էին շրջում՝ չ՚ընդհատուելով խպառ իրանց սիրելի լեռ ու ձորերից. մի տարի, երկու տարի քարշ էին գալիս և մի օր էլ մօքները բերած հայրենիքումը թողած սիրասուն գերդաստանը, շտապում էին գրկել նրանց ու իրանց կարօտը լցուցանելուց յետոյ՝ կրկին պանդխտութեան զաւազանը ձեռք առնել. իսկ վերջերումս՝ մի կորստաբեր սովորութիւն հայրենիքի խորթ և ապերախտ զաւակի յատկանիշ է ընծայում նրանց:

Այժմ ղարաբաղցի թափառականն իւր ընտանիքն էլ հետն է քարշ ածում:

Գիւղ չը կայ այսօր, ուր չը գտնես տեղական կանացի զարդ ու պաճուճանքներից որոշուող մի կնոջ գլուխ՝ հարիւր գոյնզգոյն մետաքսեայ թաշկինակներով փաթաթած, չը գտնես մի կին՝ ոսկի կոճակով, կարմիր բեհեզեայ շապկով և չաքաւոր արխալղով: Դա ղարաբաղցու կին է՝ Ղարաբաղի գիւղերից, կամ Շու-

շուայ—Ղալից այստեղ վերաբնակուած։

Ուստա Սիմոնները բացառիկ երևոյթներ են։ Ընդհանրապէս Ղարաբաղի ժամանակաւոր պանդխտութեան դիմողներից շատ սակաւներն ամուսնանում են օտարացիների հետ։ Այլ բան է, եթէ նոքա Սիմոնի նման բոլորովին գաղթել են իրանց ծննդավայրից։

Տարիներով բացակայում էր, ասացինք, առաջ, ղարաբաղցին ընտանիքից, բայց միշտ աչքը դէպի յետ էր՝ դէպի իւր սիրելի կինն ու զաւակը, և գուցէ, այդ ընտանեսիրութիւնն է, որ դժուարացրած թափառականութեան արհեստը՝ ստիպել է շատերին գերդաստանը կառուի ձագի նման բերաններումը բռնել և պտտեցնել աշխարհէ աշխարհ։

Աշտարակը չէր միայն, որ սիրում էր ուստա Սիմոնին իւր քաղցր բնաւորութեան և ճշդասիրութեան համար. նա միշտ պատուէրներ էր ստանում և շատ հեռաւոր տեղերից։

Առանձին խանութ չ՚ունէր զարգար Սիմոնը. նորա փոքրիկ սենեակն էր իւր ընդունարանը, ննջարանը և խանութը։

Մի անկիւնում, դրան մօտ, նա իւր ձեռնափուքսըն էր վայր թողել, միւս կողմը՝ իւր ամօթխած ջահել կինն էր պատի մէջ շինած փոքրիկ կրակարանի վերայ կաթսան դրել, երկու հոգու համեստ ճաշը պատրաստում. մի կողմին էլ Ղարաբաղից հետը բերած փոքրիկ գեղեցիկ գորգի վերայ իւր այցելուներին էր ընդունում։

Այս ձմեռն էր. ամառները նա գործում էր բակումը՝ չ ա ր դ ա խ ի հովումը։

Ուստա Սիմոնի բնաւորութեան հետ ընտելացել էր ողջ գաւառը. ամենքը գիտէին, որ երեկոյեան զանգակը տալուց յետոյ՝ մինչև միւս առաւօտեան ժամերգութեան վերջը՝ արհեստին վերաբերեալ գործով նորա մօտ գալ անհնարին է։ Այս լի օրերն էին։ Կիւրակէ և տօն օրերն ինքն ըստ ինքեան հասկանալի են։ Այդպիսի գործից ազատ ժամանակներն ուստա Սիմոնի այցելուները լինում էին իւր սրտակից բարեկամները, որոնց հետ նա սիրում էր ուտել, խմել, զուարճանալ և իւր բարձր ու քաղցր երգերով ու բայաթիներով ամբողջ բերդաթաղը թնդացնել։

Մի ամարային երեկոյ, բաւականին ուշ, մինչ զարգար Սիմոնը դեռ նոր վերջացրել էր իւր գիշերային «Խաղաղականի» աղօթքը և պատրաստւում էր անկողին մտնել, նորա բակի դուռը բաղխեցին։

Այդ ժամանակ, տեղական սովորութեան համաձայն, ուստա Սիմոնը կտերն էր քնում։

—Ո՞վ էք, ձայն տուեց զարմացած ոսկերիչը։

Բաղխողը չի պատասխանում. դրան հարուածները դադար առան։

Սիմոնն էլ իւր կողմից է սպասում պատասխանի։

Նորից բաղխումը շարունակուեց։

—Ո՞վ ես, եղբա՛յր։

Լռութիւն է։

Ուստա Սիմոնի համբերութիւնը հատաւ, նա կտրիցն իջաւ բակը և դրան սողնակի ծակից կրկնեց իւր հարցմունքը։

—Բաց արա՛, ուստա Սիմո՛ն, գործ ունիմ հետդ։

—Ո՞վ ես։

—Ընչի՞դ է պէտք, քեզ համար գործ եմ բերել։

—Ի՞նչ գործ։

—Զարգարի։

—Զարգարի հետ էգուց չէ՝ էլօր կարող ես տեսնուել, էս ժամանակ զարգար Սիմոնը կայ տանը. հիմի աւչի Փիլումի փեսայ Սիմոնն է գնում իւր կռներին հանգիստ տալու, զարգար Սիմոնը տանը կը լինի վաղը չէ միւս օրը, չորեքշաբթի, առաւօտեան ժամից յետոյ. կարող ես գալ, հետը տեսնուել։

—Ախար ինչո՞ւ համար։

—Թէ դու հայ ես, կ՚իմանաս որ էգուց կիւրակի է։

—Սխալ ես, ուստա՛, երեքշաբթի է։

—Սխալը դու ես, էգուց հայի համար մեծ օր է, Սահակ, Մեսրովբի տօնն է. ասենք տօնացոյցի մէջ կիւրակի չի նշանակած, բայց ես մեր աշխարհքումը քանի շաբաթ ջահել ժամանակս կարդալու էի գնում մեր վարդապետի մօտ, նա ինձ հասկացրել է, թէ Սահակ, Մեսրովբն ի՞նչ մարդիկ են եղել, ի՞նչ լաւութիւն են արել հայի համար. լուսահոգին հրամայեց, որ էդ օրը միշտ կիւրակի պահեմ, ես էլ կատարում եմ. ինձ ի՛նչ, թէ էս աշխարհքումս ոչով չի պահում։

—Տօ՛, եղբա՛յր, հաց ասա՛, ոսկի ասա՛, կիւրակիս օ՛րն է, հալալ կիւրակիքն էլ որ պահես, քեզ հերիք է։

Սիմոնն ուշք անգամ չը դրեց սողնակից լսուող փսփսոցին, որի մէջ «ոսկի» բառը մի քանի անգամ շեշտուեց. նա շտապով վեր բարձրացաւ կտուրը և սկսեց շորահան լինել։

—Մեղա՛յ քեզ տէր, բարկացաւ կտրից ուստա Սիմոնը, երբ դրան բաղխիւնը նոր ի նորոյ շարունակուեց։

—Եղբա՛յր, քեզ չե՞մ ասում՝ զարգարը տանը չի, ի՞նչ ես գլխացաւանք տալիս, հէնց հիմի ձայն կը տամ, ողջ թաղը գլխիդ կը հաւաքեմ, քաշուի՛ր, հեռացի՛ր։

—Աստուծոյ հիւրն եմ, պանդուխտ ճանապարհորդ եմ, գիշերս դուրսն եմ մնացել, ուստա Սիմո՛ն, մի՞թէ դու հայ-քրիստոնեայ չես, որ էս կէս գիշերին օտարականի վերայ դուռն երեսին փակում ես. ինձ համար շատ տեղ չի հարկաւոր, մի անկիւնում կուչ կը գամ, առաւօտը կերթամ իմ ճանապարհը. ես կատակ էի անում, քո հաւատդ էի փորձում, թէ չէ այս ի՛նչ զարգարի մօտ գալու ժամանակ է։

Այս խօսքերը Սիմոնի առաջը դրեց անծանօթը՝ երկրորդ անգամ սպառնալիք տալուց յետոյ։

—Հիմի, ով և լինիս, իմ գլխի, իմ աչքի վերայ տեղ ունիս, համեցէ՛ք, ասաց ուստա Սիմոնը դուռը բաց անելով և ինքը յետ դարձաւ, կայծաքարը ձեռքն առաւ, ճրագը վառեց։

—Բարի երեկո՛յ։

—Օ՛հ, Բղդէ՛, դու ե՞ս, այս ո՞րտեղից էս քանի ուշ։

—Կարբուց, ուստա Սիմո՛ն, Կարբուց, ուղիղ քեզ մօտ, քո դուռն եմ ընկել. գլուխս կտրես՝ հակառակողը չեմ, պէտք է ինձ խելք սովորցնես, բացի քեզանից ոչ ոք ինձ օգնել չի կարող։

—Տօ՛, սատանախաբ Կարբեցի՛, դու խելքի համար ինձ մօտ կը գա՞ս, օրական քանիսի՞ գլուխն ես անլուաց կլէկում, հացը ձեռքիցն առնում, ճանապարհ գնում. ո՛վ գիտի, էլ ինչ հատիկ ունիս թափելու, մի փորացաւանք կ՚ունենաս, ասա՛ տեսնեմ։

—Չէ՛, դեռ առաջ քո օրհնած բերանով, ինչպէս Տէրն ինքը ճշմարիտ է, խօսք տո՛ւր, որ խնդիրս կը կատարե՛ս։

—Ախար ի՞նչ գործ ունիս։

—Դեռ քո կտրական խօսքդ ինձ բաշխի՛ր։

—Իսկ եթէ խնդիրդ իմ ուժից վեր լինի՞։

—Տանիցդ խռկի՛ր, դուրս քշի՛ր։

—Խօսք եմ տալիս, ստիպուեց ասել ուստա Սիմոնը։

Մի բռնաչափ ոսկի թաշկինակի մէջ փռուեց Սիմոնի առաջին։

Սիմոնը մի հատ վերցրեց, զննեց և ասաց.

—Դշխոյն Հեղինէի փոս ոսկի են, սրանք թանգագին բաներ են, ամեն մինը տասը մանէթից աւել կը կշռեն, իսկ հասկացողի համար մի հատը հարիւրներ կ՚արժեն. սրանք հին սիքքեա են,

Ֆռանգներն ու Ինգլիզները պղնձէ հին ժանգոտած սև փողին մանէթներ են տալիս, էս հօ՛ ոսկի է. նրանցից մի երկու հոգի Աբարանով անցկենալուս՝ մօտս եկան և ինձանից խնդրեցին. ամառ էր, ես կալումը նստած՝ գործում էի։

—Հիմի էդ մարդիկը ձեռք ընկնողը չեն, Ֆռանգստանը հեռու է, դու ուրիշ խորհուրդ տո՛ւր։

—Ի՞նչ ես ուզում։

—Ընչի՞ չես հարցնում՝ ո՛րտեղից են։

—Իմ ի՞նչ ցաւն է, քո ձեռքին է, քո ապրանքն է։

—Ախա՛ր գտել եմ։

—Բարով վայելես։

—Ուղիղ եմ ասում, եղբա՛յր։

—Ես խօսքիդ իսկութեան համար կասկած չը յայտնեցի՛։

—Բոլորն յիսուն հատ է։

—Թէկուզ հազար լինի, ինձ համար միևնոյն է։

—Ի՞նչ անենք, որ կարողանանք մսխել։

—Տար դիւանի (գանձարանի) առաջը դի՛ր։

—Որ ձեռքիցս առնե՛ն։

—Ես լսել եմ, որ կէսը քեզ կը տան։

—Եթէ չը տուի՛ն։

—Այդ էլ քո գործն է։

—Իսկ եթէ հալենք, ոսկու տեղ ծախե՛նք։

—Ո՛ւմ ձեռքը կը զօրի դրանց հնոցի մէջ դնել հալել։

—Ուստա Սիմոնի։

—Ասենք էդ մեր գործն է, բայց ուստա Սիմոնը գլուխը քարովը կը տայ ու էդ սխալը չի անիլ. ես, իրաւ է, իմ կեանքումս շատ փողեր եմ ջարդել, հալել, ոսկեղէն, արծաթեղէն շինել, բայց նրանք բոլորը նոր փողեր են եղել, որոնցից շատ կայ, իսկ դշխոյն Հեղինէի փոս ոսկի, քանի խելքիս տիրացել եմ, մի հատ եմ տեսել, ես էդ բանը չեմ անիլ։

—Էս րոպէիս դշխոյն Հեղինէն մեզ հաց չի տալ, ուստա Սիմո՛ն, սրանց մսխելու հնարքը գտի՛ր։

—Եթէ հալալ մարդ ես, ինչպէս ասացի, պէտք է դիւանին յայտնես, կը գնահատեն, կիսի արժէքովը քեզ փող կը տան, յիսունի կէսը մօտ 200, 250 մանէթ կը բռնի, էլ ընչի՞ քո բաժին Աստուածանից զոհ չես։

—Ամենից լաւն այն է, մէկը քեզ վերցրո՛ւ, Ֆռանգների վերայ թանգ գնով կը ծախես, մնացածը հալի՛ր, ինձ տո՛ւր, բայց այն պայմանով, որ հալելու ձեւն ինձ սովորցնես. ո՛վ գիտէ, աշխարհք է, կարելի է բաղդս կորում է, էլի եմ գտնում, ամեն անգամ քեզ ընչո՞ւ գլխացաւանք տամ, քնահարամ անեմ։

—Հասկանում եմ, շատ ունիս ու ինձանից թագցնում ես. Աստուած քեզ հետ, ես քո ասած մարդը չեմ, ում որ խաբել ես, էլի նրան խաբի՛ր, ես ոչ կը հալեմ, ոչ կը սովորցնեմ։

—Ի՞նչ է, մի հատը քի՞չ ես կարծում. էս ոսկի՛

է, ո՛սկի, մի դատարկ հալելու համար մէկը վերցնելը նա՞զ ես անում։

—Էդ քո մի հատ ոսկին տա՛ր մածնի տուր, գլուխդ քսի՛ր։

Բզզէն խիստ այլայլուեց վերջին վիրաւորական առածի վերայ. նա այս խօսքն այսօր երկրորդ անգամն էր լսում։

—Ուստա Սիմո՛ն, ընչո՞ւ ես ինձ անպատիւ խօսք ասում, էս առուտուր է, չես ուզում հալել, քո կամքն է, ի՛նչն է շատ՝ զարդարը, շանը խփում ես՝ զարդարների վերայ է հաչում, դու չէ՝ քո հօրեղբօր որդին կը հալի. ծանօթ, բարեկամ մարդիկ էինք, քեզ մօտ բերի, որ օգուտը դու տեսնես, մէկը քիչ ես համարում աշխատանքիդ վարձ, երկո՛ւսը վեր կալ, միայն էլի՛ ասում եմ, հալելը սովորցրո՛ւ։

—Ա՛ռ, քաշուի՛, ասում եմ, քանի տանուտէրին չեմ բերել, գլխիդ կանգնացրել, էդ տաղացրած ջիբերդ դատարկել տուել. ես քո երեխէ՞ն եմ, որ խաբում ես. չէ՞ որ գողացած աքլորիդ պոչը, վաղի մօլլի նման, փէշիդ տակիցն երեւում է. դէ գնա՛, ես ոչ թագաւորական փող ուտող եմ, ոչ գող եմ, ոչ գողի ընկեր եմ. մեր ճակատի քրտինքով Աստուած մի կտոր հալալ հաց է տուել, թող էն ո՛չ կտրուի իմ գլխիցը. քո ասած մարդն ես չեմ, ես հայ քրիստոնեայ եմ, հայը գողութիւն չի կարող անել, անի էլ՝ չի կարող պարտակել։

—Ես էլ քեզ պէս հայ եմ, ուստա Սիմո՛ն, քեզ ասացի, որ գողացել չեմ, գտել եմ. իմ բաղդս էր՝ Աստուած ինձ տուել է, ընչի՞ պէտք է տանեմ խազինէն (գա՛նձարա՛նը) տամ։

—Գնա՛, եղբա՛յր, գնա՛, ում որ կեղծաւոր փարիսեցութիւնով մինչև օրս խաբել ես, էլի նրանց գլուխը կլէկի՛ր, քո ուզածն ես չեմ, քեզ ընկեր կարող է լինել Երևանցի զարգար մաշադի Ռաջաբը, որ երկար շուկայումը խանութ ունի. էս գաւառի բոլոր ճանապարհ կտրող աւազակների կողոպտածը նորա փորն է մտնում, նորա ձեռովն է պարտակւում, նա ինքն է հալում. հինգ անգամ դիւանի ճանգն է ընկել, բայց էլի գլուխը դուրս է պրծացրել, նորա համար, որ Երևանի ղուլլուղի մարդկանց կնանոնց մատներն ու վիզը նորա ձեռքովն են զարդարուած։

—Իմ ուզածն էլ հէնց դա՛ է, հալալ է նորա կերածը, մարդն էդպէս պէտք է լինի, քեզ պէս իւր հացին քացի տուողը քեզ պէս էլ ձեռը դատարկ կը մնայ. մնա՛ս բարև, շատ լաւ տեղ սովորցրիր։

Այս խօսքերով Բղդէն ոսկիքը կապեց ու դուրս եկաւ Սիմոնի մօտից։

ԻԲ.

ԷՍՕՐ ԲՕՇԱ, ԷԳՈՒՑ ՓԱՇԱ

1850 Թուականների առաջին կիսումն էնք. Երևանու երկիրն ինքն իրան չի նմանում, աշխարհն արիւնի մէջ ծփծփում է։

Շատ ժամանակ չէ այս տարապայման և տարաժէպ փոփոխութիւնը. պատմութիւնիցս դեռ մի քանի օր յառաջ գառն ու գայլը միասին էին արածում. մարդիկն իրանց սովորական աշխատանքի հետ էին, իսկ այսօր, ո՛ր կողմը դառնում ես՝ մտքերն յուզուած են և ուշադրութիւնները լարուած։

«Ալէքսանդրապօլ, Կարս, Օսմանցի, Բէհբուդով, զօրք, ասկեար.»—ահա՛ այն խօսքերը, որ ամէն անկիւնում ականջներդ չորս չինած՝ լսում ես ու զարմանում։

Ներկարարի լեզակի կարաս չի խանգարուել [1], լուրերը շինծու և ստեղծովի չեն. կատարուած դէպքերը, գիւղերում մտած կենդանութիւնը հաստատում են իրողութիւնը։

Ի՞նչ է այս։

Ամէն տեղ խօսում և պատմում են, թէ իշխան Բէհբուդեանը Թուրը հանած՝ ռուսի զօրքի առաջն է ընկել, Ալէքսանդրապօլու բերդումն և Հրջապատումը բանակներ տուել, Ախուրեան գետի այս կողմի ափերը զինուորներով լցրած՝ պատրաստւում է այս օր կամ վաղը, էս րոպէին, կամ միւս ժամին գնալ Օսմանցուի դէմ պատերազմը. պատմում են նոյնպէս, ճշդօրէն, թէ չափազանցացրած՝ որ գետի միւս երև-

[1] Ըստ աւանդութեան՝ Ներկարարի ներկի կարասը խանգարուելուց՝ մինչև մի արտասովոր սուտ չը հռչակեն, չի ուղղուիլ, ներկը չի բռնիլ։

սին Տաճկի ասկեարի (զօրք) կարմիր ֆասերի շատութիւնից՝ հեռուից էլ ուրիշ բան չի երեւում, կարծես, դիտմամբ դաշտ ու սար լալազար ծաղկ, կամ կարմիր սուտ ցանած լինի, կամ շիլա է փռած։

Պատմածներից ոչ մինն առասպել չէ, հաստատ փաստ է, որ 50 Թուականների պատերազմն անսպասելի կերպիւ մեծ ուժգնութեամբ յանկարծ յառաջ մղուեց և մեր աշխարհի ամեն անկիւնը շարժման մէջ դրեց։

Թէ քաղաքական շրջաններում քանի՛ ժամանակ էր այս հարխան եփւում ու հարուում, այդ ժողովրդի խելքից և մտածողութիւնից վեր էր և Կովկասեան համայն բազմատարր և բազմալեզու ազգաբնակութիւնների համար միանգամայն անմատչելի, սակայն այսօր այլ ևս գաղտնիք չէ, ողջ աշխարհն եռում է, մարդակեր պատերազմը կամ սկսուել է, կամ սկսուելու վերայ է. Ախուրեանի երկու ափերին Ռուսի և Տաճկի անթիւ անհամար բանակներն են նստել և կռուարար խոյերի նման մէկ իրար են դիպչում, մէկ էլ յետ ու յետ գնում առանց երես թեքելու, որպէս զի նորից յարձակումն գործեն, նորից ճակատ ճակատի շրխկացնեն։

Աշխարհը ժողովել է Ալէքսանդրապօլ, տեղից շուտ զարթնողը Շիրակ է վազում. աշխատանքի ու շահի տարի է, փող վաստակելու ճանապարհը հարթուել, լայնացել է, ոսկին թիերով են քերում, չ'օգտուելը խելքը կորցնել կը նշանակի։

Այս ամենը շատ լաւ, բայց մարդիկը բոլորն ատամնաւոր են. արտաքին համագումար շարժականութեան նման մի ներքին կենսական մեքենայ ևս իւրաքանչիւր անթիւ և անփետուր երկոտանու իւր մէջն է գործում, սրանք ամենքն էլ ուտել են պահանջում, քաղցած մնալ չի կարելի, այսքանի կարիքը ո՞րտեղից պէտք է լցուի։ Դիցուք՝ որ Շիրակի ամբարները հազարաւոր տարիներ յառաջ շատակեր Շարաներ են կշտացրել, բայց Շարաներն այն ժամանակը բիւրաւորներ չէին եղել. այսքանին մի՞թէ Շիրակը կը յագեցնի. սրանց մի ճար պէտք է տեսած, թէ չէ քաղցած կը կոտորուեն։

Երկիւղ չ'ունինք այդ կողմից, մեր երկրումը ոչ ոք քաղցած չի մեռնիլ, շէն ու հաստատ մնայ բարելից և արգաւանդաբեր աշխարհը՝ Երևանու հողն ու ջուրը։

Ահա հասել է օրը, որ աշխարհի միւս ծայրից մարդիկ հաւաքուին մեր հողումը, ականատես լինին մեր երկրի արգաւանդութեանը և յետ գնան, զարմանքով պատմեն իրանց հայրենիքումը։

Այդպէս էլ եղաւ. կռիւը բորբոքուեցաւ Շիրակումը և մեր երկրի բերքերն այնտեղ տեղափոխուեցին։ Բոլորը խլուեց և կրուեց դէպի պատերազմի դաշտը։

Խլողներն եղան իրանք արդիւնահանողները. նրանք թանգ գնով էին վաճառում իրանց արդիւնաբերութիւնը. եղան դրամատէրերը՝ սրանք առնում էին

առաջին ձեռքից և կրկնապատիկն օգտուում. եղան նոյնպէս և տեղական վարչութիւնից կարգուած հարկահանները:

Վերջինները նպաստում էին պատերազմական պաշարեղէն հայթայթողներին: Կապալառուները ձեռնհաս չ'եղան ճշգրութեամբ գլուխ տանել իրանց յանձն առած պարտականութիւնը. Նրանք կապալը վերցնելու ժամանակ նախապէս աչքի առաջ չէին ունեցել առաջիկայ պատերազմը և այսօր ընկճուել էին ծանրութեան տակ:

Նրանց զիջողութիւն եղաւ, կարգադրուեց, որ տեղացի ժողովրդի կողմից նրանց օգնութիւն տրուի:

Որպէս զի ըստ կարելւոյն շտապեցրուի ժողովրդի կողմից լինելիք գործակցութիւնը, կապալառուները բազմադիմի ներելի և աններելի միջոցների ձգտեցին. Նրանք անձնական ներկայութեամբ, կամ իրանց ճարպիկ գործակալների ձեռքով՝ մտերմական յարաբերութիւններ հաստատեցին գիւղական, համայնական և գաւառական վարչական մարմինների հետ, ճնշում գործ դրին միամիտ գիւղականի վերայ, ռամկի յօժարակամ գործակցութեանը պարտականութեան ձև և նշանակութիւն տուին և ծակամուտ բաղդախնդիրների համար որսկանութեան ազատ ասպարէզ բաց արին:

Ցաւալի և ոաժանելի էր այդ ժամանակ գեղջուկի վիճակը. իւր դառն աշխատանքը — Աստուծոյ տուած բարիքը, որոնցով առատ էր այդ տարին,

ռամկի գլխին պատիժ դարձաւ, նորա արդար վաստակն իւր քթերից եկաւ:

Բաւական էր, որ անխիղճ կապալառուի ստորաքարշ գործակատարն իւր ոսկեով վարձած լրտեսների ձեռքով հոտ առնէր, թէ այս ինչ գիւղում մի որ և է գիւղականի մօտ ամբարած կայ, ինչ տեսակ և լինի միևնոյն է, հացահատիկ, կամ աղացած ձմեռուան ալիւրի պաշար, — ահա գաւառապետի կամ իւր օգնականի գրագիրը, եասաւուլը, շատ անգամ նոյն պաշտօնատարներից մէկն ու մէկը յանկարծահաս յարձակումն էին գործում, դատարկում էին շտեմարանը, բարձում էին հէնց իրանց պաշարատիրոջ գրաստին և քշել էին տալիս այնտեղ, ուր արիւնը ջրի հետ միացած էր, ուր հազարաւոր մարդիկ բերուածը ուտում, մարսում, սպառում էին և միւս օրը կրկին գտնում էին տեղը լի:

Այդ ապօրինի յափշտակուածի փոխարէն կապալառուն՝ իբրև ողորմութիւն՝ շպրտում էր երկրագործի երեսին նախկին էժանութեան ժամանակի գինը, մի վարձատրութիւն, որ այսօր ծաղրալի էր անուանելը:

Շատ անգամ երկուստեք համաձայնութիւն էր գլուխ գալիս կապալառուի և գիւղական ստորին վարչութիւնների մէջ, տալիք աննշան գումարը վերցնում էր մի նորաստեղծ, երևակայական հարկի վճարք և հաւասար կիսուում մեքենաներ լարողների մէջ:

Ձենք իմանում ի՛նչպէս և ի՛նչ ճանապարհով, բայց մի օր էլ ամէնքը տեսան մեր կօլոտ չարչուն փերեզակութեան ցնցոտիներն իսպառ մի կողմը ձգած:

Բզզէն զարդարուել էր սև լաստիկի արխալուղով, մի կապտագոյն մահուտ ոսկեայ ժապաւէնով Չերքեզի չուխայ շատ յարմարում էր իւր անտաշ թիկունքին, և որ ամէնից աչքի ընկնողն է՝ ռուսական մի լայն ծածկոցով Ֆուրաժկա (Գլխարկ) ցցուել էր նորա հաստ գլխին, և ի հարկէ այնպէս էր սազում, ինչպէս կովի վերայ արծաթապատ թամբը:

Այս օրուանից բօշի տղայ սև իշուկը չէր Բզզէի համեստ ընկերակիցը. մի սպիտակ խրխնջան վառվռուն Ղարաբաղի նժոյգ էր նորա անտաշ կազմուածքը պարսկական թանգագին թամբի մէջ գեղեցկացնողը:

Այս կերպարանափոխութիւնը կատարուեց Սալբու տղայի մէջ՝ զարդար Սիմօնի տանից հեռանալուց մի քանի օր յետոյ:

Բզզէի ցանկութիւնը կատարել էր մաշադի Ռաջաբը. թուրք ոսկերիչը և՛ հալել էր բոլոր ոսկիները, և՛ իւր համարուեստների մէջ ձեռնտու գնով վաճառել էր հալուածքը՝ զանազան զարդեր շինելու համար, փոխարէն համարել էր Բզզէի առաջ հազարի չափ նորաձոյլ փոշաթաթախ պօլիմպերեալներ:

Այս դէպքը պատերազմը հրատարակելուց մի քանի օր առաջ եղաւ:

Բզզէի առաջին գործն այնուհետև էն էր, որ

իսկոյն նա Աշտարակումը մի ընդարձակ խանութ բաց արեց:

—Հիմա թող մրցի ինձ հետ Բաւինի թոռն իւր խանութով, թող օգնի ջհուտ Աղաջանն իւր փեսին, շատ չի քաշիլ, աչքդ բաց ու խուփ կ՚անես և ահա մի յաճախորդ չի մնալ Բաւինի թոռի կրպակում, ասաց Բզզէն և կռուեղէնի ու մանրունքի բեռները թափեց Աշտարակու տանուտէրի բակումը:

Բզզէն իրան ընկեր ընտրեց տանուտէրի որդուն, նորա սենեակներից մէկը դարձրեց կրպակ: Այս թէ ձեռնտու էր Սհօյի դէմ մրցումն գործ դնելու և թէ տեղի յարմարութեան պատճառաւ չափած ու ձևած էր խանութի համար:

Տանուտէրի տղէն էր կառավարիչն և խանութպանը: Էլ ո՛ր գիւղացին կը համարձակէր Սհօյից առուտուր անել. տանուտէրն ամէն բանում այնպիսի յանդուգն մարդից վրէժ կը հանէր:

Արդարև, կարճ միջոցից Սհօյի խանութից ոտքը կտրուեց և Բզզէի հռչակը ողջ գաւառը բռնեց:

Այս բանին առաւելապէս նպաստեց Բզզէի նոր պաշտօնը:

Ամէն աչք Բզզէի վերայ սկսեց քաղցրանալ. նորա չարչիութիւնը մոռացութեան տրուեցաւ. ընդհանուր կապալառուի կողմից Բզզէն կարգուեց գլխաւոր գործակատար և Աբարանի գաւառակից ցորենառու:

ԽԳ.

ԷՆ Ի՞ՆՉՆ Է, ՈՐ ՊՍՏԻԿ Է ՈՒ ՃՍՏԻԿ Է

—Բարո՛վ ես եկել։

Այս խօսքերով ողջունեց առաջին անգամ գաւառապետը, երբ երեկուան չարչին իրաւունք խնդրեց և տրորեց նորա բնակարանի շեմքը։

Բզզէն խիստ կոկիկ էր հագնուած։ Նա եկել էր կապալառուի կողմից գրաւոր յանձնարարութեամբ։

Մեծաւորը հետազննին աչքով նայեց կապալառուի տարօրինակ գործակատարին, քթի տակին ժպտաց և բարև տուեց։

Բզզէն խորին խոնարհութեամբ մինչև գետին ծռուեց և երկրպագեց։

—Ի՞նչ գուզիս, երկրորդ հարցը տուեց գաւառապետն ուրախ դէմքով և Վրաստանին յատուկ հայ արտասանութեամբ։

—Քո ողջութի՛ւնը, աղա՛, կմկմաց Բզզէն և ձեռքը գրպանը տարաւ ու սկսեց խառնել։

—Ի՞նչ ես պտռում, զարմացած հարցրեց իշխանաւորը։

—Քո ողջութիւնը, տէ՛ր, կրկնեց խորամանկ կարբեցին և մի ոտք յառաջ գալով՝ մի նամակ և մի ծրար հանեց գրպանից ու վախվախելով դրեց սեղանի վերայ։

—Այս ի՞նչ նամակ է։

—Կապալառուիցն է։

—Իսկ այս ի՞նչ ոսկիք են, բացեց գաւառապետը կոլոլած թուղթը և հարց տուեց։

—Քո մեծութեան համար ընծայ եմ բերել։

—Քո տիրոջի՞ցդ է, ի հարկէ։

—Ո՛չ, տիրոջս խոնարհ ծառայիցն է։

—Քեզ համար լսել եմ, որ դու մի հասարակ չարչի էիր ու յանկարծ մեծ խանութի տէր ես դարձել, գաւառի հարուստներից մէկն ես հռչակուել ու կապալառուի հաւատարմութիւնն ես ձեռք բերել. ո՞վ տուեց քեզ այսքան կարողութիւնը։

—Քո հրամանքդ։

—Ի՞նչպէս։

—Երբ քո բարի աչքդ քաղցր է քո ժողովրդի վերայ, աշխատանքն էլ շատանում է, սէր ու եղբայրութիւնն էլ աւելանում է։ Ընչի՞ չէի հարստանալ, քո ահիցն երկրի գող ու աւազակութիւնը կտրուել է, ճակատի քրտինքը դատողի գրպանից ոչ ով չի խլում, գիւղացուն ոչ ով չի վտահանում տանել՝ աչքիդ վերևն յօնք կայ. ամեն մարդ էլ էդպէսով հացի տէր է դառնում, ամեն բերան քեզ է օրհնում, քեզ արևշատութիւն խնդրում. հիմի էլ հօ յառաջ ժամանակներումը չէ՞նք, որ մինչև երիկուն կը չարչարուէին ու ձեռք բերածն աւազակի ու շուն ու գայլի բաժին կ՚անէին։

—Սուտ չես ասո՞ւմ, ա՛յ տղայ, կեղծաւորութիւն չես անո՞ւմ։

—Սուտը սատանայ է։

Գաւառապետը շատ լաւ գիտէր, որ Բզզէի խօսքերի ոչ մի բառը ճշմարտութիւն չէ, բայց բարւոք համարեց կարճ կտրել և ասաց.

—Շա՛տ ուրախ եմ, որ քեզ պէս կտրիճ մարդիկն իմ ժողովրդի մէջ աւելանում են, կարողանում են հարստանալ, խեղճերին օգնել, աղքատի կարիքին հասնել. դու աչքումս խելօք տղայ ես երևում, ես քեզ իմ հովանաւորութեան ներքոյ կ'ունենամ. նոյնն է խնդրում քո տէրդ՝ կապալառուն, նամակն աչքի տակով անցնելով՝ շարունակեց գաւառապետը, գնա՛, պաշտօնդ կատարի՛ր ու երբ պէտք կ'ունենաս, համարձակ տուն մտի՛ր, իմ դուռը քեզ համար այսուհետև միշտ բաց է։

—Խնդրեմ, ներող լինես, այս մի քանի կոպէկը ծառայիցդ վերցնես, յոյս ունիմ՝ շատ անգամ ոտքդ գամ, գա՛մ լիքը ձեռքով. դատարկ փայտին շուն չի հաչալ, դատարկ ձեռքով սևերես մարդիկը միայն տուն կը խցկուեն։

—Շնորհակա՛լ եմ, ընդունում եմ, բուռն արեց գաւառապետը ոսկիքը և շռռալով կրկին ցած թողեց թղթի մէջ. երևաց, որ համարում էր։

—Ես զգում եմ, գլխիդ մատա՛ղ, ուզում ես հասկացնել, թէ անքաղաքավարութիւն եմ արել. շատ ուղիղ ես հրամայում, տասը ոսկին քո մեծութեանը վայել չէ. բայց եթէ այդքանն ընդունելութիւն կը գտնի, ուրիշ ժամանակ կրկնապատիկը կարող է լինել։

Բզզէի խօսքն ընդհատուեց եասաւուլի ներս գալով։

—Փոքր կնեազն է, խոնարհաբա՛ր յայտարարեց եասաւուլը։

—Թող գայ, հրամայեց գաւառապետը և ոսկիքը փաթաթեց, սեղանի արկղումը թագցրեց։

Ներս մտնողը մի գեղեցկադէմ, գեղեցկակազմ, գանդրահեր, բարձրահասակ երիտասարդ էր. պաշտօնազգեստից կարելի էր ճանաչել, որ նա գաւառական վարչութեան ծառայողներից է. իսկ Բզզէն անունից հասկացաւ նորա ո՛վ լինելը և մտքումն ասաց.—շատ յարմար ժամանակ էր, նշանակում է գործս յաջող է։

—Ո՞վ էր ներս եկողը։

—Փոքր կնեազն էր։

—Բայց ո՞վ է Փոքր և ո՞վ Մեծ կնեազը։

—Մեծն ինքը գաւառապետն էր, Փոքրն իւր օգնականը։

Այս անունով էին յայտնի այս երկու պաշտօնատարները գիւղացուն. բայց թէ իսկապէս ի՞նչ մարդիկ էին, ի՞նչ ազգից էին, ի՞նչ ազգանուն ունէին,—գաւառացու գիտենալու և դատելու սահմանից վեր էր. բաւական էր, որ նորեկ պաշտօնէին մի անունով կնքեց ամբոխի միջից մի տանուտէր, մի գիւղական պատուելի, և ահա ամբողջ գաւառն այդ կոչումով է ճանաչում իւր մեծաւորին՝ առանց ուշադրութեան առնելու, թէ իւր կոչած անունը պակաս-

պռատ է, սուտ ու սխալ է։ Այդ ռամկի սովորութիւնն է. նա երբէք ճիշդ անունը չի կարողանում տալ, մանաւանդ իւր համար խորթ ազգանուններին։ Նա սովոր է ամեն անուն կրճատել, համառօտել, կամ խեղաթիւրել. նոյնն անում է և իւր իշխանաւորների վերաբերութեամբ. Նիկօ, Մխօ, Գասօ— ասում է գեղջուկը Նիկողայոսին, Մխիթարին, Գասպարին. Փուչկով, Սվարով, Փանկօսկի, Մաճարբերի՝ յեղյեղուում են օտարազգի անունները։ Պատահում է և այնպէս, որ ժողովուրդը նոր անուններ է հնարում ամեն մէկ ծառայողի համար. մէկին մեծ աղայ է ասում, միւսին Խաթաբալա-բէգ, երրորդին ծուռ Կակօ և այլն։

Այս իսկ հիման վերայ, Բզզէին հիւրասիրողը կոչուում էր Մեծ կնեազ, իսկ օգնականը՝ Փոքր կնեազ։

—Ի դէպ, մեր երեկուան խօսակցութեան առարկայ երկուսանի որմն իւր ոտքովն է ընկել, ասաց Մեծ կնեազը Փոքրին՝ Բզզէի համար անհասկանալի լեզուով. էլ հարկաւորութիւն չը կայ սրան անհանգիստ անելու, սա իւր գործը հասկացող է երեւում, սրան պինդ պէտք է բռնած։

—Ահա, պարոն Բաղդասա՛ր, խօսքը հայերէնի դարձրեց գաւառապետը, Պասիկ կնեազն էլ լսել է քո անունը, ուրախ է, որ քեզ տեսնում է։

—Շա՛տ շնորհակալ եմ երկուսիցդ էլ, ձեր ոտքի հող ու մոխիրն եմ։

—Ես Փոքր կնեազին խնդրեցի, որ քեզ վերայ

քաղցր աչք ունենայ, դու այսօր գնա՛, սորա դուռն էլ ճանաչի՛ր։

—Իմ աչքի, իմ գլխի վերայ։

—Ես սրան ասացի, որ դու կապալառուի գործակալն ես, սա խոստացաւ ամեն ժամանակ քեզ օգնել։

—Ես էլ իմ ձեռքիցն եկած ծառայութիւնը միշտ պարտք կը համարեմ կատարելու։

—Գնա՛ ուրեմն դուրսն սպասի՛ր, մենք ինչ հարկաւորն է՝ կը խօսենք, ինչ անելու ենք՝ սորա ձեռքով կ՚անենք։

Բզզէն երկիցս և երիցս գլուխ իջեցնելով՝ դուրս գնաց։

Նա այդ օրը ոչ միայն Մեծ ու Փոքր կնեազներին ներկայացաւ, այլ ամենաստորին դռնապանին էլ այցելեց ու ծանօթացաւ։ Փայլուն պօլիմպերեալներից բոլորեքեան մասնաւորուեցին իրանց կոչման և արժանաւորութեանց համեմատ։

Եասաւուլներն ու ղազախներն էին սակայն, որ ոսկու փոխարէն արծաթեայ փոշեթաթախ մանէթներ ստացան և իրանց կողմից խոստացան Բզզէի հաւատարիմ շները դառնալ։

Ուրախ տրամադրութեան գագաթնակէտին հասած՝ դուրս եկաւ Բզզէն գաւառական վարչութիւնից երեկոյեան դէմ և ձի հեծած՝ շտապեց ճրագվառոցին Կարբի մտնել։

—Այսուհետև, Տողի՛կ, փափկացրո՛ւ քարի պէս

կարծր սիրտդ, ոսկիքը մածնի չը տուի գլուխս քսելու, տեղին գործածեցի՝ քո սրտին տիրանալու. հիմի տեսնենք՝ քո աչքումն ո՞վ աւելի գին կ՚ունենայ՝ Բատինի թո՞ռը, թէ մեծաւորների հետ ոտը ոտին դրած բազմող պ. Բաղդասարը. սպասի՛ր, Շողիկ ջա՛ն, դեռ հօրդ բերանի գոլն իմանանք: Վա՛յ ջհուտ Աղաջանին, թէ որ «չէ» ասի, հոգեց հոգի կը կորցնեմ, Մեծ կնեազին աչքով կ՚անեմ, Պստիկ կնեազին կը հրամայի՝ փուշին քամուն կը տայ: Չէ՛, ջհուտ Աղաջանը խելքը հացի հետ չի կերել, օրն էգուց աշխարհը չաւ կը լինի, որ մեծ ու փոքր կնեազների հետ մի մոր կաթը ծծած եղբայրների պէս ենք:

Բղդէն ցուցամատով երեք անգամ ճակատին խփեց ու շարունակեց.

—Հը՛, գլո՛ւխ չի՝ գլո՛ւխ, խելքի բուն է, որ կայ. մի քանի հատ պսպղուն ոսկիքն էսօր քանիսի՞ աչքերը շլացրին, ի՞նչպէս բոլորին իմ դրան շունը շինեցին. դրա համար է ասած՝ «պստիկ է ու ճստիկ է». ի՞նչ գործ կատարեցին կոպէկի մեծութեամբ ոսկիները:

—Էլ կասկած չը կայ, որ ջհուտ Աղաջանի հոգին բռանս մէջն է, երեք անգամ դրականապէս շարժեց նա գլուխը. երեք օրից տէր Յակոբը ջհուտ Աղաջանի խնամաքարին կը նստի, Աղաջանի խօսքը կ՚առնի, իրիկունը նշանը կ՚օրհնի, մի երկու շաբաթից՝ Շողիկս իմ նոր շինուող տանը սրոր տալով՝ խա-

նըմութիւն կ՚անի, Բատինենց Սհօյի վերայ թքել էլ չի արժան տեսնիլ:

Այս և սոյնանման վերացական մտածութիւններով մութը գետինն առած՝ նախկին չարչին մտաւ Կարբի:

ԻԴ.

ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԸ

Հին Բայազիդից գաղթած, Կարբու նոր բնակիչների մէջ նշանաւոր տներից մէկն էր ջոջ տէրտէրենց տունը:

Պատմութիւնը մանրամասն չէ յայտնում, թէ ո՞ր օրից այդպիսի հռչակ է ստացել այս տունը և ի՞նչ աչքի ընկնող յատկութեան համար, բայց մի աւանդութիւն տան սերնդների ձեռքին յաջորդաբար քահանայական գաւազանը ժառանգական սեպհականութիւն է արել:

Մեռաւ քահանան, տեղը ուրիշն է հարկաւոր, օտարներին դիմելու ստիպմունք չը կար. անշուշտ ջոջ տէրտէրենց տան մի կամ միւս անդամն ի մանկութենէ պատրաստ է այդ կոչման համար:

Մեծ ուսումն և պաշար չէր պահանջւում նոր քահանայացուից, պատրաստուելու յարմարութիւն և տեղ էլ չը կար, դպրոց կոչուած հիմնարկութիւնը վանքերի չորս պատի մէջ էր ամփոփուած, Սուրբ Գրքի խորին աստուածաբանական հմտութիւնը վանականներին էր բաժին թողած, իսկ քահանայա-

ցուներն ուսանում էին՝ որքան անհրաժեշտ էր կնունք անելու, պսակելու, թաղելու և ժողովրդի այլ և այլ, հոգևոր, ծիսական պաշտամունքը կատարելու համար:

Բաւական էր տէրտէրին՝ որդիներից, կամ արիւնակից ազգականներից մէկին եօթը տարեկան հասակում սպասաւոր տալ մերձակայ վանքի միաբան հայր սուրբներից մէկին, թողնել այնտեղ մինչև տասն և չորս տարեկան հասակը և մանուկը կատարելապէս տիրացուացած՝ վերադառնում էր հայրենի տնակը՝ տեղական եկեղեցում սպասահարկելու մինչև փիլոն ծածկելը:

Աղմկայոյզ խռովութիւնների առիթ էր լինում ժողովրդին այն հանգամանքը, եթէ քահանայութիւնը վիճակուում էր աշխարհական տների զաւակներից մէկն ու մէկին:

Պատահում էր, որ միաժամանակ մի յարկի տակ բնակուած երկու-երեք եղբայր միմեանց «օ ր հ ն ե ա տ է ր» էին տալիս:

Այդ դէպքերում ժողովուրդն առաւել ուրախ էր լինում, հաստատ համոզուած լինելով, որ երբ իրանց հոգևոր հովիւների մէջ սէրն ու խաղաղութիւնը կը լինի թագաւորած՝ գիւղի խաղաղութիւնն անվրդով կը մնայ և քահանայական շարունակ անբաւականութիւններն ու կռիւները գժտութիւնների տեղիք չեն տալ:

Հաստատապէս ասել անհնար էր այս. սակայն չի

պատահել, որ ժողովուրդը ներկայ է եղել երկու հարազատ քահանայ եղբայրների միմեանց հետ տարիներով խռով պատարագելուն, ծեծ ու ջարդին, մազ ու մօրուք փետտելուն, բայց բացառիկ դէպքերը մեծ չարիք չեն. նոյն ժողովուրդը հնումը, թէ նորումս, ամեն տեղ և ամեն օր վ հ ա տ ո ւ ո ւ մ է՝ ականատես լինելով իւր համայնքի հոգևոր հայրերի անգրելի անկարգութիւններին:

Հայր Աբրահամու օ ջ ա ղ կոչուելու տներ այսօր հազուագիւտ երևոյթ են դարձել, իսկ 25, 30 տարի յառաջ և աւելի խորը՝ դա մի զարմանալի բան չէր: Հայր Աբրահամու օջաղ էր կոչուում այն օրհնեալ տունը, որի ծերունի հայր-նահապետը, բոլորած իւր շուրջը բազմաթիւ եղբայրների, հօրեղբօր զաւակների ու թոռների, նրանց որդկերանցն ու թոռան թոռներին՝ քաջափորձ զօրականի անձնապաստան հմտութիւններով ղեկավարում էր շարժուն գործարանը, ընդհանուր հրամաններ էր արձակում և բոլոր անդամներից իրանց գործառնութեանց հաշիւն ու համարն էր պահանջում: Ի հարկէ, կը կաղար գործը, անիւը կոտրուած սայլի նման կը կործանուէր, եթէ հայր-նահապետին գործակից չը լինէր տան ներքին կառավարութեան մէջ մայր-տանտիկինը—ընդհանուրի յարգանքը վայելող ու հրամայող մեծ նանը, որի ձեռքին էր տանտիկնութեան շերեփը, որի քաղցր խօսքը պատուէր էր տան իգական սեռի բոլոր անդամներիհամար:

Տասնեակ տարիներ, շատ անգամ և հարիւրամեակներ էին գլորւում յաւիտենականութեան անդունդը, իսկ հսկայական մեքենան անքակ կերպիւ միմեանց հետ աղխաղուած անդամներով գործում ու տեւում էր. որդին հօրն էր փոխանակում, հարսն սկեսօրը. մէկը գլուխը վայր էր դնում, միւսն արդէն իւր ծանրատար, բայց քաղցր պաշտօնի մէջն էր։

Այդպիսով սէր ու միաբանութիւնը նշանաբանն էր լինում այն քաղաքային, կամ գիւղական հասարակութեան, որի մէջ Հայր-Աբրահամու օջաղներ մի քանիսն էին գտնւում։

Իսկ եթէ աշխարհական տների բարոյական արդիւնքն այսչափ մեծ էր համայնքի համար, ինքն ըստ ինքեան հասկանալի է ժողովրդի ուրախութիւնն ու երջանկութիւնը, բարօրութիւնն ու անդորրութիւնը, եթէ ժողովրդի տուած առատ տուրքը մի դռնով էր ներս մտնում, միւնոյն շտեմարանումն էր ամբարւում։

Ջոչ տէրտէրենց տունը թէ Բայազիդումն և թէ Կարբի Հայր Աբրահամու օջաղ անունն է կրել. և իրաւա՛մբ. ոչ մի ծերունի չէր յիշում իւր կենաց շրջանումը Ջոչ տէրտէրենց տան մէջ բաժանութիւն կամ անհամաձայնութիւն. շարունակ երկու-երեք քահանայ իրար հետ ժամ են գնացել և նրանց միջի ծերունին աւագութեան ու հրամանատարութեան արտօնութիւնն է վայելել։

Ջոչ տէրտէրենցից երկու հարազատ պատկա-

ռելի քահանայ եղբայրներ առաւօտեան և երեկոյեան ժամերգութիւնը կատարելով՝ գաղթականներին առաջնորդեցին Բայազիդից մինչև Կարբի և այստեղ էլ մնացին։

Նոքա էին քաղցրախօս տէր-Սիմոնը և սրտաշահ տէր-Յակոբը։

Միայն իրանց հօտը չէր, որ սիրում էր իւր քաջածանօթ, առաքինի հայրերին. Կարբի գաղթելուց շատ չ'անցած՝ եղբայր տէրտէրները գրաւեցին շրջակայ գիւղերի հայ ու թուրք ազգաբնակութիւնների սէրն ու համակրանքը։ Այդ նրանց վարք ու բարքի, նրանց աղքատասիրութեան ու առատասրտութեան արդիւնքն էր. բերանի պատառը նրանք տնանկի ու կարօտի հետ բաժանում էին։

Սակայն Կարբում չը վիճակուեցաւ մի կողմից Բայազիդի երջանկութիւնը. շատ չը տեւեց, Ջոչ տէրտէրենց տունն երկու ճիւղի բաժանուեցաւ։

Խռովութիւնն ու երկպառակութիւնը չէին, որ երկու եղբայրներին մի յարկի տակից բաժանեցին. մեծ խօլերի անողորմութիւնն էր այդ անողը։

Աշտարակու տէրտէրները զոհ գնացին խօլերի ճիրաններին, ահագին գիւղը մնաց առանց հոգևոր հովուի, իսկ հոգևոր ծայրագոյն վարչութիւնը զիջաւ աշտարակցոց թախանձանացը՝ հրամայեց Կարբեցի տէր-Սիմոնին Կարբին թողնել իւր եղբայր տէր-Յակոբին և փութալ լցուցանել Աշտարակցոց հոգևոր պիտոյքը։

Տէր-Սիմոնը վերաբնակուեց Աշտարակ, այնտեղ հովուեց, այնտեղ ապրեց և այնտեղ մեռաւ, իսկ տէր-Յակովբը մինչև վերջին շունչը մնաց Կարբումը, սիրեց ու սիրուեց իւր ժողովրդից և մեռնելուս՝ իւր տեղ պարգևեց սիրելի հօտին իւր հարազատ Հայրապետին՝ տէր-Հայրապետ կոչումով և ինքը խաղաղ հոգւով աչքերն յաւիտեան փակեց:

Ահա՛ այս տէր-Յակովբի մօտ մի երեկոյ ներս մտաւ խօջա՞յ ասենք, աղա՞յ, թէ պարոն Բաղդասարը՝ մեր նախածանօթ կօլոտ չարչի Բղդէն:

Վերոյիշեալ կոչումներից դեռ ոչ մէկը չէր սեպհականացել Բղդէին. բայց գուշակելի էր, որ ոչ հեռու ապագայում մէկն ու մէկին նա տիրանալու էր. այժմ այնքանը յայտնի էր, որ Բղդէ անունը իբրև թշնամանք նորա բացակայութեան ժամանակ շատ սակաւները վստահանում էին ասել, երեսին ոչ ոք իրան թոյլ չէր տալիս այդ աններելի սխալն անելու, այդ յիմարութիւնը քարէ կարկուտ կը դառնար վերջը և կը թափուէր ասողի գլխին:

Տէր-Յակովբին խորթ թուեցաւ Բղդէի այցելութիւնը:

—Աստուած օրհնեսցէ, որդի՛, աջ տալով պատասխանեց տէրտէրը Բղդէի «Օրհնեա տէրին». բայց այս ո՞ր քամին է քեզ պտըտել, մեր դռնովը ներս խցկել:

—Մի՞թէ, տէր հա՛յր, ամօթ է ժողովրդին իւր հոգևոր հօր ոտքը գնալը, ժպտալով ասաց Բղդէն:

—Ընդհակառակը պարտականութիւն է, որդի՛, բայց դէ՛, չարչի ժամանակդ ոչ միջոց ունէիր և ոչ կարիք, այսօր էլ որ հարուստ ես, Աշտարակումը ծովի նման լիքը կրպակ ունիս, կապալառու ես, երկու-երեք ձիաւորով ես ման գալիս, մեծ տներ ես շինել տալիս, աղաների ու միրզաների հետ ես նստում, վեր կենում, ինձ պէս մի գիւղական խեղճ քահանայի ի՞նչ մտքդ կը բերես, մինչև մի փորացաւանք չ՚ունենաս:

—Մի՞թէ դու ուրախ չես, աչքիդ մատա՛ղ, քո ժողովրդի բաղդաւորութեան վերայ, որ իմ յաջողութիւնն երեսովս ես տալիս:

—Չափազա՛նց ուրախ եմ, եթէ մի քանի բաներ, որ պատմում են, թշնամու խօսքեր լինէին:

Տէրտէրը չը քաշուեց թուել Բղդէի անիրաւութիւնները, որոնց մէջ համբաւ էր հանել նա վերջերս և որոց մասին յիշատակութիւնը թող մնայ յետոյ:

—Դու ինքդ ասացիր, տէրտէր ջա՛ն, որ թըշնամու խօսքեր են, իմ յառաջադիմութիւնը շատերի աչքը ծակում է, դու դեռ իմ խնդիրս լսի՛ր ու գլուխ բե՛ր, յետոյ կը տեսնես, թէ քո ծուխդ ի՛նչ անուն կը հանի և ի՛նչ ծառայութիւն կ՚անի քեզ:

—Ասա՛, որ լսեմ:

—Խնդիրս շատ հասարակ բան է, քո մտածելիքն ես եմ քեզ յիշեցնում, հոգևոր զաւակներիդ մէկը չափահաս է, Կարբումը ծնուած նրան հասակակից ոչ ոք չը կայ, նրանից փոքրերը բոլորն երեխի

ու կնոջ տէր են դառել, իսկ նա դեռ միայնակ չոր կանգառի փշի պէս քամու ձեռքից տարուբերւում է, ամենքը նրան մոքից հանել են՝ դու էլ նրանց հետ։

—Ա՛... ա՛... ա՛... հասկացայ, հասկացայ, շա՛տ լաւ, շա՛տ բարի, օրն էգուց ցանկութիւնդ կատարեմ, ուզում ես նոր շինուող տան համար մի նոր հարսը բերել, այնպէս չէ՞, թափանդ խաղոտուել է, մեր տղա՛յ։

—Ամօթ հօ չի՛, որ կարմրացնում ես ինձ, տէրտէ՛ր։

—Ասենք՝ դու կարմրող պտուղ չես, բայց վնաս չ՚ունի, եթէ փոքր ինչ երեսդ տաքանայ, իսկ քո առաջարկութիւնդ, ճիշդ՝ որ հարկաւոր է և ժամանակայարմար։

—Ուրեմն մինչև ե՞րբ պէտք է գործը ձգձգես, աշունքն երկու քայլ է մեզանից հեռու, հարսանիքների հոտը փչում է, մի քիչ ցուրտը որ ընկաւ, ամեն տեղ զուռնի ձայնը կը բարձրանայ, մենք ո՞ւմնից ենք պակաս։

—Ո՞ւմ աղջիկն ես ուզում, ասա՛ տեսնեմ։

—Ում դու ինքդ կամ կը տեսնես, ում որ եթէ մինչև այսօր արժան չէի, հիմի քո օրհնութիւնովը հաւասար եմ, կամ մի փոքր էլ անց եմ. այնպէս չի՞, տէրտէ՛ր, որ ես մի ժամանակուայ Բղդէն չեմ հիմա, ուրիշ եթէ ոչինչ չի լինի, հագուստս հօ բարձր է ձայն տալիս։

Բղդէն մատով մի մի ցոյց տուեց իւր շորերը։

—Առակն անխոտելի է, սրտիդ չ՚առնես, Բաղդասար ջա՛ն, ասած է. էշն էլ էն էշն է, փալանն է փոխել. փողն ու հարստութիւնը, շորն ու զարդարանքը չեն մարդիս մարդի կարգ գցողը, պատիւը, մարդիս իւր մէջը պէտք է լինի. բայց, ի հարկէ, ես չեմ ուզում սիրտդ կոտրել, ինձ յայտնի է, որ դու խելօք տղայ ես, մեր Աղաջանի ձեռքովը ոչինչ տեղից հացի տէր դարձար. այսօր էլ եթէ չը գնաս այդ ծուռը և մոլար ճանապարհովը՝ մարդ կը դառնաս՝ ինչ որ մարդին պէտք է ու վայել։

—Դէ՛, հրամանք արա՛ օրհնած բերանովդ, տէրտէր ջա՛ն, տեսնենք՝ ո՞ւմ աղջիկն ես ինձ կամ տեսնում։

Տէր-Յակոբը քաջ ճանաչում էր Կարբու բոլոր հասած աղջիկներին, գիտէր ամենքի ծնողների դիրքն ու աստիճանը։ Նա սկսեց ծայրէ ի ծայր, փողոցէ փողոց անուանել Բղդէի համար իւր նախկին դասակարգի տան աղջիկներին։

—Ի՞նչ ես անում, տէրտէ՛ր, այդքան էլ մարդի հողի հետ չեն հաւասարացնիլ. քեզ ի՞նչ, թէ երեկ աղքատ էի, քեզ ի՞նչ թէ ես երեկ բօշայ էի. այսօր չէ՞ որ հարուստ եմ, այսօր փաշայ եմ, դու ինձ էսօրուայ գազով չափի՛ր, քո հաշուած աղջիկները մի քանի ամիս առաջ կարող էին ինձ յարմար նշանածներ լինել։

—Հապա էլ ո՞ւմ անունը տամ, որ սրտերը չը

վիրաւորեմ, Բաղդասա՛ր. հօ չե՞մ կարող Ալմաստ խաթունենց, Նանի-Յարթենենց խօսքը մէջ բերել։

Տէրտէրը սկսեց այնուհետև առաջիններից մի աստիճան բարձրներին յիշել։

Բղդէն ևս առաւել քիթը շինեց դափի կոմբալ կամ հաւի փուչիկ. տէրտէրի խօսքերը նրան վիրաւորական էին։

—Ինձ ի՞նչ, եթէ ուզում ես մեր իշխաններից մէկն ու մէկի աղջիկը՝ իրաւունք ունիս. դու անունը տո՛ւր, ես կերթամ կը խօսեմ. կը տան՝ իրենք գիտեն, չեն տալ՝ իրանց կամքն է, շատ կարելի է, տալիս են, աշխարհը հիմի փչացել է, հիմի մարդը գլխով ու սրտով չի գնահատուում, այլ գրպանով ու քսակով, իսկ հարստութիւնով, ինչպէս լսուում է, քեզ արժան աղջիկ չի ճարուիլ Կարբու մէջ, պէտք է գնաս Աշտարակիցն առնես։

—Ձէ՛, տէրտէր ջա՛ն, զուր ես ինձ փողոցէ փողոց քցում, ես իմ հայրենակիցներից հեռացողը չեմ, իմ կինն անպատճառ Բայազիդցու աղջիկ պէտք է լինի, և հէնց դորա համար եմ քո ոտքն եկել։

—Շատ ես հեռանո՛ւմ, տէրտէր ջա՛ն, ընդհատեց Բղդէն, երբ տէր-Յակոբը կամենում էր տէրողորմի հատիկների վերայ թուել Կարբու առաջնակարգ ընտանիքների աղջիկներին, իմ կորուստը դրանց ոչ մէկի մէջը չը կայ։

—Մնացի ես, ա՛յ որդի, մէկ էլ իմ մեծ եղբայր տէր-Սիմոնը, ինքս, քեզ յայտնի է, որ աղջիկ

չ՚ունիմ, եղբօրս աղջիկն էլ Աշտարակ նշանած է։

—Ընչի՞, տէրտէ՛ր, ջհուտ Աղաջանի հատն ո՞վ ունիս Կարբու մէջ. նա ու ես հաւասար կը գանք, երկուսս էլ նոր հարստացած ենք։

—Վա՛հ, դու եօթը սարի էն երեսի՞ցն ես, Բաղդասա՛ր, զարմացաւ տէր-Յակոբը, չը գիտե՞ս, որ երկու տարի է Աղաջանի աղջիկը նշանած է և այս ձմեռ պէտք է պսակենք։

—Կարելի է, ի պատիւ իմ, Աղաջանը նշանը կը վերադարձնի՛։

—Ա՛յ տղայ, Բաղդասա՛ր, Աստուածանից վախեցի՛ր, մարդից ամաչի՛ր, ոչ դու Աղաջանի հաւասար մարդ ես և ոչ նա քեզ մարդատեղ կը դնի։

—Բայց ես Բաղդասարն եմ, տէրտէ՛ր, ես հարուստ եմ, պարկերով ոսկի կը թափեմ Աղաջանի առաջին։

—Եթէ ես Աղաջանի տեղ լինէի, քեզ կ՚ասէի՝ ոսկիքդ մածնի տո՛ւր, գլուխդ քսի՛ր։

—Քանի՛ մի քանի ես այդ անիծուած խօսքերը լսեմ, էսքանը մածնի տալ կը լինի՞, բարկացած ձեռքը գրպանը տարաւ Բղդէն և հանելով մի քսակ լի պօլիմպերեալ, շաղ տուեց քահանայի գորգի վերայ։

—Էլ ընչի՞ ես նեղսրտում, որդի՛, երբ որ քեզ ամենքը վատ են ասում. քեզ շատ լաւ յայտնի է, որ Աղաջանի աղջիկն անուն արած է, նշանած է, ուրեմն դու ցանկանում ես Բոտինենց Կարապետի հին օջաղի

հիմքը շրջել. լողը քեզ վերայ էլ կը թքի՝ իմ վե-
րայ էլ, թէ որ ես քեզ լսեմ ու գնամ խնամխօս. չը
գիտե՞ս, որ ես Աստուծոյ քահանայ եմ և անիրաւ
մարդկանցը պէտք է ուղիղ ճանապարհը բերեմ։
—Ի՞նչ անիրաւութիւն եմ արել, տէրտէ՛ր։
—Ուրիշի նշանածն ուզում ես յափշտակել,
այդ անիրաւութիւն չի՞։
—Որ սիրում եմ, ի՛նչ անեմ, աչքիդ մատա՛ղ։
—Էլ աղջիկ չը կա՞ր, որ նշանած աղջկայ վե-
րայ մատը դրիր։
—Սրան հարցրո՛ւ, կարգիդ մեռնի՛մ, սիրտը
ցոյց տուեց Բզզէն, սորա վերայնեղացի՛ր, կպել է՝ չի
պոկւում. ես ինքս էլ շատ ուրախ չեմ, Աղաջանն
աչքիս գրողն է, ուզում եմ մի բուռը մոխրի պէս
քամուն տամ, բայց բանն այն տեղն է հասել, որ
ինքս եմ գլուխս դնում թշնամուս ոտքի տակը, որ
ինձ տրորտակ տայ, օրական հարիւրաւոր թքանք-
ներ թափի երեսիս, միայն թէ վերջ ի վերջոյ
ինձ խղճայ ու փափագիս հասցնի։
—Իսկ եթէ Աղաջանը չը կամենայ Բաւինենց
Սհակին տուած խօսքը յետ առնե՛լ։
—Օ՛... օ՛... օ՛... էն ժամանակը շները կապե-
ցէ՛ք, իմ շղթան կտրեցէ՛ք, կատաղի գազանի նման
ծուլիկ-ծուլիկ, պատառ-պատառ կ'անեմ Բաւինենց
տղին է՛լ, ջհուտ Աղաջանին է՛լ, ողջ կարողութիւնս
աշխարհքում, մարդասպան գողերին կեր կ'անեմ, աշ-
խարհքը սարսափի մէջ գնող աւազակ Նզիկին կ'եղ-

բայրանամ ու Աղաջանի ցեղը բնաջինջ կ'անեմ։
Տէրտէրը զարհուրեց Բզզէի աչքերից դուրս
ցայտած կայծերի փայլատակումից. բերանը փրփրա-
կալել էր, ատամների կրճտոցի հետ մատներն ինք-
նաբերաբար բացւում և խփւում էին, ճիշդ՝ քաղ-
ցած գայլի, կամ գիշատիչ անգղի ծուատիչ ճիրան-
ների նման, երբ յարձակուելով թոյլ նապաստակի,
կամ անշունչ լեշի վերայ, ագահաբար մի կողմից
սուր սուր մագիլներն է ի գործ դնում, միւս կողմից
ժանիքով կամ կեռ կտուցով է քաշկռտում, մսմսա-
տում։
—Հանգստացի՛ր, սիրելի Բաղդասա՛ր, բաւական
է, արածս կատակ էր, այս շաբաթ յարմար միջոց
կ'ընտրեմ, Աղաջանին կը համոզեմ, քո իղձդ կա-
տարել կը տամ։ Վնաս չ'ունի, Բաւինենց Կարապետն
էլ ինձ կը լսի, Սահակի համար ուրիշ աղջիկ կ'ու-
զենք, մինը չէ՝ միւսը լինի, միայն թէ աշխատելու
է, որ Աղաջանը չը գրկի Սհօյին խանութի ընկերու-
թիւնից, խեղճն երկու տարի է հետը մաշւում է։
—Ե՛ս, ես ի՛նքս Սհօյին կը բաղդաւորացնեմ,
գլուխը ոսկու մէջ կը թաղեմ, եթէ նա Աղաջանի
աղջկանից ձեռք քաշի։
—Որ այդպէս է, գործը յաջողացնելը թող
պարտքս լինի։
—Որ այդպէս է, այսքանը թող առհաւատչեայ
լինի քո աջահամբուրի համար, բուն աջահամբուրն
էլ յետոյ։

—Ո՛չ, սիրելի Բաղդասա՛ր, ժողովի՛ր փողերդ, քսակդ դի՛ր, ջոչ տէրտէրենց եօթն անգամ եօթը պորտը քահանայ է եղել, Աստուծոյ կարող զօրութիւնով մինչև Քրիստոսի աշխարհք գալը մեր տան տէրտէրը չը պիտի պակասի, բայց մինչև էսօր լսուած չի, յոյս ունիմ, որ այսուհետև էլ չի լսուիլ, թէ մեր տունն էգպիսի կեղտոտ ճանապարհով է հաց աշխատել. Աստուած հաստատ պահի ջերմեռանդ ժողովուրդը, լիաբուռն շահել է իւր քահանային՝ իւր հարամը հալալողին, ու էլի կը շահի, մեր աչքը մեր դուռնն է պահել, ապրել ենք՝ կրկին կ՚ապրենք, աշխարհքիս գանձն ու հարստութիւնը աշխարհքումն կը մնայ: Վերցրո՛ւ փողերդ. երբ բարով—խէրով հալաւդ կ՚օրհնենք, որքան սիրտդ կը բղխի, կը տաս, ես էլ, առանց վրէն աչք թեքելու, ծոցս կը դնեմ, նորափեսին ու նորահարսին բաղդաւորութիւն կը ցանկամ:

—Ուրե՞մն:

—Ուրեմն դու գնա՛ գիշերս հանգիստ քնի՛ր, վաղը գործդ շարունակի՛ր, Աստծու ճանապարհը մի՛ մոռանար, աղքատի ու տնանկի աշխատանքը մի՛ խլիր, մի կտոր հաց կե՛ր և Աղաջանին օրհնի՛ր, որ քեզ մարդի մէջ մտցրեց, յոյսդ Աստուծոյ նախախնամութեան վերայ դի՛ր, որ քեզ մի կտոր ցամաք հացի տէր է արել. եթէ Աստուած կամեցել է, ցանկութիւնդ ինքն իրան կը կատարուի, իսկ եթէ ոչ, հազար էլ տանջուիս ու մաշուիս, ինչ գրուած է, այն կատարուելու է:

—Ամա՛ն, տէրտէր ջա՛ն, էդ վերջին խօսքերը բերանիցդ մի՛ հանիլ, տէր-Յակոբի աջը կաթողին համբուրելով՝ բարի գիշեր ասաց Բղդէն:

—Սպասի՛ր, սպառնաց տէրտէրը նորա քամակից հրամայական ձևով. նզովեա՛լ լինիս, եթէ այս երեկոյեան խոստովանութիւնը բերանիցդ հանես, կամ թէ աշխատես ճակատիդ գրուածին դէմ կենալ, կամ բացի ինձանից՝ ուրիշների գլուխը ցաւացնես, միջնորդ ձգես. այն ժամանակը թո՛ղ Կայէնի և Յուդայի անէծքը թափուի գլխիդ, փափագիդ ո՛չ հասնիս, երեք անգամ մեծ չարչարանքով աշխա՛րհ մտնես ([illegible])՝ երեքիցն էլ անպէտք փշի պէս անպտուղ մնաս, վերջումը մի ժառանգ լոյս ընկնի քեզ համար, որ աչքերդ բաց վանի, շուայլի կարողութիւնդ և դու տեսնես ու էրուիս, էրուիս ու տնքաս, տնքաս և ոյժ չ՚ունենաս յառաջն առնելու, կոպէկի կարօտ՝ շունչդ փչես, հոգիդ սաղայէլի ճանգը ձգես:

Բղդէն դողմանի եկաւ, ոտքերը թուլացան, ծնկները ծալուեցին. բայց շատ չը քաշեց, չը գիտեմ՝ ի՞նչ ներքին դրդմամբ՝ ուժի եկաւ, լուրջ դէմք առաւ և ասաց.

—Շա՛տ բարի, յօժար եմ, միայն թէ դու աշխատես գործը գլուխ բերել, հնգապատիկ անէծքի կը դիմանամ:

Նա էլ չը կանգնեց, դուռը շտապաւ քահանայի երեսին ծածկեց ու հեռացաւ:

ԻԵ.

ԳՈՂԸ ԳՈՂԻՑ ԳՈՂԱՑԱՒ, ԱՍՏՈՒԱԾ ՎԵՐՆԻՑ ԶԱՐՄԱՑԱՒ

Ժողովրդի նեղութիւնները հետզհետէ աւելանում են. երկրագործ, այգեգործ, բոլորեքեան միատեսակ ճնշուած են. կապալառու Բաղդասար աղայի քամու նման թռչող նժոյգի սմբակներից՝ կրակի կայծերը փայլակից աւելի են պէծաւորում. անբան անասունն արդէն ճանաչում է գաւառական տանուտէրների դուռը, նա բնազդմամբ հասկանում է իւր գնալու գիւղը. գաւառական վարչութեան գոմուշն իւր տեղը որոշած ունի և մի տեսակ ներքին հաճութեամբ և հպարտութեամբ սիրում է կեր ուտել ռուսական ձևի մարքում։

Բղդէն այժմ միայն չի մանգալիս, չորս զինավառուած կորիճ Թուրք թիկնապահ ձիաւորներ նորա անբաժան ընկերներն են, իշխանութեան կողմից էլ մի եասաւուլ շարունակ նրան առաջնորդում է։

Բղդէն յաճախակի է այցելում գաւառական վարչութեան բնակատեղին. շատերի մօտ է էլ ուտում անում, սիրով ընդունուած է Մեծ և Փոքր կնեազների մօտ։

Մի այդպիսի այցելութիւն կատարուեց տէր-Յակոբի հետ տեսակցութիւնից մի քանի օր յետոյ։

Նոր էր վերադարձել նա Աբարանից Կարբի և

պատրաստուում էր գնալ տէր-Յակոբից լուր իմանալու, որ մի ձիաւոր իջաւ նորա դրանը և մի փոքրիկ նամակ տուեց նրան։ Նամակը գրած էր Բղդէի ստորագրեալների մէկից. նա յայտնում էր, թէ գիւղերից շատերը ոտքի են կանգնել և ցորեն չեն տալիս. եթէ յառաջը չ'առնուի, գրում էր գործակատարը, բոլորը կ'ապստամբին։

Բղդէն ամեն բան մոռացաւ, ձի հեծաւ և երկու ժամից իջաւ գաւառական վարչութեան մօտ եղած գինետան առաջին։

Նա կանգնեց գինետան դրան շեմքին, գլուխը ներս խցկեց և մանրախոյզ հետաքրքրութեամբ խորքը դիտելուց յետոյ՝ ապահովացաւ, որ օտար ոչ ոք չը կար ներսը, ուստի և ձայն տուեց.

—Սաքօ՛...

—Հը՛, Բղդէ՛, դու ե՞ս, ներս մտի՛ր, ընչո՞ւ ես հեռու կանգնել, աչքերը շաղ (խաճաղին) կովի նման մտիկ տալիս, վրան պատասխանեց գինու տկի բերանն ամրացնելով Սաքօ կոչուածն և շարունակեց [1].

—Տօ՛, ա՛յ մեռած, էլի եկել ե՞ս, չէ՞ որ ես քեզ ասել եմ՝ խալթէդ (փորչանք) մեզանից հեռու պահի՛ր. դու մեր գլուխը մի փորձանքի մէջ բանդ կ'անես։

---

1) Միկիտան Սաքօյի համար տե՛ս «Հացի խնդիր» աշխատասիրութիւնս։

Ծանօթ. հեղ.

—Ի՞նչ փուչն ես, Սաքօ՛, «չեմ ուզում՝ գրպանս դի՛ր», որպէս թէ ուրախ չես իմ գալուն, իբր թէ չը գիտես՝ որ առանց քեզ էս երկրումը ծառի տերեն էլ իրաւունք չ'ունի շարժուելու։

—Հանաքը թող, ասա՛ տեսնենք՝ ընչի՞ ես եկել, չէ՞ որ մի քանի օր առաջ գործդ կարգի դրինք՝ գնացիր։

—Ինչպէս չը գայի, ամեն տեղ ոտս քարին է առնում, Աբարանի ժողովուրդն էշ է, էն տեղ ատամս կոտրում է, բայց դաշտի մեծ գիւղերից մի քանիսը, համարեա, երես են թեքել, ձեռքները պատն են քսում, խօսք չեն ուզում հասկանալ, տուն չեն կամենում թողնել։

—Ի՞նչ են ասում։

—Ասում են՝ մեր գաւառի մեծ ու գլխաւոր գիւղն Աշտարակն է, աշտարակցիք են գինու-արաղի կէսը ջուր անում, Ալէքսանդրապօլումը ոսկի շինում, օգուտ տեսնում, Աշտարակը մի բուռը ցորեն չի տալիս, մենք ընչի՞ պէտք է տանք։

—Եթէ Աշտարակը ցորեն չի ցանում, ո՞ր տեղից պէտք է տայ։

—Գնա՛ ու հասկացրո՛ւ. կոպիտ գիւղացի են, ո՞ր մէկի գլխումը խելք նստացնես։

—Ինձ ի՞նչ ես տալիս, որ օրն էգուց աչքս աջ ու ձախ դարձնեմ, ամենքը քո ղուլը դառնան։

—Աշտարակն է՞լ։

—Աշտարակի անունը մի՛ տալ, նա թթու

խնձոր է, մի՛ աշխատէք կծել, ոչ դու, ոչ քո կնեազները, բոլորիդ ատամներն էլ կ'առնի, էլ բան չէք կարող ծամել, քաղցած կը մնաք։

—Հողն ու ջուրը լաւ գիտի, Սաքօ ջա՛ն, ի՛նչպէս ես պաշտպանում քո հայրենիքդ։

—Դու քո Կարբին չես պաշտպանի՞լ։

—Պարտքս է։

—Ուրեմն էլ չը համարձակուիս էդ ծուռն աչքդ Աշտարակի վերայ թեքել, թէ չէ էս գաւառից մի բուռը հաւի կուտ չես կարող դուս տանել։

—Միւս գիւղերի համա՞ր ինչ ես ասում։

—Տեսնենք՝ ո՛րքան ես ցնծում։

—Ա՛յ եղբայր, տղրուկ ես դառել, ինձ արենքամ արել, տուածս հերիք չի՞։

—Լռի՛ր, լռի՛ր, թէ չէ հինգ օր չի քաշիլ, պոչդ կը խուզուի. դիմացինդ միկիտան Սաքօն է, Սարդարաբատի մոլրոմների միկիտանը, քո ցերեկուայ ման եկած տեղերն ես գիշերն եմ ման եկել, ինձ լաւ յայտնի է, թէ ո՞ր գիւղումն ինչքան աւազ է բանում, թէ ամեն մի խալվար ցորենին ո՛րքան ես վճարում, ինչքա՛ն հաշիւ տալիս։

—Սաքօ ջա՛ն, չէ՞ որ էս բանի մէջ իմ վարժապետը դու ինքդ ես, հիմի էլ կանգնել ես, հակառակն ես ասո՞ւմ։

—Հանաք եմ անում, քանի ես ողջ եմ, դու քո էշը քշի՛ր, միայն թէ տեսնենք՝ քանի՞ պօլիմպերեալ ես համարում առաջիս, որ բացի Աշտարա-

կից՝ մնացած գիւղերը կամքի գան, ցորեն տան։

—Ինչքա՞ն ես կամենում։

—Շատ չեմ ուզիլ, ամեն մի ջուալին մի կոտ [1]) աւազ էլ ինձ համար աւելացրո՛ւ։

—Իմ աչքի վրայ, ահա այս էլ թող բէհը լինի։

Բզզէն մի բուռը ոսկի ցրիւ տուեց հանրահըռչակ միկիտան Սաքօյի առջեւը։

—Ուրեմն ձիդ նստի՛ր գնա. երեք օր չը քաշած՝ ամեն գիւղից գործակատարներդ քեզ աչքալուսէք կը գան։

—Մնաս բարեւ, ասաց Բզզէն եւ ձիու քամակն անցած՝ իջաւ գիւղերից մէկում տանուտէրի տանը։

Տան տիրոջ եւ հիւրի մէջ մի տեսակ լուռ ծնջկատակութիւններ տեղի ունեցան։

Ներկայ եղող օտարները բարւոք համարեցին արգելք չը լինել նրանց պարզ խօսելուն։

—Ի՞նչ արիր, տանուտէ՛ր, փակուելով տանուտէրի հետ՝ հարցնում է Բզզէն։

—Ի՞նչ պէտք է անէի, պարոն Բաղդասա՛ր, հազարից մի անգամ գործդ ինձ է ընկել, այն է՞լ չը կատարեմ։

—Կամ եկա՞ն (հոմոչոյնել)։

—Վիզներն էլ եօթը գազ չ՚երկարե՞ց. իրանց որ մնար, մի հատիկ ցորեն չէին ուզում տալ, բայց

[1]) Մի կոտը 12 գրուանքայ է պարունակում։

էնպիսի լաւ խաղացի, որ իրանք աղաչեցին ու տուին։

—Ի՞նչ արիր։

—Ի՞նչ պէտք է անէի, յայտնեցի, որ հրաման է դուրս եկել, թէ ինչ գիւղում ցորեն չեն տալիս, ամեն մի տանը մի կով թողան, մնացած չորքոտանին քաշեն, տանեն Ալէքսանդրապօլ, մորթոտեն, զօրքին կշտացնեն։ Այս՞ որ լսեցին, փորները կատուընկաւ. ամեն մէկի տանը տասը քսան կթան ու լծկան կան, յիմար հօ՛ չէին, որ մի քանի խալվար ցորենի համար իրանց ապրանքից ձեռք քաշէին։

—Հիմի մեր ամբարումը ցորեն կա՞յ։

—Երեկ երեսուն խալուար բրնձի նման աղունիլ տուի ու քո ամբարդար (շինովնիկ) Պապիկին պահ տուի. էս երկու օր է, Պապիկը տուն էլ չի գալիս հաց ուտելու, բեռները կապում է, գրում է ու չը գիտեմ ի՞նչ է անում։

—Ե՞րբ պէտք է, ուրեմն, ճանապարհ գնէք։

—Երբ որ Պապիկը կ՚ասի։

—Շնորհակա՛լ եմ, տանուտէ՛ր, ա՛ռ, ահա, էս քեզ մի չուխագին։

—Աստուած կեանք տայ, աղա Բաղդասա՛ր։

—Հիմի գիւղին որքա՞ն փող եմ պարտ։

—Քո կամքն է, պարոն Բաղդասա՛ր։

—Ընչո՞ւ, քեզ յայտնի չի՞, խազնիցը խալուարին տասն ու հինգ մանէթ է նշանակած, էն էլ դեռ փողրաթչին մի կոպէկ չի տուացել, ինչքան էլ տալիս է, իւր քսակիցն է համարում։

—Շատ ուղիղ է քո խօսքը, Բաղդասա՛ր ջան, բայց ես ու իմ հօ՛գին, ժողովուրդը մեղք է, քանդուեց ու քարատակուեց, աղիքդ փորումդ կտոր կտոր կը լինէր, եթէ բարի աչքովդ տեսնէիր, թէ ո՞նց մեր ու մանուկ գլխներին վայ տալով՝ աչքերիցը կրակ էին դուրս թափում, երբ գզիրը կոտն առած՝ Պապիկի հետ հորերիցը դուրս էր բերում ցորենը և գլուխ գլուխ չափելով՝ ջուալներն էր լցնում. ես երեսս յետ էի դարձնում, արտասուքս չէի կարողանում պահել. գլուխդ վկա՛յ, խօջայ Բաղդասա՛ր, այնպիսի չքաւոր տանից ենք ցորեն հանել, որ միւս օրուայ համար տաշտումն ուտելու հաց չեն ունեցել: Շատ որ մղկտացին, ես խեղճ եկայ ու իմ կողմից խոստացայ, որ քո ոտքերն ընկնեմ, խալուարին 25 մանէթ խնդրեմ: Յոյսս դու ես, աղայ Բաղդասա՛ր, ինձ կախ տո՛ւր, կտոր կտոր արա՛ ու դատարկ ձեռքով ժողովրդի երեսը մի ղրկիր:

—Ախա՛ր, էդպէս անկարելի խոստումն ընչո՞ւ ես անում, տանուտէ՛ր, ես ինքս հօ՛ չեմ փողրաթչին, ես էլ քեզ պէս մի հրամանակատար մարդ եմ, շատ էլ կը ցանկանայի քո խօսքը գետին չը ձգել, 25 մանէթ տալ, կարող ե՞մ, իրաւունք ունի՞մ, իմ ձեռքիցը կը գա՞յ:

—Ի՛նչ կ՚անես արա՛, ինձ հասարակութիւնի լեզուի տակիցն ազատի՛ր:

—Վնաս չ՚ունի, քո ազիզ խաթեր՝ քսան մանէթով հաշիւ կ՚անեմ, չեմ թողալ քո երեսիդ մի սառը

խօսք գայ ու ինքս երեսս գոմշի կաշի կը շինեմ, փողրաթչու եախիցը (օձիքը) կախ կ՚ընկնեմ, խալուարին հինգ մանէթ աւելի կը պոկեմ. եթէ չը տայ էլ՝ քո ցաւը տանի՛, իմ քսակիցը կը տամ:

—Է՛յ, աղայ Բաղդասա՛ր, ո՛ւմ յայտնի է, ո՛ւմ չէ, ինձնից հօ թաքուն չի, հաստա՛տ մնայ մեր գետը, աւազին հաշիւ ու համար չը կայ, ինչքան քո սիրտը կ՚ուզի՝ աւելացրո՛ւ:

—Ա՛յ եղբայր, տանուտէ՛ր, մէկն ասում ես, միւսը թողնում, չը գիտե՞ս, թէ ամեն մի հատիկի վերայ քանի աչք կայ, էդ մի փոքր խառնուրդն էլ որ չը լինի, խեղճ փողրաթչին ո՞ր մէկի ծակ աչքը պէտք է կշտացնի. դու հաւատո՞ւմ ես, որ ձեռքիս մէկը քսակիցս չի դուրս գալիս, Մեծ կնեազին հարկաւոր է, Փոքրին՝ նմանապէս, գրագրի պէտք է տաս, եասաւուլի ռեխը կրծելու ոսկր պէտք է քցես, ղազախն արագի փող է ուզում, միկիտան Սաքօյի բերանը եօթը խուրձը խոտով չես կարող փակել. հիմի էս կողմն արի՛,—տանուտէր կայ, գզիրը նորա պոչիցը կպած է, գիւղի իշխանաւորը մի կողմիցն է փէշդ քաշում, ծառան ձեռքն է դէմ անում, ո՛ր մէկը համարեմ, լեզուով ասելը հեշտ է, սրանց փող կը դիմանա՞յ, խոտի նման սարի թմբին հօ չի՞ բուսնում:

—Վնաս չ՚ունի, խօջայ Բաղդասա՛ր, փողրաթչին մի մարդ է, հասարակութիւնը հարիւր ու մի, դու ինձ լսի՛ր, խալուարը 25 մանէթով հաշիւ արա՛:

—Մէջտեղն իմ օգուտն ի՞նչ է։

—Եթէ կամենաս, երեսուն մանէթի ստացական տանք, հինգը դու վերցրո՛ւ։

—Ո՛չ, երեսունը շատ է աչքի ընկնում, քսան և հնգի գիր տո՛ւր՝ քսան ստացիր, դրանից՝ տանուտէրը ժողովրդին՝ երկուսը քեզ, հոգ չէ, մեր տանուտէրն ես, դու էլ օգուտ տես։

—Յետոյ քո բաժինը շատ չի լինո՛ւմ։

—Ա՛, պա՛, պա՛, պա՛... ինձ հարամ լինի, էն հինգն էլ պէտք է մնի վերևն յիշածս մարդկանց փորը։

Եւ Բզզէն 20 մանէթով համարեց տանուտէրի յառաջ 30 խալուարի գինը ու 25-ով ընկալագիր ստացաւ։

Ապահովագրին բացի տանուտէրից ստորագրել էին և երկու գիւղական առաջաւոր անձինք։

—Էս երկսի կտուցն էլ մի քիչ մեղր քսի՛ր, մատնացոյց արեց տանուտէրը Բզզէին ձեռք քաշողների ստորագրութիւնը։

—Ի՞նչ ես ինձ ձեռն առել, տանուտէ՛ր, երեսս կակուղ տեսար ատամներս համարեցի՞ր. ես չը գիտե՞մ, որ ցորենատիրոջ գրպանը կոպէկ չը պէտք է մնի, բոլորը մարսելու էք դու և քո այդ ձեռք քաշող մարդիկը. մի գող փող եմ համարել առաջից, եթէ դու ապերախտ մարդ չես, պէտք է դորա մի մասն ինձ բաժին հանես, ա՛յ, թէկուզ այս երկու հատ թղթի կտորը։

Բզզէն ձեռքը ձգեց և յետ վերցրեց երկու հատ 25-նոց։

—Ը՛... ը՛... ը՛... խօսքը ծամծմոտեց կուչ ու հուպ գալով տանուտէրը և արտասանեց.

—Քո ցաւը տանի՛։

—Ուրեմն հիմի գնամ, տեսնեմ ի՞նչ գործի է մեր ամբարդար Պալիկը, ասաց Բզզէն և տեղիցը վերկացաւ, իսկ մինչև իմ գալս՝ դու ճաշի պատրաստութիւն տես, շատ քաղցած եմ։

—Հը, Պալի՛կ, ի՞նչ գործի ես, յանկարծ շտեմարանի դուռը բաց արեց Բզզէն, ներս մտաւ և ողջունեց իւր շտեմարանապետին։

Շտեմարաններ գիւղերումը չը կան, նրանց փոխարինում են դատարկ սենեակները։

—Բարե՛, հազար բարի՛, աղա՛յ ջա՛ն, էն է՛, հա՛, էս գիշեր ջուալները կը լցնենք, բերանները կարելուց կը պրծնենք, էգուց կը բարձեմ, ճանապարհ կը դնեմ։

—Աւազը խոշոր հօ չի՞, սև հօ չի՞։

—Ես բանական չե՞մ, հացակեր չե՞մ, աղա՛յ, խոշոր ու սև աւազը խառնեմ լսի նման սպիտակ ցորենին, որ մորիկ տուողի աչքին երևի՞։ Ա՛յ, գլխիդ մեռնե՛մ, թէ չես հաւատում, համեցէք քո բարի աչքովդ տե՛ս, աւազն իմ աչքի առաջին եմ մաղել տուել ու երեք օր արևումը փռել, չորացրել. այ՛, էս մի շեղջ ցորենն առանց աւազ խառնելու է, մէկէլը խառնուած պատրաստ է, տե՛ս, կարողանո՞ւմ

ես երկու շերջի ցորենները մէկս մէկից զանազանել։

—Ինչքա՞ն ես խառնուրդ անում։

—Ասենք՝ տասնին մէկ եմ խառնում, բայց այդ հաշիւ չի, մի բուռն աւազը տասը բուռը ցորենից ծանր է, մեզ էլ քաշն է հարկաւոր. ախար չէ՞ կռուատեղը մեզնից քար ու կշիռքով են առնում։

—Ի սէ՛ր Աստծու, Պապի՛կ, աւելի չը խառնես, կարող է աչքի ընկնել, յետոյ հոտը վեր կը լինի, մեզ համար ամօթ է։

—Ես ի՞նչպէս քո հացին կոյր մուկ կը տամ, աղա՛յ ջան, գլուխս աւազի միջին թաղուի լաւ չէ՞, քան թէ քո երեսին մի սուռը խօսք դիպչի։

—Ապրի՛ս, ապրի՛ս, ա՛ռ քեզ համար մի արխալղացու։

Բղդէն մի հատ արծաթի նորաձոյլ մանէթ երեք մատի մէջ բռնած՝ մօտ կանչեց իւր ստորադրեալին ու լեզուով թաց արեց, փակցրեց նորա ճակատին։

—Էս քիչ է, դեռ քանի՞ էսպէսը պէտք է ինձանից ստանաս, Պապի՛կ, եթէ գործիդ արի ու հաւատարիմ կենաս։

Այնուհետեւ մի քանի ուրիշ կարգադրութիւններ արեց նա և դուրս եկաւ, գնաց դէպի տանուտէրի տունը՝ իւր մէջ մտածելով.

—Շատ խելօք և վարպետորդի է մեր Պապիկը, կարծում էի, թէ նեղացած կը լինի ինձանից, որ անցեալ օրը փողրաթչու կողմից նշանակած ռոճկի կէսը կտրեցի իմ օգտի համար, բայց ո՛չ, ինչպէս

երեւում է՝ իւր գործը հասկանում է։ Հը՛, ժպտաց իւր մէջ Բղդէն, մեր խելօք Դաւիթ-Պապիկն իւր խելքովն էլ կարծեց, թէ կծու կծու երդումներով ու քաղցրախօսութիւններով ինձ միանգամայն վստահացրեց իւր հաւատարմութեան վերայ, իբր թէ ես չը գիտեմ, որ եթէ շահ չ՚ունենար մէջ տեղը, ամսական հինգ մանէթով ինձ գերի չէր դառնալ ու փոշի կուլ տալով չէր խեղդուիլ. թող անի, ի՞նձ ինչ, իմ վաստակած ու քրտնածը հօ՛ չի ուտում. ասած է՝ ինչ որ պակասի, բաղիցը կը պակասի, բաղմանչու ի՞նչը պէտք է պակասի. մեղր ծախողը մատը կը լպտի։

—Գնա՛, Աստուած քեզ հետ, Բղդէին ճանապարհ դնելուց յետոյ՝ նորա քամակից գլուխը շարժում էր Պապիկը. քո խելքովը լաւ բան արիր, որ վարձիս կէսը կտրեցիր, ես էլ տեղը հանեցի. քո կարծեօքդ տասին մէկ եմ խառնում, էն էլ գետի աւազ. ի՞նչպէս չէ, խելքս հացի հետ էի կերել, որ հինգ մանէթի համար կօլոտ չարչի Բղդէի մշակը դառնայի. ընչի՞ չես ասում՝ տասին երկու եմ խառնում, ապառաժ լեռ քարն եմ ջարդել տալիս, փշրում ու խախալով մաղում, խառնում. մի ձեռնաչափ քարի մանրունքը տասն այնքան աւազից ծանր է. մի սոմար ցորենը քեզ համար դառնում է երկու սոմար, տակին էլ մի սոմար ինձ է մնում. հիմի սորա վերայ էլ աւելացրո՛ւ էն աւելորդ կոտը, որ ամէն մի խալուարին առնում ենք ցորնատիրոջից։ Ասենք էս

վերջինի մէջ ինքը տանուտէրը հետս մասն ունի, մի քանի բուռն էլ գլխին է հասնում։ Էնպէս է, պարոն Բղդէ՛, «գողը գողից գողացաւ, Աստուած վերնից զարմացաւ»։

ԻԶ.

Տ Ո Ւ Տ Ո Ւ

Կարբումը, Կիզլ-մատուռի հիւսիսային կողմը, շատ ժամանակ չէ՝ մի ձեռք տուն է բուսել, մի երկու յարկեայ փոքրիկ շէնք։

Ինքն ըստ ինքեան այդ շէնքը մի երեւելի և նշանաւոր բան չէ, փոքր ի շատէ ճաշակը զարգացած մարդի համար աչքի ընկնող ոչինչ չ՚ունի. բայց ներկայ Կարբու նման մի գիւղի համար այդ տունը լաւերից մինը կարելի է համարել։

Լաւ ասածս պէտք է հասկանալ վերնայարկի վերաբերութեամբ, ապա թէ ոչ, ներքին յարկի վերայ ոչինչ ջանք չի գործ դրուած, անկարգ, անձև պատերով շրջապատած մի քանի ծակեր են, որոնք ոչ գոմի պէտք կը լինին, ոչ խոհանոցի ու մառանի, ոչ գրաստ կապելու մսրքի տեղ է թողած, ոչ վառարանի ծխնելոյզ, ոչ գիւղական թոնրի համար մուխ քաշելու երդիկ և ոչ լոյս մտնելու մի ծակ։

Այս իսկ պատճառաւ՝ շինուած օրից մինչև հիմի ներքնայարկումը շունչ կենդանի եթէ որոնելու լինիս, ցամաքային խոնաւասէր գորտերից ու հողաբնակ

ժժմունքներից աւել ոչինչ չես գտնիլ։ Տան տիրոջ ուշքն ու միտքը, բոլոր հոգացողութիւնն ու ծախսած դրամը սպառուել է վերնայարկը զարդարելու և արեւելեան ճաշակով կարմիր և կանաչ նկարներով լցնելու վերայ։

Պարսիկ ծաղկարարը հարեմական, ախտաբորբոք սեղեխների կենդանագիրներ ծեփելով սենեակների պատերին, համակերպուել է, երևի, տան տիրոջ ժամանակակից հաճոյքներին և դիպուածական տրամադրութիւններին։ Դիպուածական և պատահաբար՝ որովհետև տան ջահել տէրը շինութիւնն սկսելուց մի քանի օր յառաջ միայն զգաց իսկապէս, որ ինքն էլ նորահաս երիտասարդ է և բնական հակումն ունի դէպի գեղեցիկ սեռը։

Նորաշէն պալատը, եթէ լողների ականջին ծանր չը հնչէ այս մեծաբանութիւնը, և իւր տէրը շատ չար ու բարի լեզուներ սրեցին իրանց դէմ և բամբասանքների ու ասակուսէքի տեղիք տուէին։

Խօսողներն իրաւունք ունէին. տունը շինուել է, կահաւորուել է, կարասիներով լցուել է, բայց ոչ տէրը մի կտոր հաց է կերել մէջը և ոչ տես ու ծանօթներ մի կթղայ օղիով շնորհաւորական բարեմաղթութիւններ են արել։

Ցորեկները դռները բոլորովին փակ են եղել, իսկ գիշերները մի պառաւ կին միայն ձիթի ճրագի աղօտ լուսով, ուրուականի նման, իւր երկար ստուերն է տարածել անկիւնից անկիւն, սենեկից սենեակ։

Երդուել չեմ կարող, վերջերումս գիշերներ են պատահել, երբ տան երիտասարդ տէրը իւր հնմաշ անկողինը գետնին փռուած թողնելով՝ ինքը ժամերով երթևեկել է փակուած սենեկի մէջ և յուսահատ կամ յուսապարար գլորուել ու խռմփացել մինչև լոյս։

Պարզելու համար ասենք, որ տան տէրը, որ թոյլ է տուել իրան այս շռայլութիւնը, մեր բարեկամ Բղդէն է. իսկ պառաւը՝ իւր մայր Սալբին։

Բղդէն շինութիւնն սկսել տուեց Երևանից վերադառնալու օրը, և ի պատիւ նորա՝ պէտք է խոստովանած՝ ոչինչ չը խնայեց իւր շէնքը փառազարդելու համար, որպէս զի, ինչպէս ինքը շատ անգամ յեղյեղում էր իւր սրտի խորքում, ջհուտ Աղաջանի աչքերը շլացնի իւր հարստութիւնով, Նողիկին իրանը շինի, փափագին հասնի և յետոյ Աղաջանին լակ ձուի նման պատովը զարկի, հողի հետ հաւասարացնի։

Բղդէն շինութիւնը կարգի դրեց ու ինքն իւր նոր գործին տիրացաւ։

Այդ էր պատճառը, որ ցորենառուի թափառական պաշտօնը թոյլ չէր տալիս նրան վայելել իւր պալատի հեշտութիւնները։

Սալբին էլ, իբրև հին կին, աւելի գերադաս էր համարում իւր մխոտ թոնրատանն օրն ի բուն փըսփըսալ, քան թէ ազատ ոտքերով սենեակների փռուածքը տրորել։

Ուրիշ գործ ու զբաղմունք չ'ունէր Սալբին. նա

շարունակ պարապած էր իւր որդու գնած դիւրագին յախճապակեայ պնակները լուանալով, որոնք Կարբու համար նոր շռայլութիւններ էին. ըստ որում գործածականը տեղական շէնքի հասարակ կաւէ անօթներ էին։

Պառաւը լուանում էր, ցամաքեցնում էր, դասաւորում էր իւր թոնրատան դարակների վերայ և կրկին մի ժամից վայր էր բերում և էլի լուանում։

Սալբու սովորական զրոյցընկերը լինում էր Տուտունանը. և Տուտուն էր, որ շարունակ հանդիպում էր Սալբուն պնակները լուանալիս։

—Հերի՛ք է, հերի՛ք, Սալբի բաջի՛, ախար ընչո՞ւ են, որ այդքան լուանում ես, առած օրից դէսը դեռ չեն իւղոտուել, տղէդ տան երես չի տեսնում, դու էլ Բայազիդից բերած ժանգոտ պղնձէ ամանումն ես չլբուր ուտում, իսկ թանով ապուրի համար՝ հողէ քերեղանը կայ ու կայ։

—Ընչի՞ ազատ թողնեմ, փոշին կը նստի, շնորհքը կ'երթայ, Տուտու ջա՛ն, տես ինչպէս փրփռում են, Սալբին մեռնի՛ սրանց առնողի ջանին, ոգևորուում էր Սալբին և ուրախութեան արտասուքը ծպծպան աչքերից ցօղում։

—Աստուած քեզ բաշխի՛ մինուճարիդ, բարո՛վ մի խորոտիկ հարս բերես, նոր շինած քեօշկ ուսաբայումը շորոր տալով առջևդ պտոյտ գայ, միշտ ցանկութիւն էր յայտնում Տուտուն և առաջարկում Սալբուն հանել ծոցից իւր քթախոտի տուփը։

—Չէ՞ որ երեկ բուռնութուդ պարկը լցրի, Տուտո՛ւ, դու հէնց դորա համար ես գալի՞ս, յանդիմանում էր շատ անգամ Սալբին Տուտուին, բայց միշտ էլ նորա պարկը լցնում էր:

Մի օր Տուտուն, ըստ սովորականին, ներս մտաւ Սալբու մօտ և սառած մնաց:

Պառաւի աչքերը խոր ընկած էին, չորացած արտասուքի հետքերը նշմարւում էին, գոյնը գալկացել էր, թիկունքը կռացել, երկուտակուել էր: Մի խօսքով, Սալբին այսօր կատարեալ զառամութեան հասած պառաւի էր նման, որ այլ ևս գործելու ոյժ չ'ունենալով՝ խնամատար հոգածուից միանգամայն զուրկ՝ մահ է խնդրում և անողոք մահը փախս է տալիս նրանից:

Սալբին նստած էր պրտուեայ խսիրի վերայ, պնակները անկարգ ցրուած էին առջևը, մի հատ էլ ձեռքին էր մնացած, երևում էր՝ ուզեցել է լուանալ և չի կարողացել:

—Ի՞նչ է, ի՞նչ է պատահել քեզ, Սալբի բաջի՛, մօտ վազեց Տուտուն, այդ ի՞նչ օրն ես ընկել:

—Ոչի՞նչ, խոր հոգւոց հանեց Սալբին:

—Ի՞նչպէս ոչինչ, այստեղ կոյր մարդ չը կայ, ամեն մի աչքիդ բունը մի մի ընկուզից աւելի են տուզել, մեծացել, գերեզմանից դուրս քաշած չորեքօրեայ Ղազարոսի գոյնն ես ստացել:

—Ի՞նչ անեմ, Տուտո՛ւ, մօր օրօրոցը կրակ պէտք է ընկնէր, որ ոչ մեծանար, ոչ որդու ցաւեր տեսնէր:

—Ի՞նչ է քա, չը լինի՞ Բղդէդ, հեռի իրանից, մի հանդիպսի է (պատահար) հանդիպել:

—Հանդիպսի՛ հանդիպի իմ երեխին հանդիպսի հանդիպեցնողը:

—Ախար ի՞նչ կայ:

—Էն կայ՝ որ երեխիս խելքը գլխին չի:

Այս բացականչութիւնով Սալբին պատմեց, թէ մի քանի գիշեր է միայն, որ իւր որդին տուն է գալիս, այն ինչ նոր պաշտօնին տիրացած օրից, մեծ մասը գիւղերումն էր մնում, թէ իւր Բղդէն մնում է սենեակներից մէկի մէջ և փակւում, ոչ հաց և ոչ ջուր է պահանջում և շարունակ բաց աչքով լուսացնում է՝ ինքն իրան խօսելով և հառաչանքներ ու սպառնական խօսքեր արտասանելով: Պատմեց Սալբին՝ թէ ինքը բազմիցս դուռը բաղխել է, աղաչել, թախանձել է՝ տուն թողնել իրան, յայտնել ցաւերը, բայց որդին անողոք է մնացել մօր պաղատանքներին և երկու խօսքով ահ տուել, թէ նա իւր գլուխը մահու կը տայ, դաշոյնով սեպհական փորոտիքը կը թափի, եթէ միւս անգամ իրեն ձանձրոյթ պատճառէն:

Վերջ բանին պատմեց Սալբին, թէ ինքը մի հնարք է մտածել, հէնց որ որդին ձիուց իջել է՝ նա մի տեսակ յաջողեցրել է հետը ներս մտնել նորա սենեակը, փարուել է Բղդէի ծնկներովը և մայրական սրինքն ու ծծած կաթը բարեխօս կացուցանելով՝ կարողացել է դուրս կորզել

իւր հարազատի սրտնեղութեան շարժառիթը։

—Սաքի թէ ի՞նչ, հետաքրքրուեց Տուտուն։

—Թէ էն՝ որ իմ սիրելի զաւակը սիրահարուած է։

—Ուրեմն դու դորա համա՞ր ես գլուխդ մահու տալիս, ծաղրեց անմխիթար մօրը խելացի Տուտուն. օրն էսօր կ'երթամ խնամխօս և լոյսը չը բացուած՝ նշանը կը տանենք։

—Հէնց էդ է, որ տղիս ցաւի դեղապետը, նորա դարդի դարման պտուղը քաղած ու տարած է, այլ ևս ձեռք չի ընկնիլ, հոգոց հանեց Բղդէի մայրը և պարզ ասաց, որ իւր որդին ցնդած է ջհուտ Ազաջանի դուստր Նազիկի սիրով, իսկ, ինչպէս յայտնի է, Նազիկն երկու տարի է, որ անուն արած է, տիրունի է և մի քանի օրից կը պսակեն, կը տանեն։

—Է՛հ, քո ճարը գա՛յ, քամահրեց Տուտուն, մէկը չը լինի, միւսը կը լինի, աղջիկն աղջիկ է, Կարբուց մի՛ ուզիլ, ուրիշ գիւղից տար, Բղդէիդ հիմի ամէնքը կ'ուզեն փեսայացնել. դու իրանից հարցրո՛ւ, յօյս տուեց Տուտուն, որի վերայ մատը դնի, ես մի օրումը գլուխ բերեմ։

Որդեսէր մօրը չը կարողացան սփոփանք պատճառել կարեկից հարևանի մխիթարական խօսքերը. նա յայտնեց, թէ իւր որդին կտրական վճռել է՝ Ազաջանի տունը բնաջինջ անել, Բաւինենց Ահօյի ծուխը կտրել և վերջն իրա գլուխն սպանել, եթէ գործն այդպիսի վախճանի հասնելու լինի։

Վերջապէս Սալբու խօսքերից իմացուեց, որ Տէր-Յակոբի պատգամաւորութիւնն անյաջող է եղել, թէ ջհուտ Ազաջանը վճռողապէս յայտնել է, որ եթէ աշխարհումս մնան միայն ինքն ու Բղդէն՝ նա այն ժամանակն էլ իւր աղջկանը կը թթուացնի, կը քացախացնի, կը պառաւացնի և Բղդէին չի տալ։

Տուտուն քթի տակին ժպտաց։

—Իսկ եթէ ես գլուխ բերեմ, ինձ ի՞նչ կը տաք, հարցրեց նա։

—Ինչ քո սիրտը կը ցանկանայ։

—Խօսքով փլաւ չի եփուիլ, իւղ ու բրինձ է հարկաւոր, բեր տեսնեմ՝ ո՛րքան ես ցնծում, որ ես ամեն դժուարութիւն հեշտացնեմ։

—Է՛հ, Տուտու ջա՛ն, շատ մեծ մեծ ես բըրթում, կուրանա՛յ ու խաւարի Բղդէիս մէրը, նորա առաջին բոլոր դռները փակ են. երեկէս պատմեց, թէ ինքն էն ծակծկոտուելու Նազիկի հետ երեսէ երես խօսեցել է և նա իմ տղիս մարդատեղ չի դրել։

—Էդ ո՞չի՛նչ, դու փող ասա՛, որ աչքեր կապի, մենք էնպէս կ'անենք, որ Նազիկը մոմի պէս կը հալուի ու կամքի կը գայ, մենք էն հնարը գիտենք, որ եթէ դռները առաջին փակէք, երթկովը տուն կ'ընկնի։

—Տուտու ջա՛ն, էլ ո՞ր օրուայ համար ես պահել բարեկամութիւնդ։

—Ախար բան ասացի, սրբի պուռն էլ առանց խաչհամբուրի չեն գնում, դեռ մոմն ու խունկը, մատաղն ու զանձանակը չեմ ասում։

—Ա՛յ քեզ ղուրբան, ինձ փողն ո՞վ է տուել, որ քեզ տամ, եթէ բանը գլուխ բերես, Բղդէս քաշովդ մին ոսկի կը տայ։

—Հապա դու էլ ինչի՞ ես անունդ Բաղդասար աղայի մէր դրել, որ մի քանի սև փող էլ չ'ունիս ծոցումդ՝ քեզ համար ժամի ու աղքատի տալու։

—Թէ սև փողով բան գլուխ կը գայ, աչքի՛ս վերայ. հաւ ու ճիւ եմ ծախում, ձու ու բաղուկ եմ ծախում, մէկ մէկ Բղդէս սիրտս ուրախ ժամանակը սպիտակ փողեր է տալիս, թէ՝ առէ՛, քեզ համար գանձանակի փող արա՛. էլ ի՞նչ երկարացնեմ, բաժինքումս բերած քսակիս մէջ տասը մանէթի չափ հոգեպահուստ ունիմ, թէ որ Բղդէսի փափագը կատարուելու համար էդքանը բաւական է, վե՛ր կալ, վերջն էլ երբ Շողլիկը մեր դռնով հարս մտաւ, կա՛ց ու ոսկու մէջ լեղ տո՛ւր։

—Առաջին ծախսերի համար հերիք է, գնա՛ բեր։

—Բայց չ'ասացիր, թէ մոքինդ ի՞նչ է, ի՞նչ հնարքներ ես գործ դնելու։

—Էդ բանից ձեռքերդ լուա՛, տասը մանէթ չէ, որ քաշովս մէկ ակն ու մարգարիտ տաք, իմ բերանիցս ոչ տաք դուրս կը գայ, ոչ հով։

Շատ խնդրեց Սալբին, բայց Տուտուն մնաց անյողդողդ, հետն էլ սպառնաց, որ եթէ իրան չեն հաւատալ, մի շաբաթ չի քաշիլ, Բղդէն իսպառ խելքահան կը լինի, կամ արենտէր դառնալով՝ Սիբիր կերթայ։

Այս խօսքերն էին, որով տասնեակ տարիներով դիզած Սալբու կոպէկներն ու սպիտակ փողերը լոյս աշխարհ տեսան և Տուտուի ծոցագրպանումը զետեղուեցան։

ԻԵ.

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ, ՆՈՐ ՄԱՐԴԻԿ

Փամբակաձորումն է Հ. անունով հայաբնակ գիւղը։ Նա արքունի ճանապարհից շատ ծռանց է և ընկել է Ապարանի ու Փամբակի բարձրաբերձ լեռներից կազմուած մի խոր ձորի մէջ։

Այս գիւղի հետ հաղորդակցութիւն ունեցող անիւի միակ ճանապարհը գալիս է գիւղի արևելեան կողմից, իսկ արևմտքից միմիայն մի նեղ կիրճ է առաջնորդում ձիաւոր կամ հետևակ ճանապարհորդին դէպի ձորաբնակ կիսավայրենի, բայց հիւրասէր ժողովուրդը։

Այսօր չէ՝ բայց տասը տարի սրանից յառաջ իւր գլխից ձեռք վերցրած մարդը միայն իրան թոյլ կը տար առանց շատերի ուղեկցութեան վստահօրէն անցկենալու վայրի այծերի և մանրատոտիկ եղնիկների այս քարածերպերիցը և Հ. գիւղը մտնելու։

Ուրիշ ելք, կամ մուտք ամէն կողմից բնական լեռնային սահմաններով ընդհատուած են։

Ձորամիջի է, ասացինք, Հ. գիւղը, բայց ինքը նստած է լեռան բարձրադիր լանջի վերայ։

Այդ դիրքը ընծայում է գիւղին մի բանաստեղծական տեսք՝ արեւելեան լայն ճանապարհով գիւղն եկող սայլաւորների, ձիաւորների և հետեւակների համար: Փոխադարձաբար՝ գիւղացիք էլ միջոց ունին իրանց տների առաջից զուարճանալ իրանց մօտ շնորհ բերող ճանապարհորդներին տեսնելով: Ուզում եմ ասել, թէ որքան գիւղի արեւմտեան կողմը սեղմուած է սարերի մէջ, հետեւաբար մինչեւ գիւղի ափը չը հասնես, մի տուն չես տեսնիլ, այնքան ընդհակառակն արեւելքից մի լայնատարած, ծաղկալից, սիրուն հովիտ ընդարձակւում է և ծայրը մինչեւ մեծ ճանապարհը հասցնում: Եթէ աչքերդ սուր են, դրանդ նայի՛ր և հինգ վերստից եկողին նայի՛ր; հէնց կարծես, եկողը, թէյի բաժակի նման, մատուցարանի վերայ առաջդ է գալիս:

Աշնան վերջերն է. լեռների կատարները մէկ օր՝ տարիների հաշիւը կորցրած զառամեալ ալեւորի գլուխ են դառնում, միւս օրը՝ թխագանգուր երիտասարդի կերպարանք են ստանում արեգակի քմահաճութեան համաձայն. միմիայն հայի համար երկու նուիրական ալեզարդ ծերունի նահապետներն են, որոնց վեհութեան յառաջ խոնարհում են Այրարատ աշխարհի բոլոր միւս բարձրաւանդակութիւնքը. Մասիսն ու Արագածն են, որ սպիտակափառ գլխներով հարաւից և հիւսիսից հովանաւորում են իրանց փոքր եղբայրներին:

Ղարաչօբանու լեռը, որ Փամբակի հարաւային

կողմի սարերից ամենաբարձրն է և Հ. գիւղը տանող լեռնային ուղղաձիգ ճանապարհը ամառն էլ վտանգաւոր է, թող թէ աշնան վերջին կամ ձմեռը: Վտանգն երկու կողմից է. եթէ բաղդ ունեցար ազատ պրծնել սարի գլխի անընդհատ գիժ քամիներից և բքերից, կարող ես անբաղդ գտնուիլ և մի վայրկենի մէջ գլխիցդ գրկուել և ձորն ի վայր անգլուխ թաւալագլոր մինչեւ անդունդը ճանապարհորդել ու այնտեղ արծիւների ու անգղների համեղ կերակուր լինել:

Ես ոչ ականատես և ոչ երաշխաւոր եմ, միայն ասում են՝ որ Ղարաչօբանի բարձրութեանց վերայ բնութիւնն ինքն է մարդակեր աւազակների համար յարմար որջեր ստեղծել:

Ահա այս ահռելի սարիցը, աշնան վերջին, անվնաս ցած իջան երկու հոգի և երեսներին խաչ քաշեցին, երբ Հ. գիւղի արեւմտեան ափի մարգներից մէկի պատի տակին հանգիստ առան:

—Կինարմատի խելքով ընկանք, աղէ՛ (Տօյբէկ), ասաց երիտասարդ տղամարդը ձիու սանձը բռնելով, ես օձի միս կ՚ուտեմ և միւս անգամ կրկին այս տեղով չեմ վերադառնալ:

—Իմ յոյսս հաստատ էր, որդի՛, որ Հ. գիւղի հրաշագործ տէրտէրի արժանաւոր օրհնութիւնը մեզ կը պահպանի. մինչեւ էսօր նորա դուռը գնացողներից ոչ մէկը փորձանքի չի հանդիպել:

—Է՛հ, ինչ և իցէ, Աստծուն փառք տանք, որ էս անիծած սարիցն ազատուեցինք, և շտապենք՝

քանի մութը չի՚ կոխել՝ էս անլեզու անասունի համար մի տաք գոմ ու կեր ճարել, մեզ համար էլ մի գլուխ դնելու տեղ գտնել:

—Սիրտդ հանգարտ պահի՛ր, զաւա՛կս, մենք ուղղակի կ՚իջնենք տէրտէրի տանը. լուսահոգի հօրդ հետ նա սրտէ ի սիրտ բարեկամ էր և Մողնու ուխտին սուրբ Գէորգ գալուս մի երկու գիշեր Կարբումը մեր տանը պատիւ է տեսել:

Մայր ու որդի՝ ձին քարշելով՝ գիւղը մտան և առաջին հանդիպած ծերունուց քահանայի տունը հարցրին:

—Ի՞նչ գործ ունիք մեր տէրտէրի հետ, մա՛յրս, պատասխանեց ալևորը:

—Տէրտէրը մեր ծանօթն է, նորա մօտ պէտք է իջնենք:

—Ո՞ր գիւղն էք գնալու:

—Ուղիղ տէրտէրի մօտ ենք եկել:

—Երևում է գրի գործ ունիք:

—Հրամեցի՛ք:

—Որ էդպէս է, հետս եկէք, տէրտէրին ոչ էս գիշեր կարող էք տեսնել և ոչ վաղը:

—Ախար ընչի՞ համար:

—Էդ ձեր գործը չի, էս իրիկուն դուք իմ հիւրերն էք, հետս եկէք:

Անծանօթները ծերի խօսքերից ոչինչ չը հասկացած՝ կուրօրէն հետևեցին նրան:

ԻԲ.

ՎԵՐԻՆ ԳԼԽԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ, ԿԱՄ ՇԱՏԱԽՕՍ ԿԱԶԱԴԱԿ

—Հլա՛ բա՛րի րի՛կուն, ա՛յ քիր, ա՛յ ջհէլ բա՛լամ (Էրէփառալըդ), բա՛րով հզար բա՛րի էք ե՛կել մեր շէ՛նը, մեր օ՛ջաղը, ա՛մեն ճա՛մփից հե՛շտ: Է՛յ, Քարհա՛նանց ա՛ղջիկ, քէ՛յվանի, դվօ՞րն ես հլածա՛կուել, դէսն արի՛, տե՛ս, քե հմա ի՞նչ ա՛զիզ զօ՛նաղ եմ բե՛րել: Է՛, ա՛ ջհէլնի, ա՛ քռանգաջնի, խի՞, բա դուք ուզո՛ւմ չ՚ունի՞ք, դուս թափեցէ՛ք, ձին քաշե՛ցէք, ա՛լափ տուէ՛ք, Ա՛ստծու զօնաղնե՛րին պա՛տիւ տուէ՛ք:

Այս ուրախ բացականչութիւններով ներս մտցրեց ծերունին հիւրերին իւր յարկի տակ:

Հիւրերն էին մեզ ծանօթ Տուտուն և իւր որդին:

Տուտուն ստացաւ Սալբուց տասը մանէթը և նոյն օրը որդու ուղեկցութեամբ Փամբակու ճանապարհը բռնեց: Երկրորդ օրն էր, որ նրանք Կարբուց դուրս էին եկել:

Տուտուն զարմացած՝ որդուն հարցասիրական նշան արաւ, երբ ծերունու յարկի տակ տեսաւ երկու ուրիշ օտարականներ էլ, որոնցից մէկը մի հաստամօրուս ռուսի մուժիկ էր, միւսը գլխի կէսը մէջ տեղից գերծած մեծափափախ ուղտապան, Զօբանքեարայ Թուրք:

—Ա՜ կնիկ, ասաց ծերունին կիսաերեւանցու—կիսալոռեցու բարբառով և առոգանութեամբ, որով խօսում են ընդհանրապէս փամբակեցիք և որը մենք աւելորդ ենք համարում կրկնել. ա՛ կնիկ, շուտ արա՛ էս այլազգերին հաց ուտացրո՛ւ, թող գնան հանգստանան, հարսներին էլ հրամայի՛ր, որ ջահել-ներին առանձին իրիկնահաց տան, իսկ մեզ համար, մեր երկու ազիզ հիւրերի հետ միասին մեր փոքր տանը սուփրայ բաց արա՛, նստենք, չորս հոգով մի քիչ քաղցր զրոյցներ անենք։

Տուտուն գլխով բացասական շարժումն արաւ և յայտնեց, որ իրեն համար ամօթ է տան տիրոջ պէս մի պատուելու ծերի հետ սեղան նստել, կամ թէ բերանի փակը արձակել ու խօսել։

—Չէ՛, պատասխանեց ծերունին, այսուհետև ոչ քեզ, ոչ իմ պառաւին վայել չէ չըլխօսքան մնալ, կամ տղամարդից քաշուել, մենք երեքս էլ օրերս անց ենք կացրել, ասաց, թող ջահել հարսներն իրանց յարգեւոր պահեն։ Դուք, կարծեմ, շատ զարմացաք, երբ ես ձեզ ասացի, թէ էսօր տէրտէրին չէք կարող տեսնել. ես կամենում եմ սեղանի վերայ մեր իրեցի մասլահաթն անել։

Եւ հիւրասէր տանուտէրն այսպէս սկսեց իւր շատախօսութիւնը, նախապէս ներողութիւն խնդրելով, որ ինքը շատախօս կաչաղակի նման պէտք է ձանձրացնի իւր հիւրերին։

—Ինչպէս երևում է, ձեզ յայտնի է մեր տէր-

տէրի գրի զօրութիւնը, սրա նման գրբաց արար աշխարհքումն երկուսը չի լինիլ. սրա մօտ գտնուած գրերը Սողոմոն իմաստունի իւր մատներով գրածներն են։

—Պարզ բան է, որ էնպէս օջաղ կայ, որ հօրից ու պապից ժառանգութիւն է ստանում բացի հողը, փողը, չորքոտանին, էլի մի էնպէս բան, որ շատերի տանը չը կայ։ Էնպէս տուն կայ, որ բոլոր եղբայրներն իրանց պապերի գիտեցած արհեստն են բանացնում. օրինակի համար՝ հէնց մէկը մենք. ինձ Ջուհլակենց Դաւիթ են ասում, Ջուհլակենց տունը ողջ Փամբակին յայտնի է, ես էլ, իմ չորս որդին էլ, իմ բաժան եղբայրներն էլ՝ բոլորս ջուհլակ ենք։ Հէնց որ դաշտի գործը վերջանում է, մէկս ու մէկս ոտներս հորումը քաշ ենք անում ու մաքուքը խաղացնում. ա՛յ, տես քո բարի աչքովը, էն քնջնի փոսն է մեր ջուհլակի հորը, հէնց էս սհաթիս էլ կտաւը հինած՝ սանտրի միջովն անց է կացրած։

Տուտուն գլուխը տմբտմբացրեց ի նշան համաձայնութեան։

—Մեր հարեւանենք էլ ներկարարենք են կոչւում, շարունակեց Ջուհլակենց Դաւիթը, հէնց էս րոպէիս նրանց մեծի ու պստիկի ձեռքերը կապուտ են, մեր գործած կտաւը նրանք լեղակի կարասն են կոխում, կապտացնում ու տիրոջը տալիս։

—Տներ էլ կան, որ իրանց հին պապերից ժառանգել են մի մասունք, մի սուրբ աւետարան, մի խաչ և մինչև էսօր էլ նրանց քնջներից մէկում

էդ սրբութիւնները բազմացրած են, ուխտ գնացողների փափագը կատարում են, նրանց տէրերն էլ էդ սրբի խաչհամբուրովն են ապրում:

Տուտուն կրկին հաւանական նշան արաւ:

—Հէնց էդպէս էլ մեր քահանէն է, կցեց Գաւիթը. էդ Սողոմնիքն ու Վեցհազարեանն իր պապերից են իրան մնացել. իմ ողորմած հոգի պապս պատմում էր մեր տէրտէրի պապերի արած հրաշքները: Ասում է՝ դրանց տան հօտաղները, մշակները, մինչև անգամ կով կթող կնանիքը բոլորը սատանէք են եղել. ախար լսած կա՞ք, որ կին սատանայ լինի, բայց նրանք ունեցել են. էն ողորմածիկը գրի զօրութիւնովը սատանէքանցը դուրս է կանչել գետնի տակից, վրաներիցը մի մի մազ պոկել է, աղաքարի տակն է դրել ու նրանց իր տանն անվարձ անհաց բանացրել է. ախար էդ անիծածները՝ ինչ տեղ ուզում ես պահիր իրանց մազը՝ կը հանեն ու կը կորչեն, բայց հէնց որ աղաքարի տակը դրիր, դիպչել չեն կարող, դրանդ շունը կը դառնան:

—Ասում է մեր գիւղացիք՝ մեծ ու պստիկ՝ մոխիկ էին տալիս սատանէքանց տներին ու վրաները ծիծաղում, գլխներին վէր հատում. ախար սատանէքանց տները մերի պէս չեն, նրանց կրունկն յառաջ է, մատները կրնկի տեղը: Ուղիղ է, մեր տէր-Մանուկն էդ պէս բան չի անում, բայց սա էլ ուրիշ հրաշքներ է գործում: Ես իմ աչքովս տեսայ, էս մեր պառաւի (իր կնոջ մասին է խօսքը) էլ միտքն է, թէ մի

ամառ ինչ օյին խաղաց տէր-Մանուկը սար եկող Ղազախի Թուրքերի գլուխը:

—Անիրաւները մեզ շատ նեղութիւն էին տալիս, մեր հանդն ու արօտն ուտացնում էին, օր չէր անցկենում, որ մի վնաս չը հասցնէին:

—Այ երէ՛ց, ասացի, աշխարհքի համար կաս և մեզ համար չքուում ե՞ս, շնորհքդ մի ցոյց տո՛ւր էս մարդակերներին, մեզ դրանց ճանգիցն ազատի՛ր:

—Տէրտէրը քթի տակին ժպտաց, Փարաջէն յետ քաշեց, գօտկածալի կաղամարը բաց արեց ու ասաց.—դէ հիմի սէհր արէք ([illegible]):

—Թուրքերի օբէքն ([illegible]) ու մերերն իրար դիմաց էին, մի բլրի գլխի նրանք էին պլրզած՝ մէկէլի վերայ մենք, իրարից հեռու էինք, բայց իրար պարզ տեսնում էինք:

—Հէնց էնքան աչքովս ընկաւ, որ մեր տէրտէրը գրիչը դրեց իր բութ մատի եղունկի վերայ ու մի բան խզմզեց: Մէկ էլ ի՛նչ, աչքդ բարին տեսնի, մա՛րդ, կնի՛կ, երեխա՛յ, տասը տարեկանից սկսած՝ շորահան եղան, շորերը կապեցին գլխներին դրին, վրաները մնաց, հեռո՛ւ հացիցս, հեռո՛ւ լողաց, շապիկ ու շապկահընկեր. ամենքը կռնաբռնուկ արին ու մինչև ծնկները բաց՝ եալլա կանչելով՝ ճանապարհ ընկան, դէպի մեզ են գալիս:

—Հա՛յ հա՛ հա՛յ, դէ՛հ հա՛ դէ՛հ, ձայն ձայնի են տուել Թուրքերը, քիչ մնա՛ց, մի՛ վախէք, սիրտ

են տալիս իրարու, գետի վարար ու գոչգոչան տեղն անցկացանք, դժուարը պրծանք, շուտով ափը դուրս կը գանք, կ՚երթանք մեր հարևան հայերի օբէքը կը քանդենք, կ՚աւերենք, կը կողոպտենք, նրանց կը փախցնենք ու նրանց արօտատեղերը կը խլենք։

—Դու մի՛ ասիլ, մէ՛րս, տաքացած պատմում էր Ջուհլակենց Դաւիթը, մեր տէր-Մանուկը Թուրքերի աչքին մի մեծ գետ է երևացրել, որպէս թէ մեր ու նրանց արանքովը կատաղած գետ է անցկենում. հիմի նրանք իրանց կարճ խելքովը գալիս են, որ մեզ անղահան անեն, մեր խուրտը (խլուրդ) խլեն։

—Տէ՛ր իմ արարիչ, ծիծաղու կոտորուել ենք, մատներս կտրես՝ չենք հասկանալ, փորներս բռնել, վէր ենք թափել.—ամա՛ն, այ երէ՛ց, ձէն տուր, քեզ մատա՛ղ, մենք մեռանք, մի ճար տե՛ս, էսքան ծիծաղն իր քամակից լաց կը բերի։

—Հէնց էդ խօսքի վերայ՝ տէրտէրն եղունկի վերայ թքեց ու փեշով սրբեց։

—Թուրքերի աչքերը բացուեց, մնացին կիսաճանապարհին կանանչ տափի վերայ խայտառակուած, կանգնած։ Վերջն ամօթները ծածկելու համար ձոր ու փոս մտան, թագ կացան, մկան ծակին հարիւր թուման կը տային, որ մէջը պարտակուին. բայց տէրտէրն էլ սպասել չը տուեց, կրկին գրիչը հանեց, եղունգի վերայ գրեց։ Նորից էս քո ղազախները դուրս թափուեցին ծակերիցն ու ինչպէս եկել էին,

էն կարգով, որպէս թէ, գետը մտան ու յետ դառան։ Կիսաճանապարհին երկրորդ անգամ տէր-Մանուկը թլիսմը ջնջեց ու բոլորին դաշտի երեսին ադամմերկ թողեց։

—Էն օրից մինչև էսօր՝ մեր արօտատեղերից մի ամբուլ խոտ չի պակասում, մեր մի քնձուտ (աննշան) ուլը չի կորել, մեր վերջին երեխի քիթն արիւնոտ չի եղել։ Հիմի նրանք տէրտէրին տեսնելուս եօթն օրէն ճանապարհից մինչև ծունկը գլուխ են տալիս։

Վերջապէս ջուհլակ Դաւիթը լռեց և Տուտուն պատմեց կարճառօտ իւր գալու պատճառը. նորա ասելովը՝ օտարները խլել են իւր քրոջ որդու նշանածին, աղջկանը գիր են արել, սիրտը գողացել են, հիմի ինքն ուզում է տէրտէրի Վեցհազարեակի շնորհիւ իրանց հարսնացուին օտարի ճանգից յետ խլել։

—Չեմ կարծում, որ մեր տէր-Մանուկն աղջիկտղայի գործում խառնուի, պատասխանեց ծեր Դաւիթը, էն վաղ էր, ինչ էշը կաղ էր, էն վաղ էր, որ մեր տէրտէրը մի գրչի ծէրով երկու ջահել սրտեր մխլատուզի (մագնիս) պէս քաշում, իրար էր կպցնում ու թէկուզ եօթը լուծ գոմէշ լծէիր, չէիր կարող ջոկել, բաժանել։ Հիմի տէրտէրը քաշուում է տղայ ու աղջիկ սիրահարացնելու գիրն ու թլիսմ անելուց...

ԻԹ.

ԱՆՁՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Աշունը շատ պտղաւէտ էր, պատերազմը խիստ կատաղի. ռուսի զօրքը Կարսը շրջապատել նստել էր. աշտարակցիք բոլորեքեան հարստացել էին, գինին և օղին մեծ գին ունէին և այդ առևտուրի մէջ աշտարակցիների հետ մրցում անել ոչ մէկի գործը չէր. նրանց մի ոտքը Կարս էր, միւսն Արարատեան այգեգործ գիւղերում. բուն Աշտարակի գինին մի կաթիլը մի ոսկով չէիր ճարել, լաւ կամ վատ, թունդ թէ թոյլ, թէկուզ մի երակն էլ թթուած՝ հաւաքում էին գիւղերից, լցնում տկերի մէջ և երեք-չորս օրից այս բոլորը իբրև Աշտարակու արտադրութիւն ծախում և վերադառնում, կրկին գիւղերն ընկնում:

Գնողներն էին սպաներն ու զինուորները:

Ոչ մի մարդ չէր վերադառնում պատերազմական դաշտից առանց նոր և թարմ լուրի, օրական մի քանի տեսակ համբաւներ էին տարածւում. մէկ հռչակում էր, թէ Օսմանցին ջարդ ու փշուր խորտակուել է, նորա մի թևն խայտառ ոչնչացել է, միւս բաժինն իւր գնդերով գերի է բռնուել և քշուել խորն Ռուսաստան. միւս անգամ աղմուկն աշխարհը վերցնում էր, թէ Բէհբուդովը յետ է մղուել բաշիբօզուկներից մինչև Ախուրեանի ափը:

Այս լուրերից մի քանիսը հաստատութիւն էին գտնում, շատերն էլ հերքւում էին, նորութիւնները փոխադարձաբար ուրախութիւն և տխրութիւն էին պատճառում երկու դրացի այլակրօն ազգաբնակութիւններին. հայը հրճւում և փառք էր տալիս իւր Յիսուսին, որ հզօր է արել կրօնակից ռուսի քաջ բազուկը և խաչի անսասան զօրութիւնով ընկճել խորտակել է լուսնի սրածայր եղջիւրները, իսկ պարսիկն առ երեսս ուրախութիւն էր արտայայտում, բարձր քաղաքական վարչութեան գրաւոր հրամանին համաձայն աղօթում էր իւր մզկիթներում՝ ռուսի զօրքի սուրը կտրուկ անելու համար. բայց ի ներքուստ նա մահաբեր հարուած և կարեվէր խոց էր ստանում իւր սրտին:

Մեծ մարգարէի հաւատարիմ աւանդապահ կանաչագլուխ մոլլաները, սպիտակագլուխ ախունդները, նոյնպէս և փէյղամբարի սերունդ՝ կապտագլուխ սէյիդները՝ թափառաշրջիկ դաւրիշների գործակցութեամբ ստիպուած էին երկու հակասական դեր կատարել. նոցա բերանից միանուագ և հով էր փչում և ջերմ, տաճարի ամբիոնից մոլլան ոգևորուած աւետում էր ռուսի զօրքի յաղթութիւնը, իսկ մասնաւորապէս ամեն ուղղափառ իսլամի վերայ պարտք էր դնում՝ որ նա օրական երեք անգամ կատարելիք նամազից մէկը բաժին հանի իւր հոգուն, որպէս զի իւր մահից յետոյ Մահմեդի դրախտի մէջ հուրիփարիներով շրջապատած լինի, իսկ երկու նամազը նուիրէ Օսմանցու թրի յաջողութեանը:

Վերոգրեալ խտրութիւնը անջատել էր դարերով միասին ապրած հային ու Թուրքին. նրանք միշտ իրարից զգոյշ էին և պատրաստ էին մնում. հայն իւր անձնապաշտպանութեան վերայ էր մտածում, պարսիկը վրիժառութեան և հայ գիւղերի բարիքին տիրանալու հոգսումն էր:

Թուրքն իրաւունք ունէր, լինելով բնական ծոյլ՝ իւր հողերը հային էր ծախում չնչին գնով մշակելու և օգտուելու, իսկ ինքը պարապում էր միայն կեղեքելով և յափշտակելով:

Հէնց էդ պատճառաւ՝ պարսիկները միանգամայն հողի հետ հաւասարուեցան, պատերազմի աւթիւ ծանրացած հարկերի ու հասերի ներքոյ ճկուեցին, ռամիկ ու շինական, բէգզադայ ու խանզադայ, մի կտոր հացի կարօտ մնացին. ընդհակառակն, հայ գեղջուկը հարկահաններին էլ էր կշտացնում, իւր տունն էլ բարօրութեան մէջ էր պահում և նոյն իսկ պարսկին էլ էր օգնում, դեռ աւելորդը վաճառելով կարողութիւն էր դիզում:

Ի՞նչ անեն ուրեմն պարսիկները, որ չը նախանձեն. դիպող րոպէի էին սպասում, որ վրէժ առնեն. կուտակուել էին մթին և լեռնաչափ ամպերը, որոտմունք և փայլատակունք միայն պէտք էր՝ կարկտելու և շանթահարելու համար:

Այդ վայրկեանը մօտ էր:

Կայծակի արագութեամբ մի չարագուշակ գոյժ արձագանգ տուեց Կարսից մինչև Մասեաց ստորոտը, թէ ռուսի զօրքը մեծ հարուած է ստացել Օսմանեան բանակից:

Ռուսաց Նորեկքաջընտիր Դրագունի (Նիժեգորոդսկի) գունդը՝ իրանց անհմուտ զօրավարի առաջնորդութեամբ՝ շրջափակուել է առաջի կողմից տաճկական զօրքից, իսկ ետևից՝ ռուսական անհաւատարիմ պարսիկ միլիցիայից (տուզեմնի զօրք):

Ոչ ոք չի կարողացել հսկել և իմանալ, որ միլիցիայի հրամանատար պարսիկ խանը գաղտնի բանակցութիւն է ունեցել տաճկի գլխաւոր հրամատարի հետ, իսկ այստեղ բոլոր պարսիկ գիւղերին է պատուէր տուել՝ որ նշանը տալուն պէս՝ նրանք յարձակումն գործեն հայ գիւղերի վերայ և սուրը քաշեն ու կոտորեն բոլորին, մեծից մինչև փոքրը:

Միանուագ կազմակերպուած է եղել Օսմանցու խորամանգ փաշաների ձեռքով մի գունդ Քուրդ հրոսակներ, որոնք այդ յաջող րոպէում տաճկական դրօշակով երեք Թնդանօթի ուղեկցութեամբ պէտք է միանային Ալուրեանի կողմի ափերի պարսիկների հետ և աւերածութիւններ անելով՝ հպատակութեան երդումն առնէին հայերից:

Կարգադրուած է եղել, որ դեռ Աղէքսանդրապօլը չ'առած՝ պարսիկ բազմամարդութեան օգնութեամբ Երևանին տիրեն:

Օսմանեան հրամանատարն իրագործեց իւր ռազմագիտական ծրագիրը. ասում են, մի երկու ժամի մէջ բնաջնինջ արեց պարսիկ միլիցիայի շնորհիւ կո-

րին և գեղանի Դրագուններին, դոցանից երկո՞ւ թէ երեք հոգի միայն դիպուածով ազատուել են։

Յայտնի չէ, թէ միլիցիայի դաւաճանութիւնն ինչպէս հրապարակ եկաւ, բայց անհերքելի ճշմարտութիւն է, որ դեռ ոչինչ չեղած, դեռ թշուառական Դրագունների օրհասից մի շաբաթ յառաջ, Արագածոտնեան և Արարատեան դաշտի բոլոր հայերը գիտէին իրանց դրացիների նենգաւոր խորհուրդը և իրանք էլ իրանց կողմից պատրաստուեցան։

Հէնց այս ճգնաժամերի մէջ մեր հերոս Բղդէն, արհամարհելով ամեն արհաւիրք, մի կողմից իւր ցորենատուութիւնն էր շարունակում, միւս կողմից հանգիստ չէր տալիս ջհուտ Աղաջանին։

Աղաջանը բացասական պատասխան էր ուղարկել Բղդէին տէր-Յակոբի բերանով, անարգել էր իւր հոգատարութեամբ հացի տէր եղած չարչու ապերախտութիւնը և շտապում էր վերահաս փոթորիկներն անցնելուն պէս՝ պատժել իւր աղջկանը։

Բայց Աղաջանի բարկութիւնը կրկնապատկուեց, երբ մի երեկոյ իւր փեսայ Սահակը յանկարծ ներս բերեց քարշկուտելով մի պառաւ կնոջ։

Սահակը պատմեց, որ այս կնոջը բռնել է Աղաջանի շեմքի տակը փորելուս։

Կինը Տուտուն էր. նա իւր բերած թլիսմներն էր գործ դնում։ Պառաւն այլ ևս թոյլ չը տուեց իրան խուզարկելու, իւր ձեռքով հանեց երեք կախարդական փաթեթները և դրեց Աղաջանի յառաջը։

Նա ոչ միայն չը խոստովանեց իւր մասնակցութիւնն այս գործի մէջ, ընդհակառակն հաւատացրեց, որ ինքը մեղադրել է Բղդէին և մօրը իրանց անխիղճ վարմունքի դէմ, որ չը վախենալով Աստուածային արդար բարկութիւնից՝ ուզում են սատանայական հմայութիւններով երկու տարուան նշանը քանդել։

Տուտուն կծու երդումներով հաւատացրեց, որ ինքը մտադիր է եղել անձամբ թլիսմի փաթեթները Աղաջանին ներկայացնել, բայց եթէ այդ նա չի արել և միանգամից դուռը չի բացել ու ներս եկել, այդ այն յարգելի պատճառաւ է եղել, որ ինքը Բղդէն դրացու պատի տակից հսկում էր և վերահասու էր իւր գործողութեանը։

Աղաջանը պատառոտելով թլիսմի գրերը՝ սպառնաց Բղդէին Տուտուի ձեռքով, որ եթէ նա ձեռք չի քաշիլ իւր յիմարութիւններից, ինքը ստիպուած կը լինի դիմել աւելի զսպիչ միջոցների։

—Այնքան ծեծել կը տամ քեզ, ապպարանք արեց Տուտուի ձեռքով Աղաջանը Բղդէին, որ շաբթէ շաբաթ կը գժուես։

Տուտուն վերադարձաւ և տասնապատիկն աւելացրած՝ պատմեց Բղդէին, ասելով՝ թէ իւր անձը կապուտ լեղակ է դարձել Աղաջանի և իւր փեսացուի մահակներից։

Լալով պատմեց Տուտուն, թէ չոքել համբուրել է Աղաջանի ոտքը, համաձայնել է սիրով կրել ամենատեսակ ծեծ ու պատիժ, միայն թէ իրան դարձ-

նէին իւր ծոցից հանած թլիսմը, իբր թէ ինքը կամեցել է հաւատացնել, թէ այդ թղթերը ոչ թէ սիրահարական յուռութքներ էին, այլ իւր որդու գլխացաւի գրերը:

—Աղաչեցի, գլուխս ոտքի տակին մատաղ անել խոստացայ, շարունակեց Տուտուն, բայց ինչ օգուտ՝ ուշաթափուեցայ, փոքր մնաց խելքս կորցնում էի, երբ յանկարծ երեք փաթեթների բոցը լուսաւորեց մութը տունը, օջաղի մէջ վառուող կրակը մի րոպէումը լափեց իմ դառն քրտնքի արդիւնքը:

—Շա՛տ լաւ, գլուխը թափահարեց Եզդէն, տեսնենք՝ թէ ո՞վ ո՞ւմնից վրէժ կ՚առնի:

Բայց ոչ Աղաջանն իւր սպառնալիքը գլուխ տանելու ժամանակ ունեցաւ և ոչ Եզդէն կամեցաւ շուտով իւր մտքումն յղացած խորհուրդը իրագործել:

Ի՞նչ մանր և չնչին կրքեր յագեցնելու միջոց էր, երկիրն արիւնը վերցրել էր:

Դեռ նոր բերանից բերան թռչում էր Դրագունի գնդի կոտորումի գոյժը, ահա Արագած լերան հիւսիսային հայ գիւղերը սասանեցան:

Արագածի արևմտահիւսիսային սահմանամօտ հայ գիւղերում Քրդի հրոսակներն իրանց համայնքների գլխաւորների առաջնորդութեամբ Օսմանեան դրօշակը տնկեցին և հպատակութեան խոստումն առան:

Քրդերից խրախուսուած մեր պարսիկ դրացիները խմբաւորուեցին և յարձակուելու պատրաստուե-

ցան: Ընչասիրութեան քաղցը այնքան ուժգին էր նոցա մէջ, որ էլ չը սպասեցին Օսմանեան դրօշակին և թնդանօթին, այլ խմբակներով յարձակում գործեցին այս և այն գիւղերի վերայ:

Բայց որովհետև, ինչպէս ասացինք, հայերն էլ իրանց կողմից պատրաստ էին, ամեն տեղ պարսիկներն անյաջողութիւնի հանդիպեցան և յետ ընկրկեցին:

Կատաղի էին դարձել հայերը. տասն և վեց տարեկանից վեր՝ ամեն տղամարդ, բացի դաշոյնից, մի քանի կրակ ունէր վրան: Սիրելի էր տեսնել, թէ ինչպէս երեկուան խաղի գնդակով զուարճացող պատանին այսօր մի երկու ատրճանակ գօտկածալումն ամրացրած՝ մի ծանր հրացան էլ ուսին դրած՝ ցորեկ ու գիշեր հսկում է հերթով գիւղի շրջակայքում:

Հրացաններից շատերը սեպհական էին, մի մասն էլ ստացել էին պետութիւնից:

Չ՚ունեցողներին տէրութիւնը զէնք, վառօդ ու գնդակ էր ընձեռել:

Իւրաքանչիւր գիւղ իւր ամուր և ապահով մասում ժողոված իւր ընտանիքը և երեխաներին, պաշտպանում էր:

Ամեն գիւղ իւր գլխաւոր հրամանատարը, իւր յիսնապետներն ու տասնապետներն ունէր. ամեն մէկի պաշտօնը որոշ էր և յայտնի:

Բացի մասնաւոր անձնապաշտպանութիւնից, մերձաւոր գիւղերը միմեանց փոխադարձ օգնութիւն հասնելու ուխտ էլ արել էին:

Կարբու զինապետներից մէկն էր ջհուտ Աղաջանը: Նորան ստորադրեալ էր ուրիշների կարգում և իւր փեսայ Սահակը, իսկ Կարբու ընդհանուր հրամանատարն էր ինքը՝ իւր սիրելի հօտի անձնուէր հովիւ քաջասիրտ տէր-Յակոբը:

Միակ բացակայ անդամը Կարբու բնակիչների մէջ էր Բղդէն, որ իբրև պաշտօնական անձն, իրաւունք չ՚ունէր մասնակցելու համայնական պարտակատարութիւններին:

Մի քանի գիշեր Բղդէն էլ Կարբի չէր գալիս, ոչ ոք էլ հետաքրքիր չէր լինում իմանալ նորա գիշերելու տեղը:

Միայն Սալբին իբրև մայր՝ հոգւոց էր քաշում իւր որդու տեսքովը կարօտած: Նրան էլ մխիթարում էր իւր դրկից Տուտու նանը՝ օրական մի քանի անգամ գալով նորա մօտ քթախոտ քաշելու:

Մի երեկոյ վերջնալուսից յետոյ, մինչ գիւղապահ զինակիրները դեռ նոր դուրս էին եկել իրանց հսկողութեան պաշտօնը կատարելու, Կարբու արևմտահիւսիսային կողմից երեք ձիաւոր կամեցան Կարբի մտնել:

Գիշերապահութեան հերթը ջհուտ Աղաջանի խմբինն էր: Աղաջանը դեռ տանից չէր եկել, նորա տեղը կառավարիչ էր ժամանակաւորապէս իւր փեսացու Սահակը:

Վերջինս տեսնելով հեռուից ստուերները, կարգի հրաւիրեց իւր խմբին և գոչեց.

—Ո՞վ էք, մի՛ մօտենաք, ապա թէ ոչ գնդակահար գետին կը գլորուիք:

—Ես եմ, Սհօ եղբա՛յր, երկիւղ մի՛ կրիր, ձայն եկաւ դիմացից:

—Իսկ ուղեկիցներդ ո՞վ են, կրկին հարցրեց Սհօն:

—Իմ ձիաւորներն են:

—Իրաւունք չը կայ գիւղը թուրքեր տուն թողնել. եթէ ուզում ես գալ, պէտք է դրանց յետ դարձնես:

Դեռ հանդիպից պատասխան չը ստացած՝ Սհօն մի մարդ վազեցրեց իւզբաշու ետևից:

Իւզբաշի կոչւում էր խմբապետը:

Այս խմբի իւզբաշին գիտենք որ Աղաջանն էր:

—Դու մի՞թէ ինձ չը ճանաչեցիր, Սհօ եղբա՛յր, կրկին ձայն եկաւ հակառակ կողմից շատ ուշ:

Երևում է, որ եկաւորների մէջ մի կարճ խորհրդակցութիւն էր կայացել:

—Առաջին անգամից ճանաչեցի, պ. Բաղդասա՛ր, պատասխանեց Սհօն, բայց եթէ հետիդ մարդիկը թուրք են, իրաւունք չ՚ունիմ առանց իւզբաշու հրամանի ներս ընդունել:

Մինչ այս մինչ այն՝ Աղաջանը ձին հեծած եկաւ և իմանալով գործի էութիւնը՝ յառաջ կանչեց Բղդէին իւր ընկերներով:

Գիշերը պարզ էր. լուսինը 18 օրական լինելով՝ շատ ժամանակ չէր, որ իւր աղօտ փայլը սփռել էր

աշխարհքի երեսին, բայց լուսնի լոյսը բաւական էր յայտնի կացուցանելու Բղդէի ձիաւորներին։

Նոքա էին Արագածի լանջի վերայ գտնուած Ք. գիւղի բէգզադէքանցից երկուսը, որոնք որքան և ազնուատոհմ՝ բայց մարդասպան աւազակների համբաւ էին հանել ամբողջ գաւառումը։

Բղդէն Աղաջանին բարև տուեց և մօտ եկաւ։

—Ո՞րտեղից այս կէս գիշերին, սառնութեամբ հարցրեց Աղաջանը։

—Գիւղերից. մի քանի խալվար ցորէն էին պահանջել, Թալինի կողմովը ճանապարհ դրի և վերադարձայ։

—Իսկ սրանց ընչո՞ւ ես քեզ հետ շրջեցնում։

—Թալինցի ձիաւորների հետ եկայ մինչև սրանց գիւղը, նրանց վերադարձրի և սրանց հետս վերցրի։

—Եւ երկիւղ չը կրեցի՞ր։

—Ընչի՞ց և ո՞ւմից։

—Իբր թէ դու աշխարհքից տեղեկութիւն չ'ունիս, որ օսմանցին ռուսին յետ է քշել, քուրդը Թալինի գաւառն է մտել, սարի վրայի պարսիկ գիւղերն էլ պատրաստուել են մեր վրայ յարձակուել։

Բղդէն երդուեց, որ ինքը Թալինի կողմից ցորենը ճանապարհ է ձգել իւր հսկողութեամբ, թէ մի քանի օր է՝ ինքը թուրք ու հայ գիւղերում շրջում է և ոչինչ վտանգ կամ շփոթ չի նկատել։ Ապա դառնալով իւր ուղեկիցներին ասաց.

—Տղէ՛ք, տեսնում էք մեր հայերի պատրաս-

տութիւնը, չը լինի՞ թէ յիմարանաք, մտքներովդ չարութիւններ անցկացնէք, եթէ ուրիշներն էլ չը լինին, մեր Սհօն հերիք է ձեզանից տասին գնդակախորով անել. տեսնո՞ւմ էք՝ ինչպէս գեղեցիկ զրահաւորուած է, լաւ տնտղեցէք սորա դէմքին ու հասակին. ինքը նշանած տղայ է, մուրազի վրայ է, մի քանի օրից փափագին կը հասնի. մեր իւզբաշի Աղաջանի փեսացուն է։

—Աստուած տա՛յ, Աստուած տայ, կրկնեցին թուրքերը, կտրիճ տղամարդ է երևում, ջիւան է, ջահել է։

—Առանց շատախօսութեան վերադարձրո՛ւ թուրքերիդ և ինքդ գնա քո տունը, խստութեամբ պատուէր արձակեց Աղաջանը։

—Տղէ՛ք, ձայն տուեց Բղդէն, իւզբաշի Աղաջանը նեղանում է, որ դուք գովութեամբ էք խօսում իւր փեսացուի վերայ, բաւական է, շնորհակալ եմ, կարող էք վերադառնալ ձեր գիւղը։

Թուրքերը գիշեր բարի մաղթելով յետ գնացին, իսկ Բղդէն մտաւ Կարբի և իջաւ իւր տանը։

—Դու քո հացը կերար, իւզբաշի Աղաջան, քո փեսայ Սհօյի հետ միասին, Ալին ու Մահմադ-Վալին այսուհետև ականակիր խաւարի մէջն էլ կարող են հարիւրաւոր մարդկանց մէջ որոշել քեզ ու քո փեսին. եթէ էս գիշեր չը յաջողեցրին, էգուց կամ էլօր երկուսիդ արևն էլ մեր կը մտցնեն, դեղին ոսկիքը ձեր ուղուրին են նրանց գրպանը մտել. էն ժամանակը, Շողիկ ջա՛ն, չոքէ չոք ոտս կը դաս։

Լ.

ՈՒՐ ՋԱՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆ ԱՆՊԱՏԻԺ Է ՄՆՈՒՄ

—Մոշնին տարա՛ն, սուրբ Գէորգը քանդեցի՛ն։

Ահա այն բօթաւոր լուրը, որ փոթորկալից քամու նման խռովեց առանց դորան էլ անհանգստութեան մէջ ծփացող և մոլորուած Մոշնին շրջապատող հայ գիւղերը։

Աշտարակ՝ հարաւից, Կարբի՝ հիւսիսից և Փարբի՝ արևմուքից. երեքից առաջին երկուսը զուտ հայաբնակ, վերջինը հայ ու Թուրք խառն մի գիւղ։

Վերջինիցս օգնութիւն սպասելն աւելորդ էր. վաղի առակի պէս՝ քաշալը դեղ իմանայ իւր գլխին կ'անի, ինքը աշնան տերևի նման դեղնել է սեպհական անհաւատարիմ դրացիներից, երկիւղից մի աննշան հողմիկի հարուածը բաւական է նրան սարսափեցնել. իսկ առաջին երկուքը նոյնպէս իրանց գլխի ճարը տեսնելու հոգսերումն են. հետևաբար, ժամանակ չէին կարող ունենալ ուշադիր լինել գուժաբերների ձայնին։

Սխալ ենթադրութիւն. հայը խաղաղ ժամանակ մռացկոտութեան ենթարկուած՝ անտարբեր է դէպի ինքնաճանաչութեան վսեմ զգացմունքը, իսկ նեղութեան ժամանակ նա գիտէ անձնազոհ գտնուել, արհամարհել ամենայն դժուարութիւններ, տանջանքներ, մահ, մանաւանդ երբ վտանգը սպառնում է

իւր դարաւոր նուիրականութիւններին, իւր կրօնին, իւր ազգային սրբութիւններին, իւր եկեղեցւոյն։

—Մոշնին տարա՛ն, վանքը քանդեցի՛ն։

Հերիք էր այս երկու խօսքը գիշերուան թանձր մթութեան մէջ հասնէր մի աշտարակցու, կարբեցու, մի հեռու կամ մօտիկ հայի ականջին և սպասելու էր այն՝ ինչ որ կատարուեցաւ։

Գոյժը տարածողը վանահօր կողմից ուղարկուած մոշնեցիք էին։

Մոշնի գիւղում գտնուած սուրբ Գէորգայ վանքը, թէպէտ մեծ և հռչակաւոր ուխտատեղի է և նորա ուխտի ժամանակ՝ գլխաւորապէս աշունքը՝ տասնեակ հազար ժողովուրդ հինգ-վեց աւուր ճանապարհից խռնուում են լիզել հինաւուրց մենաստանի քարերը, բայց նա չ'ունի մեծ միաբանութիւն։

Հասարակ օրերի մշտակայ վանքականները մի վարդապետ է վանահայր անուամբ, մի պառաւ տընտես կին է, որ հայր սուրբի համար պարզ և անպաճոյճ կերակուրներ է եփում, նորա փոխնորդն է լուանում և վանքին մատաղ բերած երկու-երեք կովերն է կթում, մի Մշու երկրացի՝ հայրենիքից փախած՝ վանքի չորս պատերի մէջ պատսպարուած անվարձ մշակ է, որ ամառները գոմի դրանն է խորթում յոգնած ու ջարդուած դաշտիցը վերադառնալուց յետոյ և ձմեռը գոմի օդայումը մրափում, լուերի մէջ խամփացնում և մի պատանի մոնթ է՝ վարդապետի ազգականներից կամ ծանօթներից, որ յատուկ նրան

աշակերտելու և ծառայելու համար եկած է։

Ուրեմն ընդամենը չորս կամ առ առաւելն վեց հոգի են, որոնց վճռած է վանքի լայնատարած բակի մէջ ապրել և վանքի պաշտպանութեանն իրանց անձը նուիրել։

Սոքա միայն են և ուրիշ ոչ ոք, որ տարին բոլոր ընդունում են և պատուով ճանապարհ են դնում վանքն այցելող հայ և օտարազգի ուխտաւորներին, սոքա են սուրբ Գէորգայ Թանգարանի, մասունքների և սրբազան անօթների աւանդապահները։

Ոչ պարսկական բռնակալ իշխանութեան օրերում և ոչ մեր ժամանակները լսուած չէր, որ սակաւաքանակ վանքականները վտանգի ենթարկուած լինէին։

Ճիշդ է՝ վանքը շրջապատած է քառակուսի հաստահիմն պարսպով, դեռ մի ուրիշ ամուր պատնէշ էլ բաժանել է բակն արտաքին և ներքին մասերի, բայց այդ ամրութիւնները ոչինչ նշանակութիւն չունէին հրոսակների յարձակմունքների դէմ, եթէ մի երկու տասնեակ ձիաւոր մտադրուէին խրամատել պարսպի մի պատը և ներս խուժել վանքի բակը, դժուար չէր նմանապէս կրնկահան անել երկփեղկեայ դռները։

Չէ, մտածելն անգամ յանցանք էր։

Սուրբ Գէորգայ հրաշագործութեան հռչակը սարսափ էր ներշնչել դրացի անքրիստոնեայ մահմեդականին և քրդին. ոչ սակաւ անգամ պարսկի մօլլէն կենդանի մատաղով սուրբ Գէորգայ դուռն է եկել,

մոմ է վառել և դանձանակ է տուել. ընչի՞ց, կամ ո՞ւմից, ապաքէն, պէտք է երկիւղ կրէին վանքցիք, կամ ընչո՞ւ կասկած կը տանէին, թէ մի օր ստահակ մարդիկ կարող են իրանց դարաւոր սովորութիւնները ոտնատակ տալ, կարող են յանդգնել և պիղծ ձեռներով մօտենալ մեծահամբաւ սրբավայրին։

Եթէ այս յարգելի և ծանրակշիռ հանգամանքները չը լինէին, ոչ վանքի հարաւային պարսպին կից 15 տուն Մողնի գիւղն իւր մի քանի քաղցած ու տկլոր անհոգ գիւղականներով և ոչ նոյն ինքը վանահայրը՝ այս երկիւղալի ժամանակին՝ այսքան ապահով ու անվրդով կը լինէին։

—Հայր սո՛ւրբ, հայր սո՛ւրբ, բաղխում է սպասաւոր պատանին վարդապետի ննջարանի փակած դուռը՝ կէս գիշերին։

—Անիծեա՛լ, ի՞նչ ես անհանգիստ անում, դեռ կէս գիշեր չը կայ, ի՞նչ ժամի ժամանակ է, որ զարթնացնում ես, քեզ համար սովորութիւն ես արել, չես թողնում՝ մի քիչ քնենք, ես այս առաւօտ ժամ չեմ գալու, եթէ կամենում ես, ձայն տուր բաշի գլխից տէր-Բարսեղին, թող գայ ժամն ասէ։

—Զարթի՛ր, հայր սո՛ւրբ, ժամի համար չեմ քեզ վերկացնում, դեռ կէս գիշեր էլ չի եղել։

—Ուրեմն ի՞նչ ես գլուխս ցաւացնում։

—Չե՞ս լսում դրսի դրան բաղխումները, վանքը պատել են, թուրքերը դռները ջարդում են։

—Իրա՛ւ, այս ի՞նչ թխթխկոց ու շառաչիւն է,

վեր ցատկեց Հայր սուրբը և անմիջապէս մի խելացի կարգադրութիւն արեց։

—Եթէ թշնամին յարձակումն չի գործել գիւղի վերայ, հրամայեց վանահայրն իւր փոքրաւորին, իջի՛ր պատովը, զարթնացրու տէրտէրին և մի քանիսին, իսկոյն ուղարկի՛ր Աշտարակ, Կարբի ու Փարբի օգնութիւն խնդրելու. վնաս չ'ունի, դռներն ամուր են, մանաւանդ միջի դուռը երկաթապատ է, մինչև սեզահան անելը օգնութիւնը վրայ կը հասնի։

Պատանու ուղարկած մողնեցիքն էին, որ մի շնչի վազելով՝ շփոթ ձգեցին վերոյիշեալ գիւղերը։

—Շո՛ւտ, քաջ եղբայրնե՛րս, կարգադրեցին հսկող իւզբաշիքը, գիւղը հաւար ձգեցէք, թող բոլորեքեան զէնք վերցնեն, մի մասը գիւղը պաշտպանեն, միւսը զինաւորուած՝ շտապեն Մողնին պաշտպանելու։

Հայր սուրբն ուղիղ դատեց. վանքը կողոպտող հրոսակները՝ թուով յիսունի չափ՝ դեռ նոր քանդել էին պարսպի արտաքին պատը և սկսում էին խռուել գոմի պատը, որ միակ յարմար տեղն էր ներսի բակը մտնելու համար, երբ Աշտարակու և Կարբու սպառազինած ձիաւորները՝ կրակ կտրած՝ միաժամանակ վրայ հասան։ Քիչ միջոցից մի քանի փարբեցիք էլ հասան։

Շփոթն ընկաւ Թուրքերի մէջ։

Քանդած պատի մօտ պահապան կարգած ձիաւորներն իմաց տուին իրանց ընկերներին օգնութիւն եկողների մասին և աւերիչները յետ դարձան։

Հայերը մնացել էին մոլորուած, դրսի դուռը

փակ էր, հարաւային կողմի պարիսպը և Մողնի գիւղը նոյնպէս անվնաս, իսկ վարդապետն ու մողնեցիք խցերի կտերը աղաղակ և դռոցներ էին հանում։

—Հայր սո՛ւրբ, ձայն տուեց աշտարակցի իւզբաշի աւչի Փիլումը, ո՞ւր են թշնամիքը։

—Օրհնեա՛լ լինիք, քա՛ջ զաւակներս, թշնամին ներս է լցուել՝ արևելեան կողմից պատը քանդելով, ի սէ՛ր Աստուծոյ, դուք զգոյշ եղէք, չը լինի թէ յանկարծ կրակ բռնուիք, նոքա ձեզանից կրկնապատիկ աւելի են, ես վերնայարկի լուսամուտից լաւ դիտեցի։

Փիլումը փորձառու զօրավարի նման իւր վերայ առաւ ընդհանուր հրամանատարութիւնը և իւր գունդը, եթէ կարելի է այսպէս ասել, երկու բաժանեց. կարբեցիներին և փարբեցիներին գիւղի տակովն ուղարկեց պարսպի արևմտեան կողմը փակելու, իսկ ինքը իւր խմբովն անցաւ արևելք։

—Ես ինքս ներս կը մտնեմ բակը, կարգադրեց Փիլումը և մի երկու գնդակ կ'արձակեմ դէպի Թուրքերը, շփոթ կը բարձրացնեմ, եթէ թշնամին յանդգնի անուշադիր գտնուել և կամենայ վանքի ներսի բակը մտնել, մենք ետևից ջարդ կը տանք, իսկ եթէ փախուստ տալու լինի, թող տուէք առանց արիւն թափելու հեռանան։

Փիլումի կարգադրութիւնը զուր անցաւ։

Յանկարծ մէկումէկու ետևից դուրս թափուեցին Թուրքերը և վախկոտ նապաստակի նման կորչում էին իրանց որսորդների ձեռքից։

—Ոչ մի գնդակ զուր տեղը չը կորցնէք, ուզում էր հրամայել Փիլումը. բայց խօսքը բերանին մնաց, փախչողների միջից մի հրացանի պայթիւն լսուեցաւ. գիշեր էր, գնդակը կրակ կտրած՝ շեշտուեց դէպի կարբեցոնց խումբը։

—Ես ընկայ, տղե՛ք, վրե՛ժ առէք, ձայն տուեց առաջապահ ձիաւորը և գլխի վայր ձիուց գետին ընկաւ։

—Ո՞վ էր ընկնողը, գոչեց Փիլումը և դեռ իւր պատասխանը չը ստացած՝ ինքն իւր հրացանն ուղղեց դէպի գնդակը դուրս թռած ուղղութիւնը։

—Աղաջանն էր, մեր իւզբաշին, լսուեց կարբեցոնց կողմից։

—Վրէ՛ժ, առիւծի նման մռնչաց Փիլումը, քամակիցս եկէք, սպանե՛նք, բրդե՛նք և ոչ մի Թուրքի չը թողնենք կենդանի յետ դառնայ։

—Եալլա՛, սուրբ Գէորգը մեր կռանը կենա՛յ, գոչեցին բոլորեքեան և Փիլումի հետ յառաջ մղուեցան։

Գնդակների շաչիւնը և փայլը գիշերուան խաւարի մէջ նմանում էր դարբնոցի սալի վրայից դուրս ցայտած կայծերի, երբ կռանահարները հաստակուռ մուրճերը կարգով զարկում են հրաշէկ երկաթին։

Վերջապէս լռութիւնը տիրեց, էլ ձայն ու ձուն չի լսուում, էլ ձիանոց դոփիւն և դրոփիւն չը կայ։

Տեղը մնացին երկու-երեք Թուրքեր, որոնք Փի-

լումի և ուրիշների գնդակներից Մահմեդի արքայութիւնն էին վերափոխուել։

—Բաւական է, տղա՛յք, վերադարձէք ամենքդ ձեր գիւղերը, կարգադրեց Փիլումը, սպանուած Թուրքերն էլ թող տեղն ու տեղը մնան, եթէ իրանք չը տանեն, էգուց մենք նաչալնիկին իմաց կը տանք։

Մեր տղայքը Փիլումի տնօրէնութեամբ վերադարձան։

Ոչինչ բանով կարբեցիք չը համաձայնուեցին Աղաջանի մարմինը թողնելու Մողնումը. հայր սուրբը շատ յորդորական խօսքեր ասաց, բայց հնար չ'եղաւ։

Կարբեցիք իրանց մեռեալը կապեցին նորա ձիու վերայ և մեծ սգով յետ դարձան։

Հաւատարիմ կենդանին իւր տիրոջ մարմնի մօտից չէր հեռացել։

Կարբու և Մողնու միջասահմանումը, Քասախի քարքարուտ ափին մօտ, ճանապարհից մի քայլ հեռու, գտնուում է Մողնու սուրբ Գէորգայ նախկին վանահայրերի և միաբանների գերեզմանոցը։

Նոյն տեղումը՝ սրբակեացների շիրիմներից դէպի արեւելք՝ այսօր էլ զոյգ կանգնած են իրար մօտ երկու բարձրադիր, մամռապատ «ձիաքար» կոչուած տապանաքարեր։ Եթէ յիշողութիւնս ինձ չի դաւաճանում, դամբարաններից մէկի վերնագիրն է ուստա Մուրատինը։

Աւանդութիւնն այսօր էլ Մուրատին ընդունում է սուրբ Գէորգայ Հրաշակերտ վանքի կառուցանողը։ Միւս տապանը վերագրւում է քաջահմուտ վարպետի ուշիմ աշակերտին։

Մի փոքրիկ «սև չալու, կամ դժնիկ» կոչուած փուշ՝ չեմ սխալուիլ եթէ ասեմ՝ դարերով անջատել և կրկին շաղկապել է միմեանց հետ այդ երկու յիշատակարանները, որոնք առանձին իմն պատկառանքով գրաւել են տեղացիների քաղցր համակրանքը։ Ամեն ոք սրբազան պարտականութիւն է համարում անձին՝ այնտեղից անցկենալուս՝ յիշել Մուրատին և իւր աշակերտին և «Աստուած ողորմի սրանց հոգւոյն» խօսքերի հետ պատմել իւր ուղեկցին վարպետի և աշակերտի նահատակութեան հետաքրքիր պատմութիւնը։

Անցքը շատ կարճ է. Մուրատը հոգւով և սրտով սիրելուս է եղել իւր աշակերտին՝ նորա մեծ ընդունակութեան և հմտութեան պատճառաւ. նորա ասութեամբը՝ աշակերտն իւր աջ կուռն է եղել։

Վանքի մեծ կաթուղիկէն կառուցանելիս՝ աշակերտի ոտքը սահում է և նա վայր ընկնելով մեռնում է։

Զարաղէտ դժբաղդութիւնը Մուրատին բարոյապէս ընկճում է. նա յուսահատւում է, ոգևորութիւնը կորցնում է և չի կամենում շէնքը շարունակել։ Մուրատը վանահօր և ուրիշների թախանձանքներին գիջանելով՝ վերջապէս մի քանի օրից

իսպառ աւարտում է գմբէթը և վերջին քարն ամրացնելուց յետոյ՝ ինքն իրեն գահավէժ ցած է գլորում այն բարձրութիւնից։

Վախճանը րոպէական է լինում։

Մուրատի վերջին խօսքն այս է լինում. «Ի՛նչ կարող է գործել ձախ ձեռն առանց աջի»։

Հազիւ վանքին օգնութիւն եկած կարբեցի ձիաւորները հասել էին Մուրատի գերեզմանի հանդէպը, որ ամպերի պատառուածքներից լուսնի լուսով նշմարեցին նրանք վարպետի և աշակերտի տապանների արանքին փշի թփի ստուերումը շարժուող մի էակ։

Բոլինենց Սահակը անհեռատեսութեամբ ձին յառաջ վարեց եղելութիւնը ստուգելու։

—Որսն իւր ոտքովն է գալիս, Ալի բէ՛գ, գործերս յաջող է գնում, Մողնումն Աղաջանի գլուխը խաշեցինք, փեսացուն էլ հիմի իմ գնդակին մատաղ կը լինի և մենք մեզ խոստացած ոսկիքը վաղը գրպաններս կը լցնենք. խօջէն խօսքին տէր մարդ է։

Այս խօսքերի հետ միասին Մուրատի գերեզմանաքարի տակից գլուխը վեր բարձրացրեց մի թուրք և հրացանն ուղղեց դէպի Սահակը։

Գնդակը փշրեց Սահակի ձախ ուսագլուխը։

—Դաւաճանութի՛ւն, մեր տղէ՛ք, գոչեց Սահակը և ուշք չը դարձրած իւր վէրքին՝ արճանակով փոխադարձ մահացու հարուածը տուեց հակառակորդի ուղիղ կրծքի մէջ տեղից։

Թուրքն անշունչ տարածուեց գետնին։

Նոյն այդ միջոցին աշակերտի գերեզմանաքարի ետեւից մի ուրիշ գնդակ արձակուեց դէպի Սահակը։

Հարուածն անյաջող անցկացաւ. գնդակը շաչիւնով սլաց Սահակի գլխավերեւով։

Դարան մտած մարդը տեղից կանգնեց և կամենում էր թուրը պատեանից դուրս քաշել։

Սուրը մնաց կիսահանել։ Կարբեցիներից մի կլորիճ երիտասարդ հայհոյական խօսքերով յառաջ մղուեց և քրդական կեռակտուց սրով դաւաճանին խոր խոցեց մինչև թոքերը։

Շոգենաւի հատուածական փռնչոցի նման դուրս էր փչում արիւնը՝ շնչառութեան հետ միասին՝ գլորուողի լայնաբերան վէրքի ճեղքից։

Անրակի ոսկրի կէսը մնացել էր պարանոցին կպած, միւս կտորը կռան հետ կախ էր ընկել։

—Աղայ Մողնի՛ն... մեր պատի՛ժը... տուե՛ց... Մահմադ-Վալի բէ՛գ... նա կը պատժի և մեզ դրդողի՛ն... ա՛խ... խօջա...

Խռխռոցը մեղմացաւ, կիսահնչիւն և կիսաւարտ խօսքերը ասողի բերանումը սառեցին։

Մինչ այս, մինչ այն, Կարբեցիք դրկել իջեցրել էին ձիուց Սահակին և մէջքը գերեզմանաքարին դէմ տուած՝ աշխատում էին դադարեցնել վէրքից դուրս թորած ապաժոյժ արիւնը։

Դաւադրութի՛ւն, ողէ՛ք, ուշակորոյս կրկնեց մի քանի անգամ Սահակը, այս սպանուածներին ես ճանաչեցի... սրանք երեկ գիշեր մեր գիւղի կողքից յետ դարձան... մի վատ մարդի մատը խառն է այս անբաղդութեան մէջ...

Սահակն այլ ևս չը կարողացաւ շարունակել. նրա ուշքը գնաց. նա հազիւ ծանր շնչում էր։

Անկարելի էր Սահակին ձիու վերայ նստացնել։

Երիտասարդներից մի ուժեղը առաջարկեց իւր ծառայութիւնը։ Վէրքը խնամքով պատած՝ Սհօյին դրին այս տղայի շալակը և ամուր կապած՝ առան գնացին։

Թուրքերի մարմինը մնաց գերեզմանոցումն ընկած։

Գաւառական վարչութիւնը միւս օրն ամեն տեղ որոնել տուաւ և չը գտաւ ոչ միայն այս երկու սպանուածներին, այլ և փախչող բազմութեան միջից ընկնողներին։

Շատ շուտ լուր տարածուեց, թէ Վարչութիւնը հէնց երկրորդ օրը բացել է սպանուածների հետքը։

Աղաջանի մարմինը հողին յանձնուեց առանց աղմուկ բարձրացնելու։

Նրա փեսացուն շարունակում էր կռիւ տալ կեանքի հետ։

Անկայուն դրութիւնը կարճատև եղաւ. տաճիկների հաշիւները սխալ դուրս եկան։

Բէհբուդովը մի անօրինակ քաջագործութիւն արեց, սակաւաթիւ զօրքով մի յանդուգն յարձակում գործեց նա թշնամու անթիւ բանակի վերայ և ցրիւ տուեց։

Օսմանցին կրկին յետ փախաւ, Կարսումը փակուեց։

Շատ չը քաշեց, նա Կարսից էլ զրկուեց։

Բէհբուդովը Կարսն առաւ, յանձնեց իրան յաջորդող նոր հրամանատարին և ինքը վերադարձաւ հանգիստ անելու...

Եռամեայ պատերազմից յետոյ նոր հրամանատարը կապեց հաշտութեան պայմանը և խաղաղութիւնը վերականգնեց։

Կարսը դարձեալ յետ տրուեց իւր նախկին տիրապետող Օսմանցուն։

Յիսնական թուականների արևելեան պատերազմի վառ կրակը այսպիսով առժամանակ մոխրակոյտի տակ անթեղուեց (ծածկուեց), թաղուեց։

Իմ գրախտի բաժին մայրիկս էլ նոյն հնարքն էր գործ դնում. առաջի օրը թոնրի խորքումը մոխրի մէջ թաղում էր կրակի թէժ կտորները, որպէս զի միւս օրը բաց անի, չորացած խուիներ դարսի վրէն, կրակն աւելի ուժգին բորբոքի ու մեզ համար անուշ անուշ կերակուրներ պատրաստի։

—Ընչի՞ համար, հարցրեց Տուտուն։

—Ը՛մ...մ...մ... էնպէ՛ս... մնացէ՛... առաջնորդը ես եմ, բազլէն խաշած եմ ցանում. իշխանաւորը ես չե՞մ, երեկ իրաւունք էի տալիս, էսօր կռներդ էլ եմ կապում, լեզուդ էլ... է՛հ... թողցո՛ւք... կկմաց Ջուհլակ Դաւիթը և դարձաւ դէպի իւր կինը։

—Ա՛յ պառաւ, մեր դօնաղներին շատ գլխացա-

ւանք տուի, տեղեր պատրաստի՛ թող հանգստանան, էգուց բարի լոյսը կը բացուի, ինչ տեսակ Աստուած մեր տէրտէրին տուն կը տայ (ճեբշնչէլ), էնպէս կանի։

Այս խօսքերով ծեր Դաւիթը բարի գիշեր մաղթեց իւր հիւրերին։

—Բայց մի բան ինձ համար մութը մնաց, ամաչեցի հարցնել Դաւիթ եղբօրս, ասաց Տուտուն Դաւթի գնալուց յետոյ նորա կնոջը։

—Ի՞նչ։

—Էս ինչ մարդիկ էին ձեր դօնաղները, էն ուռուսն ու չօբանքեարէն ձեր գիւղումն ի՞նչ գործ ունին։

—Ա՛ քեզ մատաղ, աղիգ քոյրս, հէնց գիտես թէ իմ գլխաւորը շատ բան պատմե՞ց. դրանք էլ քեզ պէս տէրտէրի դուռն եկող ուխտաւորներ են, երեք օր է գերի են դառել չեն կարողանում գնալ. միայն դրանք հօ՛ չեն, տուն չը կայ էսքան օրը մեր գիւղումը, որ մի երկու դօնաղ չը լինի, բոլորը տէրտէրի մօտ են եկել. գործակալն եկել է, տէրտէրը ոչ ժամանակ ունի դրանց դարդին դարման անելու, ոչ էլ կը համարձակուի մէկի համար մի մասը գիր գրելու, միրուքն ու փիլոնը վզիցը կը թուչին։

—Ասա մենք էլ պէտք է բանդ ընկնենք էլի՛։

ԼԱ.

ԵՐԵԿ ԵՒ ԱՅՍՕՐ

Գոռ պատերազմն իրանից յետոյ բերեց մեզ

խաղաղութիւն և անհաւատալի արմատական յեղա-
հրջութիւն. ամեն բան, ամեն կարգ ու կանոն գլխի-
վայր հրջուեցան և հիմնական փոփոխութեան են-
թարկուեցին. սովորական կեանքի և կենցաղավարու-
թեան մէջ այնպիսի զարմանահրաշ նորոգութիւններ
կատարուեցին, որ լողի անձն է սարսափեցնում. յետ
մնացին նշանաւոր հարուստ տներ ու վաճառականներ
և յառաջ եկան անյայտ ու կորած — մոլորածներ. ոչ
միայն քաղաքները բարեզարդուեցին, գիւղերի մէջ
ևս հին հին գետնափոր որջերի փոխարէն մինը միւ-
սից յետոյ բուսան փառաւոր շէնքեր ու շինու-
թիւններ, ռամկի միջից մեծ մեծ ձեռնարկութիւն-
ներ սկսեցին աննշան անձնաւորութիւններ և անըն-
դունակ համարուած ու արհամարհուած մարդիկ:

Ամենեքեան հաւատացած էին, և բնական էր,
որ խաղաղութեան հետ միասին կեանքի պայման-
ները կամ նոյնն էին մնալու, կամ շատ չնչին զա-
նազանութեան տակ պէտք է ընկնէին. բայց, դու
ոչ մեռնիս, այնպիսի խառնակութիւն և բաբելոնեան
աշտարակաշինութիւն կատարուեց ամեն հանգամանք-
ներում, որ հաւատ ընծայելը մի և նոյնն էր, թէ
հոգին սեւացնել:

Կարճ միջոցում բուն ազգային աւանդական սո-
վորութիւնները, ապրուստի եղանակը, լեզուն, նիստ
ու կացը, նահապետական դարերով սրբագործուած
և արիւնի մէջ մակարդուած ծերերի պատուապա-
հութիւնը, ծնողասիրութիւնը, պարզ սակաւապէ-

տութիւնը, եղբայրական անբաժանութիւնը, մինչև
անգամ հագնելիքի և ուտելիքի տարազն ու գները
միանգամայն, կարծես, մի սատակիչ հրեշտակի սրի
յառաջ դուրս վռնտուեցին և նոցա տեղը պատուաստ-
ուեցին կեանքին, տեղական պայմաններին, երկրի
դիրքին խորթ և օտարոտի նորութիւններ:

Մինչև պատերազմը՝ ցորենի խալուարը (30
փութ) երեք մանէթից եթէ չորսի էր բարձրանում,
առվ և վերնային պատիժ էր համարուում, պատերազ-
մի ժամանակ քառասուն մանէթի հասաւ, ամենքի
բերանը բաց թողեց, ամենքին շուարացրեց, իսկ
կռիւը վերջանալուց յետոյ՝ քսան և հնգից ցած
չ'իջաւ և թանգ չէր թուում: Պանիր, իւղ, բրինձ,
միս, հաւկիթ գին չ'ունէին. պանրի լիտրը (12
գրվանքայ), յիշում եմ, երկու չուրուկ ապասի էր
(ապասին վեց կոպէկ հաշուեցէք), իւղի լիտրը՝ 2000
դեան (60 կոպէկ), բրինձը նոյնպէս երկու չուրուկ
ապասուց չէր բարձրացած, ձուի հարիւրը՝ երեք
շահի կէս, որ այսօրուայ հինգ կոպէկն է: Պատե-
րազմը դադարեց՝ իւղի լիտրն երկու մանէթ դար-
ձաւ, բրինձ ու պանիրը 40 կոպէկ եղան, ձուի
հարիւրը՝ 20—25 կոպէկ, և ոչ.ոքի ապշութիւն
չէր պատճառում:

Այն օրից ցայսօր է, ահա, ամեն բարիք կըրկ-
նակի և եռակի սուղ են, և մեզ համար տանելի ու
սովորական են թուում:

Չը գիտեմ, կ'ընտելանայի՞ն, մեզ պէս, կարճ ժա-

մանակում այս փոփոխութեանը մեր այն պապերը, որոնք իրանց կրած նեղութիւններն և դժուար ապրուստը նկարագրել են իրանց գերեզմանաքարերի, կամ եկեղեցիների պատերի վերայ: «Ես Հարիւրը մի փող ձու առայ, տուն պահեցի, թող պարծենայ՝ ով այսուհետև կարողանայ աշխարհքումս ապրել և ընտանիք կառավարել»:

Միամիտ և պարզ մարդի՛կ, իրանց Հարիւր փողը՝ ո՞վ գիտէ՝ մեր շահու կամ դահեկանի քանի՞ Հարիւրերորդական մասն է. եթէ փողը Հաշուենք ներկայ տաճկական փարան, որ կոպէկի ութերորդ բաժինն է, այն ժամանակ մեր երջանիկ պապը մի կոպէկով ութ Հարիւր ձու է վայելել և տրտնջացել ժամանակի սղութեան վերայ:

Վերջապէս բարեբաղդ էին նոքա, որ մեր օրերը չը տեսան, եթէ ոչ, խոլէրական կաթուածի կը Հանդիպէին:

Եւ աՀա այսպէս, տասն և իններորդ դարի երկրորդ կիսաշրջանը մի ընդՀանրական չը տեսնուած յեղափոխութիւն կատարեց ռուսաՀայոցս կեանքի մէջ, մի վերափոխական տակնուվրայութիւն, որ դժուար թէ աշխարՀի ստեղծագործութիւնից մինչև օրս որ և է դար սորա մի Հարիւրերորդական մասը կատարած լինի:

Նոյն արագութեամբ դարիս վերջին կէսն իւր դրոշմը դրեց և մեր մտաւոր շարժման վերայ. յիսնական թուականի պատերազմից յառաջ այբը քաղաք-

ներումն էլ ուռկանով էին որսում, թող թէ գիւղերումը. իսկ այսօր ուսումը Հաց ու ջրի չափ գոյութեան խնդիր է դարձել:

Մինչև ռուսի ոտքը Շիրակի դաշտավայրը դնելն ո՞վ էր երազած թէյ և նորա գործածութիւնը, Հեշտաեռ, ապակեայ բաժակներ, յաղճապակի պնակներ, փայլուն սևաներկով ջնարած կօշիկ և կրկնակօշիկներ, ռուսական Փուրաժկա կոչուած գլխարկ՝ ոչ ոքի մտքով չէր անցկացած. մեր գործածականներն էին մաքուր ջուրը, սերն ու մածունը, անխառն գինին, կաւէ դաւաթը, քերեզմնը, կամ պղնձէ մաքուր կլայեկած մարթաբէքը, ինքնաձեռագործ տրեխը, կամ ամենաշռայլը՝ մաշիկ ասուած տնտամանը և այծի մորթու (սեկ) երեսով սրածայր դիւրագին լափչինները:

Չեմ մոռանում, երբէք, մի ծաղրական դէպք, որի մէջ կեանքի բնաւորութիւնն է որոշակի արտափայլում:

Յովհաննէսը Թիֆլիզումն ուսանում էր. մի ամառ նա վերադարձել էր իւր ընտանիքի տեսութեանը. նա Հագին ունէր եւրոպական կիսակօշիկ՝ առանց երկայն պարանոցի. Յովհաննէսը մի աղքատ գիւղականի որդի էր:

Մի քանի մարդիկ տեսնելով Նորեկի կօշիկները, ենթադրում են, թէ մի Հարուստի Հնոտիներ են՝ երիտասարդին ընծայած: Այնու ամենայնիւ նրանք

բարւոք են գտնում հարցնել, թէ որքան է վճարել Յովհաննէսն իւր հին կօշիկներին։

—Հին չեն, դուրս գալուցս երկու օր յառաջ եմ գնել ութ մանէթի, պարզութեամբ պատասխանում է Յովհաննէսը։

Բոլոր լողները զարմացմամբ աչքերը չռում են և նախատում խեղճ տղային իւր պռզաւոր ստախօսութեան համար։

—Տօ՛, քամի փչո՛ղ, ութ մանէթը մի այգու գին է և ոչ մի զոյգ ճտքերը (պոլտոոյ) կորած, մրոտ սևացրած, փողոցում գտած կօշկի, կշտամբում է Յովհաննէսին նորա ընկերներից մէկը. Երևանի մէջ ամենից թանգավաճառ կօշկակարն է շայիր Գիւրջի—Նաւին, որ մի մանէթից վեր կօշիկ չի ծախել. այն էլ՝ ամեն մարդ հօ՛ չիմար չէր, որ մանէթը չպրտէր. Գիւրջի-Նաւուն կարել տուողները գլխաւորապէս երգերի սիրահար աղաներն են, որոնք գիշերը մինչև առաւօտ երգել են տալիս և փոխարէնը մի մանէթ են տալիս, մի զոյգ կօշիկ էլ վերադիր տանում։

Այս խօսքերն ասողն այն անձն էր, որ երկու-երեք ամիս յետոյ՝ պատերազմի բորբոք ժամանակը՝ յանկարծական հարստութեան տէր եղաւ և մի օր էլ վերոգրեալ կօշիկների նմանին Աղէքսանդրոպօլումն ութ մանէթ վճարեց և հագած գիւղը մտաւ։

Երեկ տրեխ, այսօր կիսակօշիկ։

Ժամանակի հօսանքի ազդեցութիւնից ազատ

չը մնաց և մեր Բղդէն, կամ առաւել լաւ՝ խօջա Բաղդասարը։

Նա իւր կարմիր ալաջայ օսմանեան արխալուղի վերայ սև սերտուկը հագաւ, ռուսի փուրաժկան գլխին դրեց և թռաւ Թիֆլիզ կապալառուի հետ իւր հաշիւը վերջացնելու։ Ասում են, իւր խեղճ տիրոջ ոտքերը սառը ջրումը թողեց։ Թիֆլիզեցի փորձուած կապալառուն՝ նա որ իւր կեանքումը տասնաւոր ինտենդանտների և հարիւրաւոր նրանց ստորադրեալ աստիճանաւորների հետ գործ է ունեցել, որ բազմաշատ կոմիսիօներ ու գործակատարների զատկական ձուի նման տասին է տուել, օգտել, օգտուել՝ Բղդէից օձիք պատռելով երդուել է խոպան դադար տալ շահաւէտ ձեռնարկութեանը, միայն թէ միւս անգամ մի ուրիշ Բղդէի չը հանդիպի։

Վերադարձաւ Բղդէն, ժպտալով, իւր անտեսութեան հաշիւը վերջացնելու տեղից և, ինչպէս ասում են, լա՛ւ վերադարձաւ, լա՛ւ եկաւ։ Ծոց ու գրպանը ուռցած։

Բղդէն մռայլութեան տուեց իւր Կիզի-մաստաւրը, իւր խոստացած մատաղները, էլ չէր զարմանում իւր Դշխոյ Հեղինէի փոսոսկիների վերայ, այժմ նա եաւպատիկն ունէր՝ այն էլ աշխատած սեպհական խելքով։

Դեռ չը հասած Երևան՝ փոստի սայլակի վերայ նստած՝ նա կազմեց իւր ապագայ գործունէութեան ծրագիրը։

Նորա առաջին գործը պէտք է լինէր Շողիկին տանելն և ապա Երևան փոխադրուելը։

Եզդէին քաջ յայտնի էր ջհուտ Աղաջանի թշուառ վախճանը, նա ինքն ուրիշների հետ ներկայ էր հանգուցեալ զոհի թաղմանը և թաշկինակն աչքերից ու դէմքից չէր հեռացնում. արդեօք սրանց կսկիծ ու մորմո՞ք էր զգում իւր բարերարին կորցնելու համար, թէ մի ներքին խղճահարութիւն երեսի վերայ պատկերանալուցը վախենում էր։

Եզդէն Կարբուց հեռանալուց յառաջ՝ այցելել էր լեզուն կապուած և ուշքը կորցրած" Եատինենց Սահակին, ցաւակցութիւն էր յայտնել նորա անբաղդ հօրը, և այսօր համոզուած լինելով, որ Սահակը վաղուց արդէն հայր Աբրահամի գոգումը բազմած կը լինի, նա հաստատ յոյս ունէր, որ ինքը կը գայ և երկու օրից յետոյ անարգել տէր կը լինի Շողիկին, կը թողնի բոլորովին Կարբին, իւր մօրը կը յանձնի նորաշէն տունը ու ինքը՝ պարսիկ բէգզադէի և խանզադէի նման՝ ձեռքի մէջ կառնի սիրուն Թալանիկի (Քօղէ) ոտքերը կաշկանդող աներեւոյթ շղթան, կամ թէ կը բռնի նաշխուն կաքաւի սփածանելիքով պատած վանդակը և կը տանի կը բազմեցնի Երևանումը մի ժամանակաւոր վարձովի պալատում, մինչև ինքը մի կողմից ընդլայնէ իւր վաճառականական գործառնութիւնը և միւս կողմից մի շքեղ շէնք կառուցանելով՝ տեղաւորի նորա մէջ իւր նազելոյն։

—Ա՛հ, հոգուդ մատա՛ղ, սիրուն աղջի՛կ, սրա-

նից աւելի բարեբաղդ վիճա՞կ, քակդ լիքը, ջահել ու աննման հարսը կողքիդ, կե՛ր, խմի՛, ուրախացի՛ր ու գրկիդ մէջ պինդ սեղմի՛ր։

Ինքնամոռացութիւնը Եզդէին վերացական աշխարհը տարաւ, նա կարծեց, թէ իւր առջևը նստողն իւր սրտի առարկան է և նա տարածեց բազուկները ու թևերի մէջ ամուր խտլտեց փոստի սայլորդին։

—Հաւա՛ր... օգնեցէ՛ք, ձիանց սանձը ձեռքից թողեց և ճիչ ու գոռոց բարձրացրեց սայլորդը՝ կարծելով անշուշտ թէ անծանօթ ճանապարհորդի միտքը դէպի ինքը չար է։

Լաւ էր, որ Եզդէն շուտ սթափուեց և ձեռքը ձիանց երասանակին հասցրեց, ապա թէ ոչ, երկուսն էլ ջարդ ու փշուր պէտք է խորտակուէին մօտակայ ձորի մէջ։

Նա իւր արարքը վերագրեց աչքերի մթագնութեանը և ուշագնացութեանը, որով սայլորդն ապահովացաւ։

ԼԲ.

ԱԼՄԱՍՏ ԽԱԹՈՒՆԸ

Ոսկրաբոյժ Ալմաստ խաթունը շատ յուսահատ է, քիթ ու մռութը քաշ է արել, հետը խօսել չի լինում, եօթը հարցմունքին մի կարճ պատասխան

դժուարութեամբ է տալիս, օրական երկու պատառ կերակուր հազիւ է ուտում, կերածն էլ ջանովը չի անցնում։

Ո՞վ է ոսկրաբոյժ Ալմաստ խաթունը և ի՞նչ է նրա տրտմութեան շարժառիթը։

Այս պատուաւոր անձնաւորութիւնը Կարբու երևելի տներից մէկի տանտիկինն է, նա այրիացած է իւր հարսնութեան առաջին տարիներում. բայց պահպանել է ընդհանուրի աչքումն իւր աղայ ամուսնու ժամանակին ունեցած պատիւն ու յարգանքը։ Կարբու ողջ գաւառը սիրում է Ալմաստ խաթունին և ճանաչում. համարեա ամէն գիւղում գտնուած է։

Ալմաստ խաթունը թէև այսօր միջին հասակի կին է, բայց չի կորցրել իւր պատանեկական թարմութիւնն և սքանչելի գեղեցկութիւնը. մի ժամանակ նա նշանաւոր գեղեցկուհու հռչակ է վայելել, այսօր էլ վայելում է։ Նրա խոշոր և նշաձև աչքերը, թանձր և կամարակապ յօնքերը, երկայն և խիտ արտևանունքը, լայն ճակատը, բոլորակ այտերը ափներումն սպիտակ և հետզհետէ վարդի գոյնի փոխուող, չափաւոր և սակաւ ինչ սուր քիթը, փոքրիկ բերանը, նուրբ և կարմրաշաղ շրթունքը, լուսնաձև կզակը, բարակ իրանն և բութ ու ձուաձև գլուխը միացնող լուսափայլ պարանոցը, այս ամէնը համերաշխ են նրա առոյգ և փարթամ կազմուածքին։

Ալմաստ խաթունն, անկասկած, շատ փոքրահասակութիւնից է ճաշակել Բալաղլըղումն ամուսնական քաղցրութիւնը, կամ թէ օրիորդ ժամանակը խիստ զգոյշ և ծածուկ է պահուած եղել ծնողական յարկի ներքոյ, ապա թէ ոչ, վայրենի քուրդը, կամ հէնց կրակոտ հայ երիտասարդը չէին հանգստանալ բարբարոս դարումը՝ մինչև հը յափշտակէին չքնաղ աստուածուհուն։

Ալմաստ խաթունը մինչև հիմա էլ մերժում է իւր խնամաքարին նստող շատ երկրորդ ամուսինների առաջարկը։

Նրա մերժելու գլխաւոր հիմնակէտը տեսիլքի մէջ իրան ազդուած յայտնութիւնն է եղել։ Իւր պատմածին համաձայն՝ նա շատ տխուր էր, որ զըրկուելով թանգագին և հռչակաւոր ամուսնուց՝ դէթ չի արժանացել զաւակի հոգս քաշելու շնորհքին, և թէպէտ տհաճ կրկին աշխարհք մտնելուն, բայց զաւակ ունենալու բուռն իղձը ձգտել է նրան՝ այրիութեան տարելիցքը կատարելուն պէս՝ առաջին դիմողին ձեռքը տալ, միայն թէ արժանանար մայր լինելու փափագին։

Եւ ահա, մի գիշեր, մինչ հանգստեան աղօթքն էր մրմնջում, Ալմաստ խաթունին թուեցաւ, որպէս թէ ինքը Կարբու ձորումն աղցան էր քաղում. յանկարծ բարձր ժայռի կատարից մի քաջակազմ երիտասարդ գահավէժ փռուեց իւր առջևը և ջարդ ու փշուր եղաւ։ Ալմաստը շփոթուեց, մոլորուեց և եր-

կար ժամանակ չէր վստահանում մօտենալ անծանօթ թշուառ տղամարդին, որ արենաթաթախ հազիւ շարժւում էր:

— Ի՞նչ ես ապշել ու սառած մնացել, Ալմա՛ստ, չե՞ս տեսնում առաջիդ մորթած հաւի նման թրպրտացողին, լսում է նա իր հանգուցեալ մօր սպառնալից, յանդիմանական ձայնը, որ կանչում էր երկնքից:

— Ի՞նչպէս կարող եմ ես՝ մի ջահել կին՝ մօտենալ մի օտարական տղամարդի, ծակ բերանն ինձ կրակը կը գնի, կ'այրի, բամբասաչոր կ'անի, երկրի երեսին թքանքատեղ կը դառնամ, դողահար, ահահար պատասխանում է Ալմաստը:

— Չէ, դաւա՛կս, չէ՛, մարդը վերջին շնչումն է, օգնութեան կարօտ է, դա կարող է անտէրութիւնից զոհ գնալ քո կեղծ ամօթխածութեանը, մի՛ քաշւիր, մօտ գնա, դանակդ հանիր, պատառոտիր հագուստը և դարման տար՝ ընչով կարող ես:

Ալմաստը ոգի է առնում, յառաջ է վազում և կիսաշունչ մարդին դրախտահալած Ադամ պապին նմանացնելուց յետոյ՝ գտնում է նրա բոլոր ոսկրները կոտրատուած և մանրատուած, ինչ տեղ ձեռք է ձգում, իրան թւում է, թէ տաշեղի փշրանք են իր բռնումը:

— Ես սրան ի՞նչ կարող եմ անել, մայրի՛կ, Լողմանի բժիշկն ինքը պատանն ուսին գերեզմանից վեր

կենայ, չի կարող օգնել, սրա ոսկրատիքների մէջ ողջ տեղ չի մնացել:

— Սրիր դանակդ քարի վերայ, քերթի՛ր փշըրտուած տեղերի մորթը և սկսիր մէկ մէկ միացնել ոսկրներն ու կրկին կարել, կարկրել, հրամայում է Ալմաստին իր մայրը:

Մօր պատուէրը բառացի կերպիւ կատարում է այրի դուստրը, երկար ժամանակ պարապում է կիսամեռ հիւանդին բուժելով, քանիցս փակում և նորից շարում է սխալմամբ դասաւորած ոսկրները, մինչև որ բոլորովին տեղաւորում և կարգի է բերում փշրուածքը:

Այնուհետև մօր ազդելովը Ալմաստը վերցնում է կտաւը, շրէշով, ձուով և խնկով սպեղանիք (ճախա-, պլաստիր) է պատրաստում, կոտրուածները նրանով ծածկում և տախտակներով կապկպում:

Երեք գիշեր տեսիլքը կրկնւում է Ալմաստի աչքին:

Վերջին անգամին մայրն այս է հրամայում.— այսուհետև, իմ սիրելի դո՛ւստրս, Աստուածանից դու ստացար ս ն ղ չ ո ւ թ ե ա ն (ոսկրաբուժութիւն) շնորհք, փոխանակ մի երեխայի հոգս քաշելու, որը քո մտածութեան առարկան է դառել, քո վզին բարձում է թշուառ խեղերի և անդամալոյծների հոգածութեան ծանրութիւնը, մինչև որ շունչդ եղունգիդ ծայրին է (ջանդ կենդանի ես), սուրբ պարտքդ համարիր առաջին դիմողին օգնութիւն հասնելու, գնա՛, կա-

րածը կայի՛ր, առողջացրո՛ւ և ոչ մի փող վարձատրութիւն մի՛ ստանար. գործի՛ր, մի՛ ամաչիր, մի՛ քաշուիր, վէրքը բացարա՛, դարմանիր՝ ինչ սեռի և հասակի լինէր հիւանդդ։

Այն օրից այսօր է, որ Ալմաստ խաթունն առաջին ս ն ղ չ ի ն (ոսկրաբոյժ) է մեր գաւառումը և հաւասարապէս օգնում է մեծին ու փոքրին, արուին և իգին, նա՝ տղամարդ է՝ տղամարդկանց համար, կինարմատ է՝ կանանց օգնելու։

Մօտ երկու ամիս է՝ օրն երեք անգամ շարունակ այցելում է Ալմաստ խաթունը Բստինենց Սահակին, քակում, արձակում է վէրքը, դարմանում է, բայց մազաչափ օգնելն անկարանում է։

Պարսիկ Բէգզադէի հրացանի գնդակն, ինչպէս յայտնի է, փշրել էր Սահակի ձախ ուսագլուխը. վնասուածը մի գնդակատեղ էր, բայց ոսկրի կտորը չը կար, կտրուել, թռել էր գնդակի հետ միասին։ Ալմաստ խաթունն իւր կեանքումն այսպիսի դէպքի չէր պատահել, ի՞նչ անէր խեղճը, հօ՛ չէ՞ր կարող ուրիշ ոսկրի կտորով մէջ տեղի դատարկութիւնը կարկատել։ Իսկ եթէ Ալմաստ խաթունի ձեռքից չէր գալիս Սահակին բժշկել, այդ արդէն յայտնի նշան էր, որ միակ յոյսը Աստուծոյ ամենազօր աջն է մնացել։

Ողորմելի Բստինենց Կարապե՛տ, ապաբաղդ հա՛յր, աչքի առաջին յայտնապէս տեսնում էր իւր զաւակի օր ըստ օրէ մաշուել հիւծուելը և չէր վստա-

հանում, բերանը չէր զօրում մի խօսք հարցնել Ալմաստ խաթունից, մի՛ գուցէ պատասխանը յուսահատական լինէր։

Եւ այդպէս իսկ էր, Ալմաստ խաթունը Սահակին այցելելու օրից նրան խնամք էր տանում, բայց ոչ մի փոփոխութիւն հիւանդի դրութեան մէջ չէր նշմարւում. Սահակը միակերպ անզգայ ընկած էր, իրան չէր իմանում, նորա կերակուրը մի քանի կաթիլ արգանակ էր, որ բերանն էին լցնում. ոչ տնքո՛ց, ոչ վրչո՛ց, ոչ ասե՛լ, ոչ խօսի՛լ, ոչ շարժուե՛լ չը կար, միակ կենդանութեան նշանը քթերից դուրս փչած արտաշնչութիւնն էր և այլ ոչինչ։

Ո՛վ ասես չէր գալիս Սահակին տեսութիւն. ամեն մի այցելող դուռը դուրս գնացածին պէս՝ մի յուսահատ բացասական շարժում էր անում գլխով և յոգոց քաշելով՝ ափսոսում։

Կար սակայն մինը, որ բոլորից առաւել մեծ կարիք էր զգում Բստինի թոռանն այցելելու, և այդ շնորհքը նորան արգելուած էր։

Քանի՞ցս անգամ Նողիկն աղաչել, թախանձել է իւր մօրը՝ նրան տես գնալու՝ իրան էլ հետը տանել, բայց սառն յանդիմանութիւնն է իւր պատասխանն եղել։

—Ի՞նչպէս, աղջիկն իւր երեսի ջուրը, ճակատի մեռոնն այնպէս կորցնի, որ վստահանայ պսակ չը գնացած՝ իւր սկեսրայրենց շեմքը տրորել, թէ ես իմ նշանածին տե՛ս եմ գնում. ո՞չ ապաքէն դրանով

նա իւր սկեսրայրի ու սկեսուրի գլուխն է տրորում, իւր ծնողաց անունն է խայտառակում, իւր օրիորդութեանն է արատ բերում, բոլոր հասարակութիւնն է արհամարհում։ Միւս անգամ չը համարձակուիս պռունկդ պռնկիդ դիպցնելու, սև սրտի աղջի՛կ, թէ չէ մազերդ հատ հատ գլխիցդ կը քաշեմ, գետինը մտնի՛ս դու։

Այս կծու կշտամբանքներով Աղաջանի այրին դուռն իւր աղջկայ երեսին շրխկացնում էր, նրան սենի տակին արտասուակոլոլ էր անում և ինքը գնում էր փեսացուին տես։

— Ա՛յ դու ծակծկոտուելու, անպատկառ աղջի՛կ, դեռ մինչև հիմի երեսիդ վրայ ընկա՞ծ ես, մի երեկոյ աչքերը շատ լալուց կարմրատակած՝ վերադարձաւ Նազիկի մայրը և հրամայեց. չո՛ւա, վերկա՛ց, տեղեր քցի՛ր՝ վեր թափուի՛նք, ես գիտեմ՝ կէս գիշեր չը հասած՝ մեր դուռը կը ծեծեն, Աստուած երկու ձեռքով գլխներիս քար գցեց. էստեղ՝ մեր դուռն երեսներիս փակ թողեց, էնտեղ՝ սև թագ ու պսակդ կապեց. մի երկու ժամից Բաշինենց լոյսը կը խաւարի, նշանածիդ ջահել արևը մեր կը մնի։

Աղաջանի այրին զղջաց իւր անզգուշութեան համար. նա շատ ուշ գլխի ընկաւ և դուռը բաց թողած՝ հեւասպառ վազում էր Կարբու փողոցներից մէկովը իւր աղջկայ քամակից՝ ինչպէս վազում է որսկանի բարակը (շուն) աղուէսի ետևից. Խեղճ կի՛ն, իւր աշխատանքն անօգուտ անցաւ, ա-

մօթահար, երեսը ճանկռելով ունայնաձեռն յետ եկաւ նա և չը համարձակուեց Բաշինենց տունը մտնելու, ուր երկու-երեք քայլ իրանից յառաջ ներս ընկաւ Նազիկը և դուռը մօր երեսին ծածկեց։

Այս առաջինն էր Նազիկի կեանքումը մօրը հակառակելը։ Նա իրան ձգեց հիւանդի սենեա՛կը և տան մէջ տեղը ցից կանգնած՝ բերանաբաց և չռած աչքերով։

Նազիկը տարածել էր անգիտակցաբար իւր երկու թևերը, մէկ նայում էր տան մի անկիւնումը փռուած անկողնին և մէկ աչքերը դարձնում էր իրան չորս կողմը հաւաքուածների վերայ։ Կատարեալ բանտից փախած կալանաւորի էր նմանում աղջիկը, որ ազատութիւնը գրկելու յուսով՝ արել է վստահ և վճռական քայլը, բայց իրան շրջապատած է տեսել հարիւրաւոր գլխաւորներով։

— Արի՛, իմ սևաքող հարսնացո՛ւս, արի՛, գլուխ գլխի տուէք նշանածիդ հետ, գոչելով յառաջ վազեց Սահակի մայրը և ուզում էր գրկել Նազիկին, բայց մօտ եղողների խօսքերը նրան արգելք եղան։

— Էս ի՞նչ տեսանք, քա՛, խիզա՛ն [1]), էսքան էլ անիրաւութի՞ւն, ո՛չ քեզ անամօթութիւն, աչքերը Նազիկի վերայ անկած՝ արտասանեցին ներկայ եղող հարևան կանայքը։

---

[1]) Խիզան նշանակում է բնատանիք՝ գլխաւորապէս իգական սեռի։

—Լռեցէք և դուրս գնացէք ամենքդ, յառաջ եկաւ և կարգադրեց Ալմաստ խաթունը, սրան Աստուած է այստեղ ուղարկել, թողէք վերջին շնչումն իրար կարօտն առնեն:

Ալմաստ խաթունը բռնեց աղջկայ կուռը և յառաջ տարաւ դէպի հիւանդն ու թողնելով նրան հոգևարքի անկողնու մօտ, ինքը դուրս գնաց ուրիշների հետ միասին:

Նազիկը, կարելի է ասել, ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր հասկանում, նորա ծնկները ծալուեցին և ընկաւ անշունչ դիակի վերայ: Անշունչ ենք ասում և չենք սխալւում, Սահակի թոյլ շնչառութիւնը, համարեա՛, դադարել էր, և միայն մի ամենանուաղ տրոփիւն զգալի էր լինում կոկորդի աջ ու ձախ կողմերում:

—Սհօ ջա՛ն, Սհօ՛, իմ գլխի տէր Սհօ՛, արևիդ մատաղ գնա՛յ քո Նազիկը, վերջապէս ձայն հանեց աղջիկը, չորանա՛ն Թուրքի մատները, որ չը խնայեցին քո ջիւան արևիդ, ա՛խ, դու ընչի՞ մօտ գնացիր ուստա Մուրատի գերեզմանին, որ քո կեանքդ էլ փչացնես, իմ գլխիս էլ սև ու մութ բերես, աչքերդ բաց արա, անուշիդ մեռնե՛մ, մի խօսք ասա՛, ինձ էլ քեզ հետ տա՛ր, Սհօ՛ ջան...

Աղէկտուր խօսքերը դուրս էին թռչում մանկատի օրիորդի շրթունքից, նորա յորդ արտասուքը առու եղած՝ հոսում էր մեռնողի երեսովը:

Ո՛վ հրաշք, անշունչը շնչաւորուեց, անկենդանը

կենդանացաւ, երկու ամսուան պապանձուած Զաքարիայի լեզուի կապերը քակուեցին, հիւանդի աջ ձեռքն ինքն իրան բարձրացաւ և փարուեց Նազիկի պարանոցովը:

—Նա՛...զի՛կ... ահա՛ Սահակի շրթունքներից կցկտուր դուրս եկած միակ խօսքը:

—Սհօ՛ ջան, Սհօ՛, Նազիկը քեզ ղուրբա՛ն, էդ ի՞նչ օրն ես ընկել դու, ախար ընչի՞ մօտ գնացիր Թուրքին, որ քեզ վրայ հրացան արձակէր. ախար ես ի՞նչ մեղք էի գործել, որ Աստուած գլխիս տուեց, աչքս հանեց:

—Թուրքը՛... մեղաւո՛ր... չէ՛ր... Բզդէ՛ն... չարչի... Բզդէ՛ն...

—Ո՞ւր է Բզդէ, Սհօ ջա՛ն, էստեղ Բզդէ չը կայ, մենք երկուս ենք, պատասխան տուեց Նազիկը Սահակի հատ ու կտոր խօսքերին:

—Բզդէ՛ն... մարդասպա՛ն Բզդէն... Թուրքերը... Բզդէի մարդիկն էի՛ն...

—Ի՞նչ, Սհօ ջա՛ն, ասում ես՝ Բզդէ՞ն էր ղրկել Թուրքերին, ուրեմն ուրիշների ասածներն ուղի՞ղ է:

—Մողնու վանքն էլ Բզդէն կոխել տուեց՝ հօրդ և ինձ սպանել տալու համար, ես Թուրքի բերանից լսեցի, չը գիտեմ՝ ինչ թշնամութիւն ունէր Բզդէն մեր դէմ, դժուարութեամբ և ընդհատ բառերով պատմեց Սահակը:

—Ա՛խ, ինձ է յայտնի կոլոտ Բզդէի թշնամութեան պատճառը, գետի՛նը մտնեմ ես, որ հօրս

ու նշանածիս արենոտերը զարկայ, Բզզէն կամենում էր ինձ քո ձեռքիցդ խլել, շատ աշխատեց, շատ հնարք գործ դրեց, բայց ատամը չը կտրեց. լուսահոգի հայրս խայտառակեց, հեռացրեց, ես էլ երեսին թքեցի, երեսս շուռ տուի:

—Ուրեմն՝ Բզզէն հասաւ իւր փափագի՛ն, տարա՛ւ կոլոտ չարչին, հօրդ ու նշանածիդ գլուխը կերաւ՝ քեզ ձեռք բերելու համար՝ խոր յոգոց հանելով ասաց Սահակը:

—Ո՛չ, կոլոտ չարչին իւր փափագին չը հասա՛ւ, Սհօ ջա՛ն, նա չը տարա՛ւ, այլ տարուե՛ց, կսկիծը մոռացած՝ հաստատապէս վճռեց Նոզլիկը, քո արեանն և հօրս գերեզմանովն եմ երդւում, որ Աղաջանի աղջիկը Բզզէնից հարսնացուն երբէք կին չի դառնալ իւր հօր ու նշանածի արիւնը թափողին, կամ ես ձեր վրէժը կ՚առնեմ կոլոտ չարչուց, և կամ, եթէ չը կարողացայ, գլուխս իմ երկու սիրեկաններիս սիրուն մահի կը տամ:

—Անման Նոզլի՛կս... ես այժմ մեռնում եմ հանգիստ սրտով:

Մի բուռն զօրութիւն այժ տուեց հիւանդի թոյլ բազկին, Սահակը մօտ քաշեց Նոզլիկի գլուխը և սեղմեց իւր կրծքին:

Վերջին ճիգն է եղել, որով լարուել են հոգեւարքի ջղերը, նրա կոները թուլացան, մահն իւր սառթեւը տարածեց բղձատոչոր երիտասարդի երեսին, նա փչեց իւր շունչը՝ գրկած իւր նշանածին:

—Ա՛խ... ծուաց Նոզլիկը և լռեց ու պապանձուեց:

Այմաստ խաթունը բոլորից յառաջ ներս վազեց և գտաւ նշանածներից մէկին անկենդան և միւսին մեռելի գրկումն ուշագնաց: Երկու սիրահարների շրթունքները միմեանց պինդ սեղմուած էին:

ԼԳ.

ԹՕՌՍ ԿԱՐՄՐԱԽԷՏ ՋՈՒԿՆ Է ԸՆԿԵԼ

—Բարի լո՛յս քեզ, ա՛յ ջրատար Նուշան:

—Բարի՛ն հոգիդ, Տուտու նանի՛, համեցէք նստի՛ր:

—Է՛հ, ոչ նստելս է գալիս, ոչ կանգնելս, երկու շաբաթ է օրն երեք անգամ ձեր քուչի գլուխն եմ համնում թէ չէ՝ ծնկներս ծալւում են ու մնում, սիրտս փուլ է գալիս, ճարս կտրւում է՝ էլ յետ՝ քաշ գալով յետ եմ գնում:

—Ի՛նչ կայ:

—Ի՞նչ պէտք է լինի, աչքերս դուրս են թափւում, երբ ձեր դուռն երեւում է. ես կարծում եմ՝ թէ էս է՝ պէտք է գամ ու իմ կորած հոգու ապլէր Աղաջանիս քաղցր զրոյցները լսեմ, բայց որ միտքս է ընկնում, թէ ներս պէտք է մտնիմ ու երկու էրուած, խորովուած, անտէր, անգլուխ անբաղդների մրմուռը լսեմ, գլխիս բոց ու կրակ է վառւում:

—Ի՛նչ պէտք է արած, երեւի, իմ մեղքն էր, որ Աստուած երեսովս տուեց:

—Դու՝ հօ՛ դու, փորձուած կին ես, ինչ որ լինի, կը համբերես, աչքս դո՛ւրս գայ իմ սեւապսակ Շողիկի համար:

—Ասացի՛ր ու պրծա՞ր, Տուսու նանի՛, էդ ճար կտրածի աղջիկը ոչ գիշերը քուն ունի՝ ոչ ցերեկը դադար, ոչ ուտում է, ոչ խմում է, բերանը նշխարք չի մտնում, հարիւր խօսքին մի պատասխան չի տալիս, հալ ու մաշ է եղել, էնպէս որ գնա՛յ՝ վեց ամիս չի քաշիլ, սեւ ու մուժը գլխիս կը բերի, ինքն էլ էն կտրածների ճանապարհովը կ'երթայ:

—Բաս դու մայր չե՞ս, չե՞ս կարողանում յառաջն առնել:

—Իմ ձեռքիցն ի՞նչ կը գայ, ինքս էլ քշուածի պէս եմ:

—Ի՞նչ ես խօսում, քա՛, Շուշա՛ն, դու էլ հօ՛ երեխայ չե՞ս, մեռածի ետեւիցն ո՞վ է գնացել, որ մենք գնանք, ո՞րս ենք անմահ, բոլորիս ճանապարհն է, վաղ թէ ուշ՝ գնալու ենք, բայց քանի էս կոյր ու փուչ աշխարհումն ենք, պէտք է ապրենք, օր քաշենք. Աստծուն էլ դժուար կը թուի, որ իւր ստեղծած մարմինը մենք տանջում ենք, ո՞վ է հակառակ, ծանր է, անտանելի է, ասեղ չես կորցրել, սարի պէս տղամարդն է գլխիցդ շուռ եկել, թագաւորավայել փեսացուն է երեխիցդ խլուել, մարդ որ հաւի ճուտ է կորցնում՝ սիրտն էրւում է. մահը

մերն է՝ մենք մահինը. քանի կարող ենք, պէտք է էնպէս անենք, որ բամբասանքի տակ չ'ընկնենք:

—Ի՞նչ բամբասանք, մարդ որ իւր մեռածի համար դարդ անի, էդ բամբասանք է՞:

—Բաս էս լա՞ւ է, որ ծակ բերանը Շողիկիդ վրայ խօսում է, թէ քիթ ու բերանը փաթաթել է ու որբեւէրի կնոջ նման սեւ սուգ նստել. էդ մի՞թէ վայել է ազափ աղջկանը, էդ իւր ողորմած հոգի հօր անունին էլ անարգանք է, քեզ էլ անպատուութիւն է, իրան էլ թքանք է:

—Հօր ու նշանածի համար սուգ պահելն ամօթ է՞:

—Չէ՛, Շուշան ջա՛ն, էդպէս չի՛, հօր համար՝ աղջիկն է, պէտք է ցաւի, բայց նշանածի համար՝ չի սազիլ. գիտես, մէ՛րս, հո՛ղն իմ գլխին, ի՞նչ ձայներ են փողոցէ փողոց քամու մէջ պտըտւում, ծակծկո՛տուին ատողների լեզուները, Շողիկիս պէս ամօթով աղջկայ համար էդ տեսակ բամբասանքնե՞ր.— չորանա՛յ հնարողի բերանը:

—Ի՞նչ են ասում, Տուսու նանի՛:

—Էս երկ օրն ես տասը կնոջ բերան եմ պատռել ու ճանապարհ դրել, ասում են, որպէս թէ, լուսահոգի փեսացուդ գիշերը մինչեւ լոյս ձեր տանիցը չէր դուրս գալիս, իբրեւ թէ, իրանց կուրանալու աչքովը տեսել են, որ երկու նշանածները էգ ու որձ աղունիկների նման ժամերով կտուց կտուցի են տուած եղել:

—Հիմիկուայ մարդկանց մէջ, Տուտու նանի՛, խղճմտանքի կտոր չի մնացել, էն կորած Աշօն երկու տարի էր նշանած էր, դեռ երկու անգամ մեր ծածկի տակ չի եղել, էն էլ օրով ցերեկով, էն էլ՝ վա՛յ ինձ, վա՛յ իմ հոգուն, ես եմ փչացած հոգու եղբօրեցդ թաղուն տուն բերել, մի երկու ձու խզի մէջ ջարդել, առաջը դրել, էս տնաշէնի աղջիկն էդպէս ժամանակը գլուխ է առել կորել, մկան ծակերը մտել, ինչքան կանչել եմ, որ գայ, կողքին նստի, սատանի ձիու վրայ նստել է ու չի եկել. սաքի ո՞ր վերջն էս էր, շատ էլ լաւ է արել, որ չի եկել:

—Ընչի՞ էդպէս ես խօսում, Նուշա՛ն, Աշօն չէ՞ր, որ Թլիսի թղթերը ձեռիցս խլեց, լուսահոգի մարդիդ տուեց:

—Էն էլ մի բան էր, որ պատահել էր, թէ չէ խեղճն իր աներացուի հետ դեռ երկու խօսք չէր խօսեցել. դրա համար պէտք է բամբասէի՞ն:

—Ո՞ր մէկի բերանին ձեռք դնես, Նուշան ջա՛ն, ասում են՝ տեսնողներ եղել են, որ Սահակն ամէն առաւօտ Աշտարակ՝ իր խանութը գնալուս՝ գիւղի ներքևի աւերակի մէջ Նոլիկիդ հետ քըշըփըշը է ունեցել, սաքի թէ՝ Նոլիկը կուժն ուսին ջրի ճանապարհից միշտ ծռուել, մտել է աւերակը, ի հարկէ, գիտէր, որ նշանածն էն տեղ իրան սպասում է:

—Դու էլ հաւատում ե՞ս:

—Ես ինչ գիտեմ, ա՛յ դրանց օրը խաւարի, մէկին չես հաւատում, միւս բանն են մէջ բերում,

դեռ կէսը չեմ պատմել, ինչ որ խօսում են ու Նոլիկիդ մեղքը քաղում. ի՞նչ էլ հարկաւոր է պատմելը, ես քարասիրտ ե՞մ, որ դաղուած և խաշուած մօր սիրտն ևս աւելի կրակեմ ու բորբոքեմ. ախար ես իմ յարգելոր ու պարկեշտ Նոլիկիցն էդպէս արարք ո՞նց հաւատամ, ինչ որ երեկի ժամի պատի տակին, արևկողումը նստոտած՝ գլխներիցը դուրս էին տալիս. էդ որ ճշմարիտ լինէր, մենք աւելի մօտիկ չե՞նք, մենք աւելի շուտ չէինք նշմարի՞լ. անմեղ հրեշտակի պէս աղջկայ շնքոին էդպէս կեղտ փաթաթելն իրանց հոգուն մեղք չի՞:

—Ախար ի՞նչ են ասում, Տուտու նանի՛:

—Սաքի ուղիղ էլ որ լինէր, ամօթ չէր. երեխէքն ինչ կարող էին կարծել, որ իրանցից մէկն ու մէկի օրերը համարած են, ջահէլներ էին, կը մտածէին, թէ էս օր չէ՝ մի ամսից պէտք է խաչ ու աւետարանի տակին միանանք, կը սկսէին ջահելութիւններ անել:

—Աստուած իրանց աղջկերանցն էլ էն փորձանքին հանդիպեցնի, ինչ որ իմ երեխին պատահեց, ով որ իմ աղջկայ անունը կ՚ուզենայ սևացնել սուտ սուտ զրպարտութիւններով:

—Դու շատ էլ մի՛ տրտնջալ, Նուշան ջա՛ն, ախար ընչի՞ էք պատճառ տալիս, որ սա ու նա լաւ-վատ մտածեն, ախար դու ինձ ասա, էն ի՞նչ անելու էր, որ քո աղջիկդ արեց. նշանածի հոգի տալու իրիկունը դուրս պրծաւ, գնաց նրա վրայ ընկաւ,

նրա շնքովը փաթաթուեց, էս օր էլ ինքդ քո բե-
րանովդ ես խոստովանում, որ օտար տղայի համար
գլուխը մահին է տալիս:

—Դէ պակաս նշանած չի կորցրել, որ չը տխրի, դու և ես էլ, որ նրա տեղ լինէինք՝ կ՚անէինք, սիրում էր, հօ՛ սուտ չէր:

—Ո՞վ է ասում, որ չը սիրէր, իւր պարտքն էր, որ սիրէր էլ, խոնարհ էր էլ, բայց քեզ լաւ յայտնի է, որ պսակուած, տարիներով իրար հետ ապրած մարդ ու կինն իրար մահից յետոյ նորից պսակուում են. ընչի՞ համար դու չես մտածում երեխայի սրտի խոցն առողջացնել, ընչի՞ չես աշխատում մի լաւ տղայ գտնել, ձեռաց նշանել, ձեռաց պսակել, որ մինուճարիդ վրայից էլ—ալամի (հանրային) լեզուն կտրուի, ինքն էլ օր տեսնի ու մխիթարուի:

—Ի՞նչ ես խօսում, Տուտու նանի՛, դեռ խեղճ որբիս հօր երեք քառասունքը նոր է լրացել, դեռ Ահօյի գերեզմանի վրայ դրած մուխը նոր է հանգստացել [1]), դու կամենում ես, որ ես աղջիկ նշանելու և մարդի տալու հոգս քաշե՞մ, կորցրածներիս ամայի դաշտումն էի գտե՞լ:

—Ի՞նչ արած, քո երեխին դարդամահ չ՚անելու համար, քո մի հատ զաւակիդ վրայից աշխարհքի տակուսէն վերացնելու համար՝ պէտք է տասներդ

---

[1]) Մեռելը թաղած երեկոյին գերեզմանի վրայ ծուխ են դնում:

հուպ տաս, սիրտդ սնդացնես ու պապենական սովորութիւնի գլուխը թուչես:

—Առաջինը՝ որ ես էդ բանը չեմ անիլ, երկրորդը՝ որ էս րոպէիս ո՞ւր է էնպէս տղայ, որ արժանաւորութիւն ունենայ ու գլխապատառ վազի իմ դուռը կորի, իմ աղջկանն առնի. ուրիշի մեղադրել չեմ կարող. ո՞ւմ աղջկանը պէտք է ուզեն. աշխարհքին լաւութիւն անող Աղաջանը թագաւորի պէս իւր ընտանիքի գլխին կանգնած է՞, որ ամեն մարդ իւր համար փառք ու պատիւ համարի նրա հետ բարեկամանալ: Տնաքանդի մարդն ունեցած չ՚ունեցածն անշահ, անհաշիւ սրա-նրա վրայ ցրուել է, մի մատը թուղթ ոչ առել է, ոչ թողել է, որ գիտենանք, թէ ո՞ւմ մօտ ի՛նչ կայ. քանի ասում էի՝ մի՛ անիլ, վրէս վախտ ծիծաղում, վախտ բարկանում էր, հէնց գիտէր, թէ ինքը միշտ կենդանի կը մնայ, ամենքն իրանից կը քաշուին ու ժամանակին տարածը կը բերնեն; յետ կը տան:

—Լուսահոգին, Շուշան ջա՛ն, վատութիւն հօ՛ չի՞ արել. մի՞ թէ դու կարծում ես, որ ձեր փողերը կը կորչին, կամ մարդ կը լինի, որ քո դրախտական մարդի լաւութիւնը կը մոռանայ:

—Ընչի՞, չը մոռացա՞ւ Սալբու տղայ կոլոտ, չարչի Բզզէն, որ մեր փողովը մարդ դառաւ ու երբ կողքերն իւղակալեց, խեղճիս երեսին դուռը թրխկացրեց, հեռացաւ՝ էդ հերիք չէր՝ էնքան իւր չափը կորցրեց, որ ուզեցաւ աղջկանն իւր նշանածի

ձեռքիցը խլել. գլխներս տարաւ, մարդ զրկելով. դու էլ հօ՛ ջուհլակի մքուքի պէս դնում գալիս էիր. և երբ որ ժամնը ցելին ընկաւ, էդ քո անհոգի, անհաւատ, անաստուած, անխղճմտանք կոլոտ Եղդէն Թուրքերին կաշառեց, անէրոջ ու փեսայի արիւնի մէջ մառը թաթախեց:

—Յետոյ դու աչքովդ տեսա՞ր, որ խօջա Բաղդասարը մարդից ու փեսից արենպարտը դառաւ, հոգուդ մեղք չի՞, որ ամեն քամու բերածի հաւատում ես:

— Ես ի՞նչ գիտեմ, ասում են՝ մեր մահապարտն ինքը Եղդէն է, որ կայ. եթէ ես վկաներ կ՚ունենայի, ես գիտեմ, թէ ո՞նց չոքէ չոք դիւանի դուռը կերթայի և իմ արիւնը մնողիցը վրէժս կը լուծէի:

—Տեսնո՞ւմ ես, Շուշա՛ն, դու խօջա Բաղդասարի վրայ բարկացած ես, բայց նա էնքան բարի է, որ ուզում է քո տան վրայից սևն ու սուգը վերցնել. քեզ էլ, ինձ էլ, աշխարհքին էլ յայտնի է, որ խօջա Բաղդասարն էսօր մեր երկրի առաջին մարդն է, և եթէ մեքումը դնի, գլխաւոր չինովնիկի ու աղայի աղջիկը կ՚առնի, շատերն իրանք են նորա տները լիզում, բայց նա ամէնքի խնդիրքն երեսի վրայ է թողել և ուզում է քո քանդուած տուն ու տեղը նորից շէնացնել, նա քո աղջիկն ուզում է, որ քո մի հատ սև փողը ուրիշի վերայ չը կորչի:

—Դեռ մինչև հիմի է՞լ քո կոլոտ չարչի Եղդէն մեզանից ձեռք չի քաշում:

—Ա՛յ Շուշան, ինչպէս տեսնում եմ, Աստուած քո խելքդ բոլորովին առել է, բաղդն իր ոտովը քո դուռն է եկել, դու քացով տալիս ես. դու ո՞նց չես խօջա Բաղդասարին հաւանում:

—Ամօթ է, Տուտո՛ւ, դու ինքդ լաւ գիտես, որ Պօղոս աղէնց ամալայ Սալբու աղէն ուրիշներին տները քանդելով խօջա չը դառաւ, մէկ էլ՝ որ ես իմ տան գլխի ու փեսացուիս արիւնի տակը մնողին սև մահը կը տամ, որ կոկորդին հուպ տայ, խեղդի, վերջացնի և ոչ թէ աղջիկս որ լանջումս ընկնի:

—Է՛լի ասում եմ, Շուշա՛ն, խեղճ արի քո աղջիկանը, մի՛ թողնիր որ դարդոտուի, գլխին մի փորձանք բերի, կամ թէ տանը մնայ, անունը կես փող չլինի, դու ինքդ էլ Բաղդասարից մեծ մարդի կին չես, ողորմած հոգի Աղաջանը չէ՞ր, որ խամ կտաւի կապոցի տորբելուցը՝ ուսի մորթին ամբողի եղան վզի կաշուց հաստացել էր:

—Դո՛ւրս իմ տանիցը, ջադուբազ (վհուկ) Տուտո՛ւ, մէկ էլ չը համարձակուի՛ս իմ դռնիս անցկենալ, թէ չէ ոտդ կը կոտրեմ, բերանիդ չափը ճանաչի՛ր, իմ ողամարդը ոչ ուրացել է իւր թիկունքի կապոցը և ոչ ուրիշի հացին կոյր է մնիկ տուել, նորա աշխատանքն իր ճակատի քրտինքն էր, նորա հացի մէջ ուրիշի արիւնը չի խառն եղել, էգալիս մարդը քո դովածն է, որի մի քանի սև փողն աչքերդ շլացրել են, հոգիդ սևել ես, ուզում ես իմ աղջկանն անբաղդացնես, գնա՛, հեռացի՛ր, ասում եմ, յետինն ու ա-

ռաջինը լինի՛, միւս անգամ իմ աղջկայ անունը բերան չը բերես, թէ չէ ինքը որ լսի, սիրտը վիրաւորուած է, էնպէս խօսքեր կ'ասի քեզ, որ կը մնաս գլխիդ վերայ պտըտուելով։

—Չէ՛, Նուշա՛ն, չէ, քո Նազիկը խելօք աղջիկ է, կանչիր, թող գայ, եթէ ես մի քանի խօսքով նրան կամքի չը բերի, եթէ նա օրն էսօր Սալբու տղայի նշանը չը վերկալաւ, դու երեսիս թքիր։

Կանչելու հարկաւորութիւն չ'եղաւ, Նազիկը ներսի սենեակումն, ինչպէս երեւեցաւ, լսել էր մօր և Տուտուի խօսակցութիւնը, նա դուռը բաց արեց և դուրս եկաւ։

Մայրն աղջկանը տեսնելուն պէս՝ զարմացքով և սարսափով յետ յետ գնաց՝ ձեռքերն օդումը տարածելով։

—Հասկանում եմ, մայրի՛կ, դու իրաւունք ունիս զարմանալու և աղջկանդ վրայ բարկանալու, ասաց Նազիկը ծանրախոհ դէմքով, հօրս ու նշանածիս կորցնելու օրից դու առաջին անգամն ես ինձ տեսնում սանրուած գլխով, հիւսած ծամերով և զարդարուած Բաղդադի թաշկինակով։ Ես լսեցի քո և Տուտու Նանի զրոյցը, երկար ու բարակ մտածեցի, չափ ու ձև արի և գտայ, որ Տուտու Նանի ասածներն ուղիղ են, մեռնողի ետեւից մեռնելն յիմարութիւն է, ինձ վայել չի ջահել օրս սեւացնել ու քո տխրութեան վրայ աւելի տխրութիւն բերել. արի, մայրի՛կ, մոռանանք անցկացած բաները, արիւնն

արնով չեն լուանալ, համաձայնի՛ր Տուտու Նանի խօսքին, վերցրու Սալբու տղի նշանը։

—Ձալ օձը կծի լեզուդ, քրքրուելու պտո՛ւղ, էդ քո խօսքե՞րն են, դու չէի՞ր ասում, թէ հաստատ գիտես, որ հօրդ ու նշանածիդ սպանել տուողը Բզզէն է, ինքդ չէի՞ր, որ ասում էիր, թէ մինչև Բզզէի մի բուռն արիւնը չը խմես, քո ծարաւդ չի կտրուիլ. հիմի ո՞ր սատանէն քեզ իր թօռի մէջը խճճեց, ի՞նչ անցկացաւ, որ հօրդ ոսկրները դեռ գերեզմանումը չը հանգստացած՝ դու ուզում ես նորա մահուան պատճառի վիզն ընկնել, գետինը պատռուի՛, քեզ դէվէր (դէպի վայր) տանի։

—Երուած սիրտը շատ բան կասի, մայրի՛կ, աղաչում եմ, մի բարկանալ ինձ վրայ, լսիր մի անգամ քո աղջկանը և թող Սալբու տղէն նշան բերի։

—Ապրի՛ իմ խելօք աղջիկը, բեր էդ քո նաշխուն աչքերդ պաչեմ, որ օրինաւոր ես խօսում, ընդուր են ասում՝ հիմիկուայ ջահէլներն իրանց մեծերից աւելի խելք ու հասկացողութիւն ունին, Նազիկի գլուխն իւր կրծքի մէջ սեղմելով՝ դարձաւ Տուտուն դէպի Աղաջանի այրին։

—Լսիր ինձ, Նուշա՛ն, գոգիդ քարերը թափիր (համոզուէր), երեխի խօսքն աւետարանի կողքի գրուածիցն է, սրա սիրտը մի՛ կոտրիլ, սա անգին ջաւահիր (գոհար) ու մարգարիտ է, սրա մեղքի տակը մի՛ մտնիլ, սրա սիրտը վկայում է, որ Բաղդասար աղայի նման արար աշխարհքումը փեսացու-

չես ճարել, աչքի լուսի նման կը պահի քո աղջկանը։

—Տուտու նանի հոգին էլ վկայում է, որ Սալբու տղէն լաւ փեսացու է, մայրի՛կ, թէ չէ պառաւկին է, մի ոտը գերեզմանումն է, ընչի՞ պէտք է իմ մեղքն ընկնի, էնպէս չի՞, Տուտու նանի, մէջ մտաւ Շողիկը։

—Ը՛... ը՛... ը՛... այսինքն... հա՛... Բաղդասար աղէն... դէ՛ մարդ ենք... ո՞վ գիտէ, դէ՛... բայց լաւ տղայ է... հոգիս վկա՛յ, կմկմաց պառաւը։

—Դէ տեսա՞ր, մայրի՛կ, որ Տուտու նանն իւր հոգուովն երդում է ուտում. եթէ էդպէս է, խնդրում եմ, դու համաձայնես, ես էլ թէպէտ մինչև օրս ատում էի Բղդէին... ոչ, ոչ... Բաղդասարին, բայց հիմի Տուտու նանի խօսքովը սիրեցի... հը՛, մայրի՛կ, ի՞նչ ես լռել, աղաչում եմ, խօսք տուր։

Այս խօսքերով Շողիկը փարեց մօր պարանոցովը։

Տուտուն չը նկատեց, որ մօր ու աղջկայ մէջ մի քչփչուն տեղի ունեցաւ։

—Ի՞նչ արած, Տուտու նանի՛, կերևի, երեխիս ճակատի գիրն էդպէս էր, գնա Սալբուն ասա՝ թող նշան բերեն, յայտնեց վերջապէս Շուշանն իւր հաճութիւնը։

—Բայց մի պայմանաւ, Տուտու նանի՛, աւելացրեց Շողիկը, որ հարսանիքը շատ չ'ուշացնի, նշանը ծածուկ լինի, իսկ հարսանիքը փառաւոր, և մինչև պսակի օրը մեր դուռը չը բանայ։

—Աչքի՛ս ու գլխիս վրայ, աղիգ ջա՛ն, հէնց էս

իրիկուն, եթէ կ'ուզես, նշանք կը բերենք, մի շաբաթից յետոյ էլ գլուխդ կը կապենք, պսակ կը տանենք։

—Կարմրախէտ ձուկը թօռս ընկաւ, մտածում էր Տուտուն՝ շտապելով դէպի Բղդէի պալատը։

Այս գործողութիւնը կատարուեց Բղդէի Թիֆլիսից վերադարձի առաջին ևեթ շաբաթը։

Բղդէի առաջին գործն եղել էր Տուտուի ձեռքով այս վերջին փորձն ևս անել.—եթէ չը յաջողուի, բռնութեամբ դուրս կը քաշեմ տանից, վճռեց Բղդէն, այժմ էլ Աղաջան չը կայ, որից քաշուիմ, Բասինենց Սէօ չը կայ, որ ճանապարհիս քար ձգի (արգելք լինի)։

Ոչինչ միջոցներ պէտք չեղաւ, մի կերպասեայ կարմիր գլխի ծածկոց և մի մատանի նոյն երեկոյին Տուտուի ձեռքով նշան ուղարկուեց Բղդէի կողմից Աղաջանի տունը։

ԼԴ.

Խ Ա Չ Ե Ղ Բ Ա Յ Ր

—Շտապիր կշեռքի մի թաթը ոսկի լցրու, միւսումն ինձ նստացրու, քաշի՛ր ու ինձ տուր, լաւութիւնս ի՞նչպէս պէտք է վճարես, ձեռաց խնամախօս գնալս ու հարսանիքիդ փլաւի հոտը աշխարհքովս վեր անելը մին եղաւ։

—Հա՞, վերի տունը պատրաստ է՞ր, սանու-

Թեամբ պատասխանեց Բղլէն Տուտուին, երբ վերջինս հեւալով ներս ընկաւ, աւետիքը տուեց, չէ՞ դու երբ որ Փամբականօրից Թլիսմի Թղթերը բերիր ու ջհուտ Աղաջանի շեմքի տակ Թաղելու ժամանակ Բատինենց Սհօյի ձեռքը ձգեցիր, չոլաղ կորեցիր՝ Թէ այսուհետեւ Շողիկն ինձ համար պաս դարձաւ:

—Բաս ինձ ո՞նց գիտես, իմ լեզուն հարիւր Թլիսմ ածի, պարծեցաւ պառաւը:

—Ուրեմն նշանածի անունով Թուլանալ յետ գալը, որբեւերի կնոջ պէս քիթ ու մռութը փաթթաթելն աչքակապութիւն է՞ր. ես սպասում էի, որ քեզ քարհալած բորիկ կը փախցնեն. խեղճ Սհօ՛, նա էլ հաւատացած է եղել, թէ ջհուտ Աղաջանի զարմը՝ գժուած ու ցնդած՝ իր համար գլուխը մահի պէտք է տար. ուղիղ է ասած՝ թէ կինարմատին հաւատացող տղամարդն իր ձեռքով իր որդայթը կը պատրաստի, չէ՛, Շողիկ ջա՛ն, չէ՛, ինչքան էլ քեզ սիրեմ, ինձ քեզանից աւելի կը հաւատամ, ինձ արածացնել չես կարող, ես Բատինի Թոռը չեմ, ինձ խօջա Բաղդասար կ՚ասեն:

—Վո՞յ, ա՛յ տղայ, Բաղդասար ջա՛ն, ընդուր են ասում՝ թէ քեզ էլ չը պէտք է հաւատալ, դեռ խեղճ աղջիկը ձեռքդ չի ընկել, վրան իրաւունք ես բանացնում. դու հէնց կարծում ես, թէ ձեռաց, խօսքը բերանիցս Թռաւ թէ չէ՝ մէր ու աղջիկ ոտքերս փաթաթուեցի՛ն, չէ սիրելիս, եօթը գայլի աւետարան եմ կարդացել մօրն առանձին, աղջկանն

առանձին. շատախօս օձ աւսնողի (Թովիչ) նման էնքան սուտ ու ուղիղ փչել եմ, բերանս փրփրակալել է. դեռ մայրը ողորմութիւն էր, աղջկանը մինչեւ ճանապարհի բերի, հոգիս բերանս եկաւ:

—Ի՞նչ էր դուրս տալիս, ինձ չէ՞ր հաւանում:

—Ա՛յ քեզ մառաղ, քեզ ո՞վ կարող է փող դնել ([illegible] [illegible]), քեզ Աստուած է հաւանել, Շողիկն էն էր ասում, թէ ինքն ուխտ է արել՝ աշխարհ չը մտնել.—սեւ պէտք է հագնիմ, ասում էր, վարպետ (կոյս) պէտք է դառնամ, հօրիցս մնացածը խունկ ու մոմի պէտք է տամ ու մինչեւ մահս հօրս ու նշանածիս գերեզմանների վերայ ճրագլոյս վառեմ իրիկուն առաւօտ:

—Եւ յետոյ էդպէս շո՞ւտ մոռացաւ խոստումը:

—Ա՛յ տղայ, ախար դու ո՞ւմ ջանս ուզենաս, որ սարսափ չը ձգես, ասացի՝ որ մեր խօջա Բաղդասարն էնպէս կ՚անի, որ մէր ու աղջիկ մի կտոր հացի կարօտ կը մնաք, ասացի՝ որ դու իբրեւ թէ, երդում կրակ ես անում, թէ էն հնարքը գործ կը դնես, որ Աղաջանի պարտքատէրերից և ոչ մէկը մի սեւ փող չի մնար գալ ([illegible]), յետոյ իրանք չոքէ չոք սոխկուած կը լինին գալ, ոտքերդ փաթաթուիլ, բայց դու քացով կը տաս, փողոց կը շպրտես:

—Մարգարէացել ես, վերջն էդպէս էլ կը լինի:

—Է՛հ, ես որ իմ պարտքը կատարեցի, գործարարի ([illegible]) նման երկուսի տներն էլ իմ փառս ([illegible]) մէջ խճճեցի, ապրանքը քոնը շինեցի,

դու էլ շուտ արա՛, ձիու խամ քուռակի պէս բերանը սանձ դիր, Թամբը մէջքին կապիր, վրէն նստիր, յետոյ երբ որ խամահանուկ եղաւ (վորժուեց), ինչպէս քո սիրտը կը ցանկանայ, էնպէս էլ պահիր, ապրանքը քոնը չի՞։

—Ուրեմն վերջին խօսքն ի՞նչ էր։

—Երբ որ մօրն իմ կողմը քաշեցի, աղջիկը շուարեց, մնաց, մի քիչ փնթփնթաց, մրթմռթաց, բայց վերջը ուսերը վեր քաշեց, գլուխը կախեց ու ռ ա հ ի եկաւ (հղարտչէւ). Տուտու նանի՛, ասեց, փ ու շ տ ա-փ ա լ ա ք ը [1]) դար, ինձ չէր կարող Թեքել, բայց քո լեզուն աւելի սուր ու խօսքդ աւելի կտրուկ էր, գնա, ինչ որ քո կամքդ կը հաճի, պատասխան տար, միայն խնդրիր, որ հարսանիքն շտապեցնի, ինձ աշխարհքի լեզուի տակիցն ազատի։

—Ափսո՜ս իմ մեծ ու պստիկ կնիկներ։ Հիմի նրանք եթէ գործի մէջ լինէին, Մեծ կնիկը խաչեղբայրս կը դառնար, Փոքր կնիկը փեսա-եղբայրս, էն ժամանակը աշխարհքը նախանձու կը տրաքէր։

Այս ցաւն էր որոճում բաւական միջոց Բզզէն Տուտուին ճանապարհ դնելուց յետոյ։

—Ոչի՛նչ, խասը չը գտնողը խամով էլ կը բաւականանայ, կնիկները չեղան, Թող նրանց միրգէն (Գրոգէր) լինի խաչեղբայրս, մխիթարեց ինքն իրան

[1]) Փուշտա—փալաք նույնն է, ինչ Մեֆիստոֆելը։

Բզզէն և ձին հեծաւ, քշեց դէպի Ձէյվա գիւղը, ուր էր այն ժամանակ գաւառապետի բնակարանը։

Գաւառական գրագիրը սիրով յանձն առաւ Բզզէի խաչեղբայրութիւնը։

ԼԵ.

ՀԱՐՍԱՆԻՔ

Թնդաց Կարբու գաւառը, թէ Բզզէն շուտով պսակւում է ջհուտ Աղաջանի աղջկայ վրայ, լուրը զարմացքից սառած մնում էր ու իր ականջներին չէր հաւատում. էլ հացակեր չը մնաց, որ խեղճ Նողիկի վերայ բերան չը բանար, ոչ մէկը լաւ չը խօսեց. առաջինից մինչև յետինը դատեցին ու դատապարտեցին հօր ու նշանածի յիշատակը ստնակոխ անող ապերախտ աղջկանը, բոլորեքեան եկան այն համոզմանը, թէ աղջիկ կոչուածդ, արդարև, վաղի առածի պէս՝ անկտրել ձմերուկ է, մինչև հարիւր անգամ չը փորձես, չես հասկանալ յատկութիւնը, ամենեքեան կարծեցին, թէ իրանք սխալած են եղել Աղաջանի աղջկայ մասին և թէ մի այդպիսի դիւրահաւան աղջիկ մի օր էլ իւր ամուսնուն կը դաւաճանի, շատերը ուրախ եղան, որ կճուճը գլորուել է ու խուփը գտել, Բզզէի նման մարդին այդպիսի կին լաւ հատուցումն է։ Նոյն ինքն տէր-Յակոբը, որ Աղաջանի մահից յետոյ մի տեսակ խնամատարի

բարոյական պարտաւորութիւն էր յանձն առել իւր վերայ՝ Աղաջանի այրուն ու որբին իւր հովանաւորութեան ներքոյ ունելու՝ նա ևս շատ խօժոռուեց Նոզիկի անմիտ ընտրութեան մասին։ Այս ամենը լսում էր Աղաջանի այրին և արտաքուստ լռում, ոչինչ չէր պատասխանում, իսկ ներքուստ, իւր տանը ուզում էր քըքըրել, քձձել իւր «աներես ու լպստուած» աղջկանը, որ մի վհուկ Տուտուի խօսքով իւր տան անունը լակ ձու շինեց, պատիւը տուեց։

Նոզիկին զատափետում էին առաւելապէս իւր ընկերակից աղջիկները, թքում և յանդիմանում էին, թէ նա ոչ նշանածի համար պէտք է այնպէս մխրէր և ոչ այս չափ շուտ նրան մոռանար և առաջին անգամն իրանց դուռը բաղխողի գիրկն ընկնէր։

Ընկերներին Նոզիկը ոչինչ չէր պատասխանում, իսկ մօրը միշտ կրկնում էր.—համբերի՛ր, մայրի՛կ, չէ՞ որ ես Տուտուին խօսք տալուս նախապէս քո՛ւ ականջումը փսփսացի։

—Ինձ էլ քեզ հետ յիմարացրիր, ես էլ մի անխելք կին՝ հաւատացի, թէ քո ձեռքիցդ կը գայ կոլոտ Բզզէից հօրդ արիւնը պահանջել. տակից դուրս եկաւ, որ դու մարդի գնալու համար գլուխ ես եղել պատուելիս։

—Ուրբաթ, շաբաթ, կիւրակէ, մայրի՛կ, դու քո բարի աչքովդ կը տեսնես, թէ ես ի՛նչպէս կը ծխեցնեմ դառը մուխը չարչի Բզզէի քթումը։

Եւ Նոզիկը մօրը շատ չը վիրաւորելու համար, գլուխ էր առնում, հեռանում։

Վերջապէս, ուրբաթ, շաբաթ, կիւրակէն հեռու չէր, շուտ վրայ հասաւ։

Բզզէի նորաշէն պալատն առաջին անգամն է ծառայում իւր նշանակութեանը, ասեղ ձգես, գետինը չի ընկնիլ. հրաւիրուածները միայն Կարբու հասարակութիւնը չէ, Քասաղ գետի երկայնութեամբն եղած բոլոր գիւղերի նշանաւոր քէթխուդէքն ու տանուտէրներն այն տեղ են։

Առաւօտեան ութ կամ ինն ժամն է, հարսանքաւորները շրջապատած հարսն ու փեսային՝ պսակ են դնում։ Եկեղեցին լիքն է հանդիսականներով, կարելի է ասել, որ Կարբու եկեղեցին իւր կրկին շէն արած օրը կարգալուց ցայսօր այսքան ժամաւորներ չի տեսել. տէր-Յակոբը, շուրջառաւորուած է և սեղանի առջևը կատարում է պսակի խորհուրդը. նորափեսայի դէմքին յաղթող զօրապետի ինքնասիրութիւն է նկատւում, նա ուրախ է, բայց խոր հոգեբանն այդ պայծառ դէմքի ներքոյ մի վրիժառութեան տրամադրութիւն կարող էր նկատել։

Ահա հասաւ բուն պսակի ահաւոր խորհրդի ժամը. տէր-Յակոբը հրամայեց հարսն ու փեսային երեսները միմեանց դարձնել. նա ուրիշ քահանաների նման չը բաւականացաւ Մաշտոցի բառացի ծիսակատարութիւնով, նա փակեց գիրքը և մի քանի պարզ խօսքերով հասկացրեց նորընծաներին իրանց

փոխադարձ պարտականութիւնները. ապա խօսքն ուղղելով դէպի Նորափեսան՝ հարցրեց Մաշտոցի խօսքերով.— որդեա՛կ իմ, մինչև ի մահ տէ՞ր ես։

—Տէր եմ, բարձրաձայն խրոխտանօք շեշտեց Եղզէն։

—Իսկ դու, որդեա՛կ իմ, մինչև ի մահ հնազա՞նդ ես, երկրորդ հարցը տուեց տէրտէրը Նորահարսին։

—Ո՛չ մի ժամանակ, երեսի թանձր քօղը յետ ձգելով՝ գոչեց Նողիկը։

Ամբողջ հանդիսականները պարզ լսեցին ականջ ծակող, սարսափելի, արտասովոր և տարօրինակ խօսքը։

—Ի՞նչ, աչքերն ոլորելով՝ բարկութեամբ հարցրեց քահանան, ի՞նչ ասացիր։

—Ասացի՛ ու է՛լի ասո՛ւմ եմ, տէ՛ր հա՛յր, դո՛ւք էլ՝ պատուելի հարսանիքաւորնե՛ր, ինձ ներեցէք, որ ամենքիդ ներկայութիւն տուի և էստեղ հաւաքուելու պատճառ եղայ, ձեր բոլորի առաջին ես՝ մի որբ ու անտէր աղջիկ՝ համարձակւում եմ թքել իմ հօր ու նշանածի արենախիրոջ երեսին, ես կատարում եմ իմ նշանածին ու հօրս գերեզմանին տուած խօսքս, յայտնում եմ ի լուր աշխարհի, որ հաստատ գիտեմ և հաւատացած եմ, որ իմ հօր արդար հացին կոյր աչքով նայող երախտամոռը երբ որ տեսաւ, թէ քանի հայրս ու նշանածս կենդանի են, ինքը չը պէտք է կարողանայ ինձ իւր ճանկը ձգել, մօրքումը

գրեց գիւղական հնարքներով իւր ցանկութիւնը գլուխ բերել. իմացած կացէ՛ք ամենքդ, որ Մողնու սուրբ Գէորգի վանքը կոխել, կողոպտել տուողը չարչի Եղզէն էր. սա ինքը առաջուց վարձած է ունեցել Ք. գիւղացի բէգզադէքանցը, նրանց ձեռքով է համոզել Թուրքերին և վանքի վրայ բերել. սա շատ լաւ գիտէր, որ թէկուզ աշխարհքի նեղ ժամանակն էր, թէկուզ ամեն մարդ իւր գլուխն ու ընտանիքը պահելու հոգսումն էր, թէկուզ ամեն գիւղ ինքն իրան դժուար էր պաշտպանում, բայց եթէ մէկը համարձակուէր մեր վանքերին ու եկեղեցիներին դիպչել, ամեն հայ կը մոռանար տուն, տեղ, որդի, ընտանիք, կը թողնէր ունեցած չունեցածը թշնամու ձեռքին ու ինքը կը վազէր իւր Աստծու տունը պաշտպանելու, գիտէր էս անխղճմտանքը, որ եթէ մի փոքրիկ երեխայ էլ գար վանահօր կողմից և յայտնէր, թէ վանքը կորեցին, բոլոր գիւղերը գլխապատառ կը վազէին հայր սուրբի հրամանը կատարելու. շատ լաւ յայտնի էր էս դաժան հոգուն, որ Կարբուց օգնութիւն գնացողների մէջ հայրս ու նշանածս էլ անպատճառ կը լինէին, և եթէ կռուից էլ ազատ պրծնէին, իւր վարձած Թուրքերը մի տեղ հնարք կը գտնէին սրա օձ խորհուրդը կատարելու։

Ո՛չ ոք չընդհատեց կրակ կտրած օրիորդին, խորին և մեռեալ լռութիւնը թագաւորել էր եկեղեցումը, ճանճի բզզոցը լսւում էր. ինքը Եղզէն սևացել, ածուխ էր կտրուել, շրթունքները շարունակ

կրծոտում էր, նկատելի էր, որ աշխատում է որ և է պատասխան տալ, բայց կոկորդը ցամաքել, լեզուն բերանումը չորացել էր, չէր շարժուում:

—Ես դեռ չեմ վերջացրել, սառնութեամբ աստիճանաբար բարձրացրեց իր ձայնն աղջիկը. դո՛ւ, կօլոտ Բզզէ՛, փափագիդ մի մասին հասար, ճանապարհդ լայնացաւ, մէջդ ճխացիր, ուրախացար, թէ այս է՝ որ տիրեցիր անտէր աղջկանը, հիմի որ կը խեղդես ու քո կինը կը շինես: Բայց չէ՛, սխալւա՛ծ ես, քո փորած հորի մէջ ինքդ երկու ոտքո՛վ ես ընկել, Աղաջանի աղջիկը հալալ կաթնակեր է, նա իր հօր հարազատ զաւակն է, ես ոչ մի ժամանակ քո պէս խեղճերի արիւնը ծծողին կին չեմ դառնալ, ես կոյս եմ և կոյս Հռումսիմի (Հռիփսիմէ) նման քեզ պէս խոզին քաշ պէտք է տամ գետնի երեսին, որ հօրս ու նշանածիս գլուխը կերար, գլխակե՛ր, արենխո՛ւմ:

—Ը՛ն... չո՞վ... կը... հա՛ս... սա՛... տե՛ս, կակազեց Բզզէն, բայց Նուշիկը ժամանակ չը տուեց շարունակելու:—Մօտ երկու ամիս է, որ իմ նշանածը սաղ գերեզմանումն է, գոչում էր նա, բայց նրա հոգին դեռ չի հանգստացել, դեռ գերեզմանի վերայ անտես, աներևոյթ պտըտւում է, ես նրան խօսք եմ տուել մինչև իմ խօսքս չը կատարեմ, Բաղինենց Սահակի հոգին երկինք գնացողը չի. Նրա աչքը ճանապարհի է, որ ես քեզանից նրա արիւնի վրէժը պէտք է առնեմ, և կ՚առնեմ. երկու ամիս է, հնարք

չի մնացել, որ չը մտածեմ, ուզում եմ էնպէս վրէժ հանել, որ դեռ ոչով լսած ու տեսած չը լինի, կամեցայ խանչալը յառաջ քո սիրտը ցցել, յետոյ իմ, բայց մտածեցի, որ քո կեղտոտ արիւնն արժան չէ խառնուել իմ մաքուր արիւնին, ես աւելի լաւ համարեցի այնպէս բան անել, որ դու կենդանի մնաս, բայց ուրախ օր չը տեսնես, խղճմտանքիդ առաջին սևերես մնաս, խղճմտանքդ ճանկերով սատանայ դառնայ ու սիրտդ ճանկռտորի. ես գտայ այդ բանի հնարքը. շատ չի քաշիլ՝ կուրանալու աչքովդ կը տեսնես...

—Բաւակա՛ն է, աղջի՛կս, ուզում էր միջամտել տէր-Յակոբը, բայց Նուշիկը ժամանակ չը տուեց:

—Ահա՛, կօլոտ Բզզէ՛, ես իմ աւելիքներս ասացի, տե՛ս, աչքդ կոխի՛ր քո ուղարկած հարսնութիւնի քօղը, որը թօռ շինեցիր, ձկան նման ինձ մէջը փաթաթեցիր. բայց ես էն ձկներիցն եմ, որ թօռդ գլխիդ պատռում ու միջիցը դուրս եմ փախչում:

Նուշիկը կորզեց իր գլխի զարդերը, իր բերանը փակող շղարշը և Բզզէին շպրտեց. հետն էլ թքեց երեք անգամ նրա երեսին, երկու ամուր ապտակ իջեցնելով և հաստատ քայլերով դուրս գնաց եկեղեցուց:

—Բռնել տուէ՛ք, ո՞ւր էք թողնում փախչի, դարձաւ լացակրկնած Բզզէն դէպի իր խաչեղբայր գաւառական գրագիրը, այդպէ՞ս պէտք է պաշտպանես

բարեկամիդ և քո խաչեղբայրութեան պատիւը:

—Բռնեցէ՛ք, տանուտէ՛ր, յանդուգն աղջկանը, դրա արած անպատուութիւնն ինձ է վերաբերում, ես եմ այսօր այս հարսանիքի գլուխը, հրամայեց դրագիր աղէն սրտամնայ, վիրաւորուած և անդուսպ բարկութեամբ. համբերեցէ՛ք,-տեսէ՛ք, թէ ես դրան ի՞նչ տեղն եմ ձգում, ոտները քօթուկի [1]) մէջ փթացնեմ, որ խելքը գլուխը հաւաքի, ինքը գայ իւր նշանածի ոտքերն ընկնի:

Տանուտէրին կարգադրութիւն անելու կարիք չեղաւ. ժամաւորները միանգամից դուրս վազեցին և ձայն ձայնի տուած՝ գոչում էին. բռնեցէ՛է՛ք, բռնեցէ՛է՛ք:

Նորափեսայ Բզզէն, երևի, ոգևորուած իւր պաշտպան խաչեղբօր խօսքերից՝ գազան էր կտրուել, բազմութիւնը ճեղքելով՝ ամենից յառաջ վազեց նա և հասուէհաս էր Շողիկի հագուստի քղանցը ձեռքը ձգելու՝ ճիշդ Կիզի-մատուռ. զանգակատան դրան առաջին, ուր ուղղուել էր նորահարսը:

—Հա՛, հա՛, հա՛... երեսը դարձրեց աղջիկը դէպի իւր փեսացուն և գլուխը թիկունքի կողմը թեքած՝ քրքջում էր երկար ծորելով իւր անվերջ ծիծաղը: Հա՛, հա՛, հա՛, չարչի Բզզէն ուզում է ազատ թռչունին թռած ժամանակն իւր թօռի (ցանց) մէջ

[1]) Քօթուկ ծառի հաստ կոճղ է, որի մէջ փակում էին կալանաւորների ոտքերը:

խճճել. ա՛յ, սա՛ է իմ պաշտպանս, սա՛, էս սուրբ Կիզի մատուռը, ո՞նց կը համարձակուիս սրա մէջը մտնել:

Այս խօսքերից յետոյ Շողիկը ներս մտաւ զանգակատունը:

—Դրանից էլ լաւ թօռ չէր լինիլ, հիմի էլ չե՛ս կարող ձեռքիցս ազատուիլ, գոչեց Բզզէն և աղջկայ քամակից ներս ընկաւ մատուռի մէջ:

Ո՜վ սարսափ, Բզզէն քարացաւ՝ և մնաց սառած մատուռի միջնավայրումը, նրա աչքերը սևացան, ականջները խշխշացին, գլուխը պտոյտ առաւ:

Ի՞նչ էր այս:

Շողիկը վայրի կատուի արագութեամբ մագլցելով՝ վեր է բարձրանում մատուռի կոփածոյ պատի մակերևոյթի վրայով դէպի զանգակատան կաթուղիկէն՝ շուտ շուտ վերևից կատաղի հայեացքներ արձակելով իւր թշնամու խրտնած եզան նման չռուած ու պշուցած աչքերին, կատարեալ ծառ-կուպուտ կամ ալաչակչակ (փայտփորիկ) թռչուն էր Աղաջանի դուստրը, որ ծառերի բների վրայով ազատ սորում էր:

Ահա կանգնած է նա ուղիղ կաթուղիկէի պատուանդանի յառաջ եկած քարերի վերայ. մի ոտնաչափ տարածութիւն հազիւ թէ լինէր պատուանդանի լայնութիւնը. կաթուղիկէն շինած օրից վայրի աղաւնիներն ու ճնճղուկները միայն են հանգիստ առել Շողիկի ապաստանած տեղումը:

—Նայիր ինձ, կոլոտ Բզզէ՛, զիլ և սուր ձայնով գոչեց աղջիկը, զի՛լ՝ որքան մի մանկամարդ օրիորդի կոկորդը կը զօրէր:

Բզզէին թւեցաւ, որպէս թէ ոսկիները գտնելու օրուան ահարկու և զարզանդելի թնդիւնն էր, որ այսօր առաւել հուժկու արձագանգ տուեց զանգակատան ներսը, միևնոյն այն օրուան տպաւորութիւնը տիրեց չարաբաղդ չարչու նեարդերի վերայ, նրա աչքին երևաց, իբր թէ սրբավայրը տեղահան եղած՝ տատանում էր և մօտ էր փլչելու, Բզզէին լսելի եղաւ մինչև անգամ այն կռանի հարուածը, որ ինքը երկու տարի յառաջ իջեցրեց Կիզի մատուռի պատուհանի քարին, որի տակից նա հանեց ոսկիքը:

Բզզէի միտքն եկաւ առաջին անգամը ոսկիքը գտած օրն արած խոստումը. նա ինքն այս իսկ տեղում ուխտել էր տարեկան հինգ նաւակատեացը մի մի սպիտակ գառը զոհել Կիզի մատուռի սիրոյն, բայց մինչև էսօր և ոչ մի հաւի ձագ չէր մորթել: Ահա՛, այսօր, իւր բաղդաւորութեան օրն ուխտն իւր գլխին խռով է կենում, իւր նշանածին Աստծու սեղանի առաջից իւր ձեռքից խլում է:

—Ա՛յ մարդիկ, աղայ խաչեղբա՛յր, հեծկլտում էր տհաս մանուկի պէս Բզզէն՝ դառնալով իւրան շրջապատողներին և գաւառական գրագրին, դուք սիրտ չունի՞ք, դուք ադամորդի չէ՞ք, ընչի՞ էք թողում, որ ջհուտ Աղաջանի աղջիկն ինձ վերայ ծիծաղի, բարձրացէ՛ք, բռնեցէք, բռնութեամբ քարշ

տուէք, ժամը կոխեցէ՛ք և իմ վրայ պսակեցէ՛ք:

—Դա աղջիկ չի, դա սատանայ է, դա ալք է, պատասխանեցին ամէն կողմից. մարդը, մարդի որդին կարո՞ղ է էս հայելու պէս կոկ պատը բարձրանալ, սատանի եղունկները միայն կը բռնեն քարերի տաշուածքների խոռուփոթները:

—Ի՞նչ, գէդա՛յ (տմարդի, ցած) կոլոտ Բզզէ՛, ինչ, դու զօռո՞վ ես ուզում ինձ քո կինը շինել. լսի՛ր, ճիչ արձակեց Շողիկը վերևից, լսի՛ր վերջին խօսքս. դու քո չար ցանկութիւնին չը հասար, հօրս ու նշանածիս արիւնն էսօր վրէժ են պահանջում և ես առնում եմ նրանց վրէժը քեզանից: Հեռու, մարդի՛կ, յետ քաշուեցէ՛ք, տեղ տուէ՛ք, ես պէտք է Բզզէի գլխին մի էնպէս խաղ խաղամ, որ քանի կենդանի է, ուրախ օր չը տեսնի. քանի էս օրը միտքը բերի, Կայէնի նման սար ու ձոր ոտնատակ տայ ու ոչ մի տեղ հանգստութիւն չը գտնի, չէ՛, Բզզէ՛, չէ՛, Բռնինեց հարսնացուն զաղանի ճանգը չընկաւ, ես գնում եմ հօրս հրամանով իմ Ահօյի հետ էնտե՛ղ մնալու, էնտե՛ղ, տե՛ս, ահա էնտե՛ղ, երկինքումը՝ հրեշտակների կողքին:

—Ո՛վ սուրբ Կիզի մատուռ, դու մեղք չը համարես, կանչեց Շողիկը բազկատարած և գլխի վայր ցած ձգեց իրան ահագին բարձրութիւնից:

Լաւ էր, որ խուժանը սարսափած աղջկայ խօսքերից, ոմանք դուրս փախան և ոմանք պատերի տակ քաշուեցին, ապա թէ ոչ, մի քանիսը կը խոր-

տակուէլին, անշուշտ, նրա գլխկի ծանրութեան ներքոյ։

Շողիկի դանգը ճխլքուեց, ուղեղը ցրիւ եկաւ մամռոտուած թափուած քարերի մէջ։

Ալգի մատուռի յատակը հարթ չէր. երկրաշարժերն ու Քրիստոսի խաչին թշնամի անհաւատներն ամայութեան դատապարտուած սրբավայրերից շատ սակաւները թողել էին անխախտ. երկարատև ժամանակն իւր աւերչութեան դատակնիքը, ուրիշների թւում, դրել է և Նարբու զանգակատան վերայ, պատերի խախտուածքներից և կաթուղիկէից ցած գլորուած քարերն և կրային աւազախառն չորացած և քարից առաւել ամրացուած շաղախներն ու խճերը ցրուած էին գետնին։

Այս քարերից մէկի սուր անկիւնը ցցուելով Բղդէի զոհի ուղեղի մէջ, վերջ դրեց նրա կեանքին։

Սոյն այս րոպէին մի մարդ՝ արբած գինուորի նման՝ իւր կանգնած տեղը սկսեց տարուբերուիլ, նրա աչքերի կոպերը ծածկուեցին ճակատի ոսկրի ներքոյ, քթածակերը լայնացան, բերանի կապը առաձգական ռետինի պէս ինքնին յետ էր բացուում և կրկին կուչ գալիս, լեզուն հաստ շրթունքների վրայով մի թիզ կախ էր ընկել. մի զարհուրելի ճիւաղի կերպարանք էր ստացել ուշակորոյս մոլորուածի, առանց այն էլ՝ գաժան կերպարանքը։ Անհաստատ դրութիւնը կարճատև էր, մի երկու վայրկեան՝ և կիսացնորի ոտքերն անզօր գտնուեցին հաւասարակշռութիւն պահպանելու։ Ինչպէս մի հաստաբուն ծառ, որ փայտահատի

սուր կացնի հարուածներից դողդողալով կանգնում է, կարծես, մի քանի րոպէ դիմադրել իւր թշնամուն, բայց վերջը ստիպուած է լինում թեքուել մի կողմի վերայ և ահագին թնդիւնով գետնին գլորել, այդ ձևով տարուբերուեց թշուառականը, մի ճիչ միայն արձակեց և գլխկալով մի կողքի վրայ տարածուեց զանգակատան մէջ։ Եթէ կորած ծառի օրինակը բաւական չը պարզեց վայր ընկնողի դրութիւնը, մենք կարող ենք ամեն օր սպանդանոցում ներկայ գտնուել մորթուելիք անասունին. ճիշդ համանման կերպով գետին է ընկնում մսագործի պարանով ոտքերը պըրկած մսացու թանձրամարմին եզը, կամ գոմէշը։

Բաւական ժամանակ գետինը ճանկռտում, ձեռքերն ածում և կոկորդից խռնչիւններ էր արձակում անբաղդ արարածը, ճանկերը բաց ու խուփ էր անում, աշխատում էր բռնել մի ինչ և իցէ առարկայ, սակայն բացի քար ու խճից ոչինչ չը կար։

Յանկարծ այս մարդու ձեռքը դիպաւ իրանից ոչ հեռու ընկած Շողիկի ջախջախուած գլխին, նրա մատները թաթախուեցին նահատակի արեան ճապաղիների մէջ և նա մանկական խաղալու գնդակի նման մի ցատկումն գործեց և ընկաւ մատուռի լուսամուտի առաջը, ուր գլորուած էր պատուհանի վրայից երկու տարի յառաջ դուրս կորզած մի քար։

Ողորմելի էակը, կարծես, ծովային խեղդուողի նման դատ խորտակուած նաւից կորուած, ալիքների վերայ ծփացող փրկութեան գերանը, նա երկու

ձեռքով ամուր գրկեց այս քարը և դադար առաւ իւր չարչարանքից։

Այս չարաբաստիկը մեր բարեբաստիկ նորափեսայ խօջա Բաղդասարն էր, նա յենուել էր, ապաստանել էր այն քարին, որ իւր ձեռքովն էր անդամհան արել լուսամուտ պատից, որի տակին նա դրել էր ոսկու բղիկը և խոստացել էր ոսկիները ձեռք բերելուց յետոյ՝ կրկին տեղումն ամրացնել, բայց խոստումն անկատար էր թողել։

Բայց ի՞նչ էին անում այսքան միջոց ականատես հանդիսականները։

Ամենքը շուարած մնացել էին, բոլորի վերայ տիրել էր մի տեսակ ապշութիւն, ոչ մէկը չէր վստահանում կանգնած տեղից մի քայլ յետ ու յառաջ շարժուելու, ոչ մի ձայն չէր խանգարում մեռեալ լռութիւնը բացի Բդդէի կաղկանձիւնից՝ որ քարը գրկելուն պէս՝ այն ևս դադարեցաւ։

Վերջապէս գաւառական դրագիր «աղայ խաչեղբայրը» ամենքից շուտ սթափուեց, և իբրև վարչութեան գլխաւոր ներկայացուցիչ՝ արաւ արժանի կարգադրութիւնը։ Նրա պատուիրանաւ մեռածին թողին իւր տեղն ընկած, իսկ քանի մի անձինք մօտ գնացին վերցնելու ուշակորոյս Բդդէին։

Ա՜յ զարմանք, ամենայն ոյժ գործ դնելով հանդերձ՝ չը կարողացան նրանք հեռացնել Բդդէին իւր գրկած քարից, կարծես, նրա եղունգները սրածայր մեխերի պէս ցցուել էին քարի մէջ և չէին պոկ գալիս։

— Թողէ՛ք... հեռացէ՛ք... մի՛ մօտենա՛ք ինձ... ի վերջոյ աչքերը ծանր ծանր յետ բացեց և թոյլ ձայնով արտասանեց Բդդէն։ Հետն էլ յաճախակի քարն էր համբուրում։

Արդարև, նա տեղիցը կանգնեց, միայնակ գրկեց երկու մարդով հազիւ շարժելի ծանր քարը ու յարմարեցրեց իւր նախկին տեղումը. ապա յետ դարձաւ, և երկու ոտքերի վերայ բռնուած՝ երկար միջոց անթարթ նայում էր իւր զոհին, որ թևատարած արիւնաշաղախ փռուած էր մարդկանց միջակէտումը։

Թէ ի՛նչ էր մտածում Բդդէն այդ վայրկենին՝ ոչ ոք չէր կարող գուշակել, բայց պարզ նկատելի էր, որ նրա ներսումը մի հոգեկան կռիւ էր կատարւում։

Չենք կարող ասել, թէ ո՛րչափ ժամանակ կը մնար նա այս մտածողութեան մէջ, եթէ յանկարծակի նրա աչքովը չ՚ընկնէին իւր արիւնաթաթախ մատները։

— Ջո՛ւր, ջո՛ւր, ջուր բերէ՛ք, ձեռներս լուանա՛մ, դուրս ընկաւ մտատանջ Բդդէն և ջուր գոռալով վազում էր դէպի Քասախ գետը։

Շատ ուշ գլխի ընկան մարդիկը և հետապնդեցին Բդդէին, սակայն անօգուտ էր, ոչ ոք չը կարողացաւ հասկանալ, թէ դէպի ձորի ո՛ր քարափը գնաց նա։ Նրա հետքը կորցրին։

Երկու ժամից, մինչ գաւառական դրագիրն իւր

պաշտօնական արձանագրութիւնները վերջացրած՝ կամենում էր ձի հեծնել, մինչ հարսանիքաւորները պատրաստուում էին ցրուելու՝ Բզզէն մաքուր լուացուած՝ հանգիստ ու խաղաղ ներս մտաւ իւր տունը և բարև տուեց։

Նա գալիս էր սուրբ Յովհաննիսի աղբիւրից։

Ահա այն տեղ էր վազում Բզզէն դուրս փախած մատուռից։

Նստեց Բզզէն աղբրականը և այսպէս խօսեցաւ.

—Անիծուէ՛ր էն ժամը, երբ առաջին անգամը հանդիպեցի ջհուտ Աղաջանի աղջկանը. այս աղբրի մօտ ես յիմարացայ, այստեղ էլ պէտք է զզջամ իմ սխալանքներիս համար, այս ջուրը հանդստացրեց իշամեղուների խայթուածքը՝ այս ջրի ափում ծագեցաւ իմ մէջ Նողիկին սիրելու ցանկութիւնը, այս ջուրն էլ թող մաքրի իմ ձեռներից նորա արիւնը և մեռցնի նորա սէրն ու յիշատակը։

Ձեռքերն աղբիւրում լուանալուց յետոյ՝ Բզզէն մօտեցաւ մեզ ծանօթ գժնիկ փշի թփին, քակեց թփի ճղքից Նողիկի անթարու (հագուստ է) ծուէնքը, որ մօր հրամանաւ կապել էր և որին համբոյրներ տալով՝ չէր յագեցել սիրահար չարչին, ճմլեց մատների մէջ և ատամներով ծուէն ծուէն պատառոտեց ու գետնին ցրիւ տուեց։

—Թող չը մնայ և ոչ մի չնչին առարկայ, որ երբ և իցէ կարող լինի յիշեցնել ինձ ջհուտ Աղաջանի աղջկանը։

Այս խօսքերից յետոյ՝ Բզզէն կրկին մօտեցաւ աղբիւրին, այժմ նա կռացաւ և կուշտ խմեց սառը ջուրը։

—Օխա՛յ, սիրտս հովացաւ, ինձ համար այսուհետև ոչ թէ միայն զգալի չէ ջհուտ Աղաջանի աղջկայ արժանի վախճանը, այլ եթէ բոլոր կանայքն էլ ջնջուին, չեմ ցաւիլ, կին ասած արարածդ որանից յետոյ չի կարող ինձ յիմարացնել, և եթէ երբ և իցէ ես կին առնելու կարիք զգամ, այն իմ հարըստութիւնս վայելող մի հատիկ ժառանգի համար կը լինի, որի ծնուելուց յետոյ՝ շատ չի քաշիլ, մօր գլուխն աղը կը դնենք. էնպէս կ՚անեմ, որ երկու շաբթումը դարդամահ կը լինի։

—Դէ՛հ, հիմի գնանք մեր հիւրերին ճանապարհ դնենք, հիմի թող ջհուտ Աղաջանն էն կեանքումը պսակի իւր աղջկանն իւր սիրած Բստինենց Ահօյի վրայ ու հարսանիքին իւր կնոջ հետ ձեռբռնուկ պար գայ. իսկ ես այստեղ պար կը գամ, որ իմ թշնամիներից վրէժս առայ։

Ճիշդ որ Բզզէն ձեռքերը բարձրացրեց և պարելով ճանապարհ ընկաւ դէպի տուն։

Քննութիւնը ոչինչ մեղադրանք չը կարողացաւ բարդել Բզզէի պարանոցին, ցնորուած, ինքնասպան աղջկայ խօսքերը ոչ մի իրական փաստի վերայ չէին հաստատուած։

Նողիկին մայրը թաղել տուեց ոչ իրանց, այլ Բստինենց գերեզմանոցումը՝ Սահակի կողքին։

Նա չը քաշեց, ինքն էլ վշտահար մեռաւ և թաղուեց Աղաջանի մօտ:

Աղաջանի պարտապանները բոլորեքեան վերադարձրին իրանց վճարքը. Նուշանն այս փողերը յանձնեց տէր-Յակովբին՝ մարդի վերայ մի քար քաշելու և մինչև մահն ամէն հինգ նաւակատիքի նորա գերեզմանն օրհնելու:

—Ադէ՛, ասաց մի օր Եղիշն իր մօրը, այսուհետև Կարբումը բնակուելն ինձ համար մեծ անխելքութիւն է, այդ դու՝ այդ մեր տները, ինչ կամիս արա, պահի՛ր մէջը, ծախի՛ր, ընծայի՛ր, քո գործն է. Նոքա էլ՝ ինչպէս մինչև ցայսօր առանց ինձ կառավարուել ես, այսուհետև էլ նոյնպէս եղիր. ես իմ բնակութիւնս հաստատում եմ Աբարանու գիւղերից մէկումը, Աբարանն առ այժմ իմ հարստութիւնս կրկնապատկելու համար ամենայարմար կեդրոնն է: Բայց եթէ վհուկ Տուտուի ոտքը մի օր լսեմ, որ այս դռնովը ներս է մտել, այնուհետև ոչ ես քո որդին, ոչ դու իմ մայրը:

Гос. библиотека 2002-Арм.ССР им. А. Мясникяна

450

0014649

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0014649